ՀՐԴԵՀՆԵՐԸ ՀԱՆԳՅՆԵԼՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՊԵՏՀՐԱՏ 1939


05 FEB 2018

ՀՐԴԵՀՆԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Ս. Գ. ԳՈԼՈՒԲՑԵՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Թարգմ. Գ. ՎԱՍԿԱՆՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1939

Գիրքը բովանդակում է հիմնական կանոններ այն մասին, թե ինչպես պետք է պրոֆեսիոնալ հրդեհաշեջ պահպանության ուժերով հրդեհը հանգցնել. գիրքը նախատեսված է հրդեհաշեջ պահպանության մասերի պետակազմի և հրդեհաշեջ զորոցների դասընթացների ունկնդիրների համար իբրև ուսումնական ձեռնարկ։

11-28813գր

ՆԱԽԱԲԱՆ

Սույն աշխատությունը կոլեկտիվորեն կազմել են հեղինակները՝ Վ. Վ. Գիտերմանն ու Ն. Մ. Դյակոնովը (ներածությունը և I, II, III գլուխները), Պ. Վ. Սրաեմովը (IV գլուխը) և Պ. Ն. Պերեբեյնոսը (V, VI գլուխը)։ Հեղինակները նպատակ են ունեցել հրդեհաշեջ-տեխնիկական գրականության մեջ թեկուզ մասամբ լրացնելու հրդեհաշիջման հարցերի պակասը, վորովհետև տակտիկայի վերաբերյալ լույս տված հրատարակությունները (Տրեբեզով, Ռուսակով և այլն) ներկայումս արդեն հնացած են։ Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո յեղած ժամանակաշրջանում հրդեհաշեջ խմբերի ամբողջ տեխնիկական զինվածությունն արդեն նորոգվել է, յերևան են յեկել հրդեհաշիջման նորագույն միջոցներ, փոփոխման և յենթարկվել մարտական ստորաբաժանումների կառուցվածքը և մարտական պարապմունքում ստորաբաժանումները ղեկավարելու սիստեմում փոփոխություններ են մտցվել։

Այս գիրքն իր մեջ պարունակում է հրդեհաշիջման տակտիկայի հիմունքները և վերաբերում է շենքում հրդեհը ծագելու տեղի համեմատ նրան լիկվիդացիայի յենթարկելու աշխատանքների առանձնահատկություններին։ Հաջորդ պրակներում նախատեսված է արդյունաբերության առանձին ճյուղերում (1-ին մաս), տրանսպորտում (2-րդ մաս), քաղաքային անտեսության (3-րդ մաս) և գյուղատնտեսության մեջ (4-րդ մաս) հրդեհաշիջման առանձնահատկությունները լուսաբանել առանձին։

Քանի դեռ չի հաստատվել ստորաբաժանումների գործողությունների կարգը վորոշող և նրանց ղեկավարման հիմունքները սահմանող մարտական կանոնադիրքը, տակտիկայի վոչ մի ձեռնարկ չի կարող լիարժեք համարվել։ Ուստի ներկա աշխատությունը հավակնություն չունի սպառիչ կերպով լուսաբանելու հրդեհաշիջման տակտիկայի հիմունքների բոլոր հարցերը։

Այնուամենայնիվ առաջարկվող սույն աշխատությունը հիմնական խթան է հանդիսանում հրդեհաշիջման տակտիկայի հիմունքները ճիշտ հասկանալու ուղղությամբ։ Յեթե տակտիկայի վերաբերյալ նախորդ աշխատությունները իրենց մեջ բովանդակում էին այնպիսի ավյալներ, վորոնք ամբողջովին պատկերում էին հրդեհաշեջ խմբի մարտական հաջորդական գործողությունները և, բացի դրանից, պարունակում էին մի շարք գործողություններ, վորոնք առանձնապես վերաբերում էին տակտիկայի հարցերին (հրդեհների պատճառներին, նրանցից նախապղուշանալու միջոցառումներին և այլն), ապա ներկա աշխատության մեջ հեղինակները միանգամայն ճիշտ կերպով իրենց գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել են հրդեհի ոպերացիայի և հանգցնելու նախապատրաստական միջոցառումների կազմակերպման, մարտական պայմաններում ստորաբաժանումների ղեկավարման և անձնական կազմի գործողությունների վրա՝ հրդեհը հանգցնելու ղեկավարման տեսակետից։

Հրդեհաշեջ պահպանության պետկազմի՝ տակտիկայի վերաբերյալ բազմիցս ունեցած քննադատությունները ցույց են տվել, վոր մինչև այժմ հրդեհաշիջման տակտիկայի հիմունքների և այդ դիսցիպլինի ներքին բովանդակության վերաբերյալ դեռևս հաստատուն տեսակետ գոյություն չունի։ Այս հարցը պարզ դարձնելու համար չափազանց ցանկալի կլիներ, վոր հրդեհաշեջ մասերի և ղեկավարները քննության առնեյին սույն աշխատությունը, մատնանշեյին նրա թերությունները և իրենց

բոլոր դիտողությունները հաղորդեյին ՄՍՀՄ ՆԳԺԿ հրդեհաշեջ պահպանության Գլխավոր Վարչության Պատրաստման Բաժնին՝ հետագա աշխատանքներում դրանց ոգտագործելու համար։

Ս. Գ. Գոլուբյեվ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1· ՀՐԴԵՀԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դիտողություններով հաստատված է, որ հրդեհը զարգանում է անհամաչափ կերպով։ Հրդեհի ամբողջ ընթացքը կարելի չէ պայմանական ձևով բաժանել չորս հիմնական ստադիայի։

Առաջին ստադիան հրդեհի սկիզբն է՝ նրա ծագման մոմենտից սկսած մինչև ստատիկ զարգացման մոմենտը։ Հրդեհի այս ստադիան մեծ մասամբ տևում է 5 րոպե։

Սակայն այստեղ չպետք է հաշվի առնել այն պայթյունները, որոնք կարող են վայրկենապես կրակը ստատկացնել, որն իրենից կատարելապես զարգացած հրդեհ է ներկայացնում։

Նույնպես չպետք է հաշվի առնել, թեև ճիշտ է, բավականին հազվադեպ, հրդեհի չերկարատև զարգացման դեպքերը։ Դեպքեր են չեղել, չերբ հրդեհը նախքան իր զարգացմանը հասնելը, տևել է 20 ժամ (հատկապես նրա առաջին ստադիան)։

Չպետք է նույնպես հաշվի առնել այն դեպքերը, չերբ շենքի կառուցվածքային և այլ առանձնահատկությունների հետևանքով (թատրոններ) համարյա միանգամից կրակի մեծ ոջախ է առաջանում, որը չափազանց կարճ ժամանակամիջոցում (2—3 րոպեում) փոխվում է բացառիկ ստատկության հրդեհի։

Մնացած բոլոր դեպքերի համար (իսկ նրանք մեծա-

մասնությունն են կազմում) վերոհիշյալ բնորոշումը կլինի ճիշտ։

Հրդեհն իր զարգացման առաջին ստադիայում վերացնելու միջոցներն ու ուժերը շատ չեն և կարող են ամենափակվել կրակմարիչներով, հիդրոպուլտով, ջրի դույլով և այլն։ Առաջին ստադիայում վերացված հրդեհի հետևանքները և նրա պատճառած վնասները չնչին են։

Հրդեհը ծագելիս ժամանակակից միջոցներն անմիջապես ձեռք չառնելը և ձեռքի տակ ունեցած միջոցների սրխալ և վոչ հմուտ կիրառումը հնարավորություն է տալիս հրդեհին անցնելու իր զարգացման չերկրորդ ստադիային։

Չերկրորդ ստադիան հրդեհի ստատիկ զարգացումն է, վորը համնում է նրա ստատկության բարձրագույն կետին։ Այս ստադիան բնորոշ է հրդեհի զարգացման ու ծավալման արագությամբ։ Կրակի ոջախի մեծանալու հետ միասին բարձրանում է նաև նրա ջերմաստիճանը, մեծանում է ճառագայթային ջերմության ազդեցությունը, վորով և հրդեհի հետագա ծավալման համար հող է պատրաստվում, ազդեցություն է առաջանում դեռևս չվառվող նյութերի և կառուցվածքների վրա (մանավորապես, փայտը չորանում է, արտադրում է ցնդող նյութեր. դյուբավառ հեղուկները ստատիկ կերպով գոլորշիներ են արտադրում)։ Հրդեհի այս ստադիայում ոդի զգալի շերտերը սկսում են շարժվել, վորով շարունակում են հրդեհը զարգացնել։

Այս ստադիայի տևողությունը հետևանք է բազմաթիվ պատճառների՝ վառվող օբյեկտի մեծության, վառվող նյութերի բնույթի, բավականաչափ ոդի հոսանքի և այլն, և սովորաբար լինում է 20—30 րոպե, համնելով մի քանի ժամի։

Այս ստադիայում հրդեհը հանգցնելու համար չի կարելի սահմանափակվել ուժերի և միջոցների միջնորդում կիրառումով։ Անհրաժեշտ է գործադրության մեջ դնել չերբեմն զգալի քանակությամբ փողակներ։ Այս ստադիայում հատուկ նշանակություն է ունենում կրակի ուժի դեմ գոր-

ծող միջոցների ճիշտ փոխհարաբերությունը: Հրդեհն ավելի բարդ բնույթ և ստանում, երբ անհրաժեշտություն և առաջ բերում գործողությունների ավելի մտածված պլան կիրառելու: Այս ընթացում նկատվում և առանձին կառուցվածքների ձևափոխություն, ավերումների և փլուզումների վտանգ և առաջանում:

Այս ստադիայի պայքարով որոշվում և հրդեհի բախտը, նախորոշվելով նրա յելքը. ուստի գործող ուժերից պահանջվում և վճռականություն և համառություն:

Հրդեհը սովորաբար այսպիսի հեռանք և ունենում. օբյեկտը հիմնականում դեռևս վողջ և, սակայն զգալիորեն վնասված և:

Third stage հրդեհի զարգացման բարձրագույն կետն և, նրա կուլմինացիոն կետը: Այս ստադիայի տևողությունը տարբեր և և կախված և այնպիսի պատճառներից, ինչպես յերկրորդինը: Վառոնակ նյութի հիմնական մասան այս ստադիայում վոչնչանում և համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, սակայն վառվելը շարունակվում և, յերկար ժամանակ բարձր պահելով նրա ջերմաստիճանը:

Հրդեհն այս մոմենտում չափազանց կատաղի բնույթ ունի, որը զուգորդված և արտաքին ապավորությամբ ուժեղ մի շարք եֆեկտներով:

Մեծ օբյեկտում (թատրոնում, գործարանային կորպուսում) ոդի շարժումն ստանում և մրրիկի բնույթ (արագությունը մեկ վայրկյանում 15 և ավելի մետր): Ոդի այս շարժումից հզոր ջրացայտը մի կողմ և քշվում և զգալիորեն փոշիանում և. յերբեմն ոդի շարժումով ապակիները դուրս են ընկնում, դռների յերեսները պոկվում են և այլն:

Այս ստադիայում շրջակա օբյեկտների վրա հրդեհի հակայական ոջախ ունեցած ազդեցությունը շատ ուժեղ և, յերբեմն հրդեհի կործանիչ ծավալման հնարավորություն և ստեղծվում: Պաշտպանական կառուցվածքները յերբեմն իրենց նշանակությունը կորցնում են (հրդեհը 3 ժամից ավելի տևելու դեպքում) և սկսում են ավերվել (անհրաժեշտ

և ստեղծում): Մետաղե կառուցվածքներն իրենց ամրությունը կորցնում են և քայքայվում են: Վորոշ դեպքերում ավերվում են նաև յերկաթ-բետոնե կառուցվածքները:

Այս ստադիայում պահանջվում և ուժերի և միջոցների մաքսիմալ գործադրություն: «Բ» փոքր փողակները վոչ մի արդյունք չեն տալիս. նույնիսկ կարճ գծավոր «Ա» փողակները համառ և տևական աշխատանք են պահանջում:

Այսպիսի հրդեհը հաճախ առաջ և բերում օբյեկտի կործանում և զգալի կորուստներ:

Fourth stage սկսվում և կրակի ուժի բեկման մոմենտից մինչև այրվելը լիովին դադարելու մոմենտը: Հրդեհն աստիճանաբար նվազում և: Այս ստադիան, որը ժամանակի տեսակետից ամենայերկարն և, հաճախ դուրս իսկ հրդեհի միջին ուժի դեպքում հասնում և մի քանի ժամի, վորովհետև հրդեհը վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելու համար պետք և վառվող կառուցվածքները քանդել:

Կիրառվող միջոցների գործողությունը գնալով ավելի եֆեկտավոր և դառնում: Վառվելու ոջախը նվազելու հետ միասին հնարավոր և դառնում հզոր միջոցները փոխարինել ավելի թույլ միջոցներով («Ա» փողակները փոխարինել «Բ» փողակներով, փողակներն ավտոնասոսներից տեղափոխել ջրմուղի վրա և այլն):

Հրդեհի ստադիայի գրաֆիկ արտահայտությունը ցույց և տրված նկ. 1-ում:

Նկ. 1-ում պատկերված կորագիծը թույլ և տալիս անելու հետևյալ բնույթի մի շարք յեզրակացություններ.

1. Հրդեհաշեջ խմբի համար ամենից նպատակահարմար և հրդեհին վրա հասնել այն ժամանակ, յերբ նա հենց նոր և ծագել, այսինքն նրա առաջին ստադիային: Հենց այս սկզբունքի վրա ել հիմնված և մարևե բնակավայրի հրդեհաշեջ պահպանության գործի կազմակերպումը:


Հրդեհաշեջ խմբերի տեղաշարժումը կատարվում և այն հաշվով, վոր նրանք սպասարկվող շրջանի վորևե կետը հասնեն 5 րոպեյից վոչ ուշ: Դրանով ել վորոշվում և

հրդեհաշեջ խմբի մեկնման շառավիղը՝ ավտոքարշի համար 3 կմ-ից վոչ ավելի, ձիաքարշի համար 1-ից մինչև 1,5 կմ։

Սակայն մի շարք պատճառներով հրդեհաշեջ խմբերը հաճախ ունենում են գործողության ավելի մեծ շառավիղ (5—8 կմ), հետևապես, կարող են հրդեհի վայրը հասնել միմիայն յերկրորդ ստադիայի սկզբին։ Այնուամենայնիվ խումբը նույնիսկ յերկրորդ ստադիայի սկզբին տեղ հասնելով՝ մեծ մասամբ հնարավորություն և ունենում փոքր կոթսաններով հրդեհին վերջ տալու (խմբերի տեղաշարժման հիմնական պայմանները բացատրված են ստորև)։

2. Հրդեհաշեջ խմբի գործողությունների արագությունը, սկսած տաղնապի մոմենտից, և այդ գործողությունների համար սահմանված բացառիկ կարճ ժամկետներն առաջանում են այն ձգտումից, վոր մաքսիմալ չափով պետք և կրճատել այն ժամանակամիջոցը, վորն ընկնում և հրդեհն սկավելու և նրան հանդիպող ուժերի գործադրման միջև։

3. Յերկրորդ ստադիայում հրդեհը հանդիպելիս հրդեհաշեջ խմբի առաջ խնդիրը և դրվում այրվելը, նախ, սահմանափակել և ապա նրան վերջ տալ ամենայն վճռականությամբ նրա վրա հարձակվելով և գործողությունների միջոցներ ընտրելիս ճիշտ վճիռներ կայացնելով։ Հակառակ դեպքում հրդեհի ուժի արագ աճման և յերրորդ ստադիային, այսինքն զարգացման ամենաբարձր կետին հասնելու սպառնալիք և առաջանում։



Նկ. 1

Այս ամենը բերում և այն յեզրակացության, վոր յեթե հրդեհի զարգացման առաջին մոմենտներին տեղ հասած ուժերն անբավարար են ինքնուրույն կերպով հրդեհին վերջ տալու համար, անհրաժեշտ և ոգնության կանչել այն չափով, վորով այդ առաջվա ուժերն առնվազն յերկու անգամ ավելանան։ Այսպես, յեթե № 1-ով տեղ են հասել 2 ջոկ, № 2-ով պետք և հավաքել վոչ պակաս, քան 4 ջոկ։ ՄՍՀՄ-ի խոշոր խմբերում № 2-ով ուժերն ավելանում են 3—4 անգամ։

Այն հրդեհաշեջ խմբերը, վորոնք յերկրորդ կանչով (№ 2) ուժերը միմիայն աննշան չափով են ավելացնում, կատարում են անուղղելի սխալ. յեթե այդ սկզբնական տեղ հասած ուժերը չեն կարողացել ռեզերվներն անհապաղ գործի դնելով ինքնուրույն կերպով հրդեհին վերջ տալ, վերջինս կարող և ուժ առնել և սպառնալ իր յերրորդ ստադիային անցնելու։ Իսկ հրդեհը յերրորդ ստադիային հասցնելն արդեն բնորոշում և հրդեհաշիջման դեկավարի և գործող ստորաբաժանումների թուլությունը։

4. Հրդեհաշիջման ժամանակ առանձնապես անհրաժեշտ և, վոր հրդեհաշեջ խմբերը հանդես բերեն գործողությունների վճռականություն և արագություն, վորովհետև առանձին դեպքերում հրդեհի զարգացման բարձրագույն փաղը կարող և չափազանց շուտ սկսվել, վորով այդ դեպքում արդեկոր փրկելու հնարավորությունն սպառնալիքի տակ և առնվում։


Կասկածից միանգամայն դուրս և, վոր նաև այդ ստադիային հասած հրդեհը կարելի յե դադարեցնել։ Նկատի ունենալով, վոր հրդեհաշեջ խմբերի դերը կայանում և հրդեհն իր ժամանակին հանդցնելու մեջ, արդեկոր կրակին զոհ դառնալը հաստատում և միայն այն, վոր հրդեհաշեջ խումբն իր դերը չի արդարացրել։

5. Յերրորդ ստադիայում հրդեհը հանդցնելը պետք և անխուսափելիորեն կապված լինի հրդեհաշեջ մարտական ուժերի մաքսիմալ կենտրոնացման և ավելի հզոր միջոցներ գործ դնելու հետ։


Այս ստադիայում գործողությունների տակտիկան չի սահմանափակվում միմիայն հրդեհի հիմնական ոջախը հարվածելով, այլ նա պետք և կրակից պաշտպանի նաև հարևան ոբյեկտները։

6. Նկ. 1-ում պատկերված կորագիծը բնորոշում է այն հրդեհները, որոնք իրենց զարգացման բոլոր ստադիաներն անցնում են: Սակայն այն դեպքերում, երբ հրդեհն իր յերրորդ ստադիային անցնելուց առաջ դադարեցված է (հաճախ յերկրորդ ստադիայի վրևե մասում), հրդեհի զարգացման կորագիծն ստանում է նկ. 2-ում պատկերված տեսքը:

Ամենաբարենաջող կորագիծը նկ. 3-ում բերված կորագիծն է, այսինքն յերբ հրդեհը դադարեցվում է իր զարգացման առաջին ստադիայում՝ իր ժամանակին ձեռք առնված միջոցներով:



Նկ. 2



Նկ. 3

Վերլուծման յենթարկելով հրդեհի ծավալման հիմնական պատճառները, կարելի յե հետևյալ յեզրակացություններն անել.

Հրդեհի ծավալման առաջին պատճառը վառունակ նյութի գոյությունն է: Վորքան շատ վառունակ նյութ կա, այնքան ավելի շատ նպաստավոր հող կա կրակի ըզգալի ոջախ առաջանալու համար: Հակահրդեհային պրոֆիլակտիկայի պահանջը, վորն ուղղված է արտադրական կորպուսաններում կամ որյեկտների տերիտորիայում վառունակ նյութեր կուտակելու դեմ, հիմնականում հենց հետապնդում է հրդեհի ծավալման այդ բարենպաստ հնարավորությունը վերացնելու նպատակը:

Յերկրորդ պատճառը ջերմաստիճանի բարձրացումն ու նառագայթային ջերմությունն է: Հրդեհի ոջախը վորքան մեծ է, այնքան այդ ֆակտորների ներգործությունն ուժեղ է: Ջերմաստիճանի բարձրանալը նյութի դեռևս չվառվող մասերի վրա մի տեսակ «նախապատրաստական» ազդեցություն է ունենում, դարձնում է նրան վառունակ, ըստ վորում նկատվում է, վոր կրակի մեծ ոջախ լինելու դեպքում այդ ներգործությունը չափազանց ուժեղ է և զգալի հետևանքներ է ունենում: Ճառագայթային ջերմությունն իր հերթին, կրակի ոջախը մեծանալու դեպքում ավելացնում է իր ազդեցության զոնան, նպաստելով նաև կրակի ծավալմանը:

Յերրորդ պատճառը վառունակ գոլորշիների կամ գազերի (փոշու) գոյությունն է: Այս նյութերը լցնելով, հաճախ զգալի տարածություններ, իրենց բռնկումով նպաստում են կրակը բոլոր ուղղություններով և զգալի արագությամբ տարածվելուն. բացի դրանից, հնարավոր է, վոր պայթյուն առաջանա, վորը կարող է կառուցվածքներն ավերել և կրակի շարժման համար նոր ճանապարհներ բացել:

Չորրորդ պատճառը ոդային հոսանքներն ու ոդի մղելու ծրագրային շարժումներն են: Կրակի ամեն տեսակի ոջախի դեպքում ոդի հոսանքն անխուսափելի յե: Փոքր ոջախների դեպքում ոդի շարժումը կարող է շատ քիչ նկատվել, սակայն մեծ ոջախների (բայց հրդեհների) դեպքում նույնիսկ քամի չեղած յեղանակին ոդի շարժման ուժը խիստ մեծանում է, կրակի կայծերն ու վառվող խոշոր մասերը թռցնելով 300 մետր և ավելի հեռավորության վրա:

Ներսի հրդեհների ժամանակ ոդի շարժման ուղղությամբ վորոշվում է կրակի տարածման ուղղությունը: Մեծ կուբատուրա ունեցող շենքերի հրդեհների ժամանակ ոդի շարժման արագությունը շատ մեծ է. ծուխն ու կրակը վոչ միայն սոսկ կերպով ծավալվում են հարևան շենքերը, այլև ուժգնորեն դուրս են ցայտում (ճնշման տակ) և բացառիկ արագությամբ տարածվում են:

Հինգերորդ պատճառը հրդեհի չափերի յեվ ուժի ընկատմամբ պայմարի միջոցների սահմանափակ կամ անհամապատասխան լինելն է: Այսպես, որինակ, փայտասողոցիչ գործարանի բաց հրդեհի դեպքում ներկա յեղած-

ներից մեկը գործի դցեց ձեռքի քիմիական կրակմարիչ և փորձեց նրան կիրառել։ Տվյալ դեպքում գործադրված միջոցների և հրդեհի չափերի միջև գոյություն ունի բացարձակ անհամապատասխանություն։

Հրդեհաշեջ խմբերի պրակտիկայում կան նաև այլ ձևով արտահայտված անհամապատասխանության դեպքեր։ Ցերեկն ի զարգացած հրդեհի ժամանակ, երբ պահանջում է գործի դնել մի քանի ջոկ, փորձ է արվում հրդեհին վերջ տալ «ինքնուրույն» կերպով մեկ ջոկի ուժերով, այն էլ «Ա» փողակների փոխարեն «Բ» փողակներով։ Այս հաճախ նկատվում է արդյունաբերական օբյեկտների հրդեհների ժամանակ, երբ տեղական հրդեհաշեջ խմբերը փորձում են ամեն տեսակի հրդեհ հանգցնել սեփական միջոցներով, որի պատճառով էլ քաղաքային հրդեհաշեջ խմբերին անմիջապես չեն կանչում։

Հրդեհը հանգցնելիս կարևոր նշանակություն ունի ղեկավարի հմտությունը՝ որոշելու, թե տվյալ դեպքում ինչպիսի միջոցներ պետք է կիրառել հրդեհը հանգցնելու համար։ Ինչպես բժիշկը հիվանդի մահից փուշ հանելիս վիրաբուժական ոգնության չի դիմում և հիվանդի ձեռքը չի վիրահատում, այնպես էլ հրդեհաշիջման ղեկավարը հրդեհը հանգցնելիս պետք է սահմանափակվի միմիայն անհրաժեշտ միջոցներով և ուժերով։

Պայքարի միջոցների սահմանափակ լինելը մեծ մասամբ հեռանք և հրդեհաշեջ պահպանության անբավարար աշխատանքի, որը հանդում է նրան, որ կամ տվյալ օբյեկտը (գործարանը, ֆաբրիկան) ապահովված չե հրդեհը հանգցնելու անհրաժեշտ միջոցներով, կամ հնարավորություն ունենալով համապատասխան ուժեր գործադրելու, հրդեհաշիջման ղեկավարն այդ հնարավորությունը չի ոգտագործում, սահմանափակվելով ուժերի մինիմալ քանակով։


Այդ պատճառները, որոնք չերեք օբյեկտիվ պատճառներ չեն, սերտորեն կապված են հրդեհի ծավալման

վեցերորդ պատճառի—հրդեհը հանգցնելու միջոցների (բավականաչափ) իրացման սխալների հետ։

Այս սխալները, գլխավորապես տեխնիկական հասկացողությամբ, կարող են արտահայտվել չափազանց բազմազան գործողություններով. դիրքի սխալ ընտրություն, գործողությունների դանդաղություն, վոչ ժամանակին ոգնություն կանչելը, չեղած տեխնիկական միջոցների սխալ ոգտագործում և այլն, չեվ ամբողջովին վերաբերում են հրդեհաշեջ խմբին ու հատկապես վերջինի ղեկավարությանը։

Իբրև տակտիկական անդրագետ գործողությունների պարզ որինակ կարող է ծառայել գործարանային կորպուսներից մեկում տեղի ունեցած հրդեհաշիջման դեպքը (նկ.4)։

Տվյալ դեպքում տեղի չե ունեցել կրակի հետաձգում, և վոչ թե անհրաժեշտ միջոցների խիստ հակադրում կրակին։ Այն ժամանակ, երբ հրդեհաշեջ խումբը կատարում եր



Նկ.4

ղեկավարի հրամանները և գրավել եր իրեն ցույց տված դիրքերը, կրակը կարողացել եր առաջ անցնել, որի հետևանքով պահանջվել է նորից դիրքերը փոխել, գծերը կարացնել, որոնք ժամանակի կորստի հետ են կապված և այլն։

Ուժերի ճիշտ բաշխում կատարելու և հրդեհի տարածման հնարավորությունն իր ժամանակին նախագուշակելու համար, անհրաժեշտ է գիտենալ, թե հատկապես ինչ ճանապարհներով կարող է կրակը ծավալվել։


Այդ ճանապարհները կարելի է բաժանել արտաքին և ներքին ճանապարհների։

Հրդեհի տարածման արտաքին ճանապարհների շարքը պետք է դասել վառոնակ պատերը (չպաշտպանված), առաստաղները, կամարներն ու քիվերը, պատուհանների ու դռների յերեսները, որոնք պատրաստված են վառոնակ նյութերից, վառոնակ ոժանդակ կառուցումներն ու ցանկապատերը, բաց պատուհաններն ու դռները և պատուհանների ու վոչ հրակայուն պատերի մոտի վառոնակ նյութերի գոյությունը։

Այս ճանապարհներից աչքի չեն ընկնում ապարակի ներսի վառվող շենքերի միջև անընդհատ ցանկապատերը. վորոշ դեպքերում նպատակահարմար է սրանց ոգտագործել իբրև ճառագայթային յերմության ներգործությունից պաշտպանող միջոց՝ թե հարեվան շենքերի, և թե փողոցներով աշխատող մարտիկների համար։ Վերոհիշյալը հասկանալի է նկ. 5-ում պատկերված սխեմայից։

Կրակը ներքին ճանապարհներով տարածվել կարող է գլխավորապես վառոնակ առարկաներով կամ նյութերով լցված տեղերով, ողի և գազերի շարժման տեղերով, ամեն տեսակի անցքերի ու խորշերի միջով (նույնիսկ նրանց անշան փոքրության դեպքում), միջհարկային ծածկերի և միջնորմների արանքների դատարկ տարածություններով, ոդափոխիչ սիստեմի ճանապարհներով, խողովակների անցկացման տեղերով, ծակ ու ծուկերով, ծածկերի ու պատերի դյուրավառ տեղերով, դռների շեմքերից, վառոնակ ու մետաղե պաշտպանական ծածկերից մերկացված ներսի քանդված տեղերով, մետաղե կառուցվածքների տարբերի շփկացման տեղերով, հակահրդեհային անջատիչների և պաշտպանական կառուցվածքների դեֆեկտների հետևանքով։

Պայքարը հրդեհների դեմ թե նախազգուշական միջոցների գծով և թե հրդեհը հանդցնելու գծով, պահանջում է մշտական և ուշադիր կերպով ուսումնասիրել վառվելու հատկությունները։ Այս ուսումնասիրության հիման վրա հրդեհների դեմ պայքարելու ճիշտ միջոցներ գտնել, նոր մեթոդներ ու ձևեր մշակել, կատարելագործված նոր գործիքներ ու ապրեգատներ պատրաստել։



Նկ. 5

ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Հրդեհաշիջման գործի կազմակերպման համար անհրաժեշտ և հետևյալ հիմնական 5 տարրերի համակցությունը. 1) հրդեհաշիջ խմբի պատրաստված անձնակազմ, 2) հատուկ տեխնիկական միջոցներ, 3) կապ, 4) ջրամատակարարում, 5) հաղորդման ճանապարհներ։

Այս տարրերից թեկուզ մեկի բացակայությունն այս սիստեմից՝ կամ նրանցից վորևե մեկի վոչ լիարժեքությունն այս կամ այն չափով ազդում է հրդեհին վերջ տալու հաջողության վրա։ Իրոք, կարելի է ունենալ տեխնիկական հարուստ միջոցներ, կապի կատարելագործված սիստեմ, լավագույն ջրամատակարարում, կատարելագործված ճանապարհներ, սակայն յեթե այդ տվյալներով հանդերձ լինել վատ պատրաստված, իր տեխնիկային լիովին տիրապետել չկարողացող, անկարգապահ, հետևապես նաև վոչ մարտունակ անձնակազմ, հրդեհաշիջման մեջ հաջողության հասնելի չի կարելի։

Սակայն, չի կարելի սրանից այնպիսի յեզրակացություններ անել, թե անձնակազմը տարրերից վորևե մեկի վոչ լիարժեքության դեպքում չի կարող հրդեհը հաջողությամբ հանդցնել՝ տեխնիկական լավագույն ջրմուղի բացակայության, «ճանապարհների անբավարար վիճակի» վրա և այլն։

11-28813

Այս պայմանները, ի հարկե, դժվարացնում են հրդեհին հաջողությամբ վերջ տալու գործը, սակայն ամեն մարտիկի և հրամանատարի արժեքը կայանում է հենց նրանում, որ այդպիսի թերություններով հանդերձ կարողանա ապահովել կազմակերպչական միջոցառումների, աշխատանքի տեմպերի ուժեղացման, աշխատանքի նոր մեթոդներ գտնելու լիարժեք աշխատանքը և այլն:

Կարմիր բանակը քաղաքացիական պատերազմի շրջանում չուներ վնչ պարեն, վնչ հագուստ և վնչ էլ հարկ չեղած զինվածություն, սակայն նա իր հեղափոխական խանդավառությամբ վայրկյան հաղթանակ տարավ սպիտակների և առաջնակարգ ռազմական տեխնիկա ունեցող ուսաերկրյա զեներալների դեմ:

Հետևապես այստեղ խնդիրը պետք է հասկանալ այն իմաստով, որ հրդեհաշեջ խումբը բոլոր հնարավոր միջոցներով պետք է ձգտի բոլոր 5 րոպեների մեջ ամենաճեռնտու հավանարություն առեղծել, սակայն միաժամանակ առանց իր աշխատանքի վորակն իջեցնելու, յեթե այդ րոպեների մեջ չեղած հավանարակշռությունն այսպես թե այնպես խախտվել է:

1. Անձնական կազմը հրդեհաշիջման մյուս րոպեների մեջ հիմնական և վճռական դեր է խաղում, ուստի անձնական կազմի աշխատանքի այդ հարցին, նրա համալրմանը, ուսուցմանը, նոր կադրերի աճեցմանը պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնել:

Նկատի ունենալով, որ հրդեհաշեջ խմբերն իրենց կազմում ունեն կազմակերպված, լավ պատրաստված, կարգապահ մարտիկներ, ոժտված են ժամանակակից բարձր տեխնիկայով, հնարավորություն ունեն վայրի և յեղանակի բազմազան պայմաններում մանեվրելու, ուստի հրդեհաշեջ խմբերի առաջ խնդիր է դրվում ամեն պայմաններում ու պարագայում ապահովել իրենց աշխատանքի հաջողությունը:

Այդ նշանակում է, որ յուրաքանչյուր մարտական խնդիր պետք է անպայման լուծել և լուծել հաջող կերպով: Հրդեհաշեջ խմբում այլ դրություն լինել չի կարող: Հրդեհաշեջ խմբի այս նշանակությունը հրդեհաշեջ մարտիկի և հրամանատարի մարտական հատկությունների նկատմամբ առանձնահատուկ մեծ պահանջներ է առաջադրում:

Հրդեհաշեջ խմբի ուսուցումը, դաստիարակությունը և մարտունակությունը հիմնված է մարտիկների և հրամանատարների քաղաքական բարձր գիտակցության, մեր մեծ հայրենիքի շահերին նրա աննախընթաց նվիրվածության և կոմունիստական կուսակցության շուրջը հրդեհաշեջ խմբի ամբողջ կազմի դասակարգային համախմբվածության վրա:

Անհրաժեշտ է անպայման կանգ առնել հրդեհաշեջ պահպանության հրամանատարի դերի վրա: Հրամանատարը պետք է իրեն յենթակա մարտիկներին դաստիարակի, պատրաստի մարտի համար և առաջնորդի դեպի մարտ: Հրամանատարը լիովին պատասխանատու չե իր ստորաբաժանման մարտական և քաղաքական պատրաստության: Հրամանատարն իր ստորաբաժանման մարտական գործողությունների հաջողությանը կարող և պատասխանատու լինել այն դեպքում միայն, յեթե նա իր մանափետությանը տիրապետում է և դրա հետ միասին հանդիսանում է իրեն յենթակա մարտիկների քաղաքական դեկավարը:

Հրամանատարի, վորպես պետի և դաստիարակողի, աշխատանքը պետք է հիմնված լինի իրեն յենթակա յուրաքանչյուր մարտիկի մոտիկ գիտության վրա: Միմիայն այդպիսի դեպքում հրամանատարը կարող է կոնկրետ ուղղություն տալ իր ստորաբաժանմանը և նրան դեկավարել, ավելի ճիշտ կերպով և լիովին ոգտագործելով յուրաքանչյուր մարտիկի ուժերն ու ընդունակությունները: Դաստիարակելով իր մեջ կամքի և նախաձեռնության սեր պետի անհրաժեշտ հատկություններ, հրամանատարը դրա հետ

միասին պետք է յուրաքանչյուր մարտիկի մեջ զարգացնի հաստատակամություն, հնարամտություն, նախաձեռնություն և տոկունություն։

Մարտիկների քաղաքական գիտակցականությունը և համոզվածությունն ամենից առաջ ոգեշնչում է մարտական գործողության համար՝ հենվելով սոցիալիստական սեփականությունը հրդեհից պահպանելու և այդ պահպանությունն ամրապնդելու ու զարգացնելու համար մղվող պայքարի խնդիրները և ռազմական հանձնարարությունը հասկանալու վրա։

Հրամանատարը ստորաբաժանման մարտական ու քաղաքական պատրաստման գործը դեկավարելիս պետք է մշտապես անհատական հոգատարություն հանդես բերի դեպի մարտիկները, ոգնի նրանց կուլտուրական ու քաղաքական աճմանը, լուծում տա նրանց կենցաղային կարիքներին ու պահանջներին։

Հրամանատարի ամենակարևոր պարտականությունն է մարտիկների մեջ ստեղծելու բարձր կարգապահություն, վորով ապահովվում է նրա յուրաքանչյուր կարգադրության ու մարտական խնդիրների կատարման արագությունը։

Կարգապահության վիճակը մեծապես կախված է հրամանատարների կարգապահ լինելուց, վորոնք պետք է կարգապահության որինակ հանդիսանան։

Հրդեհաշեջ պահպանության հրամանատարը հանդիսանում է գոյություն ունեցող տեխնիկայի և նրա նորագույն տեսակների տիրապետման համար մղվող պայքարի կազմակերպիչ։ Նա իր ամբողջ աշխատանքով պետք է հասնի այն բանին, վոր մարտիկները կատարելապես տիրապետեն տեխնիկական գիտվածությանը և ուսումնասիրեն հրդեհաշեջման տակտիկան։ Հրամանատարը հրդեհաշեջ պահպանության մեջ պետք է լինի սոցիալիստական մրցակցության և աշխատանքի ստախանովյան մեթոդների կազմակերպիչ և դեկավար։

2. Պակաս կարևոր դեր չի խաղում պահպանվող օբյեկտների պայմաններին համապատասխան հրդեհաշեջ խմբերի տեխնիկական գիտվածությունը։

Հրդեհաշեջ բոլոր ավտոմեքենաները և ձիաքարշերը, վորոնք նախանշանակված են հրդեհաշիջման ժամանակ համապատասխան խնդիր կատարելու համար, բաժանվում են հիմնական և ժամանակ միավորների։

Հիմնական միավորներ համարվում են այնպիսի ավտոմեքենաներն ու ձիաքարշերը, վորոնց սարքավորումը թույլ և տալիս հրդեհաշիջման աշխատանքը կատարել ինքնուրույն կերպով, առանց լրացուցիչ միջոցների ոգնության դիմելու։ Սրանց են պատկանում՝ ավտոնասոսները, նասոսավոր ավտոցիստերնները, ավտոմեխանիկական սանդուխքները, ձիաքարշի մոտոպոմպերը, նասոսավոր ձիագծաքարշերը և այլն։

Այդ բոլոր հիմնական միավորները միատեսակ տիպի միավորներ չեն և այն գործողությունները, վոր կարելի յե այդ միավորների ոգնությամբ ծավալել, նույնպես միատեսակ չեն։ Այսպես, որինակ, չի կարելի ավտոնասոսի գործողությունը հավասարեցնել նասոսա-գծաքարշի գործողությանը։ Հետևապես, թեև այդ միավորներից յուրաքանչյուրը կարող և ինքնուրույն կերպով հրդեհաշիջման խնդիրը կատարել, սակայն այդ խնդիրների պայմաններն ու այն միջոցները, վորոնք ոգտագործվում են հրդեհաշիջման համար, տարբեր են։ Տեսնենք, թե ինչով են վորոշվում այդ պայմաններն ու միջոցները։

Ոժանդակ միավորներին են վերաբերում այնպիսի ավտոմեքենաներն ու ձիաքարշերը, վորոնք իրենց սարքավորման բնույթով չեն կարող անմիջական հրդեհաշիջման աշխատանք կատարել (յենթադրենք, թե փողակ տալ), և վորոնց դերն այն է, վոր հիմնական միավորներին ոգնելու կամ նրանց աշխատանքը լրացնելու համար առանձին ոժանդակ կամ հատուկ աշխատանք կատարեն։

Ոժանդակ միավորներին են վերաբերում՝ առանց նասոսի մեխանիկական սանդուխքները, տեխնիկական քար-

շերը, ջանգաքարշերը, լուսավորիչ քարշերը, կապի քարշերը, ջրա-և ծխապաշտպանության քարշերը, տակառավոր ձիաքարշերը և այլն։

«Տակտիկական միավոր» ասելով պետք է հասկանալ այն զինվածությունը, որը զորոշ հանձակի մարտիկներով հրդեհն ինքնուրույն կերպով անմիջապես հանգցնում է, որի համար պահանջվում է ոչ պակաս, քան «Ա» փողակներով յերկու ջրացայտ (մեկով կրակի տարածման առաջն առնելու, մյուսով վառվելու ոջախին հարվածելու համար) և դուբսքաշովի անդուխքը դնել մեկ մարդու նորմալ բեռնվածությամբ, այսինքն մարտական հաշվի յուրաքանչյուր համար այդ աշխատանքը կատարելիս պետք է ունենա միմիայն մեկ հիմնական պարտականություն։

Մարտիկների մի որոշ քանակ կոչվում է ջոկ, որը հանդիսանում է հրդեհաշեջ խմբի ոպերատիվ-շարային միավորը։

Ջոկի թվական մեծությունը գանգան քարշերի համար նույնը չէ, այլ ատատանվում է նայած ավյալ քարշի կամ ավտոմեքենայի սարքավորմանը։

Յեթե ջոկն ավտոնասոս ունի, այդ ավտոնասոսը վորպես զինվածություն լիովին բավարար է, վորպեսզի հնարավոր լինի փողակներով յերկու ջրացայտ տալու և դուբսքաշովի անդուխքը դնելու։ այլ խոսքով, ավյալ դեպքում տակտիկական միավորի կազմի մեջ մտնում է միայն մեկ ավտոնասոս։

Իսկ յեթե ջոկն ունի ձիագումակ, այդ դեպքում տակտիկական միավորի կազմի մեջ կմտնեն մի քանի քարշեր, վորովհետև հնարավոր չե մեկ ձիաքարշով տեղափոխելու ձեռքի յերկու նասոս, անհրաժեշտ քանակությամբ ջուր և ջոկի անձնական կազմին։ Որինակ, մեկ տակտիկական միավորի կազմի մեջ մտնող այդպիսի քարշեր կարող է հանդիսանալ յերկու նասոսատակառավոր և յերկու տակառավոր քարշերի համակցությունը։

Ձիաքարշերի համակցության վերոհիշյալ որինակը պարտադիր չե, վորովհետև նայած տեղական պայմաններին (ջրմուղի առկայությունն կամ բացակայությունն) գումակի կազմի համեմատ հնարավոր են քարշերի զանազան կոմբինացիաներ։ Կարող է հնարավոր լինել տակտիկական միավորի կազմի մեջ միացնել մոտոպոմպավոր նասոս-դծաքարշն ու յերկտակառավոր քարշերը կամ նասոսատակառավոր քարշն ու ջանգաքարշը և այլն։

Հետևապես, «տակտիկական միավոր» հասկացողությունը բնորոշվում է ոչ թե քարշերի քանակով, այլ այն ոպերատիվ խնդրի ծավալով, վորն անհրաժեշտ է լուծել մեկ ջոկի ուժերով համապատասխան զինվածությամբ։ Վերը մատնանշվեց, վոր ոպերատիվ խնդրի այդ մինիմալ ծավալը կայանում է այնպիսի հրդեհի վերացման մեջ, վորը հանգցնելու համար պահանջվում է առնվազն «Ա» յերկու փողակ և դուբսքաշովի անդուխք։ Սրանք մինիմալ պահանջները են, վորոնց պետք է տակտիկական միավորը բավարարի

Իսկ գործնականում, հրդեհի պայմաններում, ավտոնասոս ունեցող ջոկից կարելի չե պահանջել այնպիսի գործողություններ, վորոնք թույլ են տալիս նրա ուժերն ու միջոցները լրիվ ծավալով ոգտագործելու։ Յեվ իրոք, անհրաժեշտության դեպքում ավելի նպատակահարմար և այդպիսի ջոկից ստանալ «Ա» փողակների վոչ թե յերկու ջրացայտ, այլ «Ա» և «Բ» փողակների չորս ջրացայտ կամ «Բ» փողակների յերեք ջրացայտ, միաժամանակ կատարելով նաև այլ աշխատանքներ՝ դուբսքաշովի անդուխքը կամ դրոհատանդուխքը դնել, տանիքները բացել և այլն, վորը և հրդեհների ժամանակ մեծ մասամբ տեղի չե ունենում։

Համենայն դեպս, քանի վոր տակտիկական միավորի աշխատանքն ինքնուրույն աշխատանք է հանդիսանում, կարելի չե ջոկին հանձնարարել առանձին ոպերատիվ խնդիր կատարելու և այդ կատարումը պետք է ջոկն ապահովի իր տրամադրության տակ յեղած բոլոր ուժերով ու

միջոցներով՝ ջոկի հրամանատարի անմիջական դեկավարությամբ ու պատասխանատվությամբ։ Որինակ, ջոկին առաջադրություն է տրվում չերպակի վորոշ մասում կրակի ծավալումը դադարեցնել և հարկի ցածի մասը պաշտպանել։ Այդ ջոկին կարելի չե տալ ուժանդակ միավոր-ավտոմեխանիկական սանդուխք։ Հետևապես, այդ ջոկը հրամատատախան շանգագծերը պարզելիս «Բ» փողակը չերպակին պետք է տա ներսի սանդուխքով, 2—3 մարտիկին պետք է մեխանիկական սանդուխքով բարձրացնի, ավյալ շենքն ապահովելու համար տալով նրանց նաև «Բ» փողակ և, տանիքը քանդել տալիս, գործածության դնի փողակը։ Բացի դրանից, ջոկը պետք է մեկ փողակը (յերրորդ) ուղղի հարկին՝ չերպակի տակի շենքը պաշտպանելու համար։

Այդ խնդիրը կատարելիս պետք է ջոկի ուժերը լրիվ ոգտագործել, միաժամանակ յուրաքանչյուր մարտիկի բեռնվածությունը թողնելով նորմալ, այնպես վոր յուրաքանչյուր մարտիկ կատարի մեկ հիմնական պարտականություն։ Սակայն և կարող է այնպես լինել, վոր առանձին մարտիկներ, բացի հիմնական աշխատանքից, նաև վորոշ լրացուցիչ աշխատանք կատարեն։

Յուրաքանչյուր քարշի ինքնուրույնությունը հանդիսանում է այն սկզբունքը, վորի վրա հիմնված է ավտոմեքենաների կառուցվածքը։ Այս հատկությունն ունի հակայական ոպերատիվ արժեք, վորը հնարավորություն է տալիս միաժամանակ մի քանի հրդեհներ հանգցնել։ Այնուամենայնիվ այս անհրաժեշտ է ՀՈՔՊ-ի պայմաններում, յերբ հրդեհաշեջ խմբի առաջ դրվում է մասսայական հրդեհներին միաժամանակ վերջ տալու խնդիրը։

Ավտոմեքենաների, ձիագումակի և նրանց սարքավորման տիպի ընտրությունը կախված է հրդեհաշեջ խմբերի կողմից կատարվող աշխատանքի բնույթից և տեղական պայմաններից։ Այսպես հրդեհներն անմիջապես հանգցնելու համար անհրաժեշտ են՝ նասոսներ, շանգներ, փողակներ և այլն, բարձրությունների վրա աշխատելու համար՝ սանդուխքներ,

մարդկանց փրկության համար փրկող գործիքներ և այլն։

Տեղական պայմաններ ասելով պետք է հասկանալ ջրամատակարարման բնույթը (ջրի բացակայության դեպքում, հասկանալի յե, վոր անհրաժեշտ են տակառաքարշեր կամ ցիստերներ), ճանապարհների բնույթը (ավտոքարշ գործածելու հնարավորություն), շենքերի բարձրությունը (բարձր շենքերի համար պահանջվում են մեխանիկական սանդուխքներ), հրդեհաշիջման հատուկ միջոցներ պահանջող արտադրությունների և այլ օբյեկտների գոյությունը։

Հրդեհաշեջ քարշերի ընտրությունը կատարվում է հաշվի առնելով վոչ միայն գոյություն ունեցող պայմանները, այլև անպայման այն բոլոր փոփոխությունները վորոնք մոտիկ ապագայում քաղաքի (ավանի, գործարանի) զարգացման և բարեշինության պլանով նախատեսվում են։

3. Կապ հրդեհաշեջ խմբերի աշխատանքում հասկացվում է յերկու ուղղությամբ. 1) հրդեհի վերաբերյալ հաղորդումների կապ և 2) ոպերատիվ կապ, վորը հրդեհի ժամանակ գործող ստորաբաժանումները հատատում են ճակատի և թիկունքի միջև և այլն։ Մեր կողմից բերված որինակում նկատի յե առնված այն կապը, վորով ապահովվում է հրդեհի վերաբերյալ հաղորդումը։ Այդ կապը կարող է տեղի ունենալ հեռախոսով և ելեկտրական հրդեհաշիջման ազդանշանով։

Հեռախոսային կապը հնարավոր է քաղաքային ցանցով և այն ուղղակի հաղորդիչներով, վորոնք հրդեհաշեջ խումբը կապում են առանձին օբյեկտների հետ։ Հեռախոսային կապը լուծում է հրդեհի վերաբերյալ հաղորդման հարցը, սակայն այստեղ ել հնարավոր է, մեկ կողմից, ձգձգում (խոսողի միանալը կենտրոնական կայանի միջոցով), մյուս կողմից, վատ լսելու հետևանքով յերբեմն հաղորդածը սբխալ և հասկացվում, փողոցների անունների ձայնական նմանություն և այլն։ Հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, յերբ խոսողը շատ կերպով սխալմամբ միանում է վո՛չ թե հրդեհաշեջ խմբի, այլ ուրիշ աբոնենտի հետ և, առանց միացման ճշտությունն ստուգելու, հասցեն հաղորդում է և

հավաստով, որ հրդեհաշեջ խումբն արագ կերպով տեղ է հասնելու, փողակը կախում է. սակայն իրականում հրդեհաշեջ խումբն այդ մասին չի տեղեկացել, որի պատճառով և չի մեկնում։

Ուղղակի հեռախոսային կապն զգալիորեն գործը լավացնում է (հուսալիության տեսակետից), որովհետև ամեն դեպքում հրդեհաշեջ խմբի մեկնումն ապահովված է օբյեկտի ճիշտ հասցեով, քանի որ այդ օբյեկտը խմբի հետ միացած է ուղղակի հեռախոսով։

Հրդեհաշեջ կապի ամենակատարելագործված տեսակը ելեկտրական հրդեհաշեջ ազդանշանն է։ Վերջինով ապահովվում է հրդեհի վերաբերյալ հաղորդման արագությունն ու հուսալիությունը, շփոթվածության, միմյանց լավ չհասկանալու հնարավորությունը վերանում է և այլն. ազդանշաններ դնելու տեղերը հայտնի չեն և չի պահանջվում հասցեի մասին հաղորդել. հակառակ ազդանշանը խոսողին հաղորդում է այն մասին, որ նրա հաղորդումն ընդունված է։

Մի շարք տեղերում (հատկապես հրդեհավտանգ տեղերում), ուր ստացիոներն անհրաժեշտ է հրդեհի մասին անմիջապես տեղեկացնել, մանավանդ այն տեղերում, որտեղ մարդիկ քիչ են լինում (չերդակներ, պահեստներ և այլն), կարելի չէ դնել սպրինկլերների սիստեմով գործող ավտոմատ հաղորդիչներ։

Վերջապես, տեխնիկայի վերջին խոսքը, որն այդ ուղղությամբ ել ավելի լայն հնարավորություններ է բացում մեր առաջ, հանդիսանում է ֆոտո-ելեմենտների կիրառումը, որոնց էությունը հետևյալն է. լուսազգայուն թիթեղի վրա ընկնում է լույսի մշտական ճառագայթը. հրդեհը ծագելիս բավական է նույնիսկ լույսի աղբյուրի և թիթեղի արանքի չնչին ծուխը, որպեսզի լույսի ճառագայթն ընդհատվի և գործիքն աշխատի։ Այդպիսով հրդեհի վերաբերյալ հաղորդումն իրոք կարող է ստացվել իր ժամանակին, այսինքն հենց հրդեհը ծագելիս։

4. Պակաս նշանակություն չունի նաև ջրամատակարարումը, քան տեխնիկական գինվածությունը։ Հրդեհաշիջման համար հնարավոր է ջուր ստանալ ջրմուղից կամ բաց ջրափոսերից (գետ, ավազան և այլն)։

Ջրմուղները պատրաստում են համապատասխան նորմաների և պահանջների համեմատ, որոնք վերաբերում են ջրամատակարարման հատուկ դասընթացին, որի հետևանքով այստեղ անհրաժեշտ չէ այս հարցերը լուսաբանել։ Մենք նպատակ ունենք շոշափել միմիայն ջրափոսերին (բացառապես արհեստական) առաջադրվող ոպերատիվ պահանջների հարցերը, որչափ որ այդ հարցերը հրդեհաշեջ գրականության մեջ լուսաբանված չեն։

Հիմնական պահանջը ջրափոսի ոգտակար տարողությունն է, այսինքն ջրի այն քանակը, որը կարող է հրդեհաշիջման համար ոգտագործելի լինել։ Ջրի այս քանակը համարվում է 250 մ^3 (ավտոնասոսի անընդհատ աշխատանքի համար յեղած ջրի 3-ժամյա պաշարից վոչ պակաս)։ Պետք է հաշվի առնել, որ 250 մ^3 վերաբերում է բաց, այսինքն սառչելու յենթակա, ջրափոսերին։ Այսպիսով, այստեղ հաշվի չի առնվում սառչելու հետևանքով նասոսի աշխատանքի վրա կորչող ջրի մի մասը և ջրի այն մասը, որը մնում է ջրափոսում՝ ամբողջ ձուրը մինչև հատակը դուրս քաշելու հնարավորություն չլինելու հետևանքով։


Յեթե ջրափոսը ծածկվող տիպի ջրափոս է, որով սառչելու հնարավորությունը վերանում է, ջրի քանակը կարելի չէ սահմանել 180 մ^3։ Ջրափոսի բավականաչափ տարողությամբ դեռևս հարցը չի լուծվում։ Այստեղ եական նշանակություն ունի նաև ջրափոսի ձեվը, որովհետև ջրի այդ քանակը ջրափոսի մակերևույթի վրա կարող է զանազան կերպ տեղավորվել։

Նկ. 6-ում պատկերված ջրափոսերը հրդեհաշիջման համար իրենց ձևերով անպետք են։ Ա ջրափոսն անպետք է, որովհետև ընդունող ջանգածի և նասոսի մեջ կարող է

ցեխ լցվել և ջրափոսը ձմեռ ժամանակ կարող է մինչև հատա կը սառչել։ Բ ջրափոսն անպետք է, որովհետև նասոսից իր մակերևույթով բավականին հեռու չէ, որով և ջրի մի ըզ- գալի մասը ծուռմ է անօգտագործելի (այստեղ հաշվի չի առնված վերջերս հրապարակ չեկած այն դյուտը, որը հնարավորություն է տալիս ջուրը 10 մ ավելի բարձրու- թյունից քաշել)։

Նորմալ ջրափոս պետք է համարել նկ. 7-ում պատ- կերված ջրափոսը։

Այն դեպքում, երբ ավտոնասոսը դնելու համար ջրափոսը հարմար չեզրեր չունի, անհրաժեշտ է մատուցյուներ պատրաս- տել։ Վերջիններս պետք է լինեն բավականին ամուր, որ- պեսզի դիմանան ավտոնասոսների ծանրության այն քա- նակին, որը տվյալ ջրափոսի վրա դրվում է։



Նկ. 6 Նկ. 7

Ջրառնքը ջրափոսից ոգտվելու համար իբրև միջոց կարելի չէ հանձնարարել տակառը ջրում սառեցնելը։ Երբ- դեհաշեջ խումբը ջրափոսին մոտենալիս տակառի ջերմաղիրը գեն են քցում, տակառի հատակը լինգով ծակում են և ըն- դունող ջանգն անց են կացնում բացված անցքի մեջ։

5. Հաղորդման հանապարհները հանդիսանում են երբ- դեհաշեջ խումբը ժամանակին հրդեհի վայրը հասնելու երա- կան պայմաններից մեկը։ Այս հարցում հրդեհաշեջ խմբի ազդեցությունը պետք է սկսվի ճանապարհային շինարա- րության նախագծման մոմենտից։ Այստեղ պետք է հաշվի առնել յերկու հիմնական պահանջ։ Դրանցից մեկն այն է, որ ամուր ճանապարհներ չունեցող քաղաքի շրջաններում ամենից առաջ պետք է կառուցվի քարապատ հիմնական մա- գիստրալ, որով հնարավոր լինի մեկնել մինչև այդ շրջանի

կենտրոնը, հաշվի առնելով շանգագծերն այդ ճանապարհի վրա դրած ավտոնասոսներից պարզելը մինչև այդ շրջանի վրան կետը։ Յերկրորդ պահանջը, որ սերտորեն կապված է առաջնի հետ, հանգում է նրան, որ առաջին հերթին պետք է քարապատ ճանապարհներ անցկացնել այն փողոցներով, որտեղ հրդեհաշեջ հիդրանտներ կամ ջրափոսեր կան։

Կատարելագործված քարապատ ճանապարհները մայթերից յերբեմն բաժանվում են փոքրիկ (25—30 սմ) բազրիքներով, ըստ որում կառուցին վոնտուղուց ավելի ցածր է լինում։ Այս աննշան բազրիքներն առանձին (շատ լայն մայթերի) դեպքերում կարող են մեխանիկական սանդուխքներ դնելու համար ծառայել իբրև խոչընդոտ։ Ուստի անհրաժեշտ է հա- մապատասխան տեղերում մինչև վերջին սահմանը պատրաս- տել փոքրացրած հատուկ բազրիքներ։

Ճանապարհների, քարապատ ուղիների մասին և այլն պետք է հրդեհաշեջ խմբին նախապես իրազեկ դարձնել։ Հանձնարարվում է փակ անցարանների վերաբերյալ հաղոր- դումները կախելու համար սենյակում ունենալ հատուկ տախտակ՝ շոֆերներին, կառապաններին, ատենդերավորնե- րին և պեռևոզչիկին ինֆորմացիա տալու համար։

3. ՀՐԴԵՀԱՇԵՋ ԽՄԲԵՐԻ ՏԱՐԱՏԵՂՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքներում հրդեհաշեջ խմբերի տարատեղման (տե- ղավորման) հիմնական պայմանը հանդիսանում է հրդեհա- շեջ խումբը կանչված վայրը ժամանակին հասնելու անհրա- ժեշտությունը։


Անհրաժեշտ է հասնել այն բանին, որ հրդեհաշեջ խումբը կարողանա հրդեհին վրա հասնել այն մոմենտին, երբ նա գտնվում է իր նախնական տատիճայում, այլևևքն դեռևս զգալի չափերի և ուժեղ զարգացման չի հասել։

Ինչպես փորձը ցույց է տվել, հրդեհների ճնշող մեծա- մասնությունն իր ծագման մոմենտից հաշված 5 րոպե՝ զգալի չափեր չի ընդունում։ Հետևապես, հրդեհաշեջ ոգնությունը

պետք է հասցնել վոչ ուշ, քան հրդեհի ծագման մոմենտից 5 րոպե անց:

Վորպեսզի հրդեհաշեջ խումբը կարողանա սպասարկվող շրջանի վորևե կետը հասնել վոչ ուշ, քան հրդեհի ծագման մոմենտից 5 րոպե անց, անհրաժեշտ է հրդեհաշեջ խմբի շենքից մինչև շրջանի ամենահեռավոր կետերը ավտոմոբիլների համար ունենալ 3 կմ, իսկ ձիաքարշի համար 1—1,5 կմ հեռավորություն:

Այս հեռավորությունը կոչվում է հրդեհաշեջ խմբի մեկնման շառավիղ: Մեկնման շառավիղը կախված է մի շարք պայմաններից, այն է՝ 1) կապի (ազդանշանի) բնույթից, 2) կլիմայական պայմաններից, 3) տերիտորիայի տեղագրական պայմաններից, 4) ճանապարհի վերևի բնույթից, 5) հրակայուն կառուցման բնույթից, 6) կառուցվածքի կազմում արտադրական և այլ հատուկ հիմնարկությունների գոյությունից:



Նկ. 8

Ավտոմոբիլների և ձիաքարշի մեկնման շառավիղի վերոհիշյալ նորմաները ճիշտ են՝ 1) ԽՍՀՄ եվրոպական մասի մեջին շրջանի կլիմայական պայմանների, 2) 8%-ից վոչ ավելի մինչին թեքություններով և չնչին խոտուբորտություններով հարթավայրի, 3) հեռախոսային կամ ելեկտրական հրդեհաշեջ հատուկ կապի, 4) բարեկարգ ջրամատակարարման ու լուսավորության, 5) ամուր ծերեսով ճանապարհների, 6) վոչ արտադրական շրջաններում վայրի բնակելի կառուցման և 5 հարկից վոչ բարձր գերազանցող շենքերի գոյության պայմաններում:

Այսպիսով, հատուկ պայմանների գոյության դեպքում, վորոնցով եյական փոխվում են նորմալ պայմանները, թույլ և տրվում մեկնման սահմանված նորմալ շառավիղից վորոշ շեղում կատարել: Այս շեղումը յուրաքանչյուր առանձին դեպքում վորոշում են ԽՍՀ Միության Նիժկ պետական հրդեհաշեջ հսկողության մարմինները:


Յեթե կա քաղաքի մի վորոշ տերիտորիա, և մենք գիտենք այդ քաղաքը բնորոշող հիմնական պայմանները, կարելի յե ճշտորեն վորոշել, թե տվյալ քաղաքի համար քանի հրդեհաշեջ խումբ (հրդեհաշեջ շրջան) և անհրաժեշտ, վորպեսզի կարելի լինի նրան ապահովել հրդեհաշեջ նորմալ ոգնությամբ: Այսպես, որինակ, 132 կմ² տերիտորիայում հրդեհաշեջ խմբերը պետք է բաշխել այնպես, ինչպես նկ. 8-ի սխեմայում մատնանշված է:

Սակայն այստեղ մենք սահմանեցինք խմբերի յերկրաչափական շրջանները: Իսկ գործնականում մի շարք պայմաններ (արդյունաբերության տեղը, գետերի գոյությունը և այլն) յերբեմն ճիշտ յերկրաչափական շրջանը խախտում են և հարկադրում են վորոշ շեղումներ կատարելու, վորոնք մեղհանուր դրության մեջ եյական փոփոխություն չեն ըստնում:


Այդ դեպքում հիմնական անցարանները ու արդյունաբերության տեղը հարկադրում են շրջանի յերկրաչափական կենտրոնից շեղվել և հրդեհաշեջ խումբը տեղավորել, ինչպես նկ. 9-ի սխեմայում մատնանշված է, արդյունաբերությանը քիչ մոտիկ:

Ինչքա՜ն չի կարելի սպասարկվող շրջանի բոլոր մասերը իրենց նշանակությամբ համարել միատեսակ, և մանավանդ պես, անհրաժեշտ է առանձնապես գտնել արդյունաբերությունը: Վորովհետև արդյունաբերությունը հանդիսանում է տվյալ շրջանի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը և բացի դրանից, հրդեհը, գործարանային շենքի պայմաններում ավելի շուտ, քան վորևե այլ շենքում, կարող է մեծ չափեր ընդունել և հրդեհաշեջման պայմանները բար-

գացնել։ Ուստի հրդեհաշեջ խումբը պետք է գործարան (ֆաբրիկա) հասնի ամենակարճ ժամանակամիջոցում։



Նկ. 9



Նկ. 10

Առանձին դեպքերում մեկնման շրջանի առանձին մասերը կարող են միմյանցից առանձնապես չտարբերվել, և այդ ժամանակ հրդեհաշեջ խմբի տեղը վորոշող յերկրաչափական ու գործնական կենտրոնները միմյանց հետ համընկնում են։

Հրդեհաշեջ խմբերն իրենց նշանակությամբ (ոպերատիվ դորությամբ) համարժեք չեն։ Յեթե անհրաժեշտ է քաղաքում ունենալ մի քանի խումբ, դրանցից մի քանիսը, վորոնք կենտրոնական դիրք են գրավում, պետք է լինեն շատ զորեղ, այսինքն բացի առաջին կանչով մեկնող հիմնական քարշերից, պետք է ունենան ուժանդակ քարշերով ռեզերվ, շանգային բազա և այլն։ Այդպիսի խմբերը (դրանք կարող են կազմել խմբերի ընդհանուր թվի 25—30%) կազմում են քաղաքի հրդեհաշեջ պահպանության հիմնական կորիզը։

Մյուս (ծայրամասային) խմբերը կարող են ունենալ փոքրիկ շենքերում տեղավորված միմիայն 1—2 քարշ, սակայն այս խմբերն իրենց քանակով ու մեկնման շարունակությամբ պետք է ամենաարագ հրդեհաշեջ ոգնություն հասցնեն իրենց շրջանի բոլոր կետերին։ Այն դեպքերում, յերբ տեղ հասած ուժերը չեն բավականացնում, համապատասխան ազդանշաններ (համարներ) տալու միջոցով հնարավոր է լինում ուժերն արագորեն ավելացնել։ Խմբերի տարատեղման այս սիստեմով պետք է ապահովել շրջանային խմբի ժամանումը և միջոցներ ձեռք առնել հրդեհի ծագման հենց սկզբին նրան հանգցնելու։ Խմբերի այսպիսի տեղավորումը սխեմատիկ կերպով պատկերված է նկ. 10-ում։

Հրդեհաշեջ խմբերի տարատեղման գործում խմբերի գերատեսչական յենթակայությանը չպետք է նշանակություն տալ։ Մի շարք դեպքերում տեղի յե ունեցել հրդեհաշեջ խմբերի այնպիսի կառուցում, յերբ քաղաքը հրդեհաշեջ խումբ կազմակերպելիս և շենք կառուցելիս հաշվի յե առել գործարանի ապասարկումը, իսկ դրանից քիչ հետո քաղաքային հրդեհաշեջ խմբի դիմացը տեղավորված այդ գործարանը կազմակերպել է «իր» հրդեհաշեջ խումբը։ Այսպիսով ի վնաս քաղաքի մյուս շրջանների այստեղ յերկու հրդեհաշեջ խմբերը գտնվել են մեկը մյուսից 200 մ հեռավորության վրա, յերկուսն էլ ունեցել են հատուկ շենքեր, ավտոնատոններ և այլն։

Հրդեհաշեջ խմբերի շենքերի կառուցման հարցն ու նրանց տարատեղումը կարգավորում է պետական հրդեհաշեջ հսկողությունը, բայց պետք է յերևի վոչ թե խմբի գերատեսչական յենթակայությունից, այլ ավյալ շրջանում հրդեհաշեջ խումբ ունենալու անհրաժեշտությունից, քանի վոր վերջինիս դերը բոլոր դեպքերում նույնն է։

Այն քաղաքներում, վորտեղ մի քանի հրդեհաշեջ խմբեր կան, հարց է առաջ գալիս նրանց փոխադարձ գործողության պայմանների մասին։ Բոլոր խմբերը չեն կարող առաջին կանչով մեկնուլն հրդեհի վայրը մեկնել։ Պետք է լինի մեկնման կարգը ղեկավարող սիստեմ։ Այդ սիստեմն արտահայտվում է խմբերի մեկնման համար ժամացուցակ կազմելով, վորով վորոշվում է հրդեհաշիջման ուժերի աստիճանական ավելացումը։

Մեկնման համարների քանակը կախված է խմբերի քանակից։ 3—4 խումբ ունեցող վոլբ քաղաքներում սահմանվում են մեկնման 2—3 համար։ Ավելի խոշոր քաղաք-

ներում մեկնման համարների քանակը հասնում է մինչև 5-ի։

№ 1 ազդանշանը նշանակում է շրջանային խմբի մեկնում՝ առաջին կանչով։ Մեծ մասամբ այդ վերաբերում է ներսի (աննշան) հրդեհներին։

№ 2 ազդանշանը նշանակում է այնպիսի զարգացած հրդեհ, որ օբյեկտին վտանգ է սպառնում. այդպիսի ազդանշան տրվում է այն դեպքում, երբ առաջին կանչով տեղ հասած ուժերն անբավարար են հրդեհն լինքնուրույն կերպով հանգցնելու համար և օգնություն է պահանջվում։ № 2-ով մեկնում են մի քանի խումբ (6 խումբ՝ խոշոր քաղաքներում, 2—3-ը՝ փոքր քաղաքներում)։

№ 3 ազդանշանը նշանակում է հրդեհի հետագա մեծացում, որը լրացուցիչ (մի քանի խումբ) ուժեր է պահանջում։

№ 4 ազդանշանը նույնպես նշանակում է հրդեհի հետագա մեծացում։

№ 5 ազդանշանը նշանակում է մաքսիմալ ուժի (տարեգային մոտիկ) հրդեհ, որը հանգցնելու համար պահանջվում է հրդեհաշեջ պահպանության բոլոր լավագույն ուժերը։ Պետք է նկատի ունենալ, որ լավագույն ուժերի հավաքը չպետք է հասկանալ տասացիորեն. մի քանի խումբ միշտ են քաղաքը պահպանելու համար։

№ 6 ազդանշանը նշանակում է հրդեհի վերացում (դադարեցում), շրջանային խմբի վերադարձ դեպի տուն։

Բացի դրանից, կարելի է կիրառել լրացուցիչ մի շարք ազդանշաններ.

№ 7 ազդանշանը— հրդեհ ջրի վրա։

№ 8 ազդանշանը— հրդեհաշեջ բոլոր լողացող միջոցների հավաք։

№ 9 ազդանշանը— հրդեհ խմբի մեկնման շրջանից (քաղաքի շրջագծից) դուրս և այլն։

Հասկանալի է, որ մեկնումների վերոհիշյալ համարակալումը պիտանի է միմիայն խոշոր քաղաքների համար։ Փոքրիկ քաղաքներում թե՛ ազդանշանների քանակը և թե՛ այդ համարներով տեղ հասած ուժերի քանակը զգալիորեն պակաս է։

Որինակ, քաղաքում կա 3 խումբ, յուրաքանչյուր խումբ 2 չոկ (ավտոնասոս)։ Մեկնման քանի՞ համար պետք է վորոշել տվյալ քաղաքի համար։ Դատում ենք այսպես. № 1-ով մեկնում է շրջանային խումբը— 2 չոկ, № 2-ով պետք է տեղի ունենա ուժերի խիստ ավելացում, վորովհետև № 2 ազդանշանը ցույց է տալիս, վոր տեղ հասած ուժերը բավական չեն։ Հետևաբար, հրդեհի զարգացման մեջ պետք է անմիջական բեկում առաջացնել, թե չե՝ հրդեհն սպառնում է անցնելու իր ամենաբարձր աստիճանին։ Այդ պատճառով պետք է ուժերն առնվազն յերկու անգամ ավելացնել։ Այսպիսով, № 2-ով պետք է մեկնեն դարձյալ 2 չոկ։ № 3-ով պետք է մեկնեն մնացած յերկու չոկերը կամ մեկ չոկը, յեթե յերկրորդ չոկը մնում է իբրև ռեզերվ։ Այսպիսով, վորոշվեց թե՛ համարների քանակը և թե՛ այդ համարներով տեղ հասած ուժերի քանակը։

Ամբերի մեկնման համարները վորոշելիս պետք է նկատի ունենալ յերկու հանգամանք։ Նախ, յեթե այս կամ այն համարով մեկնող ուժերի քանակը չափազանց մեծ է և այդ կարգն ընդունված է վորպես սխալ, այդ դեպքում մարտիկներն ու պետակազմը կվարժվեն հավելյալ ուժերով աշխատելու (1 չոկի փոխարեն կաշխատեն 2—3-ը). այս սխալն այն հետևանքը կունենա, վոր անհրաժեշտ մոմենտին, յերբ իրոք ծանր պայմաններ են ստեղծված և յուրաքանչյուր մարտիկ պետք է աշխատի լինքնուրույն կերպով, մարտիկներն անընդունակ կլինեն այդ աշխատանքը լինքնուրույն կերպով կատարելու։ Յերկրորդ, յեթե ուժերի քանակն անբավարար է, հրդեհը կարող է զարգանալ, վորը հրդեհաշեջ խմբի համար նույնպես ընդունելի չե։

Մեկնման բարձր համարները տալիս է պետակազմը հետևյալ կարգով։ Ամբերի պետերին և նրանց փոխարինողներին թույլ է տրվում տալ № 2-ը և 3-ը (5-համարանի սխեմով), № 4-ը և 5-ը տալու իրավունքը պատկանում է

միմիայն բարձր հրամանատարությանը, նկատի ունենալով, որ յեղած բոլոր ուժերը հավաքելուն վերաբերող խնդիրը չափազանց պատասխանատու մի գործողություն է, որը (ինչպես հետագայում կտեսնենք) միմիայն հրդեհաշեջ պահպանության ուժերը հավաքելու հետ չի կապված։


Հրդեհի ուժը պակասեցնելու և հրդեհի համար զգալի ուժեր պահելու անհրաժեշտություն չունենալու դեպքում, տեղի չի ունենում վերջինների նվազում. համարներին արվում է «մերժում», որով խմբերը հրդեհի վայրից առաջնահերթ ազատվում են։ Որինակ, № 3-ի մերժումը նշանակում է, որ այլևս չի պահանջվում ուժեր ավելացնել և այդ համարով հրդեհի վայրը հասած խմբերը հրդեհաշեջման դեկավարի կարգադրությամբ հետզհետե արձակվում են տուն։

Բացի խմբերի մեկնման ժամացուցակով սահմանված համարներ տալու կարգից, պետք է սահմանել բարձրագույն համարներն ավտոմատ ձևով տալու կարգ։ Այդ նշանակում է, որ որոշ օբյեկտում ծագած հրդեհի դեպքում (անկախ հրդեհի մեծությունից) պետք է մեկնի միայն շրջանային խումբը, այլև հարևան մի շարք խմբեր, նայած համարին (2 կամ 3)։ Առանձին դեպքերում փոխանակ խմբերի լիակատար մեկնման, ավյալ համարով կարող են լրացուցիչ կերպով մեկնել միմիայն 1—2 խումբ (այդ սահմանվում է հատուկ հրամանով)։

Այն օբյեկտները, որոնց համար անհրաժեշտ է սահմանել բարձրագույն համարներ տալու ավտոմատ յեղանակ, քանի որ չի թույլատրվում որևէ մի դեպքում կորցնել, հանդիսանում են՝ թատրոնները ու կինոթատրոնները, ակումբները, կրկեսները, հիվանդանոցները, մսուրները, վառոդավոր ֆաբրիկաները ու գործարանները, կարևորագույն հիմնարկությունները, թանգարանները, յուցահանդեսները և այլն։

Իրենչ նկատառումների վրա պետք է հիմնվի բարձրագույն համարներն ավտոմատ յեղանակով տալը։

Այդ նկատառումները հետևյալն են։ Յեթե ներկայացման ժամանակ թատրոնի հրդեհի վայրը միմիայն մեկ խումբ է ժամանում, այդ խմբի առաջ յերկու խնդիր է ծառանում, որոնք յենթակա յեն միաժամանակ լուծման՝ մարդկանց փրկելու (բացահանելու) և հրդեհը հանգցնելու խնդիրները. ըստ որում վերջինս կարող է զարգանալ և մեծ չափեր ընդունել՝ շնորհիվ թատերական շենքերի այն առանձնահատկությունների, որոնք հրդեհի զարգացման համար բավենպաստ են։ Կարելի չե բազմաթիվ որինակների հիման վրա յենթադրել, որ տեղ հասած այդ խումբն ոգնության կարիք է զգում։ Նույնիսկ յեթե ոգնության կանչելը տեղի չի ունենում առանց դանդաղելու, մինչև ոգնությունն հասնելն անցնում է վոչ պակաս, քան 5—8 րոպե։ Թատերական հրդեհների դեպքում այդ ժամանակը կարող է բացասական վճռական նշանակություն ունենալ։ Իսկ յեթե այդ հրդեհի վայրը միաժամանակ մի քանի խումբ են մեկնում, նրանք տեղ են հասնում համարյա միաժամանակ կամ շատ աննշան տարբերությամբ։ Տնտեսված ժամանակը հնարավորություն է տալիս ժամանակին ել ավելի հաջող գործողություններ կատարելու։ Այդպիսի որինակներ կարելի չե բերել նաև այլ օբյեկտների համար։



Նկ. 11

Մեծ հրդեհների ժամանակ հրդեհաշեջ ուժերի մեծ մասն անխուսափելիորեն կենտրոնացնում են մեկ շրջանում

(ավելի ճիշտ ասած՝ այդ շրջանի մեկ կեսում), որի հեռանքով քաղաքի մյուս շրջանները համապատասխան կերպով դասարկվում են։ Այս հանգամանքը քաղաքի մեծ տարածության դեպքում կարող է այն հետևանքն ունենալ, որ քաղաքի մի այլ կեսում յերկրորդ հրդեհը ծագելու դեպքում հրդեհաշեջ խմբերը չեն կարող իր ժամանակին այդտեղ հասնել։ Այդ պատճառով անհրաժեշտ է հրդեհաշեջ խմբերի մեկնման մասին ժամացուցակում նախատեսել։


Յուրաքանչյուր քիչ թե շատ խոշոր քաղաք մոտիկից քննելով, կարելի յե հեշտությամբ ասել, որ քաղաքի շրջանները իրենց արժեքի և հրդեհի վտանգի տեսակետից միատեսակ նշանակություն չունեն։ Այսպես, որինակ, յերեք քաղաքը հրդեհաշեջ-ոպերատիվ տեսակետից բաժանված է 4 շրջանի, դրանցից մեկն ամենալուրջ շրջանն է։ Հետևապես, պետք է նախատեսել, որ խոշոր հրդեհների ժամանակ այդ շրջանի հրդեհաշեջ խումբը տարվելու դեպքում ուրիշ խմբերից այդ շրջանը հերթապահ ուժեր ուղարկվեն նախքան մեկնած խմբի վերադարձը։ Այսպիսի դեպքը սխեմատիկ կերպով պատկերված է նկ. 11-ում։

Հրդեհ կարող է ծագել նաև ամենալուրջ շրջանում։ Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ այդ շրջանում պետք է կենտրոնացվեն զգալի հրդեհաշեջ ուժեր, ուստի այդ նույն շրջանում յերկրորդ հրդեհը ծագելու դեպքում հնարավոր է, որ այդ ուժերի մի մասի արագ տեղափոխություն կատարվի դեպի այնտեղ։ Այդ պատճառով ամենալուրջ շրջանում ծագելիք հրդեհների համար ժամացուցակ կազմելիս սովորաբար հերթապահ խումբն այդ նույն շրջանը չեն տեղափոխում։

Քիչ թե շատ համարժեք շրջաններում հերթապահ խմբի տեղափոխությունը պատկերված է նկ. 12-ի սխեմայում։ Տվյալ դեպքում հերթապահ խումբը տեղավորվում է քաղաքի կենտրոնում և, հետևապես, կարող է քաղաքի ամեն կեսը հասնել միատեսակ պայմաններով։

Պակաս կարևոր չե նաև քաղաքի ամենաուժեղ հրդեհի դեպքում նրա մյուս շրջանները պահպանելու համար ուղերով տեղծելու հարցը։ Այս դեպքում հնարավոր է յերկու վարիանտ. կամ բոլոր պայմաններում մի որոշ ուղերվ (քաղաքում յեղած ուժերի $^1/_4$-ը) միանում է անձեռնմխելի, որն արվում է խոշոր քաղաքներում, կամ ուղերվ չի միանում, յեղած բոլոր ուժերը կենտրոնանում են հրդեհի վայրը, սակայն այս դեպքում ուղերվ է նախատեսվում և պատրաստվում հենց հրդեհի ժամանակ։

Առաջին վարիանտ առանց բացառությունների վերը ասածից հասկանալի յե։ Յերկրորդ վարիանտը հետևյալն է։ Յենթադրենք քաղաքում կա ընդհանուր թվով 6 ջոկ ունեցող 3 խումբ։ Բոլոր վեց ջոկին էլ հավաքվում են խոշոր (ամենաուժեղ) հրդեհի վայրը։ Այդ դեպքում մարտիկների ուժերը խնայելու համար այդ ջոկերից մեկին ոգտագործում են աշխատանքի ամենահեշտ տեղամասում։ Մյուս կողմից այդ ջոկի ավտոնասոսն ու լինվենտարն ըստ հնարավորին չեն ոգտագործում և պահում են մարտականորեն լիակատար պատրաստի վիճակում՝ անհրաժեշտության դեպքում հրդեհի մի այլ վայր ուղարկելու համար։



Նկ. 12

Ամենածայրահեղ դեպքում կարելի յե ոգտագործել նաև այդ ավտոնասոսը, սակայն այն պայմանով, որ շտաբները պարտադիր կերպով վերականգնեն (մատակարարման միջոցով) և փողակները տան ամենաքիչ պատասխանատու տեղերին այն հաշվով, որ յեթե այդ նասոսը հանկարծակի հետ կանչեն, այդ փոփոխությունը եական (վճռական) ազդեցություն չունենա հրդեհաշիջման ամբողջ ընթացքի վրա։ Այսպիսով, յերկրորդ հրդեհը ծագելիս ծայրահեղ դեպքում նույնիսկ հնարավոր և մինիմալ առանձին

ռեզերվ նախատեսել։ Կապի կենտրոնական կետի և հրդեհի վայրում աշխատող խմբերի (հրդեհաշիջման ղեկավարի) միջև յեղած կապով ապահովվում է ռեզերվի արագ տեղափոխությունը դեպի յերկրորդ հրդեհի վայրը։

Վերոհիշյալ ամբողջը մի հայտարարի բերելով, մենք կարող ենք նկ. 13-ում սխեմատիկ կերպով հրդեհաշեջ խմբերի փոխադարձ գործողությունը պատկերել։

Այն քաղաքներում, որտեղ բացի քաղաքայինից, կան նաև գործարանային հրդեհաշեջ խմբեր, վերջինները, համապատասխան պայմանի հիման վրա, հավասարապես կարելի յե մացնել գնացքների չվացուցակի մեջ, միայն թե գործարանի պահպանության համար ռեզերվ թողնելով։


Խոշոր հրդեհաշիջումները, ինչպես գործը ցույց է տվել, կապված են մի շարք եյական հարցերի հետ, որոնց պետք է լուծում տալ հենց հրդեհի վայրում, դրանով իսկ շեղվելով հիմնական խնդրից — անմիջական հրդեհաշիջումից։

Այստեղից անհրաժեշտություն է առաջ գալիս ամենախոշոր հրդեհները հանգցնելիս գործողությունների հատուկ պլան մշակել։

Քաղաքում ծագած մաքսիմալ ուժի հրդեհն ամենից առաջ պահանջում է խմբի ամբողջ կամ համարյա ամբողջ անձնական կազմը կենտրոնացնել հրդեհի վայրը։ Այս պատճառով լուծման յենթակա առաջին հարցը՝ հերթապահությունից ազատ բոլոր մարտիկներին և պետակազմին հավաքելու հարցն է։ Գործնականում այդ կարող է կատարվել հետևյալ կերպ. կապավորը № 5 ազդանշան ստանալով, խմբի սահմաններում գտնվող պետակազմի անդամներից մեկին հայտնում է, որ անհրաժեշտ է ազատ հերթափոխությունները հավաքել։ Պետակազմի կամ որևէ ազատ մարտիկի բացակայության դեպքում խմբի որավորակին ուղարկում են մարտիկների ամենամոտիկ տները (դրա համար պետք է ունենալ բոլոր հասցեների ցուցակը), հատկապես հանրակացարանները։ Իրազեկ դարձած մարտիկներն իրենց հերթին

իրազեկ են դարձնում մյուսներին և, այսպիսով, նույնիսկ հաղորդման այլ հնարավորությունների բացակայության դեպքում անձնական կազմի մեծ մասը հավաքվում է խմբի մեջ։

Տեղ հասած մարտիկները չոկեր են կազմում և միում են իրար ռեզերվ, որը մեկնում է հաջորդ հրդեհների վայրերը կամ հիմնական հրդեհի վայրում աշխատող խմբերին ոգնության է հասնում։



Նկ. 13

Յեվ քանի որ հավաքված մարտիկները կարող են տեղաշարժման միջոցներ չունենալ, անհրաժեշտ է խմբերին տալ բեռնատար (փոքր տոննաժի) մեքենաներ, որոնք շտաբներով, տեխդերներով, սանդուխքներով և այլն սարքավորելով՝ հանդիսանան հրդեհաշեջ քարշեր։ Սա հանդիսանում է հատուկ պլանի յերկրորդ հարցը։ Վերոհիշյալ բեռնատար մեքենաները հնարավոր է ստանալ ամեն մի խոշոր գարաժից, ըստ որում վերջինս քաղաքային խորհրդի համապատասխան հրամանի կամ վորոշման հիման վրա պետք է մեքենաներ մատակարարի։ Գարաժին հրդեհի մասին պետք է հաղորդի հրդեհաշեջ խմբի հերթապահ կապավորը։

Խոշոր, մանավանդ տարերային հրդեհները, ինչպես գործը ցույց է տվել, բացի մաքսիմալ քանակի հրդեհաշեջ ուժերից, ուժանդակ մի շարք աշխատանքների, շենքերի նյութերն ու սարքավորումը դատարկելու համար և այլն պահանջում է զգալի քանակով բանվորական ուժեր (զինվորական մասեր, ձեռնարկությունների բանվորներ, սովորողներ և այլն)։

Նկատի ունենալով, որ հրդեհի մոմենտին դժվար է վորոշել, թե կարճ ժամանակամիջոցում որտեղից և վորքան

բանվորական ուժ կարելի չե սառնալ, անհրաժեշտ է գործողությունների հաստիկ պլանով նախատեսել թե՝ ա) հատկապես վոր հիմնարկությունների են պարտավոր բանվորական ուժ տալու, բ) այդ բանվորական ուժի քանակը, գ) հավաքի համար պատասխանատու մարդկանց, դ) հավաքի տեղերը:

Բացի դրանից, անհրաժեշտ է նախատեսել այդ բանվորական ուժը հրդեհի վայրը փոխադրելու հնարավորությունը: Հետևապես, հարկավոր են ավտոմեքենաներ: Ավտոմեքենաները ճարելն ու հավաքի տեղերը նրանց ուղարկելը կատարվում է նախորդի ձևով:

Սրանով լրացուցիչ բանվորական (վոչ հրդեհաշեջ) ուժի վերաբերյալ հարցը չի սպառվում: Պետք է նախատեսել պետկոմի մի շարք անդամներ (և շարքային մարտիկներ) որամադրելու՝ տեղ հասած մարդկանց ղեկավարելու համար: Այդպիսի դեպքերում սովորաբար թերություն է համարվում հենց այդ հարցերի մասին չմտածելը, վորը հանդում է այն բանին, վոր տեղ հասած մարտիկները չգիտեն, թե ով է իրենց ղեկավարը, ուր պետք է գնալ, ինչ աշխատանք կատարել և այլն: Հենց աշխատանքի սկզբի այդ անորոշությունը վոչնչացնում է աշխատելու ամեն մի ցանկություն և այդպիսի աշխատանքը չնչին արդյունք է ունենում:

Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է.

1) վորոշել այն տեղամասերը, ուր տեղ հասած մարդկանց պետք է ուղարկել, ըստ վորում տեղամասերի պետեր են առաջադրվում հրդեհաշեջ պետկոմից.

2) տեղ հասած մարդկանց խմբում տասնյակների բաժանել և տասնյակի ղեկավար թողնել մի մարտիկի, վորն իրեն հանձնարարված մարդկանց աշխատանքին ու անվտանգությանը պատասխանատու չե.

3) աշխատող հերթափոխության համար տեղ հասած մարդկանցից ռեզերվ պատրաստել. ռեզերվը նույնպես բաժանել տասնյակների և ապահովել ղեկավարով.

4) նախքան բանվորական ուժը տեղ հասնելը յուրաքանչյուր տեղամասի համար վորոշել աշխատանքի ծավալն ու պահանջվող բանվորական ուժի քանակը:

Առանձին դեպքերում աշխատանքների, մասնավորապես հողային աշխատանքների համար, կարող է գործիքների պահանջ զգացվել: Պարզ է, վոր այն տեղերը, վորտեղ այդ գործիքները պետք է ստացվեն, վերջիններիս քանակն ու մատակարարումը պետք է գործողությունների պլանով նախատեսել:

Տևական հրդեհները կապված են մարդկանց հոգնած լու հետ: Այդ պատճառով անհրաժեշտ է բանվորական ուժեր կանչելու հետ միաժամանակ հոգ տանել հանգստավայրը վորոշելու (յեթե յենթադրվում է, վոր աշխատանքը տևական է), ամաններով, յեռացած ջրով, անհրաժեշտ քանակությամբ հանդանյութեր մատակարարելու մասին և այլն:

Այս հարցերով չեն սպառվում այն բոլոր մոմենտները վորոնք կարող են հրդեհի ծագման ժամանակ առաջ գալ սակայն դրանք հիմնական հարցեր են, և դրանց մասին նախապես չմտածելը կարող է տանել դեպի քաոս, դեպի անորոշություն և անհրաժեշտություն առաջ բերել նրանցից ամեն մեկը լուծելու հենց հրդեհի ժամանակ:

Հասկանալի չե, վոր յեթե համապատասխան ինստանցիաներում համաձայնեցված և հաստատված առանձին գործողությունների պլանը շահագրգռված կազմակերպություններին հայտնի չե և հրդեհաշեջ խումբն ուսումնասիրել է, հրդեհաշիջման անհրաժեշտ ճշտությունն ու հաջողությունն ապահովված է:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր յուրաքանչյուր հրդեհաշեջ խումբ պետք է ունենա իր շրջանի կարևորագույն օբյեկտների հրդեհաշիջման սովորական ոպերատիվ պլանը: Այդպիսի պլանով աշխատանքն զգալիորեն հեշտանում է և հրդեհաշիջման հաջողությունն ապահովվում է:

I. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀՐԴԵՀԱՉԵՂ ՄԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

1. ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՇԵՂ ՀԱՇԻՎ

Մարտական հաշիվը հրդեհաշեջ խմբի (հերթափոխի) հերթապահ կամ ռեզերվային պահակախմբի անձնական կազմի մշտական նախապես պարտականությունների բաշխումն է։

Ցենթագրենք, թե հրդեհաշեջ խմբի (հերթափոխի) պահակության մարտիկների միջև պարտականությունների վոչ մի բաշխում չի կատարված։ Ինչ կարող է դրանից առաջվել։ Կատարվի այն, վոր հրդեհի ժամանակ մեկնումն գործիքին կամ շանգակոճին ձեռք կզարնեն միանգամից մի քանի մարդ կամ, ընդհակառակը, վոչ վոք դրանց ձեռք չի տա, մարտիկները մեկ կողմից մյուսը կընկնեն, շփոթություն ու քաոս անխուսափելի կլինեն, ջրամատակարարման խափանում կառաջանա և այլն։ Աշխատանքի արտադրողականությունը չնչին կլինի։

Ընդհակառակը, յերթե պահակախմբի մարտիկների միջև պարտականությունների բաշխումն առաջուց նախատեսված և կատարված է և այնպես, վոր յուրաքանչյուր մարտիկ գիտե, թե ինքն ինչ պիտի անի և հատկապես ինչ գործիքներով պետք է աշխատի, այդ դեպքում պահակախմբի աշխատանքի մեջ հրդեհի ժամանակ ճշտություն, կարգ և ինքնավստահություն կմտնի և մարտական առաջադրությունները կկատարվեն արագորեն։ Այդ դեպքում յուրաքանչյուր մարտիկ կգիտենա իր տեղը և իր ֆունկցիաները, ճշտորեն կկատարի իր առանձին լրացուցիչ պար-

տականությունները և կհետևի իրեն վստահած գինվածությանը։

Այսպիսով, աղյուսակով վորոշվող մարտական հաշիվը այն հիմնական կարգն է, առանց վորի հրդեհաշեջ խմբի արագ, ճիշտ և արդյունավետ աշխատանք յերևակայել չի կարելի։

Պահակախմբի աշխատանքի ճշտությունը կախված է մարտական հաշվի ճիշտ և խելացի կառուցվածքից։ Սակայն միաժամանակ պետք է հիշել, վոր աղյուսակի մեջ վոչ մի ավելորդ բան չպետք է լինի։ Ձափազանց մանրամասն ու բարդ աղյուսակը նույնքան վնասակար է, վորքան մակերեսայնորեն կազմածը։

Մինչև վերջին ժամանակները քաղաքների մեծ մասի հրդեհաշեջ խմբերում պահակախմբի (հերթափոխի) անձնական կազմը բաժանում էին յերկու հիմնական ողակի՝ կացնավորների և փողակավորների, ըստ վորում թե մեկի և թե մյուսի ֆունկցիաները միմյանցից խստորեն մեկուսացված էին և ըստ էության մեկ ողակը լրացնում էր մյուսին։ Այդ յերկու ողակներից մեկի աշխատանքն առանց մյուսի լրացման անհերևակայելի յեր։ Այդպիսով, այդ ողակները չունեին վոչ մի ինքնուրույնություն (անկախություն) և այն ինքնուրույնությունը, վոր մենք ներկայումս ունենք, վորով պահակախումբը (հերթափոխը) կազմված է ջոկերից, նրանք չունեին։

Այս հանգամանքը, բացի տակտիկական միավորների ինքնուրույնության սկզբունքը խախտելուց, այն հետևանքն էր ունենում, վոր ոպերատիվ մեկ առաջադրության համար, վորը մեկ ջոկը հեշտությամբ կարող էր կատարել, ուղարկվում էր մի ամբողջ խումբ։ Ուժերի այսպիսի վոչ ռացիոնալ բաշխումն այն հետևանքն էր ունենում, վոր ավյալ առաջադրությունը կատարելուց անմիջապես հետո մարտիկների մի մասին ազատում էին, վորոնք դառնում էին այսպես կոչված «ավելորդ մարդիկ», վորոնք վորոշակի գործ չունեին։ Կարիք էր լինում այդ բաժանված մարտիկներին նորից հավաքել, վորպեսզի հնարավոր լիներ

վորևե աշխատանք կատարելու։ Բայլ դրանից, տեղ հատած խմբի անձնական կազմի անջատումը,—այն փոքրիկ առաջադրության կատարման համար, վորի վրա հնարավոր եր ավելի քիչ ուժեր վատնել,—առաջ եր բերում մասի գինվածության վոչ ռացիոնալ ոգտագործում, իսկ յերբեմն էլ առանձին քարշեր (կացնավորների համար դըծաքարշեր) պատրաստելու պահանջ։

Այդ ևմի շարք այլ նկատառումներով հրդեհաշեջ կազմակերպությունները հարկադրված յեղան անցնել ջոկերի—վորպես ոպերատիվ-տարային հիմնական միավորի։

Այս դեպքում կացնավորների և փողակավորների ամեն մի տորթաժանում վերանում է և միմիայն ոհմանվում են ջոկի մարտական հաւվի հավարներ, վորոնք նպատակ պատրաստային կարող են ոգտագործվել կամ կացնավորներ կամ թե փողակավորներ։ Այս հավարների ճիշտ պարտականությունները սահմանվում են մարտական հաշվի աղյուսակով։ Յեվ քանի վոր հրդեհաշեջ խմբի բոլոր հիմնական (ոպերատիվ) ջոկերը միատեսակ են, այդ պատճառով էլ այդպիսի ջոկի համար սահմանված մարտական հաշվի աղյուսակը միատիպ յե։

Ոժանդակ և հատուկ ջոկերն ունեն մարտական հաշվի իրենց աղյուսակները։

Մարտական հաւվի աղյուսակն իր մեջ բովանդակում է հետևյալ հիմնական տարրերը. ա) մարտական հաշվի յուրաքանչյուր համարի գործիքներն ու տարքը. բ) տադնապի վերաբերյալ պարտականությունները. գ) հրդեհի վերաբերյալ պարտականությունները։

Մարտական հաշվի աղյուսակը չի կարող այս կամ այն հրդեհի վերաբերյալ աշխատանքի բոլոր մանրամասնությունները տալ, վորի պատճառով էլ նրանով նախատեսվում են միայն այն հիմնական աշխատանքները, վորոնք կարող են հրդեհաշեջ խմբի գինվածության սահմաններում կատարվել (շլանգատծերը պարզելը, փողակներով աշխատելը, սանդուխքները դնելը, փրկող գործիքներով աշխատելը և այլն)։

Հազվադեպ չեն այնպիսի դեպքեր, յերբ մարտական հաշվի աղյուսակը խմբի հատուկը սխալ կազմելու հետևանքով հրդեհի վայրը մեկնող, այսպես կոչված «պահեստի մարտիկները» վորոշակի պարտականություններ չունեն։ Պետք է նկատի ունենալ, վոր յերբեք և վոչ մի տեղ չպետք է «պահեստի մարտիկներ» նախատեսել։

Հազվադեպ չեն նաև այնպիսի դեպքեր, վոր հրդեհաշեջ խմբերի պետական ուշադրությունից վրիպում է հրդեհաշեջ մարտական աշխատանքի եյական և չափազանց պատասխանատու մոմենտներից մեկը—մարդկանց վրկությունը։ Վոչ մարտական հաշվի աղյուսակով և վոչ էլ խմբերում անցկացվող պարապմունքներով այս լուրջ աշխատանքը հաշվի չի առնվում։ Այնինչ, հրդեհներում մենք միշտ կարող ենք հանդիպել մարդկանց փրկելու անհրաժեշտության, և յեթե այդ անհրաժեշտությունն առաջուց նախատեսված չե, առաջ կգա խմբի շփոթվածություն, վորը կնպաստի հրդեհի պարզանալուն։ Հնարավոր և նույնպես, վոր այդ կրկնակի աշխատանքը (հրդեհը հանգցնելն ու մարդկանց փրկելը) վիճակվի մեկ ջոկի, այսինքն վեց մարտիկի, քան վորում դրանք լրենց ամբողջ սահմանափակ ուժերով պարտավոր են այդ կրկնակի խնդիրը հաջողությամբ կատարել։

Այսպիսով, մարտական հաշվի աղյուսակով պետք է նախատեսել, թե ինչ համարներ պարտավոր են կատարել հրդեհաշիջման աշխատանքը և ինչ համարներ՝ մարդկանց փրկելու աշխատանքը։ Սանդուխքները դնելու պարտականությունները, փրկող պարանների բաշխումը պետք է կատարվեն՝ անպայման հաշվի առնելով այդ մոմենտը, քան վորում վերոհիշյալ կրկնակի խնդիրը լուծելու տեսակետից համարների ու նրանց պարտականությունների վորոշումը այդ նույն համարների պարտականություններից տարբերվում է այն դեպքում, յերբ ամբողջ ջոկն ուղարկված է մարդկանց փրկելու։

Մարտական հաշվի աղյուսակը կազմելը պետք է հիմնված լինի հետևյալ նկատառումների վրա։

Յուրաքանչյուր մարտիկի համաչափ բեռնավորում: Այս նշանակում է, որ մարտական հաշվի աղյուսակով որոշվող աշխատանքների ամբողջ ծավալը ջոկի համարների միջև պետք է բաշխվի այնպես, որ յուրաքանչյուր մարտիկ ավյալ մանեվրում ունենա մեկ պարտականություն: Այսպես, եթե ջոկը շանգագծերը պարզում է «Բ» յերեք փողակները տալու համար, այդ ամբողջ աշխատանքը պետք է այնպես բաշխել, որ ջոկի բոլոր համարները միաժամանակ զործելիս այդ առաջադրությունը կատարվի ամենակարճ ժամկետում և յուրաքանչյուր համար ունենա միայն մեկ պարտականություն, որինակ, առաջին համարի վերաբերյալ միմիայն «Բ» գծերը դեպի առաջին փողակը պարզել: Իսկ եթե այդ համարի վրա նախքան «Բ» գիծը դեպի առաջին փողակը պարզելը նույնպես պարտականություն դրվի «Ա» գիծը պարզել, առաջին փողակը գործի դնելու (հրդեհի պայմաններում) ժամենամին մարտիկն արդեն հոգնած կլինի: Այնինչ չափազանց կարևոր է վորքան կարելի յե քիչ ուժ վատնել հրդեհաշիջման պատրաստության վրա, վորպեսզի մարտիկների էներգիան հիմնականում ծախսվի հրդեհաշիջման վրա:

Բացի դրանից, մեկ մարտիկի յուրաքանչյուր լրացուցիչ բեռնավորում բացազատման համար առաջ և բերում ժամանակի ավելորդ կորուստ, հետևապես, նաև առաջադրության կատարումն ուշանում է: Մարտիկների ուժերի խնայողությունը այն հիմնական պահանջն է, վորին մարտական հաշվի աղյուսակը պետք է բավարարի: Սակայն այդ չի նշանակում, որինակ, վոր համան առաջին մարտիկն ունի «Բ» գիծը դեպի իր փողակը պարզելու միայն մեկ պարտականություն: Սա վերոհիշյալ որինակի համար կլինի ճիշտ, սակայն, ընդհանրապես ասած, նայած աշխատանքի զանազան, ամենից հավանական դեպքերին, յուրաքանչյուր մարտիկի համար մենք կարող ենք մի քանի պարտականություն նախատեսել, սակայն այդ դեպքերից յուրաքանչյուրում մարտիկի պարտականությունն այնուամենայնիվ մեկ է: Յեթե ուժերի սահմանափակ լինելը թույլ չի տալիս այդ պահանջը լիովին կատարելու, պետք է այդ բեռնավորումը բաշխել այնպես, վոր ամենածանր պայմաններում կատարվող աշխատանքի համար նախանշանակված համարներն ունենան ավելի քիչ բեռնավորում, քան թիկունքում մնացող կամ ոժանդակ աշխատանք կատարող համարները:

Ավելորդ սարքի բացակայություն: Վորոշ հրդեհաշեջ խմբերում մարտական հաշվի խելացի աղյուսակի բացակայության հետևանքով առանձին մարտիկներ հարկադրված են իրենց վրա կրելու այնքան սարք, վորը յերբեք չի կարող միաժամանակ ոգտագործվել: Որինակ, եթե առաջին համարը (փողակավորը) շարունակ մեջքին կրում է կոլոլված «Ա» շանգը, այդ ծանրությունն այնքան է նրան խանգարում գծերը պարզելիս կամ սանդուխքով բարձրանալիս, վոր մարտիկը կրակի վոլորտի մեջ մանելու մոմենտին հոգնածությունից չի կարողանում հարկ յեղած ձևով կատարելու իր հիմնական խնդիրը:

Սրանից այն է հետևում, վոր սարքի բաշխման խնդիրը պետք է լուծել այնպես, վոր յուրաքանչյուր մարտիկ իր մոտ ունենա այն գործիքները, վորոնք հարկավոր են իր հիմնական աշխատանքը կատարելու համար. իսկ ամեն մի լրացուցիչ սարք և գործիք կարող է տրվել այն դեպքում միայն, յերբ նրանց անհրաժեշտությունը կզգացվի:

Նպատակահարմար է նաև ըստ հնարավորին սարքը բաշխել կոմպակտ կերպով, վորպեսզի շարժումների ժամանակ նա մարտիկին շատ չնեղացնի: Այսպես, որինակ, փոխանակ պայուսակը հագնելիս սեղմիչներով, միջադիրներով և այլն ամրացնելու, պետք է նրան պնդացնել փրկող գոտուն այնպես, վոր պայուսակը հագնվի գոտու հետ միաժամանակ:

Շարժական ոգիտոգա գրաֆիկ: Ջոկը հրդեհի վայրը հասնելու առաջին րոպեներին նրա գործողությունների ծավալման ժամանակ մեծ նշանակություն ունի մար-

տիկների սկզբնական շարժումների ճշտությունը։ Յեթե շարժման գրաֆիկը չի համապատասխանում մարտիկների շարժումներին և ավտոմեքենայի վրա նստելու տեղերին, այդ դեպքում մարտիկների շարժման գծերը միմյանց հատում են. որինակ, մեկը վազում է դեպի շանգների անվակոճը, մյուսը նրան հակառակ՝ դեպի առենդերը։

Մարտիկների այս չհամաձայնեցված ավելորդ շարժումները բնականաբար ջոկի գործողությունների ծավալման արդելք են հանդիսանում, հետևապես և հրդեհաշիջման ուժերը դանդաղեցնում են։ Վորպեսզի այդպես չլինի, պետք է գործն այնպես սկսել, վոր կարելի լինի մարտիկներին ավտոմեքենայի վրա տեղավորել ռացիոնալ կերպով, այսինքն անմիջապես մոտիկ այն գործիքներին կամ լինելու տարին, վորով ավյալ մարտիկը հրդեհի վայրը հասնելիս աշխատելու է։ Այսպես, առենդերավորը պետք է նստի առենդերը դնելու տեղին մոտիկ և, արդեն ծորակին (հիդրանտին) մոտենալիս, ճանապարհին բացի առենդերի (փոկի) փակը, վորպեսզի վոչ մի վայրկյան իզուր ժամանակ չկորչի։ Մարտիկները, վորոնք հաշվի համեմատ պետք է հետևի կոճից գլիծը պարզեն, պետք է նստեն ավտոմեքենայի հետևին, վորպեսզի հրդեհի վայրը հասնելիս անմիջապես սկսեն գլիծը փռել։ Այս ձևով էլ վորոշվում են ջոկի մյուս համարների տեղերը։ Հետևապես, նախքան մարտիկների պարտականությունների բաշխումը, անհրաժեշտ է ճշտորեն վորոշել, թե այս կամ այն մարտիկն ինչ ուղղությամբ ինչպիսի շարժումներ պետք է կատարի և դրանից հետո վորոշել այդ մարտիկի ֆունկցիաները ու ավտոմեքենայի վրայի նրա տեղը։

Մարտական հաշվի համարների գործողությունների միատիպությունը նույնպես էական մոմենտ է համարվում։ Այս պահանջի նպատակն այն է, վոր մարտիկները վորոշ գործողություններ կատարելու լավագույն հմտություն ձեռք բերեն։ Այսպես որինակ, յեթե յերկու մարտիկ «Ա» փողակը տալիս պարզում են «Ա» գլիծը, այդ նույն պարտականությունը նրանք պետք է կատարեն նաև «Բ» փողակը տալիս, փրփրագեներատորը դնելիս և այլն։ Շնորհիվ դրա «Ա» գլիծը պարզելու գործում մշակվում է հմտություն և արագություն։ Ընդհակառակը, յեթե մի դեպքում այդ մարտիկները պարզում են «Ա» գլիծը, իսկ մյուս դեպքում այդ գլիծը պարզում են այլ մարտիկներ, այդպիսի հմտություն չի մշակվում։ Սակայն այդ չի նշանակում, վոր չի կարելի պարբերաբար, ասենք թե կես տարին մեկ անգամ համարը փոխել, այսինքն 2-րդ համարի փոխարեն դնել 1-ին համարը և այլն։

Նույնպես անհրաժեշտ է, վոր ավտոմեքենաների վրա համարների ունեցած պարտականությունները և գլխարձների վրա նույն համարների ունեցած պարտականությունները (մեկ խմբի սահմաններում) լինեն, ըստ հնարավորին, նույնը։ Այսպես, յեթե ավտոնասոսի վրայի առաջին համարը փողակավորն է, այդ համարը գլխարձի վրա նույնպես պետք է լինի փողակավորը։

Մարտական հաշվի աղյուսակը կազմվում է ջոկի համար, ամենից առաջ հաշվի առնելով յուրաքանչյուր ջոկի գործողությունների ինքնուրույնությունը։ Հրդեհում մեկ ջոկը կարող է ուղարկվել փողակները տալու, մյուսը քանդելու, յերրորդը փրկության համար և այլն, այսինքն մի շարք ինքնուրույն խնդիրներ լուծվում են մեկը մյուսից անկախ։

2. ՄԵԿՆՈՒՄ ՏԱԳՆԱՊՈՎ ՅԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Հրդեհաշիջ ծառայության առանձնահատկությունը, այսպես կոչված, մարտական պատրաստությունն է։ Այս մարտական պատրաստությունը, հանդիսա վիճակից անմիջապես կատարի և յերանդապին գործունեության անցնելու պատրաստությունը, արտահայտվում է անդրպալի սակայն միանգամայն պարզ սպասողական լարվածությամբ։ Մշտական սպասողական տպավորությունը նույնիսկ յերթագում՝ մարտիկների մեջ առանձին հոգեբանություն և

մշակում, մանավանդ այն մարտիկների, որոնք ունեն ծառայության (մանավանդ խոշոր խմբերում) յերկար սաաժ։

Մարտիկների այսպիսի վիճակը, որը տագնապի մոմենտին մի շարք դեպքերում հանգում է զանազան դործողությունների, հարկադրում է հատուկ խնամքով քննության առնել և կազմակերպել մեկնման համար հավաքվելու այդ յերկու մոմենտները և ինքը՝ մեկնումը, հաշվի առնելով ժամանակի մաքսիմալ տնտեսումը։

Տագնապի մոմենտին նախորդում է հրդեհի վերաբերյալ հաղորդման ընդունումը, որը պահանջում է կապավորին հնարավորություն տալ ստացված հաղորդման նկատմամբ արագորեն կողմնորոշվելու և այդ հաղորդումն իրացնելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու։

Կապավորն ամենից առաջ պիտի լավ գիտենա ապասարկվող շրջանը, իմանա փողոցների անունները, շրջանի սահմանները և անպայման անգիր կերպով իմանա շրջանի կարևորագույն բոլոր օբյեկտները։ Գործնականում հրդեհաշեջ խմբի մեկնման յուրաքանչյուր շրջանում կա զանազան անուններով մինչև 200 փողոց և որոշ վարժությամբ կարելի յե այդ անունները միտը պահել։ Սակայն չպետք է այդ փողոցները կուրորեն անգիր անել։ Անհրաժեշտ է քաղաքի պլանի փողոցների ու կարևորագույն կետերի տեղը ճիշտ պատկերացնել։ Այդ պատճառով կապի սենյակում անհրաժեշտ է ունենալ մեկնման շրջանի պլանը, իսկ մեծ քաղաքներում, բացի դրանից, նաև քաղաքի պլանը, որտեղ ցույց են տրված խմբերի շրջանների սահմանները։

Հրդեհի վերաբերյալ հաղորդումն ընդունելով, կապավորն անմիջապես պետք է իրեն պարզ պատկերացնի, թե խումբը քաղաքի կամ սպասարկվող շրջանի հատկապես ո՞ր կետը պետք է մեկնի։ Յերկրորդ հրդեհի վերաբերյալ հաջորդ հաղորդումներն ստանալով՝ այլ խմբերի առաքման հարցի լուծումը հեշտանում է։

Կարող է պատահել, որ հին խմբի շրջանում տեղի ունեցած հրդեհի վերաբերյալ հաղորդումները ստացվեն 2-րդ

խմբում (հաղորդողը չի կարող հաշվի առնել և գիտենալ խմբերի շրջանները)։ Այս հանդամանքը կապավորին անհրաժեշտության առաջ է կանգնեցնում փոքր ինչ անսովոր միջոցների դիմելու, այսինքն նա, նախքան տագնապ տալը, պետք է պարզի, թե հրդեհը հատկապես ո՞ր խմբի շրջանում է տեղի ունեցել։

Պետք է նկատի ունենալ, որ անթույլատրելի յե իր խումբը մի ուրիշ շրջան ուղարկել այն պատճառով, որ պարզապես ժամանակ է կորչում։ Այս հեշտությամբ կարելի յե հասկանալ սխեմայից (նկ. 14)։ Շրջանային խումբը համեմատաբար ավելի շուտ է տեղ հասնում, յեթե նույնիսկ հաղորդումը կատարվում է մի այլ խմբի միջոցով։

Այլ շրջան մեկնել կարելի յե միայն այն դեպքում, յեթե շրջանային խումբը զանվի ուրիշ հրդեհի վայրում։


Այսպիսով կապավորին անհրաժեշտ է տեղեկագիր, որի ոգնությամբ նա կկարողանա արագորեն վորոշել, թե ո՞ր խմբին պետք է հայտնել ստացված հաղորդումը։

Տեղեկագիրն իրենից ներկայացնում է քաղաքի՝ այբենական կարգով դասավորված բոլոր փողոցների ցուցակը, որտեղ ցույց է տրված, թե հատկապես ո՞ր խմբի շրջանում է գտնվում այս կամ այն փողոցը, ըստ որում այն փողոցների վերաբերյալ, որտեղից անցնում է շրջանի սահմանը, ցույց է տրվում, թե ինչ համարի տներ են պատկանում տվյալ խմբին։ Նպատակահարմար է տեղեկագրի մեջ ցույց տալ նաև քաղաքի ուղղությունը կամ վարչական շրջանը։ Այսպիսով, տեղեկագիրը կարող է ունենալ հետևյալ ձևը.

Փողոցի անունը	Վոր խմբի շրջանում	Ուղղությունը
Աբովյան փող.	1	Նորք

Բացի շրջանի պլանից և տեղեկագրից, ազդարարական սենյակում պետք է լինեն հետևյալ նյութերը. ա) խմբերի մեկնման ժամացուցակը, որը նպատակահարմար է պատկերել դիտողական սխեմայի ձևով, բ) կապավորի պար-

տականութիւնների հրահանգը, գ) այն կետերի ցուցակը, ուր արվում են մեկնումների ավտոմատ կերպով բարձրացված համարները, դ) հրդեհների մասին հաղորդումների կարգի վերաբերյալ հրահանգը և ե) ոպերատիվ պլանների քարվածքները։



Նկ. 14

Այս նյութերը հնարավորություն են տալիս կապավորների աշխատանքն դյուրիորեն կարգավորելու և խմբի յուրաքանչյուր մեկնման ժամանակ տեղած դժվարություններից խուսափելու և, հետևաբար, խուսափելու այն սխալներից, որոնք կապավորների վոչ կազմակերպված աշխատանքի դեպքում տեղի յեն ունենում։

Յուրաքանչյուր հրդեհի վայրն ուղարկելիս կապավորը պարտավոր է իրեն պարզ կերպով պատկերացնել, թե խումբը շրջանի հատկապես վոր մասն է ուղարկված և բացի դրանից, պետք է ամեն մոմենտում ճիշտ կերպով գիտենա, թե ինչպիսի ուժեր և վորտեղ են մնացել վորպես ռեզերվ։ Այդ անհրաժեշտ է, վորպեսզի յերկրորդ և հաջորդ հրդեհների մասին նոր հաղորդումներ ստանալիս գիտենա, թե ինչ խմբեր պետք է ուղարկել։

Այստեղ հարց է ծագում հրդեհաշեջ խմբի կապի կենտրոնական կետ, այսինքն մի տեսակ դիսպետչերային կետ կազմակերպելու մասին։ Յուրաքանչյուր խմբերում այդպիսի կետն անհրաժեշտ է նաև խաղաղ ժամանակ, իսկ ՀՈՒՔՊ-ի պայմաններում այդպիսի անհրաժեշտություն անխուսափելիորեն ծագում է խմբերի ճնշող մեծամասնության մեջ։

Հրդեհաշեջ խմբի կապի կենտրոնական կետի աշխատանքը տեսանելի և պարզ կերպով պատկերացնելու համար նա պետք է ունենա քաղաքի մակետը (պլանը), որի հիման վրա, նայած իրական պայմաններին, կատարում է հրդեհաշեջ ուժերի բոլոր տեղաշարժումները։ Նպատակահարմար է, ըստ հնարավորին, այդ մակետը մեքենացման և ելեկտրականացման յենթարկել։

Հրդեհի վերաբերյալ հաղորդումն ընդունելու և մշակելու պրոցեսն ինքնին պահանջում է պահպանել հետևյալ հիմնական կանոնները.

Յուրաքանչյուր հրդեհի վայրն ուղարկելու համար կապավորը պետք է իմանա հրդեհի հասցեն, այսինքն փողոցը, տան համարը և, ըստ հնարավորին՝ ինչ է վառվում։ Մենք ասում ենք «ըստ հնարավորին», որովհետև լուր ավողը հաճախ չի կարողանում հաղորդել, թե ինչ է վառվում, իսկ որչեկտի ուղեղքի մեջ այդ մասին (որինակ, վառվում է չերդակը, վառելանյութի պահեստը և այլն) մատնանշելը շատ կարևոր է, որովհետև ստորաբաժանման պետը դրանով հնարավորություն է ունենում հրդեհի վայրը մեկնելու ընթացքում պատկերացնելու հրդեհի պարագան և մոտավոր կերպով նշելու, թե ինչ գործողություններ պետք է կատարի տեղ հասնելիս, վորն որչեկտի հետ ծանոթանալիս մեծ նշանակություն ունի։

Կապավորը պետք է նկատի ունենա, վոր հրդեհի մասին լուր ավողը մեծ մասամբ հուզված վիճակում է լինում, վորից կարող է հաղորդումն ուշացած և շփոթված լինել։ Լուր ավողին հանգստացնելու համար մեծ նշանակություն ունի կապավորի հանգիստ, վստահ և պարզ խոսակցությունը և անգամ ձայնի տոնը։

Ավելորդ խոսակցություններ չպետք է ունենալ և անպետք մանրամասնություններ չպետք է հաղորդել։ Այսպես, որինակ, գործնականում դեպքեր են յեղել, յերբ կապավորը հարցրել է՝ ինչպիսի՞ հրդեհ է, բայց, թե փակ վիճակ է խոսողի հեռախոսի համարը, ինչ է նրա ազգանունը և այլն։ Կարծեք թե ժամանակին մեկնելու և հրդեհը հանգցնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ով է հրդեհի մա-

ախն լուր ավողը՝ Պետրովը, թե Գրիգորյեվը։ Այսպիսի հարցերը միմիայն դանդաղեցնում են հաղորդման ընդունումը և ավելորդ ժամանակ են վատնում, որը հրդեհի աշխատանքի պայմաններում անթույլատրելի չե։

Կապավորը պետք է պիտենա միայն փողոցը, տան համարը, ինչ և վառվում, և խոսողին անմիջապես հայտնի, որ խոսքը մեկնում է։

Հաղորդումն ընդունելուց հետո կապավորը պետք է անմիջապես տափնապի լույսն ու ազդանշանները միացնի և խմբի հավաքվելու ընթացքում ուղեգիրը կազմի։

Ուղեգիրը պետք է դրել պատճենահանի վրա (պատճենը կապավորին հարկավոր է հասցեն մյուս խմբերին հաղորդելու համար և այլն)։

Ուղեգրի համար հանձնարարվում է հետևյալ ձևը՝

ՈՒՂԵԳԻՐ

« » . . . . . 193 . . . թ.

. . . . . ժամ « » րոպե։ Հրդեհը № . . . խմբի շրջանում է (գրվում է հրդեհի վայրի հասցեն—փողոցը, տան №-ը և ինչ է վառվում. որինակ՝ «Մազովայա փող. 10, նկուղում»)։

Ուրիշ վոչ մի տեղեկություն չի պահանջվում, որովհետև ամեն մի ավելորդ տեղեկություն, որ կապավորը հաղորդողից հավաքում է կեղծ կանչողի դեմ պայքարելու նպատակով, արդյունք չի ունենում։ Կեղծ կանչերի դեմ պետք է պայքարել այլ միջոցով և ամենից առաջ բնակչության մեջ բացատրական աշխատանք կատարելու ձևով։

Մեկնման ժամանակին անպայման գրվում է։

Հրդեհի վերաբերյալ հաղորդումն ընդունելու և ուղեգիրը պատրաստելու վրա չպետք է 45—60 վայրկյանից ավելի ժամանակ կորցնել։

Բոլոր չոկերին պետք է հասցեն հաղորդել։ Այս նպատակի համար հանձնարարվում է գործադուլավոր դնել, իսկ կապի սենյակում՝ միկրոֆոն։ Անհրաժեշտ է հրդեհի հասցեն բոլոր չոկերին հաղորդել, որովհետև

հնարավոր է, որ մեկնման ճանապարհին, որինակ, որևէ մեքենայի խափանում տեղի ունենա, և վերջին մեքենան այդ դեպքում պետք է ինքնուրույն կերպով իր ճանապարհը շարունակի։

Ուղեգիրը արվում է անմիջապես ատրաբաժանման (պահակախմբի, հերթափոխի) պետին կամ նրան փոխարինողին։

Չպետք է բոլոր չոկերը կանչվեն, այդ պատճառով պետք է գործադրում պատրաստել լուսապատկերը, որի վրա լուսավորվում է (կապի սենյակում համապատասխան կոճակը սեղմելով) այն չոկերի անունները, որոնք ավյալ դեպքում մեկնելու չեն։

Մեկնումից հետո կապավորը հրդեհի մասին պետք է սահմանված հասցեներով լուր հաղորդի։

Հրդեհների վերաբերյալ հաղորդումները պահանջում են ճշտություն, որովհետև ամեն մի կեղծ և չափազանցված տեղեկություն անցանկալի հետևանքներ է ունենում։

Պետք է նշել, որ տափնապի զանգերի բնույթը մեծ նշանակություն ունի տափնապով հավաք կատարելու և հենց մարտիկների առողջության համար։ Չի կարելի խմբի շենքերում թույլ ձայն ունեցող զանգեր դնել, որովհետև թույլ ձայնը հոգեբանորեն մարտիկների շարժումները դանդաղեցնում է։ Մարտիկների դիշերվա հանգստի շենքերում պետք է դնել փոփոխակի հոսանքի (յերկու բաժակով) մեծ զանգեր։

Չի կարելի այդ շենքերում, այսպես կոչված, «Թիրոլյան» զանգեր դնել, որով վերջիններս բավականին սուր ձայն ունեն և ժամանակի ընթացքում չափազանց բացասական ազդեցություն են ունենում մարտիկների ներվային սիստեմի վրա։ Թիրոլյան զանգերը դնում են միջանցքներում և խմբի բակի տերիտորիայում, այսինքն այնտեղ, ուր առանձնապես անհրաժեշտ է ուժեղ ձայն։

Մարտիկներին հերթապահության շենքում դասավորելիս պետք է հաշվի առնել համապատասխան համարների

այն տեղերը, վորոնք վայրիջույց անցքերին և յելքի դռներին ամենից մոտիկ են, վորպեսզի յուրաքանչյուր մարտիկ ցած իջնի կամ դուրս գա իր ավտոմեքենային անմիջապես մոտիկ, և մարտիկները իրար չդիպչեն։

Տաղնապով հավաքվելու և մեկնելու համար վորոշված ժամանակի սահմանափակ լինելը հարկադրում է առաջուց նախատեսել այն բոլոր մանրամասնությունները, վորոնք վերաբերում են այդ հավաքներին։

Ջոկերի հրամանատարները տաղնապի մոմենտին պետք է հետևեն իրենց ջոկերի հավաքմանն ու այն բանին, թե մարտական հաշվի համարները վորքան ճիշտ են կատարում իրենց պարտականությունները։ Տաղնապից հետո վորևե պատճառով չմեկնած մարտիկների հաղուստը պետք է մեքենաների վրայից նախապես վերցնել։

Ռադիոսարքավորում չունենալու դեպքում հրդեհի հասցեն բարձրաձայն հայտարարում է հերթափոխի (պահակամբի) պետը կամ նրան փոխարինողը, այնպես վոր այդ հասցեն բոլոր ջոկերի համար լսելի և հասկանալի լինի։

Այդ բոլոր գործողություններից հետո հրամանատարի տված հրամանով վորոշվում է մեկնման մոմենտը, և բոլոր ավտոմեքենաները միաժամանակ մեկնում են։

Ինչ ժամանակ չի հատկացվում նաև խմբի հավաքվելու և մեկնելու ժամանակը կրճատելու հարցին, և այդ հասկանալի է, վորովհետև խմբի համար չափազանց կարևոր է շուտ հասնել հրդեհի վայրը։ Այդ պատճառով, բացի կազմակերպչական դրույթյուններից, մեծ նշանակություն է տրվում նաև մեկնման մեքենացմանը։ Դրա համեմատ էլ դռները ավտոմատ յեղանակով բացելու, տաղնապի ազդանշան տալու հետ միաժամանակ ավտոմեքենաների մոտորները ավտոմատ կերպով գործի քցելու համար գոյություն ունեն մի շարք դյուտեր և այլն։

Յուրաքանչյուր խումբ տեղական պայմանների համեմատ պետք է աշխատի մեկնումն ըստ հնարավորին ավելի շատ մեքենացման յենթարկել, ժամանակի տնտեսում կատարել և վերջինս կրճատել վորքան հնարավոր է։

Պահակ կարևորություն չունի նաև ավտոմեքենաների մոտորները տաքացնելու հարցը, վորովհետև սառը մոտորը դժվար է գործի քցել և այդ հանգամանքը կապված է ժամանակի կորստի հետ, չխոսելով արդեն պնդացած սառը յուղով կատարվող մոտորի ուժգին աշխատանքի ժամանակության մասին։ Մոտորը տաքացնում են լիսեռի կողքերից և մեքենայի պատյանի տակ եղեկարատարդուների սովորական թիթեղներ դնելով, վորոնք դրված են լուսավորող ցանցի մեջ։ Այս միջոցը հասարակ և շատ էֆեկտավոր միջոց է։

Նմբի՝ ավտոքարշով մեկնման համար ծախսվող ժամանակը սովորաբար արտահայտվում է 40—45 վայրկյանով, իսկ ձիաքարշով մեկնման համար՝ 50—54 վայրկյանով։

Նուսքը հրդեհի վայրը մեկնելիս պետք է պահպանվեն հետևյալ հիմնական կանոնները։ Բոլոր ավտոմեքենաները պետք է ընթանան մեկ մարշրուտով։ Յերբեք չի կարելի, վոր մեկնաւյն խմբի ավտոմեքենան մեկնի մեկ մարշրուտով, իսկ մյուսը՝ այլ։ Դա այն հետևանքը կունենա, վոր բոլոր ավտոմեքենաները հրդեհի վայրը միաժամանակ տեղ չեն հասնի, վորով հերթափոխի պահակամբի պետը հնարավորություն չի ունենա բոլոր ուժերի և միջոցների ողնությամբ հրդեհին արագորեն վերջ տալու։ Բացի դրանից, մեքենան մեկնելիս ավարիա տեղի ունենալու դեպքում հնարավոր չի լինի նրան ժամանակին ողնության հասնելու։

Հրդեհի վայրը հասնելուց հետո հենց առաջին մոմենտներին խմբի աշխատանքի մեջ պետք է ճշտություն մտցնել։ Այս ամենից առաջ վերաբերում է հրդեհի վայրը հասած ավտոմեքենաների դասավորման սիստեմին։

Յեթե հրդեհի վայրը հասած բոլոր ավտոմեքենաները շարվեն պատահական կերպով, առանց նախապես վորոշված կարգին ու պլանի, ամենակարճ ժամանակում հրդեհին կպած բոլոր փողոցները կփակվեն, ըստ վորում գործածության համար անհրաժեշտ ավտոմեքենաները կդանվեն հրդեհից

հեռու, իսկ վոչ այնքան անհրաժեշտ ավտոմեքենաները կգտնվեն վառվող օբյեկտի առջևը։

Դրանից խուսափելու համար քարշերը հրդեհի վայրը հասնելուց հետո անհրաժեշտ է ընդունել հետևյալ կարգը.

Ավտոսեֆենաներով.

1. Նասոսավոր ավտոցիստերնները կանգնում են հրդեհի վայրում՝ վառվող օբյեկտից 10 մ-ից վոչ մոտիկ։

2. Ավտոնասոսը մեկնում է դեպի մոտակա հիդրանտը (ջրափոսը) և պատրաստում է գործելու, այսինքն հոսը բացում են, սռենդերը դնում են և ընդունող շլանգները դնում են։ Նախքան հրաման ստանալը նեպիչ շլանգները չեն պարզում։

3. Մեխանիկական սանդուխքը դնում են հրդեհի տեղին մոտիկ՝ ըստ հնարավորին փողոցի հակառակ կողմում։

4. Ոժանդակ մեքենաները տեղավորվում են մեխանիկական սանդուխքի հետևը, պահպանելով 6 մ-ից վոչ պակաս հեռավորություն։

Յուրաքանչյուր ջոկի անձնական կազմը շարվում է իր ավտոմեքենայի մոտ՝ նրա յերկարությամբ, ըստ հնարավորին յերեսը դարձրած դեպի հրդեհի օբյեկտը։

Նոր ժամանած մասերը կանգ են առնում մեխանիկական սանդուխքի և առաջինը տեղ հասած ոժանդակ քարշերի հետևը՝ նույն հեռակայությամբ և նույն ուղղությամբ թիկունքի պետի ցուցումով ավտոնասոսներն ուղարկելով դեպի ջրափոսերը։

Ջիաfաrեեrով.

1. Խողովակա-դծաքարշերը, խողովակա-տակառաքարշերը և տակառաքարշերը կանգ են առնում հրդեհի վայրում հրդեհի օբյեկտից 100 մ հեռավորության վրա, միմյանց մեջ հեռակայություն ունենալով 6 մ-ից վոչ պակաս։

2. Մեխանիկական սանդուխքը թողնում են հրդեհի վայրում՝ փողոցի հակառակ կողմը։

3. Մոտոպոմպն ու շլանգաքարշը հրդեհի վայրը հասնելով՝ գնում են դեպի մոտակա ջրաղբյուրը, ըստ վո-

րում մոտոպոմպն անմիջապես պատրաստվում է աշխատելու (ընդունող շլանգները միացվում են, շարժիչը լսրում են և այլն)։

Յեթե հրդեհը տեղի չի ունենում հրապարակում, քարշերը շարվում են մեկ գծով՝ հրդեհից 40—50 մ հեռավորության վրա, վերջինից աջ կամ ձախ, քարշերի միջև հեռավորությունն պահելով վոչ պակաս, քան 5 մ։

Բանակի մարտական պայմաններում զգալի քանակության ուժեր ծավալելիս անհրաժեշտ է այսպես կոչված զինադաշտ, այսինքն հրապարակ, վորտեղ հնարավոր է այդ ուժերը ծավալել։ Այդպես էլ հրդեհաշեջ ծառայության մեջ հրդեհաշեջ ուժերն ու միջոցներն ազատ, անարգել և ամենից նպատակահարմար ձևով ծավալելու համար պետք է հրդեհավայրի դիմացը ազատ տեղամաս—հրապարակ—թողնել։

Բարձր համարներով տեղ հասած խմբերի ավտոմեքենաները դասավորում է թիկունքի պետը։

Ուժերի ծավալման աշխատանքը պետք է կատարվի այնպես, վոր մեկ միավորի գործողությունները մյուս միավորների հաջորդ գործողություններին չխանգարեն։

Միության խոշոր քաղաքներում, ուր հրդեհի վայրում 1—2 տասնյակ հրդեհաշեջ ավտոմեքենաներ են կուտակվում, նրանց չմոռացված ամեն մի դասավորություն կարող է այնպիսի խճճված դրություն առաջ բերել, վոր մեքենաները չեն կարող վոչ հրդեհի վայրին մոտենալ, վոչ տաղնապի դեպքում նրանից հեռանալ՝ յերկրորդ հրդեհի վայրը մեկնելու համար և վոչ էլ մի այլ տեղ։ Բարշերի դասավորման վերոհիշյալ կարգը սպառիչ չէ, հետևապես հրդեհների ժամանակ անհրաժեշտ է թիկունքը կազմակերպել։

Նկ. 15-ում բերված է ավտոմեքենաների նախնական դասավորման սխեման։

Հրդեհի վայրը հասնելուց հետո ավագ պետի տեղը վորոշվում է հրդեհի ամբողջ պարագայով և պետք է համապատասխանի այնպիսի գործողությունների, վորոնցով

պետը կարողանա տալ պարագայի նախնական գնահատականը, և այդ գնահատականին համապատասխան էլ կատարի ուժերի և միջոցների դասավորում։


Համենայն դեպս պետի քիչ թե շատ մեծ ուշադրությունը նախնական գործողությունների պայմաններում կարող է վորոշվել միմիայն այն դեպքում, յերբ հետախուզություն կազմակերպելու անհրաժեշտություն կա կամ յերբ հրդեհի պարագան պահանջում է անմիջապես փրկություն կազմակերպել և փրկության ոպերացիա կատարել։ Առաջին դեպքում պետը գլխավորում է հետախուզությունը, իսկ յերկրորդ դեպքում ղեկավարում է փրկության գործողությունները։

Պարագայի նախնական գնահատականը կատարվում է այն նպատակով, վորպեսզի հնարավոր լինի վորոշել խմբի վոչ միայն նախնական միջոցառումների բնույթը, այլ և ժամանակին լրացուցիչ ոգնություն կանչելու կամ փրկություն կազմակերպելու անհրաժեշտությունը։

Վերոհիշյալ հարցերի կարևորությունը, վորոնց լուծումը պետք է մաքսիմալ չափով սահմանափակվի ժամանակով, ավագ պետին պարտավորեցնում է արտաքին նշաններով նախնական գնահատում կատարելու։ Որինակ, պատուհաններից դուրս խուժող բոցը, ծխի քուլաները, դրսի կամ բաց հրդեհը, յեղած խուճապը կամ մարդկանց փրկելու բացարձակ անհրաժեշտությունը լիակատար հնարավորություն են տալիս գաղտնություն տալու նախապատրաստական միջոցառումների բնույթի և ուղղության մասին։ Իսկ յեթե դրան ավելացնենք մեր ուժերի, հնարավորությունների և միջոցների գնահատումը, այդ դեպքում միաժամանակ կլուծվի նաև լրացուցիչ ոգնություն կանչելու անհրաժեշտության հարցը։

Թիկունքին կարգադրություններ անելը կայանում է թիկունքի պետին ցուցում տալու մեջ՝ առաջիկա գործողությունների բնույթի, առաջադրված ուղերվի և այն մասին, թե մեկնման խմբերը ինչ համար է տրված։

Ստացված կարգադրությունների հիման վրա և տեղական պայմանների համեմատ թիկունքի պետը ինքնուրույն կերպով լուծում է յեղած ջրաղբյուրների ոգտագործման ու նատոնների մնուցման միջոցների հարցը, ինչպես նաև ջրաղբյուրների պատրաստման հարցը՝ բարձր համարնեբով տեղ հասած խմբերի նատոններն այդ ջրաղբյուրների վրա գնելու համար։



Նկ. 15

Բացի դրանից, յեթե պարագայի նախնական գնահատման հետևանքով վորոշվում է ջանդագծերի անհրաժեշտությունն ու մոտավոր ուղղությունը, թիկունքի պետը, նախքան ջրացայտերի քանակի և փողակների ուղղության մասին վերջնական կարգադրություններ ստանալը, ջանդագծերը պարզում է մինչև ճյուղավորումները։


3. ԹԻԿՈՒՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Յեթե հրդեհի վայրն ու նրան կպած տեղամասը, վորի վրա տեղավորված են հրդեհաշիջման ուժերն ու միջոցները, պայմանական ձևով բաժանված է յերկու մասի, մենք կստանանք ճակատ և թիկունք։

Ճակատ պետք է համարել այն տեղամասը, վորտեղ կրակի դեմ անմիջական պայքար է տեղի ունենում։

Թիկունքը համարվում է այն տեղամասը, որը կպած է հրդեհի վայրին և որտեղ կենտրոնացված են մարտական գործողությունների համար նախանշանակված բոլոր տեխնիկական միջոցները և նրանց սպասարկող անձնական կազմը (նկ. 16)։

Ընդունված է, որ ճակատի և թիկունքի սահմանը պետք է անցնի ճյուղավորումների հաստատման գծով։ Սակայն խոշոր հրդեհների ճյուղավորումները կարող են և սահմանված չլինել, դրա համար էլ դժվար կլինի սահմանը որոշել։ Այդ դեպքում սահմանը կանցնի ճյուղավորումների հաստատման առաջարկվող տեղերով, այսինքն գործնականում հրդեհի օբյեկտից 10 մ հեռավորության վրա։



Նկ. 16

Այստեղից պարզ է, որ ճակատին վերաբերում են այն բոլոր ստորաբաժանումներն ու գործիքները, որոնք գործում են հրդեհի վոլորտում և անմիջապես ուղղված են նրան հանգցնելուն։ Իսկ թիկունքին վերաբերում են այն բոլոր ստորաբաժանումներն ու գործիքները, որոնք գտնվում են ռեզերվում կամ իրենց աշխատանքով ապահովում են ճակատի գործողությունների հաջողությունը։

Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ ավտոնասոսները, որպես թիկունքի տեղամասում գտնվող գործիքներ, չեն թարկվում են թիկունքի պետին բոլոր հարցերի վերաբերյալ՝ թե ավտոնասոսները ջրափոսերի վրա դնելու, թե նրանց վառելանյութ և յուղեանյութ տալու, թե շարքից դուրս ընկածներին փոխելու վերաբերյալ և այլն։ Իսկ ջուրը բաց թողնելու և դադարեցնելու, ճնշումը բարձրացնելու տեսակետից և այլն ավտոմեքենաներին սպասարկող մարտիկները պարտավոր են կատարել այն կարգադրությունները, որոնք ստացվում են անմիջապես ճակատից։

Ճակատի և թիկունքի միջև ընկած սահմանը չպետք է հասկանալ որպես արգելված գիծ։ Յեթե ճակատին չենթարկվող մարտիկը նկատում է, որ իրենից 20 մ հեռավորության վրա թիկունքում շանգը պատռվել է, պետք է միջոցներ ձեռք առնի սեղմիչ դնելու, չարվելով այն մրցքով, թե դա թիկունքի գործն է։ Վերոհիշյալ սահմանն անհրաժեշտ է ճակատի և թիկունքի ֆունկցիաների մեջ պարզություն մտցնելու համար, սակայն թե մեկի և թե մյուսի նպատակը, ի հարկ է, նույնն է և ուղղված է հրդեհն արագ և հաջող կերպով հանգցնելուն։

Թիկունքի կազմակերպման էությունն այն է, որպեսզի կարելի լինի հրդեհաշիջման դեկավարին ազատել այն բոլոր հարցերից, որոնք անմիջապես կապված չեն հրդեհաշիջման հետ (թեև վերաբերում են հրդեհաշիջմանը)։ Յեվ իրոք, հրդեհաշիջման դեկավարը կարող է հաջող կերպով աշխատել միայն այն ժամանակ, երբ ամբողջովին նվիրված է հրդեհի պարագայի ուսումնասիրության, ուժերի դասավորման հարցերին, տեղի ունեցող փոփոխությունները դիտում է, համապատասխան շտաբներ է կատարում և այլն։

Հրդեհաշիջման դեկավարն այն ժամանակ միայն կարող է հաջողությամբ ճակատը դեկավարել, իր ամբողջ ուշադրությունը հրդեհաշիջման վրա կենտրոնացնելով, յեթե ազատ է այնպիսի հարցեր լուծելուց, ինչպիսին են, որի-

նակ, վառելանյութի մատակարարման, ավտոնասոսների փոխելու, մնասված շանդների փոխելու հարցերը և այլն։ Մանավանդ այդ նշանակություն ունի խոշոր հրդեհի ժամանակ, պատահանատու լուրջ պարագայում և դժալի քանակությամբ ուժեր գործ դնելու դեպքում։

Թիկունքի պետի հետ մշտական կապ պահպանելը հրդեհաշիջման դեկավարին միաժամանակ հնարավորություն և տալիս թիկունքի բոլոր խոշոր հարցերի մասին իրազեկ լինելու և թիկունքի աշխատանքի վերաբերյալ անհրաժեշտ ցուցումներ տալու։

Այսպես, որինակ, մի վորոշ տեղամասում անհրաժեշտ է տալ «Ա» 3 փողակ, հրդեհաշիջման դեկավարն այդ պահանջը հայտնում է թիկունքի պետին, առանց քննելու այն հարցը, թե վոր նասոսը վոր ծորակի կամ ջրափոսի վրա պետք է դնել, դրա համար վորքան շանդ և պահանջվում և այլն։ Սակայն, անհրաժեշտ դեպքերում հրդեհաշիջման դեկավարը կարող է իր պահանջը մանրամասնել, մատնանշելով, որինակ, վոր 3 փողակը տրված են հատկապես այսինչ մասի կամ ջոկի ուժերով։

Թիկունքը դեկավարում է թիկունքի պետը, վորը յենթարկվում է միմիայն հրդեհաշիջման պետին։ Թիկունքի պետ պետք է նշանակել փորձված, նախաձեռնող և հնարամիտ աշխատողի։

Թիկունքի պետի աշխատանքը խիստ բազմազան է։ Ամենից առաջ թիկունքի պետը պետք է կատարի տեղ հասած ավտոմեքենաների ճիշտ դասավորում և ջրաղբյուրների վրա ավտոնասոսների բաշխում։

1. Մի շարք հրամանատարների դյուրություն ունեցող այն կարծիքը, թե հրդեհի ժամանակ կարելի յե քաղաքային տրանսպորտի շարժումը խանգարել, նրան յերկար ժամանակով դադարեցնել, թե հրդեհաշիջները հրդեհը հանգցնելու ժամանակ հանդիսանում են փողոցի մի տեսակ «տերեր»,— միանգամայն սխալ է։ Ճիշտ է, անհրաժեշտ դեպքերում թույլ է տրվում շարժվելու համար փողոցի այս կամ այն


ճաքիտարալը փակել, սակայն յերբեք չպետք է մոռանալ, վոր փողոցային շարժման կազմակերպումն առանձին ձեռնարկությունների և նույնիսկ քաղաքի շրջանների կյանքը խանգարում է։ Որինակ, յենթադրենք թե վորևե գործարանի բանվորները տրամվայով աշխատանքի յեն գնում։ Հրդեհաշեջ խումբը, շանդագծերը պարզելով, տվյալ տրամվայի գծի ճանապարհը փակել է։ Այդ պատճառով բանվորները ժամանակին գործարան չեն հասնում և հասոցները մի քանի ժամ պարապուրդ են տալիս։

Այդ պատճառով հրդեհաշեջ ավտոմեքենաների տեղավորման հիմնական պայմանը քաղաքային տրանսպորտի նորմալ շարժումը պահպանելն է։ Դրա համար անհրաժեշտ է շանդագծերը, ըստ հնարավորին, դասավորել մայթերի յերկարությամբ, և վոչ թե փողոցի լայնությամբ։ Այն դեպքերում, յերբ անխուսափելի յե շանդագծերը փողոցի լայնությամբ պարզել, պետք է միջոցներ ձեռք առնել, վոր ավտոմեքենաները ու սայլերը շանդագծերի վրայով անցնեն, դրա համար գործածելով շանդների կոշտ ծածկոցներ։

Ռելսային տրանսպորտի նորմալ շարժումն ապահովելն այն դեպքում, յերբ շանդագծերն անց են կացված փողոցների լայնությամբ,— կապված է վորոշ դժվարությունների հետ։ Այդպիսի դեպքերում շանդագծերը պետք է անցկացնել ռելսերի տակից։ Այս աշխատանքը չափազանց դժվար է, մանավանդ այն դեպքում, յերբ ռելսերն ամուր նստած են գետնին։ Այս խնդրի բավարար լուծումը, վորը հատկապես հանդիսանում է թե շանդագիծն իր ժամանակին գործի դնելուն, և թե ռելսային տրանսպորտի նորմալ շարժմանը, վորոշ դեպքերում կարելի յե իրագործել յերկու ճյուղավորումների կոմբինացիայով։ Ինչպես նկ. 17-ի սխեման ցույց է տալիս, այդ միջոցը հնարավորություն է տալիս շանդագիծը ռելսային ճանապարհի տակից անցկացնել առանց նասոսի աշխատանքը դադարեցնելու։

Սակայն, յերե ռելսերը մոտ են ասֆալտի մեջ, շանդները նրանց տակից կարճ ժամանակում անցկացնելը չա-

փազանց դժվար է։ Այդ դրությունից դուրս են գալիս նրանով, որ շանգներն անցկացնելու համար ռելսերի տակից անհրաժեշտ տեղերում նախապես անցքեր են բացում կամ հատուկ կառուցվածքներ են պատրաստում, որոնք հնարավորություն են տալիս շանգագծերը պահել այնպիսի բարձրության վրա, որը բավարար է ռելսային տրանսպորտի անցնելու համար։ Վերջին միջոցառումը կապված է որոշ դժվարությունների հետ, մանավանդ էլեկտրաքարշ տրանսպորտի (տրամվայ, էլեկտրաքարշ գնացքներ) ճանապարհները կարելիս։ Այս դեպքում, ըստ էության, կարելի կլինի կիրառել հատուկ կոռնկ մեքենաներ կամ դուրս քաշովի աշտարակներ, որոնց ոգնությամբ հնարավոր կլինի շանգագծերը պահել էլեկտրահաղորդիչներից բարձր։ Սակայն այս հարցը դեռևս չլուծված պրոբլեմ է և անհրաժեշտ է դրանով լուրջ կերպով զբաղվել։




Նկ. 17

Հրդեհաշիջման ժամանակ փողոցային նորմալ շարժումը պահպանելու հետ կապված խնդիրը լուծելիս չպետք է մոռանալ ամենամոտ ճանապարհների և փողոցային գուգահեռ մագիստրալների գոյության և ոգտագործման մասին, որոնցով և անհրաժեշտ և մեխանիկական ոգնությամբ դադարած շարժման հոսանքին ընթացք տալ։

Թիկունքի պետի հետագա խնդիրն այն է, որ հրդեհաշիջման գործողությունները ծավալելու և գործիքները տեղավորելու համար հրդեհի վայրի դիմաց ազատ հրապարակ (փոքրիկ գործողության գաշտ) թողնի։ Միանգամայն պարզ է, որ յեթե հրդեհի վայրի դիմացի հրապարակը զանազան մեքենաներով լցված լինի, դրանով շանգագծերը պարզելը, մեխանիկական սանդուխքները և մյուս գործիքները դնելը կդժվարանա և բացի դրանից, հրդեհաշիջ ավտոմեքենաների ազատ տեղաշարժման հնարավորությունը կսահմանափակվի։

Վերջապես, անհրաժեշտ է տեղ հատած մեքենաների համար մանեվրելու (տեղաշարժվելու) հնարավորություն տեղծել։ Դրա համար թիկունքի պետը պետք է կապարի ավտոմեքենաների դասավորում, հաշվի առնելով մարտական և ժամանակ ավտոմեքենաներն անհրաժեշտ տեղերում խմբավորելու նպատակահարմարությունը։



Նկ. 18

Պարզության համար քննության առնենք առաջինը հրդեհի վայրը հատած մասի ավտոմեքենաների դասավորման կարգը (նկ. 18)։


Այստեղ գլխից ընթացող ավտոմեքենան կանգ է առնում հրդեհի վայրից 15—20 մ հեռավորության վրա՝ հետախուզություն կատարելու, դռները բացելու, մարդկանց փրկելու ժամանակ նրանց ոգնություն ցույց տալու և այլն։

Յերկրորդ ավտոնասոսն ուղարկվում է մոտակա ջրափոսը և պատրաստվում է գործելու անկախ այն հանգամանքից, թե նրա աշխատանքի կարիքն զգացվում է, թե ոչ։ Ըստ վորում գործողության պատրաստություն տերմինի տակ պետք է հասկանալ՝ հորը ձյունից մաքրելը, տեղները դրնելը, ջրի տակությունն ստուգելը և ընդունող շանգները միացնելը։ Իսկ նետիչ շանգները չեն պարզվում, մինչև հատուկ հրաման չի ստացվում։

Մնացած ավտոմեքենաները (մեխանիկական սանդուխքները և այլն) տեղավորվում են հրդեհի օբյեկտին հակառակ փողոցի կողմը։

Լրացուցիչ կերպով տեղ հասած մասերի ավտոմեքենաները բաշխվում են հետևյալ կերպ։ Ավտոմեքենաները բաշխվում են ջրաղբյուրների վրա, հաշվի առնելով հարևան հիդրանտների վրա նրանց դնելու հնարավորությունները (կախված է ջրմուղային մագիստրալների տրամագծից և ջրմուղի հատկությունից)։ Մեխանիկական սանդուխքները խմբավորվում են այն տեղամասերում, վորտեղ նրանց կիրառումն ամենից հավանական է։ Նույնը նաև սանիտարական կառեթների վերաբերյալ։ Մյուս ոժանդակ ավտոմեքենաները ցանկալի չե տեղավորել հրդեհի վայրին անմիջապես մոտիկ, առավելապես փողոցի հակառակ կողմը։

Անհրաժեշտ է հաշվի առնել հրդեհի զրոհման հնարավորությունը մի քանի կողմից և դրա կապակցությամբ զանազան կողմերից կատարել ավտոմեքենաների խմբավորում։ Այդ բոլոր խնդիրը պետք է թիկունքի պետի հետ կապ պահպանեն։



Նկ. 19

Ավտոմեքենաները քաղաքի հրապարակում տեղավորելու որինակը բերված է նկ. 19-ում։

2. Թիկունքի պետի մյուս հիմնական պարտականությունը ջրամատակարարումն է։

Ջրամատակարարման կազմակերպման հասկացողության մեջ մտնում են մի քանի ինքնուրույն հարցեր և ամենից առաջ ջրաղբյուրների հետախուզությունը։

Ջրաղբյուրների հետախուզության նպատակն է նաստների ջրամատակարարումը կազմակերպելու համար վորոշել ջրաղբյուրների անհրաժեշտ քանակը, տարողությունն ու մատչելիությունը (մոտեցման ուղիների առկայությունը)։ Ջրաղբյուրների հետախուզության հետ միաժամանակ թիկունքի սահմանների մեջ վորոշվում է նաստից դեպի հրդեհը տանող ամենակարճ և ամենահարմար ուղղությունը։

Հետախուզությունը կատարվում է համաձայն որյեկտիվ ռազերատիվ պլանի կամ հրդեհաշեջ ջրաղբյուրների տեղեկագրի տվյալների, իսկ այդպիսի տվյալների բացակայության դեպքում իրագեկ մարդկանց անձնական հաղորդումների հիման վրա։

Յեթե տվյալ կետում ջրմուղ գոյություն ունի, թիկունքի պետը պետք է նախապես գիտենա ջրմուղային մագիստրալների տրամագիծը, հրդեհաշեջ հիդրանտների դիրքը, ցանցի ճնշումը և այլն։

Յեթե տվյալ կետում բնական կամ արհեստական ջրափոս գոյություն ունի, անհրաժեշտ է գիտենալ այդ ջրափոսերից մինչև հրդեհի վայրը յեղած հեռավորությունը, նրանց տարողությունը, նրանց մոտենալու և ավտոնաստները դնելու հնարավորությունը։

Ցանկալի չե այս բոլոր տեղեկություններն ունենալ նախապես, վորպեսզի թիկունքի պետն ազատ լինի ջրափոսեր վորոնելուց և նրանց պիտանի լինելը վորոշելուց։ Այս դեպքում թիկունքի պետի խնդիրի մեջ կմանի ջրաղբյուրներն ոգտագործելու համար վորոշել նրանց պիտանիությունն ու մինչև հրդեհի որյեկտը յեղած նրանց հեռավորության չափը։

Նաստոները ջրաղբյուրների վրա դնելու գործը կազմակերպելիս պետք է նկատի ունենալ այն հեռավորության սահմանը, վորից կախված է ջրի անընդհատ մատակարարումը։ Անշուշտ նաստները չի կարելի դնել հրդեհի ոջախից այնպիսի հեռավորության վրա, վոր նաստի ուժը քիչ լինի անհրաժեշտ քանակությամբ ջրացայտեր առաջացնելու։ Այդ պատճառով թիկունքի պետն այս կամ այն տիպի նաստոների տեխնիկական բնույթի հիման վրա պետք է վորոշի նաստից մինչև հրդեհի ոջախը յեղած ամենամեծ հեռավորությունները։ Յեթե ջրաղբյուրները հրդեհի ոջախից բավականին հեռու չեն, և մեկ նաստոն իվիճակի չե անընդհատ ջուր մատակարարելու, թիկունքի պետը պետք է ջուր ժամատակարարի՝ տեղափոխման կամ կրելու միջոցով։

Անընդհատ ջուր մատակարարելու նպատակով թիկունքի պետը միջոցներ է ձեռք առնում հսկելու նատոնների, ընդունող և նետիչ ջանգագծերի սարքին և պատշաճ վիճակին, անհրաժեշտ դեպքերում նրանց ժամանակավորապես նորոգման յենթարկելով։ Ջրմուղային ցանցի անհրաժեշտ ճնշումն ապահովող միջոցն այն է, որ ջրմուղի ավյալ տեղամասում ճնշումն ավելացվում է, երբ կատարվում է ջրմուղային կայանին ժամանակին համապատասխան պահանջ ներկայացնելով։

Թիկունքի պետը պետք է ժամանակին միջոցներ նախատեսի այն դեպքի համար, յերբ ջրաղբյուրը մասամբ կամ ամբողջովին շարքից դուրս է ընկնում, կամ յերբ ջրմուղի կամ ջրափոսերի մեջ ջուր չի լինում։ Այդ հնարավորությունը պետք է նախատեսվի ռպերատիվ պլաններով և ավյալ դեպքում կարելի յե հանձնարարել՝

1) նատոնները տեղափոխել ավելի հեռու գործող ծորակների վրա.

2) նատոնները ջրմուղից տեղափոխել ջրափոսերի վրա.

3) մոցնել ջուր տեղափոխելու աշխատանք.

4) ջրաճնշիչ կայանին լուր տալ ցանցի ճնշումն ավելացնելու անհրաժեշտության մասին և առանձին սպառողների կամ ցանցի նույնիսկ ամբողջ տեղամասեր անջատել՝ ջրի ամբողջ մասան հրդեհի վայրը տալու համար.

5) աշխատող ավտոնատոնների քանակը պակասեցնել.

6) գործող ավտոնատոնների ճնշումը քչացնել.

7) փողակների քանակը պակասեցնել՝ «Ա» փողակները մասամբ փոխարինելով «Բ» փողակներով։

Դրանցից վորոշ միջոցառումներ (կետեր՝ 5, 6, 7) անխուսափելիորեն հրդեհի պարագան բարդացնում են և նույնիսկ հրդեհաշիջումը դանդաղեցնում. այնուամենայնիվ առանձին դեպքերում գործողությունների այլ ընտրություն չկա և հարկ է լինում այդ ծայրահեղ միջոցներին դիմելու։

Յեթե ջրափոսի ջուրը հերիք չանելու վտանգ է առեղծվում, թիկունքի պետը պետք է այդ մասին հայտնի հրդեհաշիջման դեկավարին։ Թիկունքի պետը նատոնների աշխատանքում այս կամ այն փոփոխությունը մտցնել կարող է միմիայն հրդեհաշիջման դեկավարի թույլտվությամբ, վորովհետև հրդեհաշիջման ոպերացիայում կարող են անսպասելի դժվարություններ ծագել։

Ավտոնատոսը շարքից դուրս ընկնելիս, կարելի յե նրան փոխարինել մեկ ուրիշով, բայց վորում այդպիսի փոխարինման հնարավորությունը նույնպես պետք է առաջուց նախատեսի թիկունքի պետը։


Ջուր տեղափոխելու գործը կազմակերպելիս թիկունքի պետը կարող է ընտրել քաշելու տեխնիկական ձևավորման հետևյալ վարիանտներից մեկն ու մեկը. ջրաղբյուրի մոտ դրված ավտոնատոսի մագիստրալային գիծը միացնել հրդեհին մոտիկ դրված ավտոնատոսի ծծող շտուցերին, փոդախի (առանց սրսկիչի) ոգնությամբ առաջին ավտոնատոսի մագիստրալային գիծը միացնել յերկրորդ ավտոնատոսի ջրամբարին, ջուրը տալ տեղափոխովի հատուկ ատանի (քաթանե) կամ հրդեհին մոտիկ գտնվող այդ նպատակի համար միանգամայն պիտանի ավազանի մեջ (նկ. 20)։

Ջրամատակարարման գործը կազմակերպելիս թիկունքի պետը պետք է հաշվի առնի ջուր կրելու համար նախանշանակված աշխատող նատոնների և միջոցների քանակն ու ուժը։

Իբրև կանոն, յուրաքանչյուր ձեռքի նատոի ջրամատակարարումը պետք է կատարվի վոչ պակաս, քան յերեք տակառով, վորոնցից մեկը պետք է գտնվի նատոի մոտ, նատոից մինչև ջրաղբյուրը տանող ճանապարհին, յերրորդը ջրաղբյուրից մինչև նատոը տանող ճանապարհին։

Ավտոնատոների ջրամատակարարման համար նրանցից յուրաքանչյուրը պետք է եապահովված լինի վոչ պակաս, քան յերկու ավտոցիստերնով։ Ջուր կրելու միջոցով նատոների անընդհատ ջրամատակարարումն ապահովող միջոցներից մեկը հանդիսանում է ջրաղբյուրնեջի և փոխադրողների ունեցած հարմարանքների միջոցների, վորոնք

հնարավորություն են տալիս արագ կերպով ջուր լցնելու։ Այս հանդամանքը նույնպես կապված է ջրաղբյուրի և նասոսը դնելու տեղի արանքը յեղած հեռավորության հետ։



Ա ՄԱԳԻՍՏՐԱԼԱՅԻՆ ԳԻԾԸ ՄԻԱՑԱԾ Է ԱՎՏՈՆԱՍՈՍԻ ՃՃՈՂ ՇՏՈՒՑԵՐԻՆ

Բ ՄԱԳԻՍՏՐԱԼԱՅԻՆ ԳԻԾԸ ՄԻԱՑԱԾ Է ՀՐԴԵՀԻՆ ՄՈՏԻԿ ԳՐՎԱԾ ԱՎՏՈՆԱՍՈՍԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՀԵՏ

Գ ՈԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՄԱՆ

Նկ. 20

Տրամաբանությունն ասում է, որ ավտոցիստերնը յերկու ծայրերը տեղաշարվելու և ջրաղբյուրի մոտ լցվելու վրա ծախսած ժամանակը պետք է համապատասխանի այն ժամանակին, որի ընթացքում ավտոնասոսն ամբողջ ուժով աշխատելով մյուս ավտոցիստերնը կդատարկի։

Այդպիսի կապակցության մեջ է նաև ջրաղբյուրների քանակի ու լցնելու ունակության և նասոսների քանակի միմյանց համապատասխան լինելը։ Յեթե ջրաղբյուրը մեկ հատ է, նա պետք է ընդունակ լինի միաժամանակ լցնելու յեղած ավտոցիստերների 50%-ը։ Հակառակ դեպքում յուրաքանչյուր նասոսի համար պետք է ինքնուրույն ջրաղբյուր գտնել։ Վերջապես, պետք է նկատի ունենալ, որ յեթե թիկունքի պետի անորինության տակ կան թե՛ ավտոցիստերներ, և թե՛ ձիատակառներ, ավտոցիստերները պետք է ոգտվեն նասոսներից ավելի հեռու գտնվող ջրաղբյուրներով, իսկ ձիատակառները՝ ավելի մոտիկներով։

Ջրհեռ ժամանակ նասոսները և շլանգագծերը սառչելու վտանգ է առաջանում։ Այդ պատճառով թիկունքի պետը պետք է նասոսներն ու շլանգները սառչելու դեմ ժամանակին միջոցներ ձեռք առնի։

Ավտոնասոսները մշտապես շարժման մեջ լինելիս (առանց կանգ առնելու) նրանց սառչելն անհավանական է, մանավանդ վոր գոյություն ունի նասոսը ռադիատորից ջրով կամ հեռացող գազերով տաքացնելու սիստեմ։

Սառչելը կարող է տեղի ունենալ նասոսը դադարելու ժամենակից։ Ուստի ջուրը շլանգագծերի մեջ տալը դադարեցնելու անհրաժեշտության դեպքում պետք է շտուցերները փակել, սակայն առանց նասոսի շարժումը դադարեցնելու։ Այդ միանգամայն հնարավոր է, քանի վոր կարելի յե կենտրոնախույս և պտուտակավոր նասոսներով աշխատել «դեպի իրեն»։

Շլանգագծերը կարող են սառչել գլխավորապես նաև ջրի շարժումը դադարելու դեպքում. խիստ սառնամանիքների նախավում է, վոր շլանգի ներսի պատերը հեղհեղ սառչում են և նրա տրամագիծը փոքրանում է։ Սառչելու յենթակա յեն առավելապես մանր գործվածքի («բ») շլանգները, ըստ վորում վոչ ռեզինապատ շլանգներն ավելի հեշտ են սառչում, քան մյուսները։

Յեթե վերը մատնանշվեց նասոսի միջով ջրի անընդհատ շարժվելու հնարավորության, շլանգագծի վերաբերյալ այդ հնարավոր չե։ Շլանգները ծակվելու հեռանքով նրանց փոխելու համար հարկավոր է լինում ջուրը դադարեցնել։

Ջեռքի նասոսներով արվող ջրի անկանոնություններն նույնպես առաջ են բերում շլանգների միջով ջրի շարժվելու ընդհատում, վորի հեռանքով կարող է սառչում տեղի ունենալ։ Այդ պատճառով սառնամանիքներին անհրաժեշտ է ռեզինապատ շլանգներ պարզել։ Այս շլանգները պարզում են աշխատող հիմնական գծերին զուգահեռական և վերջինների վնասվելու դեպքում նասոսի աշխատանքն անմիջապես միացնում են ռեզինապատ շլանգագծերին։

Շլանգների պաշարի սահմանափակ քանակի հետևանքով ոռոգիչ ցանգագծերն ոռոգումն են միայն ծայրահեղ դեպքում, երբ թուլյատրելի չե միմիայն այն ժամանակ, երբ բոլորովին հնարավոր չե այլ միջոցներով հիմնական գծերի գործողությունը պահպանել, որովհետև ջրի շարժումը կանգ առնելիս սառչելու հետևանքով հիմնական գիծը դառապարված է շարքից դուրս ընկնելու, իսկ ոռոգիչ գծից նորից հիմնականին միացնելը մեծ մասամբ աննպատակահարմար է։

Նասոսների աշխատանքի վերաբերյալ հսկողությունը, անկախ նրա վիճակից, նույնպես վերաբերում է թիկունքի պետի ֆունկցիաներին։ Սովորական ժամանակ նասոսների կանոնավորության ստուգումը պետք է կատարել պարբերաբար ամսական 1—2 անգամից ոչ պակաս՝ նասոսը ջրափոսի (և ոչ թե հիդրանտի) վրա դնելով։ Սակայն նասոսի այս աշխատանքը սովորաբար 30 րոպեից կամ մեկ ժամից ավելի չի տևում։ Իսկ նասոսների աշխատանքը հրդեհի վայրում հաճախ մի քանի ժամ է տևում։ Այսպիսով նասոսների ստուգման ժամանակ չնկատված թերությունները կարող են հրդեհի ժամանակ կատարված չերկար աշխատանքի հետևանքով չերևան գալ։

Նասոսների աշխատանքի վերաբերյալ հսկողության նպատակն այն է, որ կարելի լինի նասոսները շարքից դուրս ընկնելու հնարավորության առաջն առնել։ Այս պարտականությունը դրվում է շոֆերների վրա։ Սակայն դրանից անկախ, թիկունքի պետը պետք է պարբերաբար աշխատող նասոսների շուրջը պտույտ դա և հսկի թե՛ նրանց աշխատանքին և թե՛ շոֆերների կողմից նասոսներին մատուցվող սպասարկման ճշտությանը։

Ջրամատակարարումն ապահովելու, արագ և ճիշտ կերպով ջուր տալու խնդիրը թիկունքի բոլոր խնդիրների շարքում ամենաէական խնդիրն է։ Հրդեհաշիջման ամբողջ հաջողությունն ըստ էության կախված է ջրի գոյությունից։ Այդ պատճառով ջրամատակարարման հարցին և հրդեհի ժամանակ այդ հարցի լուծումը հեշտացնող գանագան միջոցառումների նախնական մշակմանը պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնել։

3. Մեքենաներին վառելանյութ և յուղելանյութ մատակարարելը նույնպես կապում է թիկունքի պետի հիմնական պարտականությունը։

Իրըև կանոն, մարտական բոլոր ավտոմեքենաները հրդեհի վայրը մեկնելու մոմենտին՝ նրանց մեջ պետք է վառելանյութ և յուղելանյութ լցնել։ Բացի դրանից, խոշոր հրդեհների դեպքում վառելանյութի պաշարը տանում են ժամանակ ավտոմեքենաներով։ Այնուամենայնիվ, տևական (երկարաձգվող) հրդեհները վառելանյութի չեզած պաշարը բավականին արագ կերպով սպառում են, ուստի թիկունքի պետի առաջ հարց է դրվում լրացուցիչ կերպով վերոհիշյալ նյութերը մատակարարելու, ըստ որում մեծ քանակությամբ ավտոնասոսներ գործի դրված լինելու դեպքում, վառելանյութի պահանջը կարող է արտահայտվել հարյուրավոր կիլոգրամներով։

Հրդեհի ընթացքից տեսնելով, որ անխուսափելիորեն այդպիսի պահանջ է առաջանալու, թիկունքի պետը պետք է ժամանակին վառելանյութ և յուղելանյութ պահանջի, որոնք հրդեհի վայրը մատակարարվում են հրդեհաշեջ պահպանության միջոցներով, կամ դրա համար կարելի չե հրդեհի վայրից ոժանդակ ավտոմեքենան ուղարկել։ Պետք է նկատի ունենալ, որ հրդեհին անհրաժեշտ ջուր տալը կախված է իր ժամանակին վառելանյութ և յուղելանյութ մատակարարելուց։

4. Ջափազանց կարևոր է նաև իր ժամանակին շլանգների պաշարի վերականգնումը։ Խոշոր խմբերի շլանգային տնտեսության կազմակերպումը կարող է թույլ տալ բավականաչափ ունենալու, որտեղ մեծ քանակությամբ շլանգներ են պահվում, և հատուկ շլանգային ավտոմեքենաներ ունենալու, որոնք կարող են հրդեհի վայրը փաթեթներով կամ կոճերի վրա դրված շլանգների պաշար տեղափոխել։

Լրացուցիչ քանակով ջանգներ հասցնելու անհրաժեշտությունը թելադրվում է հետևյալ նկատառումներով։

Ամենից առաջ այդ տեղի չե ունենում այն պատճառով, որ ավտոմեքենաների բեռնունակությունը թույլ և տալիս յուրաքանչյուր ավտոնաստոսով փոխադրելու միմիայն 400-450 վ դանագան տրամագծերի ջանգներ։ Դրա հետևանքով մի շարք դեպքերում հնարավոր չե մեկ ավտոնաստոսից յերկու «Ա» դիծ պարզելու, այնինչ միշտ կարող է դրա անհրաժեշտությունն առաջանալ։ Բացի դրանից, կարող է պահանջ առաջանալ ուժերն ու միջոցները մեկ հրդեհից փոխադրել մյուսը։ Այդ պատճառով չափազանց ցանկալի յե, որ իր ջանգներն ոգտագործած յուրաքանչյուր մեքենա, հենց հրդեհի վայրում կարողանա ջանգների պաշարը վերականգնել և պարզած ջանգները յերկարացնելու ու նոր դծեր պարզելու համար անհրաժեշտ քանակությամբ լրացուցիչ ջանգներ ստանալ։ Այս նկատի ունենալով, թիկունքի պետը պետք է ոգտագործի իր տրամադրության տակ յեղած միջոցները և միջոցներ ձեռք առնի ջանգների պաշարը վերականգնելու։

5. Ամեն ժամանակ մեծ նշանակություն ունի մասերին տաք ջրով ապահովելը, որը նույնպես մտնում է թիկունքի պետի պարտականության մեջ։

Տաք ջուրը հրդեհի ժամանակ պահանջվում է ջանգային միացումները, ճյուղավորումները, նասոսները, սանդուխքները և այլն փափկացնելու համար։ Առաջին հայացքից մանր թվացող այս խնդիրը հրդեհի ժամանակ ունի իր նշանակությունը, նպաստելով գինման խնայողությանը և վերականգնելով առանձին դործիքների աշխատանքը։

Տաք ջուր կարելի չե պատրաստել յերկու կերպ։ Առաջինը, որ ջուրը տաքացնում են, որինակ, սովորական պրիմուսի հետ կառուցված հատուկ ամանում կամ վերակառուցված շոգեմեքենայում։ Դրա համար, Լենինգրադի հրդեհաշեջ պահպանության որինակով, նպատակահարմար և կիրառել վերակառուցված վիեննական ջահը։ Աման չլինելու դեպքում տաք ջուր պատրաստելու համար հնարավոր է ոգտագործել ամեն մի ձեռնարկության կամ հիմնարկության մեջ գտնվող յեռամանները։

6. Տևական, յերկարաձգվող հրդեհների ժամանակ հրդեհի մեկուսացումից հետո, յերբ պարագան հնարավորություն և տալիս մարտիկներին փոխել և հանգիստ տալ, անհրաժեշտ է կազմակերպել մարտիկների մնունդ և ժամանավորապես խմելու ջրի պաշար ապահովել։ Վերջինս անհրաժեշտ է բոլոր դեպքերում, մանավանդ ամառ ժամանակ։ Դեպքեր են լինում, որ մարտիկների թունավորման վտանգ է առաջանում։ Այս դեպքում իբրև հակաթույն գործ է ածվում կաթը։ Մնդանյութերին, խմելու ջրի և կաթի պատրաստման պարտականությունը դրվում է թիկունքի պետի վրա։ Աշխատողներն իրենց դիրքերից հանվում և անդի համար թիկունք են ուղարկվում միմիայն հրդեհաշիջման ղեկավարի ցուցումով, այլապես մի քանի մարտական տեղամասեր կարող են թուլանալ։

7. Պակաս կարևոր չե նաև անձնական կազմի սանիտարական սպասարկման համար թիկունքի պետի վրա դրվող խնդիրը, մինչև հրդեհի վայրը հրդեհաշեջ պահպանության հատուկ սանիտարական ծառայության ժամանումը։ Այս դեպքում թիկունքի պետը վնասվածներին ցույց է տալիս առաջին ոգնություն, ոգտագործելով յուրաքանչյուր խմբին հատկացված դեղորայքը, լինչպես և դիմում է մոտակա բժշկական հիմնարկության ոգնությանը՝ «Կարմիր խաչին», ՊՍԶԸ-Ավիաքիմի բժշկական կազմակերպություններին, ըստ տալ ոգնությանը և այլն։

8. Թիկունքի պետի պարտականության մեջ է մտնում նաև հրդեհի վայրի պահպանության կազմակերպման խնդիրը։ Հրդեհի վայրի պահպանություն ասելով հասկացվում է անձնական կազմի գործողությունների և գինման (տեխնիկական միջոցների, ջանգագծերի և այլն) պահպանությունը։

Փորձը բազմիցս ցույց է տվել, որ հրդեհների ժամանակ հրդեհաշեջ խմբերի աշխատանքում հիմնական խոչընդոտ և

հանդիսանում կողմնակի մարդկանց միջամտությունը խմբերի աշխատանքին։ Հրդեհը (մանավանդ խոշոր) մեծ քանակությամբ մարդիկ և քաշում դեպի իրենն, վորոնք զանազան նպատակներով մոնելով խմբերի աշխատանքի սահմանը, դժվարացնում են գործիքներ հասցնելու գործը, խանգարում են շանգագծեր պարզելուն, փորձում են հրդեհաշիջման գործին ամիջական մասնակցություն ցուցց տալ, վորը միանգամայն ավելորդ է (կոտրում են դռները, պատուհանները և այլն), իրենց նկատողություններով, հարցերով և այլն մարտիկներին ու հրամկազմին չղաղացնում են, և չերբեմն էլ ուղղակի առանձին տեղամասերի աշխատանքը կազմալուծում են։

Չպետք է մոռանալ, վոր այդպիսի դեպքերում հաճախ աչքաթող են արվում դասակարգային թշնամու գործողությունը, վորով նա դիտավորյալ կերպով աշխատում է հրդեհաշիջների գործը կազմալուծել, հրդեհաշիջումը դանդաղեցնել և դրանով իսկ սոցիալիստական սեփականությանը մեծ վնաս հասցնել։

Այդ չերևույթների դեմ պայքարում են ԲԴ կազմիչ միլիցիայի որգանները։ Սակայն դա Թիկունքի պետին չի ազատում կարգի պահպանության մասին հոգ տանելուց։ Մեկ կողմից միլիցիայի տեղ հասնելուց առաջ մի վորոշ ժամանակ հրդեհաշիջ խմբերը կարիք են ունենում պահպանության միջոցներ ձեռք առնելու, մյուս կողմից՝ ամենալուրջ օպերատիվ տեղամասերում միլիցիական պոստեր դնելու վերաբերյալ Թիկունքի պետի ցուցումները լուրջ նշանակություն ունեն։

Հրդեհաշիջ խմբերն իրենց կազմում պահպանության համար հատուկ ապարատ չունեն, այդ պատճառով խմբերի դործողությունները պետք է պահպանի հրդեհին ներկայացված մարտիկների և հրամանատարների ամբողջ անձնակազմը։

Ինչ վերաբերում է տեխնիկական դինման պահպանությանը, այստեղ պետք է նկատի ունենալ շանգագծերը պատռելու, ավտոմեքենաների ռեզինները դանակով կտրտելու, մանր սարքավորման ու գործիքների գողության բազմաթիվ դեպքեր, վոր շատ խմբերի աշխատանքում նկատվել է։

Առանձին կանգնած ավտոնասոսները, մանավանդ դիշեր ժամանակ, և դալի տարածության վրա պարզված շանգագծերը դասակարգայնորեն խորթ տարրերի կողմից յենթակա չեն դիտավորյալ փչացման վտանգի։ Այդ պատճառով խմբի ամբողջ անձնական կազմը պետք է զգոն լինի, չխոսելով արդեն գծերի անվտանգությանը հսկող կամ ավտոնասոսների, սանդուխքների և այլ գործիքների վրա աշխատող հատուկ մարդկանց մասին։

Բացի դրանից, քիչ չեն նաև շանգագծերի վրայով գանագան տյուլեր և մեքենաներ անցնելու հետևանքով նրանց վնասվելու դեպքերը։ Թիկունքի պետը գծերի հսկողության համար նշանակված մարտիկների միջոցով պետք է միջոցներ ձեռք առնի գծերի վրայի անցուդարձն արգելելու, շանգային հատուկ կամրջակներ կիրառելու և այլն։

Վերջապես, բացահայտված և գողության վտանգի յենթակա գույքը Թիկունքի պետի տեսադաշտից չպետք է փախչի։

Մենք քննության առանք Թիկունքի կազմակերպման հատկացողության մեջ մտնող հիմնական հարցերը։ Սակայն ըստինքյան հասկանալի յե, վոր հրդեհաշիջման պրոցեսում կարող են դարձյալ ծագել մի շարք հարցեր, վորոնք յենթակա չեն շատալ լուծման։ Այսպես, որինակ, կարող է թափված ջրի դեմ պայքարելու համար Թեվի պահանջ զգացվել, հավանական է, ծածկի ժամանակավոր հենարանները պատրաստելու պահանջ լինի և այլն։

Հրդեհաշիջման ամբողջ ընթացքում Թիկունքի պետը պետք է հրդեհաշիջման դեկավարի հետ սերտ կապ պահպանի, վերջինիս պարբերաբար հաղորդի Թիկունքի աշխատանքի վիճակի մասին։ Միանգամայն հասկանալի յե, վոր Թիկունքի պետը պետք է հրաշալի կերպով դիտենա ժամանակին տրված հաղորդումների արժեքն ու նշանակու-

թյունը, վորպեսզի ճակատում ավելորդ բարդություններ չառաջանան։ Թիկունքի պետը վոչ թե սոսկ կերպով իր հաղորդումներն է կնքում, այլ դրա հետ միասին միջոցներ է ձեռք առնում ծագած խոչընդոտներն անմիջապես հաղթահարելու։ Թիկունքի աշխատանքն իրոք պետք է ոգնի ճակատին հաջող գործողություններ կատարելու՝ հրդեհին վերջ տալու համար։ Թիկունքի անվճռական, անճարակ պետը միմիայն ավելորդ բեռ է, և կազմակերպությունն էլ իր միաքը կորցնում է։ Թիկունքի պետը պետք է ռեզերվների և գործող մեքենաների հետ կապ պահպանի։

Թիկունքի կազմակերպման վերոհիշյալ նկարագրությունը կիրառելի չէ, իհարկե, խոշոր խմբերի համար։ Իսկ փոքր խմբերի պայմաններում թիկունքի կազմակերպման չափերն էլ համապատասխան կերպով փոքրանում են, սակայն այնուամենայնիվ թիկունքի առջև դրվող խնդիրները նույնն են։ Նույնիսկ ամենափոքր խմբերում, վորտեղ երկու-երեք ջոկ կա, գործնականորեն պետք է պետակազմի մեջև ֆունկցիաների բաշխում կատարվի, քանի վորում նրանցից մեկին անխուսափելիորեն պետք է զբաղվի թիկունքն ապահովելու խնդիրներով։

Թիկունքի թերագնահատումն ու նրա կարևորությունը չհասկանալն առաջ է բերում բոլոր հարցերի ընդհանրացում հրդեհաշիջման մեկ ղեկավարի ձեռքում և այդ վերջինը հեռանալով միմիայն անմիջական հրդեհաշիջման ոպերատիվ խնդիրների լուծումից, ուշաղրությունը ցրում է և մի շարք շատ նյական մոմենտներ աչքաթող է անում, վորի հետևանքով տեղի չեն ունենում սխալներ և կիրառվում են սխալ մեթոդներ։

4. ՀՐԴԵՀԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան հետախուզության խնդիրների քննության անցնելը, անհրաժեշտ է գաղափար տալ հրդեհի ոջախի, կրակի գոտու և ծխապատ գոտու մասին, վորոնք հետախուզության ժամանակ պակաս կարևոր դեր չեն խաղում։

Հրդեհի ոջախ կոչվում է այն տեղը, վորտեղ ամենից սաստիկ այրում է տեղի ունենում. դա հրդեհի կենտրոնն է։ Հրդեհի ոջախն այն նշանակությունն ունի, վոր տվյալ կետում ամենից հեշտ և կրակի ավերիչ գործողության (ծածկերի, միջնորմների և այլնի այրում), հետևապես նաև հրդեհի ծավալում սպասել։ Մյուս կողմից, քանի դեռ ոջախին հարված չի հասցված, հրդեհի շրջապատի պայմանները չեն հեշտանում և մոտակա առարկաների (նյութերի և կառուցվածքների) վրա այդ ոջախի ունեցած ազդեցությունը չի թուլանում։

Կրակի գոտին այն տեղն է, վորն ընդգրկված է կրակով։ Կրակի գոտուց էլ անհրաժեշտ է հրդեհաշիջման գործողություններն սկսել։

Փոքրիկ ոջախից կարող է զարգանալ կրակի մեծ գոտի, վորի ազդեցության վոլորտի տակ են ընկնում այն շենքերը, շենքերին հարևան շենքերը, վորտեղ գտնվում է հրդեհի ոջախը։

Ծխապատ գոտին այն տեղն է, վորը լցված է ծխով։ Այս գոտին կրակի գոտուց միշտապես ավելի մեծ է, վորովհետև ծուխը հեշտությամբ լցվում է այն շենքերը, վորոնք նույնիսկ կրակի գոտու կամ հրդեհի ոջախի հետ յերբեք կապված չեն։

Այս գաղափարները սխեմատիկ կերպով պատկերված են նկ. 21-ում։

Հետախուզության հիմնական դերն այն է, վորպեսզի կարելի լինի անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել, վորոնց հիման վրա հնարավոր լինի ուժերի ճիշտ դասավորում կատարել և հրդեհն արագորեն հանգցնել։

Տեղեկությունները պետք է հավաքել յերեք ուղղությամբ՝ 1) կրակի, 2) վառվող շենքի կառուցվածքների ու նյութերի և 3) տվյալ հրդեհի ժամանակ յեղած առանձին պայմանների վերաբերյալ։

1. Կրակի վերաբերյալ, հրդեհաշիջման ղեկավարին զբաղավորապես պետք է հետաքրքրի հրդեհի ոջախի տեղը, կրա-

թյունը, վորպեսզի ճակատում ավելորդ բարդություններ չառաջանան։ Թիկունքի պետը վոչ թե սոսկ կերպով իր հաղորդումներն է կնքում, այլ դրա հետ միասին միջոցներ է ձեռք առնում ծագած խոչընդոտներն անմիջապես հաղթահարելու։ Թիկունքի աշխատանքն իրոք պետք է ոգնի ճակատին հաջող գործողություններ կատարելու՝ հրդեհին վերջ տալու համար։ Թիկունքի անվճռական, անճարակ պետը միմիայն ավելորդ բեռ է, և կազմակերպությունն էլ իր միտքը կորցնում է։ Թիկունքի պետը պետք է ռեզերվների և գործող մեքենաների հետ կապ պահպանի։

Թիկունքի կազմակերպման վերոհիշյալ նկարագրությունը կիրառելի չէ, իհարկե, խոշոր խմբերի համար։ Իսկ փոքր խմբերի պայմաններում թիկունքի կազմակերպման չափերն էլ համապատասխան կերպով փոքրանում են, սակայն այնուամենայնիվ թիկունքի առջև դրվող խնդիրները նույնն են։ Նույնիսկ ամենափոքր խմբերում, վորտեղ ցերեկույթներեք չոկ կա, գործնականորեն պետք է պահակամի միջև ֆունկցիաների բաշխում կատարվի, քանի վորում նրանցից մեկն անխուսափելիորեն պետք է զբաղվի թիկունքն ապահովելու խնդիրներով։

Թիկունքի թերապնահատումն ու նրա կարևորությունը չհասկանալն առաջ է բերում բոլոր հարցերի ընդհանրացում հրդեհաշիջման մեկ ղեկավարի ձեռքում և այդ վերջինը հեռանալով միմիայն անմիջական հրդեհաշիջման ոպերատիվ խնդիրների լուծումից, ուշադրությունը ցրում է և մի շարք շատ էական մոմենտներ աչքաթող է անում, վորի հետևանքով տեղի չեն ունենում սխալներ և կիրառվում են սխալ մեթոդներ։

4. ՀՐԴԵՀԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան հետախուզության խնդիրների քննության անցնելը, անհրաժեշտ է զգալիորեն տալ հրդեհի ոջախի, կրակի գոտու և ծխապատ գոտու մասին, վորոնք հետախուզության ժամանակ պակաս կարևոր դեր չեն խաղում։

Հրդեհի ոջախ կոչվում է այն տեղը, վորտեղ ամենից սկզբից սկսվում է տեղի ունենում. դա հրդեհի կենտրոնն է։ Հրդեհի ոջախն այն նշանակությունն ունի, վոր ավելի կեռում ամենից հեշտ է կրակի ավերիչ գործողության (ծածկերի, միջնորմների և այլնի այրում), հետևապես նաև հրդեհի ծավալում սպասել։ Մյուս կողմից, քանի դեռ ոջախին հարված չի հասցված, հրդեհի շրջապատի պայմանները չեն հեշտանում և մոտակա առարկաների (նյութերի և կառուցվածքների) վրա այդ ոջախի ունեցած ազդեցությունը չի թուլանում։

Կրակի գոտին այն տեղն է, վորն ընդգրկված է կրակով։ Կրակի գոտուց էլ անհրաժեշտ է հրդեհաշիջման գործողությունները սկսել։

Փոքրիկ ոջախից կարող է զարգանալ կրակի մեծ գոտի, վորի ազդեցության վոլորտի տակ են ընկնում այն շենքերը, շենքերին հարևան շենքերը, վորտեղ գտնվում է հրդեհի ոջախը։

Ծխապատ գոտին այն տեղն է, վորը լցված է ծխով։ Այս գոտին կրակի գոտուց միշտակես ավելի մեծ է, վորովհետև ծուխը հեշտությամբ լցվում է այն շենքերը, վորոնք նույնիսկ կրակի գոտու կամ հրդեհի ոջախի հետ ուղղակի կապված չեն։

Այս գաղափարները սխեմատիկ կերպով պատկերված են նկ. 21-ում։

Հետախուզության հիմնական գերն այն է, վորպեսզի կարելի լինի անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել, վորոնց հիման վրա հնարավոր լինի ուժերի ճիշտ դասավորում կատարել և հրդեհն արագորեն հանգցնել։

Տեղեկությունները պետք է հավաքել ուղղությամբ՝ 1) կրակի, 2) վառվող շենքի կառուցվածքների ու նյութերի և 3) ավյալ հրդեհի ժամանակ ուղած առանձին պայմանների վերաբերյալ։

1. Կրակի վերաբերյալ, հրդեհաշիջման ղեկավարին գլխավորապես պետք է հետաքրքրի հրդեհի ոջախի տեղը, կրա-

կով ընդգրկված տարածության մեծությունը, կրակի տարածման ուղղությունը, կրակի հետագա ծավալման հավանական ճանապարհները։

2. Շենքի կառուցվածքների և նյութերի վերաբերյալ անհրաժեշտ է պարզել՝ ծածկերի, պատերի և միջնորմների հրակայունության աստիճանը, անամբողջ միջնորմների և ծածկերի գոյությունը, շենքերի դերը (բնակելի, արտադրական և այլն), ոդափոխիչի և պաշտպանական կառուցվածքների գոյությունը։ Այլ խոսքով, պետք է պարզել կրակի աշխատանքը հեշտացնող և կրակի շարժմանն արգելք հանդիսացող պայմանները։

3. Հատուկ պայմանների անվան տակ պետք է հասկանալ մարդկանց առկայությունը (այդ, անկասկած, հրդեհաշիջման աշխատանքները բարդացնում է), թունավոր, պայթուցիկ և հեշտ բոցավառվող նյութերի գոյությունը, ելևէջատարքավորումների (մանավանդ բարձր լարվածության) գոյությունը և այլն։


Այս հիմնական հարցերը հերթականության կարգով չեն լուծվում և այստեղ չպետք է դատողություն տալ, թե որն է «գլխավորը» և որը «ներկրորդականը»։ Վերոհիշյալ հարցերից յուրաքանչյուրը յուրահատուկ կարևորություն ունի և նրանցից մեկը չի կարելի անտեսել։ Այս բոլոր տեղեկությունները հավաքվում են միաժամանակ այս կամ շենքը մտնելիս։ Շենքը մտնելիս հարկավոր է նաև արագ կերպով պարզել յուղած կրակը, կառուցվածքների բնույթը և հրդեհի զարգացման հատուկ պայմանների գոյությունը։

Հրդեհի վայրը հասնելու առաջին մոմենտներին կատարվող հետախուզությունը չի կարող լի հարկ է, շատ ժամանակ կորցնել և հրդեհի պարագան մանրամասն ուսումնասիրել։ Հետախուզությունը կատարվում է արագորեն և հավաքում է կողմնորոշ հիմնական տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս ուժերն ու միջոցները ծավալել վճռ թե կուրորեն, այլ իրական վտանգի համեմատ։ Գործնականում հետախուզության վրա մի քանի րոպե չե կորչում։

Հետախուզությունը չպետք է հասկանալ իբրև տեղեկությունների հավաքածու։ Հիմնական դրությունները պարզելու հետ միաժամանակ մատնանշվում են նաև այն միջոցները, որոնց պետք է կիրառել հրդեհին վերջ տալու համար։

Նկ. 21-ում պատկերված սխեման ոգտագործելիս մենք կարող ենք հետախուզության գործողությունները պատկերացնել այնպես, ինչպես որ նկ. 22-ում սխեմատիկ կերպով պատկերված է։

Հետախուզությունը շարժվում է միջանցքով, միաժամանակ ստուգելով միջանցքի կողքերին ընկած շենքերի վիճակը։ Հետախուզության հիմնական նպատակն է՝ հասնել կրակի ատհմանին և պարզել վերոհիշյալ հարցերը։ Ա շենքում հայտնաբերված են ծխով թունավորված մարդիկ։ Հետախուզությունն իսկույն ևեթ միջոցներ է ձեռք առնում ծխասպատ դուռ այդ մարդկանց դուրս հանելու։ Բ շենքում հետախուզությունը կրակ է հայտնաբերել և անմիջապես հրաման է տալիս «Բ» փողակը գործի դնելու։




Նկ. 21

Այստեղ մենք տեսնում ենք, որ հետախուզությունն իր խնդիրը դեռևս մինչև վերջ չի կատարել և միաժամանակ միջոցներ է ձեռք առնում կրակին հակառակ գործողություն ցույց տալու։

Տվյալ որինակը հրդեհների բոլոր դեպքերի համար ընդհանուր չե։ Նա բերված է միմիայն վերոհիշյալ դրությունները պարզելու համար։

Անշուշտ կարող են դեպքեր լինել, որ գործողությունը հնարավոր է միմիայն հետախուզությունը վերջացնելուց հետո, ինչպես նաև հնարավոր է հանգցնելու համար մի-

ջոցներ ձեռք առնել հեռախոսազրույցը կատարելուց առաջ (բաց հրդեհների ժամանակ)։



Նկ. 22

Հեռախոսազրույնը կարող է մարդկանց փրկելու անհրաժեշտություն հայտնաբերել այնպիսի պայմաններում, երբ հնարավոր չէ հրդեհաշիջման միջոցներ ձեռք առնել (տեղ հասած ուժերի սահմանափակ քանակի հետևանքով)։ Այդ ժամանակ խմբի ուժերն ոգտագործվում են միմիայն մարդկանց փրկելու համար։

Որինակ, հեռախոսազրույնը կարող է անհրաժեշտություն համարել պայթումով սպառնացող խառնած գազերով լցված բալոնները վերցնել։ Այդ դեպքում ուժերի մի մասն անմիջապես սրահադրվում է բալոնները շենքից հանելու գործին։

Մի դեպքում մարդիկ (նրանց փրկությունը) հանդիսանում են վճռական մոմենտ, իսկ մյուս դեպքում կարևոր նշանակություն ստացան բալոնները։

Սակայն այս հարցերը լուծվում են զուգընթացաբար։ Բացի հազվադեպ բացառություններից հեռախոսազրույնը հատկապես այդ նպատակներով չի կատարվում։

Այս կամ այն վտանգի առաջացման դեպքում պայմանը կրակն է։ Վառվելը դադարեցնելուց հետո մենք անմիջապես այլ միջոցների դիմելու անհրաժեշտությունը վերացնում ենք, մանավորապես թե՛ մարդկանց փրկելու և թե՛ բալոնները դուրս բերելու վերաբերյալ, ինչպես այդ մասին վերը բերված որինակում ասվում էր։ Այդ պատճառով

հեռախոսազրույան հիմնական նպատակը պետք է համարել կրակի, նրա չափերի, տեղի, շարժվելու և այլնի հետ կապված հարցերի պարզաբանումը։

Մյուս հարցերը պարզաբանվում և լուծվում են միաժամանակ, առանց հիմնական նպատակին աչքաթող անելու։ Այդ պարզորեն ցույց է տրված քննված սխեմայում։

Հեռախոսազրույան անձնական կազմը պետք է կազմվի հրդեհի վայրը հասած սոորաբաժանման պետից, ջոկի հրամանատարից և կռվի համար առաջադրված մարտիկից։

Առաջ շարժվելու և ուժերի ծավալման անհրաժեշտությունն հայտնաբերելու համեմատ, ջոկի հրամանատարին հաղորդում է տրվում և միաժամանակ ցույց են տրվում դիրքերը։ Յեթե կարդադրությունը վերաբերում է հեռախոսազրույան մեջ չմտցված հրամանատարներին, այդպիսին տրվում է կապավորի միջոցով։

Հեռախոսազրույն կատարելիս այրված տեղերից անցնելիս փլուզումներից, կողմնորոշումը կորցնելուց, ավտոմատիկներ ունեցող դռների հանկարծակի փակվելուց և այլն խուսափելու համար պետք է գործ դնել նախազգուշական միջոցներ։

Շենքը մտնելիս պետք է հիշել սենյակների, մանավանդ պատուհանների դասավորությունը, վորոնք մեծ նշանակություն ունեն թե՛ հանկարծակի նահանջի, և թե՛ փողակներն արագորեն տալու համար։

Ծխատար շենքում կողմնորոշումը կորցնելուց հետո հանձնարարվում է վորևե ուղղությամբ արագորեն գնալ։ Հասնելով պատերից մեկին, պետք է վերջինիս ուղղությամբ շարժվել մինչև դուրս գալը։

Առանց փորձի հեռախոսազրույն կատարելը շատ դժվար է, վորովհետև տեսանելիության համարյա կատարյալ բացակայությամբ կամ չնչին տեսանելիությամբ ծխի մեջ միայն հարկադրում է նպատակի հասնել աննշմարելի նշաններով, յերբեմն տատացիորեն հոտառությամբ։

Հեռախոսազրույն կատարելու համար կարելի չե հանձնարարել հեռակյալ ձևերը։ Ամենից առաջ անհրաժեշտ է վո-

րոշել շենքի այն հարկը, վորտեղ հրդեհ է առաջացել։ Այդ հեշտ է կատարել հաշվի առնելով ծխի ատիճանը։ Հրդեհի ժամանակ ծուխը տարածվում է առավելապես դեպի վերև, այդ պատճառով հրդեհի ցածում ծուխը շատ նոսր է լինում կամ առհասարակ ծուխ չի լինում։ Յենթադրենք, թե հրդեհը տեղի չե ունեցել յերրորդ հարկում, յերկրորդ հարկում ծուխը թույլ է զգացվում, յերրորդում՝ շատ ուժեղ, իսկ չորրորդում նրա խտությունը հասնում է մաքսիմալ չափերի։

Հաջորդ խնդրով պետք է պարզել, թե տվյալ հարկի հատկապես վոր սենյակումն է հրդեհը ծագել։ Հաճախ կրբակին ինքն իրեն ցույց է տալիս։ Այդ սովորաբար տեղի չե ունենում այն դեպքերում, յերբ հրդեհը ծագել է կրակի հետ անփույթ վարվելուց, վառվող լամպի մեջ նավթ լցնելիս, պրիմուսի կամ կերոսինկայի հետ անշնորհք վարվելիս, վառարանից կրակ թափվելիս և այլն։ Այդ բոլոր մոմենտները կապված են այն բանի հետ, վոր հրդեհը տեղի չե ունենում բաց տարածության վրա և կրակը հեշտ տեսանելի չե։

Դրա հետ միասին հազվադեպ չեն այնպիսի դեպքերը, յերբ հարկ է լինում կրակը «վորոնել» ծածկված տարածության մեջ, որինակ, միջհարկային ծածկերը վառվելիս։

Այդ նշանները, վորոնցով կարելի չե վորոշել կրակի ներկայությունը, հանդիսանում են՝ ծուխը, բարձր ջերմաստիճանը, ճարճատումը։ Վառվելու տեղին հեռուհեռու մոտենալիս ծուխն ավելի և ավելի խտանում է, զգացվում է ծխի «թարմության» հակառակ այն շենքերի, վորտեղ ծուխը թափանցել է պատահականորեն և վորտեղի ծուխն ունենում է դառը համ և հնացածության հատուկ հոտ։ Մի շարք դեպքերում հնարավոր է՝ ծխի շարժումը նկատել և այդ շարժումով վորոշել նրա գոյացման տեղը։ Առանձին դեպքերում ծխի հոտով կարելի չե վորոշել, թե հատկապես վորտեղ է վառվում։ Այսպես, ելեկտրահաղորդիչների այրման դեպքում ռեզինի հոտ է առաջանում (մեկուսիչների վառվելուց)։ Աղվամազի, փետուրի, մաշալայի վառվելը կապ-

ված է բացառապես դառը ծխի հետ, վորն ազդում է աչքերի վրա և տհաճությունն զնդզնդում է կոկորդում։ Ծխի ամեն տեսակի համը (մետաղի, կպչուն, քաղցր-մեղցը), ինչպես նաև սովորական զուտնից խստորեն զանազանվող նրա վառ գույնը (դեղին, կարմիր, սպիտակ և այլն) և փայտի վառվելուց առաջացող ծխի հոտը ցույց են տալիս, վոր թունավոր նյութեր կան։

Վորոշ դեպքերում չի հաջողվում վորոշել, թե զննվող սենյակի մեջ վորտեղից է ծուխ լցվում։ Այդպիսի դեպքում հանձնարարվում է պատուհանը բացել, ծուխը բաց թողնել և հետևել, թե վորտեղից է ծուխը լցվում։

Պայթյունից խուսափելու համար չի թույլատրվում բաց կրակով մտնել ծխով լցված շենքը։ Կրակի ներկայությունն անխուսափելիորեն կապված է ջերմության արտադրման հետ։ Այդ պատճառով կրակին ատաքհանաբար մոտենալիս պարզորեն զգացվում է, վոր ջերմությունն ավելանում է։ Մանավորապես հատակներն անտեսանելի կրակով վառվելիս 1—1,5 մ հեռավորությունից ջերմությունը հեշտությամբ զգացվում է։

Տաք ողը (գազերը) մարդու վրա չափազանց ուժեղ ազդեցություն է ունենում։ Այդ պատճառով չպետք է դռնը միանգամից բացել, այլ քիչ-քիչ, ըստ վորում հանձնարարվում է ամբողջ հասակով չկանգնել, այլ այդ մոմենտին չոքել։ Այլապես արտախուժող գազերը կարող են ատամիկ այրվածքներ առաջացնել, և յերբեմն էլ կարող են մահացու լինել։

Պետք է հաշվի առնել ողի հոսանքի հետ կապված զրուների և պատուհանների բացելու հնարավորությունը։ Մեկ կողմից ողը նոսրացնում է գազերի և ծխի խտությունը, մյուս կողմից այդ առաջ է բերում ավելի ուժգին և հաճախ շատ կատարի վառում։

Ճարճատումն առաջ է գալիս փայտի արագ չորանալուց և վառվելուց։ Ճարճատումը լավ լսվում է նաև ա-

ամենց ծխի (յերբ հրդեհը տեղի յե ունենում դիտողից վեր-
բև), վորն ապացույց է վառվելու։

Փորձն ու մարդուն յուրահատուկ մի շարք անհատա-
կան առանձնահատկություններն ասում են, թե ավյալ
պայմաններում կրակն ամենից հավանաբար վորտեղ կա-
րող է լինել։ Գիտենալով հրդեհների ամենից ավելի տա-
րածված պատճառները, կարելի յե առանց պատահակա-
նության գուշակել, թե ներկայումս ինչ է վառվում, և վո-
րոշ տեղերում հետախուզություն կատարել։ Աշխատողնե-
րից վոմանք հետախուզության ժամանակ ոջախները վորո-
շում են յենթադրություններ անելով։ Այսպես, որինակ,
նախ յենթադրում են, վոր հրդեհը ծագում է տաքացման
դործիքներից։ Այդ դործիքի շուրջը մանրամասն ուսումնա-
սիրում են։ Յեթե պարզվում է, վոր այդտեղ վոչինչ չկա,
վերցնում են մյուս պատճառը և այլն։ Սակայն այս մեթոդը
շատ հարմար մեթոդ չե և ավելի շուտ անհատի առանձնա-
հատկության հետ է կապված։

Կրակի գոյության բացարձակ նշանները չլինելու դեպ-
քում, պետք է հետազոտությունը կատարել շրջափակով։ Տաք
տեղերն ապացույց են, վոր կրակ կա։ Յեթե հատակի տա-
կից է վառվում, տաքությունն այնպես խիստ զգալի յե,
վոր հնարավոր չի կարելի վերևից ձեռքը հատակի վրա պահել։

Չի կարելի հետազոտել շենքի կամ մեկ կամ մյուս մա-
սը։ Հարկավոր է առաջ շարժվելիս սիստեմատիկ կերպով
շենքի բոլոր մասերը դիտել և շրջափակել։

Հետախուզության ժամանակ հաճախ առանձին մարդ-
կանցից զանազան ցուցումներ են լսվում։ Այդ ցուցումները
կարող են շատ արժեքավոր լինել, յեթե գալիս են ձեռնա-
հաս մարդկանցից և, ընդհակառակը, դրանք ոգուտ չունենն,
յեթե պատահական, դուշակողական և չհիմնավորված բը-
նույթ ունեն։

Այդ բոլոր դիտողությունները պետք է նկատի ու-
նենալ, սակայն դրանց պետք է վերաբերվել չափազանց
զգույշ և քննադատորեն։ Միաժամանակ պետք է նշել վառ-

վող ոբյեկտի տեխնիկական ու վարչական անձնակազմին
դործի մեջ քաշելու նպատակահարմարությունը, վորոնք
շենքի կառուցվածքի, պայթելու տեսակետից վոտնգավոր
նյութերի և այլնի մասին կարող են իրոք արժեքավոր ցու-
ցումներ տալ։

Յուրաքանչյուր ոբյեկտում յեղած կանոնների, պա-
տասխանատու բոլոր մարդիկ պարտադիր կարգով ներկա-
յանում են հրդեհի վայրն ուղղակի անհրաժեշտ ոգնություն
ցույց տալու և միջոցներ ձեռք առնելու, վորոնք կապված
են ջրամատակարարման, շոգեուժ հատոցների և այլ
հարցերի հետ։

Վերն արդեն մատնանշվեց հետախուզություն կատա-
րելու հետ միաժամանակ հրդեհաշեջ խմբի ուժերի ծավալ-
ման համար միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտության
և հնարավորության մասին։ Այստեղ մենք դիրքերը վորոշե-
լու և դրավելու հարցին մոտենում ենք գլխավորապես փո-
ղակների համար։

Դիրքերի պատահական և չմտածված ընտրությունը կա-
րող է վոչ միայն փողակի սխալ դործողություն առաջ բե-
րել, այլ և մարտկին խորտակել։ Ուստի փողակների դիր-
քերը վորոշելիս պետք է նկատի ունենալ հետևյալ յերկու
մոմենտը։

1. Յեթե անհրաժեշտ և փողակները տալ դեռևս հետա-
խուզությունը չվերջացած և պարապայի բոլոր մանրամաս-
նությունները պարզելուց առաջ, յերբ դեռևս չհետազոտված
տեղեր կան, այդ դեպքում ուժերի ծավալումը պետք է կա-
տարել զգուշությամբ՝ թողնելով փողակները տալու հնա-
րավորություն նաև չհետազոտված տեղերի կողմից։ Իսկ
հետախուզությունը լիովին ավարտվելուց առաջ առհասարակ
փողակներ չտալը սխալ կլինի, վորովհետև արդեն հայտնա-
բերված կրակը հանգցնելու դործը դրանով դանդաղում է։

2. Փողակի դիրքի ընտրության ժամանակ պետք է հաշ-
վի առնել հետևյալը։

ա) դիրքը պետք է հնարավորություն տա ավյալ տե-

դամաի հրդեհը հանգցնել, այլապես միաք չկա փողակ տալ հատկապես այդ կետին, վորովհետև փողակի հիմնական նպատակը կրակը հանգցնելն է (մենք չենք խոսում սառեցնելու համար տրված փողակների հատուկ դերի մասին և այլն).

բ) դերքը պետք է հնարավորություն տա հարևան շենքերը կամ կառուցումները կրակից պաշտպանել. այդ անհրաժեշտ է, մեկ կողմից, նրա համար, վորպեսզի կրակը հնարավորություն չտանա ծավալվելու այդ շենքերը. մյուս կողմից նրա համար, վորպեսզի կրակի գոտին արագորեն մեծանալու դեպքում հնարավոր լինի փողակով մանեվրել, փողակի սկզբնական դերքը փոխել և այլն։

գ) դերքը պետք է հնարավորություն տա փողակավորին հեռանալու և ուրիշով փոխարինվելու։ Պետք է նկատի ունենալ, վոր կրակի ուժին չհամապատասխանող, սակավազոր փողակ ունենալու, ջրի հանկարծակի կանգառման և ընդհատումների դեպքում, փողակավորը, ի հարկե, չի կարող ակտիվ կերպով հարձակվել. նա հարկադրված կլինի ժամանակավորապես նահանջել, կանգնել ծածկոցի հետևը, վորպեսզի իզուր տեղը կրակի ազդեցությանը չենթարկվի, իսկ բացարձակ վտանգի դեպքում կամ «վտանգ» ազդանշանով պետք է հնարավորություն ունենա նահանջելու։

Հետախուզությունը պետք է կատարել արագ և յերանդապին կերպով։ Անթույլատրելի յե դանդաղորեն, յերկչոտությամբ և անհամարձակ կերպով հետախուզություն կատարել, վորով հրդեհաշիջման համար ձեռք առնված միջոցառումները դանդաղում են։

Բավականաչափ թվով հրամկազմ ունենալու դեպքում կարելի յե միաժամանակ մի քանի տեղ հետախուզություն կատարել։

Ջափազանց նպատակահարմար և հետախուզության հենց առաջին մոմենտներից, վորոնք հիմնական պատկերացում են տալիս հրդեհի չափերի և բնույթի մասին, տեղեկություններ (զեկույցներ) տալ կապի կենտրոնական կե-

տին, վորը հրդեհաշիջման ամբողջ ընթացքի մասին պետք է մշտական իրազեկ լինի, վորովհետև այդտեղ հրդեհաշեջ հսկողության վերադաս զանազան կազմակերպություններից հրդեհի մասին հարցումներ են արվում։ Տեղեկություններն անշուշտ պետք է համապատասխանեն իրերի իսկական դրությանը։

II. ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՆ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հրդեհաշիջման ժամանակակից ձևերը,—չնորհիվ հրդեհների բարդության, վորն առաջ և գալիս, մի կողմից, շենքերի առանձնահատկություններից, արտադրական պրոցեսներից և այլն, մյուս կողմից, զգալի քանակությամբ հրդեհաշիջման տեխնիկական միջոցներ և հրդեհաշեջ պահպանության միացած խոշոր մասեր գործադրելուց,—չի կարելի դիտել իբրև կրակի վրա «ջուր լցնելու» հասարակ պրոցես։

Հրդեհը հանգցնելը դա բարդ և մեծ խնդիր է, վորը պետք է կազմից պահանջում է շինարարական արվեստի, արտադրական պրոցեսների գիտության և մշակվող կամ պահպանվող նյութերի հատկությունների գիտության, ստորաբաժանումները նպատակահարմար կերպով ղեկավարելու և կարճ ժամանակամիջոցում վճռական ու անսխալ կերպով տեղի ընարության կատարելու հետ միասին հրդեհաշիջման տեխնիկական միջոցները կիրառելու հմտություն։

Այս խնդիրն իր բոլոր մանրամասնություններով չի կարող միաժամանակ լուծել միայն մեկ ղեկավարը։ Յեթե մենք պատկերացնենք հրդեհի ժամանակ 15—20 ջոկի գոյությունը, միմիայն հրամաններ տալու, յուրաքանչյուր ջոկի դերքը վորոշելու հարցի լուծման համար կպահանջվի վոչ պակաս, քան 30 րոպե ժամանակ, վորը հրդեհի պայմաններում չափազանց մեծ ժամանակամիջոց է։ Նույնիսկ 10—20 հրդեհաշեջ ավտոմեքենաները հրդեհին կպած վո-

դոցների տերիտորիայում տեղավորելու հարցը, այն փոդոցների, որոնք հաճախ չափազանց նեղ են, զգալի կարեվորություն ունեցող խնդիր է, որի հաջող լուծումից է կախված ստորաբաժանումների հետագա ճիշտ աշխատանքը։ Իսկ յերե դրան ավելացնենք մի շարք հարցեր, որոնք վերաբերում են ջրամատակարարմանը, նատոնների ջրամատակարարմանը, ոպերատիվ աշխատանքի ընթացքում ծագող բազմաթիվ խոչընդոտների վերացմանը և այլն, միանգամայն պարզ կլինի հրդեհի ժամանակ գործող ուժերի ղեկավարության ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը՝ ստորաբաժանումների պետակազմի միջև մի շարք ֆունկցիաները բաշխելու գործում։

Սակայն հրդեհաշիջման ղեկավարությունը բոլոր դեպքերում կենտրոնանում է մեկ հրամանատարի ձեռքում։ Այստեղ յերկու կարծիք լինել չի կարող։ Ղեկավարի հրամանը բոլոր հարցերը լուծում է և յենթակա յե անհապաղ կատարման։ Հրդեհաշիջման ղեկավարի հրամանը քննադատության յենթարկելու ամեն մի փորձ պետք է խստորեն պատժվի վորպես մարտական պարագայի համար անհանդուրժելի յերեվույթ։ Հրաման ստացած յուրաքանչյուր մարտիկ պետք է ձգտի խիստ արագ, ճիշտ և կատարյալ գիտակցորեն կատարելու հրամանը։ Ըստ վորում հրաման ստացողը պետք է ճիշտ կերպով հասկանա, թե ղեկավարն ինչ է պահանջում իրենից։

Այսպիսով, հրդեհը հանգցնելու հիմնական և հաստատուն պայմանը՝ նրա ղեկավարությունը մեկ ձեռքում կենտրոնացնելու ամուր ու գիտակցական կարգապահության, դեպի հրամանատարն ունեցած վստահության և հրամանը ճիշտ և վորոշակի կատարելու մեջ է։

Հրդեհաշիջման ղեկավարի հիմնական պարտականությունը հետևյալն է.

1) հրդեհի վայրը հասնելիս անմիջապես նախնական կարգադրություններ անել.

2) գործողությունների ձևն ու բնույթը վորոշելու համար կատարել պարագայի մանրամասն ուսումնասիրություն (հետախուզություն) և գնահատում.

3) ոպերացիայի համար կատարել ուժերի և միջոցների բաշխում.

4) կարգադրություններ անել և նրանց հետագա կատարումը հսկել.

5) արված կարգադրությունների մեջ, պարագայի փոփոխությունների համեմատ, լրացումներ մտցնել։

Գլխավորապես այդ հարցերի վրա էլ մենք կենտրոնանում ենք.

1. Նախնական կարգադրությունները սովորաբար բաղկացած են ուժերի և միջոցների արագ ծավալումն ապահովող պատրաստի միջոցառումների բնույթին վերաբերող ցուցումից և լրացուցիչ ոգնության կանչելու վերաբերյալ ցուցումներից՝ այն դեպքերում, յերբ այդ ոգնության անհրաժեշտությունը բավականաչափ պարզ է և պարագայի մանրամասն ուսումնասիրություն չի պահանջում։

Համենայն դեպս նախնական կարգադրությունների ամբողջ նշանակությունը կայանում է նրանում, վոր մինչև վերջնական կարգադրություններ արվելը, ըստ հնարավորին կահարմար գործողություններ կատարելու համար։

2. Վերջնական վորոշում կայացնելուց առաջ պետք է կատարել հրդեհի պարագայի մանրամասն ու արագ ուսումնասիրություն և այդ պարագայի գնահատում։

Պարագայի ուսումնասիրությունն անհրաժեշտ է կատարել անձամբ հրդեհի տեղամասին ծանոթանալով և հրդեհի վայրը շուտ տեղ հասած յենթակա ստորաբաժանման պետի զեկուցումների հիման վրա։ Անհրաժեշտ է նույնպես հաշվի առնել զանազան մարդկանցից ստացված տվյալները տեղեկությունները։

Իրրև կանոն, պարագան ուսումնասիրելիս և նրա դրության գնահատականը տալիս հրդեհաշիջման ղեկավարը պետք է հաշվի առնի հրդեհի մեծությունը, բնույթն ու տեղը

վառվող օբյեկտի նշանակությունը և կառուցման առանձնահատկությունները և նրան կից շենքերի, կառուցվածքների դիրքը. յեղած մարդկանց և նրանց սպառնացող հրդեհի վտանգի աստիճանը. բայց հրդեհների դեպքում քամու ուժն ու ուղղությունը. թունավորումների, պայթումների կամ վառվող օբյեկտի այրված և ձևափոխված կառուցողական տարրերի փլուզումների հնարավորությունը. բարձր լարվածության հոսանքի տակ գտնվող էլեկտրական տարբաձումները կամ հաղորդիչները և նրանց դիրքը. դեպի վառվող օբյեկտը տանող ճանապարհների վիճակը. նախատների ջրամատակարարման համար յեղած անհրաժեշտ ջրաղբյուրները, նրանց բավարար քանակն ու մատչելիությունը։ Այս ցանկով չեն սպառվում այն տեղեկությունները, որ հրդեհաշիջման ղեկավարը պետք է ձեռք բերի՝ նախքան վերջնական վորոշում կայացնելը։ Վառվող օբյեկտի բնույթի համեմատ յերբեմն հարկ է լինում պարզելու նաև այլ առանձնահատկություններ։

3. Գործողությունների բնույթի և ուղղության վերաբերյալ վորոշում կայացնելիս հրդեհաշիջման ղեկավարը պարտավոր է հաշվի առնել ոչ միայն պարագայի գնահատման տվյալները, այլև նրանց կապել իր առորաբաժանման տակտիկական հնարավորության և տեխնիկական զինման հետ՝ ուժերն ու միջոցները ճիշտ ոգտագործելու նպատակով։

Շատ կարճ ժամանակամիջոցում հրդեհի վայրը զգալի քանակությամբ ջոկերը (ինքնուրույն միավորները) կենտրոնանալու հեռանկարով առաջ է գալիս մեծ քանակությամբ մարդկանց կուտակում, վորոնք իրենց աշխատանքը վորոշելու համար ցուցումներ են սպասում։

Հրդեհաշիջման ղեկավարը ֆիզիկապես հնարավորություն չունի այդ ջոկերից յուրաքանչյուրի հետ անմիջական փոխհարաբերության մեջ մտնելու, և այդ պատճառով բնականորեն հարց է առաջանում մարտական տեղամասեր կազմակերպելու։

Հրդեհի ընթացքի համեմատ ղեկավարը վորոշում է 2—3 մարտական տեղամաս (յերբեմն անհրաժեշտ է և ուժերը թույլ են տալիս, նաև ավելի), վորոնք պետք է ընդգրկեն հրդեհը՝ նրան չափազանց արագ կերպով մեկուսացնելու, այսինքն սահմանափակելու համար։

Ստորև կբերվի մարտական տեղամասերի կազմակերպման բացատրական սխեման (նկ. 23)։

Բերված որինակում հրդեհը տեղի յե ունենում յերկու շենքում (մեկ շենքում տեղի ունեցած հրդեհի ոջախից կրակն անցնում է հարևան շենքը)։ Գործողությունների պլանի հիմնական սկզբունքը պետք է լինի թույլ չտալ այդ յերկու առանձին ոջախները միաձուլվելու և դառնալու մեծ ոջախ, այսինքն նպատակահարմար է հրդեհը բաժանել յերկու ինքնուրույն ոջախի։ Դրա համար անհրաժեշտ է կազմակերպել յերեք տեղամաս։


Մարտական տեղամասերը չպետք է լինեն չմտածված և արհեստականորեն ստեղծված՝ առանց անհրաժեշտության։ Առնվազն հարմար է փոքրիկ հրդեհի վայրում տեղամասեր կազմակերպել։ Մի դեպքում կլինի 3—4 տեղամաս, մի ուրիշ դեպքում՝ 2, իսկ յերրորդ դեպքում՝ վոչ մի հատ։ Այդ կախված է հրդեհի ծավալից, պարագայի բարդությունից և վորոշվում է հրդեհաշիջման ղեկավարի փորձով։

Մարտական տեղամասերի անհրաժեշտ քանակը նշելուց հետո հրդեհաշիջման ղեկավարը վորոշում է, թե ինչպիսի ուժեր ու միջոցներ պետք է կենտրոնացնել յուրաքանչյուր մարտական տեղամասում, և դրա համեմատ դրոհախմբեր է կազմակերպում։

Դրոհախմբերը միշտ միացած չեն մնում և միայն հրդեհաշիջման համար չեն աշխատում։ Կարող է անհրաժեշտություն լինել միաժամանակ յերկու մարտական խնդիր լուծելու, վորոնք խիստ կարևոր նշանակություն ունեն՝ հրդեհը հանգցնել և մարդկանց փրկել։ Այս խնդիրներից վոչ մեկն էլ չի կարելի հետին պլանը մղել. յերկուսն էլ պետք է լուծել միաժամանակ։

Այս դեպքում դրոհախմբերից պետք է կազմել փրկության և բացահանման խմբեր, վորոնք և զբաղվելու յեն

փրկության աշխատանքով, չսարվելով հրդեհը հանգցնելու գործով։



Նկ. 23

Նախապես (հրդեհից առաջ) զրոհախումբ և փրկության ու բացահանման խմբեր կազմակերպելու անհրաժեշտության հարցը դեռևս հաստատ անհրաժեշտության մակարդակի վրա չի դրված, վորովհետև յուրաքանչյուր հրդեհի ժամանակ միշտ փրկության և բացահանման կարիք չի լինում և բացի դրանից, նպատակահարմար և չոկերն այնպես պատրաստել, վորպեսզի նրանք թե՛ հրդեհաշիջման, և թե՛ փրկության աշխատանքը կարողանան կատարել միատեսակ հաջողությամբ, վորովհետև այդ աշխատանքներին կարող է հանդիպել հրդեհի վայրը մեկնած նույնիսկ մեկ չոկ։ Հետևապես այդ խմբերի կազմակերպումը և նրանց վրա կատարվող ուժերի բաշխումը տեղի չի ունենում հենց հրդեհի վայրում, նայած պարագային և այն վորոշումներին, վոր կայացնում է դեկավարը։

Յուրաքանչյուր մարտական տեղամասի գլուխ կանգնած է շատ փորձված հրամանատար, ըստ վորում ցանկալի չի առաջուց նախատեսել այդ մարդկանց կոնկրետ՝ նրանց հետ համապատասխան աշխատանք կատարելու համար։

Մարտական տեղամասի յուրաքանչյուր պետ յենթարկվում է միմիայն հրդեհաշիջման դեկավարին և լիովին պատասխանատու չե իր տեղամասում կատարվող գործի չելքի համար։

Մարտական տեղամասերը վորոշելուց հետո հրդեհաշիջման դեկավարը մարտական տեղամասերի պետերից յուրաքանչյուրին խնդիր է տալիս և միաժամանակ վորոշում է, թե մարտական տեղամասերից յուրաքանչյուրին ինչպիսի ուժեր են տրվում՝ առաջադրված խնդիրը կատարելու համար։ Միանգամայն պարզ է, վոր խնդիրը պետք է լինի ռեալ և յուրաքանչյուր մարտական տեղամասին տրված ուժերին համապատասխան։

Մարտական տեղամասի պետի առաջ դրվող խնդիրը պետք է նախատեսի միմիայն ընդհանուր խնդիրներ և պարունակի հիմնական սկզբունքներ, վորովհետև, մեկ կողմից, դեկավարը չի կարող մանրամասն նախատեսել, թե հատկապես ինչ փողակներ, ինչ նասոսից, ուր պետք է ուղղել. մյուս կողմից, չպետք է տեղամասերի պետերի նախաձեռնությունը կաշկանդել, վորոնք պետք է հնարավորություն ունենան իրենց աշխատանքում առաջ գնալու և միաժամանակ իրենց տեղամասում գործադրած միջոցների ճշտության համար պատասխանատվություն զգալու։

Մարտական տեղամասեր կազմակերպելու և ուժերի բաշխման պրոցեսում պակաս նշանակություն չունի ռեզերվներ պատրաստելը։ Ռեզերվները հարկավոր են հայտնաբերված ճեղքվածքներն արագորեն վերացնելու, հրդեհը ամբողջությամբ մարելու դեպքում նոր դիրքեր զբավելու (որինակ, պայթման հետևանքով), առանձնապես ծանր պայմաններում աշխատող ատրաբաժանումներին փոխարինելու համար և այլն։

Այդ ռեզերվները կազմում են մարտական տեղամասերի դեկավարի և պետերի մասնագիտություններից մեկը։ Հրդեհաշիջման դեկավարի ռեզերվները կազմվում են հրդեհի վայրը

յեկած ստորաբաժանումներից կամ հատկապես այդ նպատակի համար կանչված մասերից։ Մարտական տեղամասի պայմաններում ռեզերվները կազմվում են այդ տեղամասում գործող ուժերից։ Այդպիսի ռեզերվը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի ջոկերից։ Գործող ջոկի սահմաններում 1—2 մարտիկը նույնպես կարող են փոքրիկ ռեզերվ կազմել։

Սահմանափակ ուժերի գոյության դեպքում ռեզերվները չեն կազմում, յեթե, որինակ, հրդեհի վայրը հասած խումբը բաղկացած է յերկու ջոկից, իսկ հրդեհի պարագան պահանջում է բոլոր ուժերն ոգտագործել և նույնիսկ ոգնություն է պահանջում։ Միանգամայն պարզ է, վոր այստեղ հիմնական խնդիրն է կրակը զսպել, ամբողջ ուժերով թույլ չտալ, վոր նա տարածվի, ուստի այդ պայմաններում հնարավոր չե ռեզերվներ կազմակերպել։ Սակայն, առաջին հնարավորության դեպքում պետք է ռեզերվ ստեղծել, վորովհետև նրա բացակայությունը կարող է չափազանց ծանր բարդություն առաջ բերել։ Ավելի ծանր պայմաններում մինուչն մարտիկներն առանց փոխվելու աշխատելու դեպքում շարքից դուրս կգան և ճեղքվածք կառաջանա, վորի առաջը հնարավոր չի լինի առնել։

Ռեզերվի խումբն անպայման պետք է թիկունքի պահին հայտնի լինի, վորովհետև ռեզերվները գործի մեջ մըտցնելը կապված է ավտոնասոսները դնելու կամ մի շարք հարցերի հետ, վորոնք մտնում են թիկունքի կազմակերպման մեջ և վորոնց լուծումը պետք է տա թիկունքի պետը։

Յեթե անհրաժեշտությունը հարկադրում է, կարելի է ռեզերվները մասամբ կամ ամբողջովին կենտրոնացնել գործող մասերին անմիջապես մոտիկ, թեև դա ըստ էության դեկավարության կազմակերպման սկզբունքները չի փոխում։ Վորոշում կայացնելը չպետք է յերկար ժամանակ խլի։ Յուրաքանչյուր հրամանատարի անկապտելի հատկությունն է արագ ըմբռնողությունը, հնարամտությունն ու

վճռականությունը։ Ստեղծված պարագային արագ կերպով ճիշտ գնահատական տալու և իր ստորաբաժանման գործողությունները վորոշելու կարողությունը հրամանատարի աշխատանքի հաստատուն պայմաններից մեկն է։ Հրամանատարը պետք է ամեն ինչ հաշվի առնի, վոչինչ չմոռանա և մի քանի վայրկյանի ընթացքում անցնի պրակտիկ գործողությունների։


Հրդեհաշիջման դեկավարը և ստորաբաժանման մյուս պետակազմը շատ զգույշ վերաբերմունք պետք է ունենան խնդիրների հարցադրմանը։ Վերը մենք նշեցինք, վոր մարտական տեղամասի պետի առաջ միմիայն ընդհանուր բնույթի խնդիրը և դրվում, որինակ, այսինչ ուղղությամբ կրակի ծավալումը դադարեցնել և այսինչ տեղամասում նրան հանգցնել։ Այս խնդիրն այլ ցուցումներ չի պարունակում։ Վորքան, ինչպիսի փողակներ և ո՞ւր պետք է ուղղել, թույլ և արվում, վոր լուծի մարտական տեղամասի պետը։

Ընդհակառակը, ջոկի հրամանատարի առաջ դրվող խընդիրը պետք է իր մեջ պարունակի կոնկրետ ավյալներ. տալ յերկու «բ» փողակ և նրանցից մեկին ուղղել այսինչ տեղը, մյուսը՝ այնինչ տեղը, բացել տանիքի այսինչ տեղը և այլն։ Ինչո՞ւ ավյալ դեպքում կոնկրետություն և պահանջվում։ Վորովհետև ջոկի հրամանատարի ֆունկցիայի մեջ չի մտնում վորոշելու փողակների դիրքերը, բնույթը և այլն։

Առանձնապես պետք է մանրամասն կերպով պարզաբանել փողակավորի առաջ դրված խնդիրը։

Կարմիր բանակում յուրաքանչյուր ստորաբաժանման առաջ կոնկրետ նպատակ է դրվում։ Այսպես, որինակ, այսինչ ստորաբաժանմանը հրամայվում է դուրս գալ ժամի 5-ին, ժամի 6-ին 30 րոպեյում՝ վոչնչացնելու 201 բարձունքում տեղավորված հակառակորդի կրակային կետերը, տիրապետել այդ բարձունքին և ժամի 8-ի մոտերքը մոտենալ այսինչ գյուղին։ Մենք տեսնում ենք, վոր այստեղ ստորաբաժանումը կապված է, նախ, նպատակով, վորին

պետք է հասնել, և, յերկրորդ, ժամկետով, վորի ընթացքում այդ նպատակին պետք է հասնել։



Նկ. 24

Նկատի ունենալ, վոր այդ մարտական առաջադրությունը կազմում է այն ամբողջ պլանի բաղադրիչ մասը, վորով նախատեսված են մի շարք ստորաբաժանումների գործողությունները, ըստ վորում վերջինների գործողությունները կարող է կախված լինել հատկապես այն բանից, թե կարճ և արդյոք առաջին ստորաբաժանումը գրավել 201 բարձունքը, խնդիրն անպայման պետք է կատարվի։ Այդ չի կարող չկատարվել, վորովհետև այլապես ավյալ ստորաբաժանումն իր դերը չի արդարացնի։

Ինչպես է տեղի ունենում փողակավորների աշխատանքը հրդեհները հանգցնելիս։ Տրվում են արդյոք կոնկրետ առաջարկություններ և գրվում են արդյոք վորոշ նպատակներ։ Մեծ մասամբ վոչ։ Փողակավորին ցույց է տրվում դիրքը և նա աշխատում է ինքնուրույն կերպով։ Ակտիվ փողակավորն առաջ է շարժվում, անվճռական և նախաձեռնություն չունեցող փողակավորը մնում է իր տեղում վորքան ուզեք։ Յեվ սովորաբար չոկի հրամանատարի պարտականություններից մեկն այն է, վոր փողակավորին ցույց տա նրա հետագա գործողությունները։

Այստեղից էլ պարզ է փողակավորների առաջ կոնկրետ նպատակներ դնելու անհրաժեշտությունը, վորոնց պետք է փողակավորը հասնի. այդ նպատակը չկատարվելու համար փողակավորները յենթակա յեն պատասխանատվության, վորպես իրենց մարտական առաջադրության չկատարողների։ Բացատրենք այս բանը սխեմայում (նկ. 24)։ Յեթե յերկրորդ և յերրորդ փողակավորները չհանգնեն յելման դիրքերում, այլ շարժվեն մինչև այն կետերը, վորոնք նշանակված են խաչով, այդ դեպքում առաջին փողակավորը կարող է դեպի իր կողմը տեղի ունեցող կրակի ճնշումը զսպել։ Յուրաքանչյուր փողակավորի առաջ պարբերաբար այդպիսի նպատակներ դնելով, կարելի յե հաշվի առնել վոր աշխատող փողակները կրակի շրջապատի ողակը կտեղմեն, դրանով նպատակով նրա հանգցնելուն։

4. Պետական հատուկ ուշադրություն պետք է դարձնի կարգադրություններ անելու խնդրին։ Բոլոր կարգադրությունները դեկավարներից, հատարողներին պետք է տրվեն խիստ կարգով։ Յերբեմն կարելի յե նկատել, վոր դեկավարներից վոմանք մարտիկներին մեկը մյուսի հետևից ուղարկում են միևնույն հրամանով, դրանով իսկ մարտիկներին կտրելով անմիջական աշխատանքից։ Այսպես, որինակ, մեկ մարտիկ ուղարկվել է «ջուր տալու» հրամանով։ Վորևե պատճառով ջուր տալը դանդաղում է։ Այդ ժամանակ առաջին մարտիկի հետևից գարձյալ մարտիկ է ուղարկվում, այնուհետև՝ չոկի հրամանատարը։ Սկսվում է վազվզուքը, վորն այնուամենայնիվ գրական հետևանք չի ունենում։ Այնինչ մարտիկներն ու հրամանատարներն իրենց անմիջական պարտականություններից կտրվում են, վորով յերբեմն նույնիսկ մարտական տեղամասի պետի պլանը վիժում է, քանի վոր առանց այդ պետի գիտության ոգտագործում են նրա տրամադրության տակ գտնվող մարդկանց։

Կազմալուծումից խուսափելու համար պետք է, նախ, հրամանները հաղորդելու համար ոգտագործել միայն այն մարտիկներին, վորոնք կապի ֆունկցիաներ են կատարում, յերկրորդ, բոլոր հրամանները պետք է հաղորդել միմիայն ինստանցիաներով, այսինքն հրդեհաշիջման դեկավարից մարտական տեղամասերի պետերին, մարտական տեղամասերի պետերից չոկերի հրամանատարներին, չոկերի հրամանատարներից մարտիկներին։ Այս սխեմով, իհարկե, չեն բացառվում այն առանձին նկատողությունները, վորոնք

անմիջապես վերաբերում են մարտիկներին և նրանց աշխատանքին։

Յուրաքանչյուր հրամանը պետք է լինի պարզ, հասկանալի և հակիրճ և հրամանները պետք է տալ հանդիսա և հաստատուն կերպով։ Այդ խոհուն և չեթ վստահություն է առաջ բերում նրան կատարելիս։

Յեթե տրված հրամանն իր կատարման մոմենտին վերացվում է և ապա նոր հրաման է տրվում, որը նորից է վերացվում և այլն, մարտիկները և հրամանատարներն սկսում են մեկ տեղից մյուսը վազել և մեկ տեղում իրար կանգ առնել, որով դեպի հրամանատարն ունեցած վստահությունը խախտվում է և վոչ մի գործնական արդյունք չի ստացվում։ Այս բանը հաստատուն կերպով պետք է հրամանատարը հիշի և նախքան հրաման տալը պետք է պարզ կերպով պատկերացնի նրա նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը։

Հրաման տվողը նրան պատասխանատու չե։ Անվիճ, անհեթեթ հրամանները կամ տվյալ ստորաբաժանման ու անձնավորության ուժից վեր հրամանները վոչ միայն անթույլատրելի չեն, այլ այդ հրամանները տվողներին պետք է պատժի ենթարկել։

Յուրաքանչյուր հրամանատար հրամանը տալուց հետո պարտավոր է հետևելու նրա կատարմանը։ Վոչ մի կարգադրություն չպետք է անկատար թողնել։ Կատարման մշտական ստուգումով ապահովվում է նշված միջոցառման կատարումը մինչև վերջ։ Յուրաքանչյուր հրամանատար պետք է հիշի, թե ինքն ում ինչպիսի հրամաններ է տվել և անձամբ իր տեղամասը շրջապատելով պետք է ստուգի, թե արդյոք իր հրամանները իրոք կատարված են։

Հրդեհի պարագան նույնը չի մնում (անփոփոխ չե), նա փոխվում է։ Ուստի հրդեհի սկզբնական վիճակը պարզելուց հետո յուրաքանչյուր պետ պետք է ուշադրությամբ հետևի տեղի ունեցող բոլոր փոփոխություններին, նախապես պարզված կրակի ծավալման ճանապարհների վիճակին,

հատկապես իրենց վրա ծանրություն կրող կառուցվածքների (հեծանների, հենարանների) վիճակին, պաշտպանական կառուցումների վիճակին և այլն։

Վերը նշվեց, որ դեկավարը հրդեհի վայրը տեղ հասնելու առաջին իսկ մոմենտներին հրամանատարներին մարտական խնդիրներ է առաջադրում։ Այդ խնդիրների կատարմանը պատասխանատու չեն հրամանատարները։ Սակայն այդ չի նշանակում, որ հրդեհաշիջման դեկավարը կամ առաջադրություն ստող որևէ հրամանատար դեկավարությունից հեռանում է և մնում է միայն կողմնակի դիտողի դերում։ Ընդհակառակը, առաջադրությունը տալուց հետո, հրդեհաշիջման դեկավարը պետք է պարբերաբար շրջի բոլոր տեղամասերը, անհրաժեշտ ուղղումներ մտցնի և նկատված թերությունները պարագայի համեմատ վերացնի։

Հրդեհաշիջման դեկավարը հատուկ ուշադրություն պետք է դարձնի ամենապատասխանատու տեղամասի վրա՝ նրան մշտապես իր անձնական հսկողության տակ պահելով և առավելապես այդ տեղամասում գտնվելով։ Այդ հավասարապես վերաբերում է նաև այն մյուս հրամանատարներին, որոնք ամենադժվարին դիրքում են գտնվում։

Հրդեհի պարագան յերբեմն այնքան է փոխվում, որ անհրաժեշտություն է առաջ գալիս կայացրած վորոշման մեջ փոփոխություններ մտցնելու, որոնք պատրաստության գործողությունների ուղղությունն ու բնույթը խստորեն փոխում են։ Այդ կարող է տեղի ունենալ այն դեպքերում, յերբ գործողությունների ընդունված պլանում հիմնական սխալ է հայտաբերվել կամ այնպիսի պայմաններ են առաջացել (պայթյուն, փլուզում, ջրաղբյուրները կամ հրդեհաշիջման միջոցները շարքից դուրս գնելը), որոնք նախնական պլանն անկատար են թողնում։

Այդպիսի դեպքերում պլանի փոփոխությունը չպետք է սկզբում դրված կարգադրությունների հաստատ փոփոխության բնույթ կրի, այլ պետք է մտցվի դրված խնդրին իրրև լրացում կամ իրրև նոր, ինքնուրույն խնդիր։

Նոր կարգադրություն անելուց հետո հրդեհաշիջման դեկավարը պետք է խուսափի գործող աստրաբաժանումներին դիրքից ազատելու, այդ նպատակի համար ոգտագործելով ռեզերվի առաջվա որոշած խումբը։ Իրրև կանոն, սկզբնական պլանն իրագործվում է նոր պլանը կազմելուց վոչ շուտ, քան վորում առաջվա որված կարգադրությունները, վորոնք դեռևս չեն կատարված, դադարեցվում են։

Յեթե առաջվա որված կարգադրությունների փոխոխությունը կապված է դիրքերը փոխելու հետ, վերջինս կատարվում է պլանաչափ կերպով, անհրաժեշտ հետևողականության կարգով, և միմիայն բացարձակ ապառնալիքի դեպքում կարելի յե անհրաժեշտ շտապողականությամբ դիրքերը լքել։


Համենայն դեպս հրդեհաշիջման դեկավարը պետք է հիշի, վոր նախնական պլանի փոփոխություն պետք է կատարվի միմիայն ծայրահեղ դեպքերում, վորովհետև աստրաբաժանումների կատարած հիմնական դիրքափոխության ընթացքում կրակը կարող է զգալիորեն ծավալվել։

Միմիայն որված կարգադրությունների վերաբերյալ ունեցած հսկողությունը և պարագայի փոփոխություններին համապատասխան փոփոխություններ ու լրացումներ մտցնելն է, վոր լիովին ապահովում է գործողությունների առաջվա ընդունած պլանը փոփոխելու անհրաժեշտությունից։

Հատուկ ուշադրության արժանի յեն Ջոկի, վորպես ակտիվական հիմնական միավորի, դեկավարման հարցերը։ Ղեկավարման աչքի ընկնող թերություններն այսպես կոչված «ավելորդ մարտիկներն» են։ Այս «ավելորդ մարտիկները» կամ «պահեստայինները», ինչպես իրենք իրենց անվանում են, յերբեմն առանց վորոշակի գործի թափառում են. նրանք հրդեհի վայրը տեղ հասնելու սկզբնական մոմենտներին ինչ վոր պարտականություններ եյին կատարում, սակայն իրենց հրամանատարի տեսադաշտից դուրս գալով կամ զբաղվում են այնպիսի բանով, վոր իրենց ամենից շատ և դուր գալիս, հաճախ խճճվելով ուրիշ աստրաբաժանումների գործերի մեջ, կամ վոչնչով չեն զբաղվում։ Սա շատ վտանգավոր յերևույթ է, վորը կարող է մարտիկներին և ամբողջ Ջոկը քայքայել։

Այս յերևույթի վերլուծությունը ցույց է տվել, վոր այսպիսի «ավելորդ մարտիկները» գոյանում են այն հետևանքով, վոր մարտական հաշվի մեջ նրանց վորոշակի համար չեն տվել, մտցնելով նրանց «պահեստայինների» մեջ կամ թե ինքը՝ մարտական հաշվի աղյուսակը սխալ է կազմվել։ Համենայն դեպս աշխատանքի առաջին մոմենտներին, որինակ, «Բ» մեկ փողակ տալու դեպքում Ջոկի բոլոր համարներն զբաղված են։ Սկեմատիկ կերպով այդ յերևում է այնպես, ինչպես նկ. 25-ում ցույց է որված։ Փողակը տալուց հետո № 2-ը, 3-ը և 4-ը ծնացել են ազատ, յեթե № 3-ը չի ծնացել № 1-ին ոգնելու։ Յեթե այդ մոմենտին Ջոկի հրամանատարը հրապուրվում է № 1-ի հետ միասին աշխատելով, № 2-ը, 3-ը և 4-ը թողնված են իրենց բախտին, նրանց հետագա գործողությունները կախված են իրենց ցանկությունից։

Այստեղից անմիջապես յերկու հարց է ծագում. ինչ պետք է անեն այդ ազատված մարտիկները և ուր պետք է գնալեն։ Իրրև կանոն, վոչ մի մարտիկ չի կարող իր Ջոկից անջատվել, անկախ այն հանգամանքից, թե ավյալ մոմենտում ինչով է զբաղված։ Սա յե հիմնական պահանջը, վորի պահպանությանն անպայման պետք է հսկի Ջոկի հրամանատարը։ Ազատվող մարտիկներին պետք է ոգտագործել իր Ջոկի աշխատող փողակավորներին ոգնելու համար (քանդելու գործում) կամ պետք է թողնել ռեզերվում։



Նկ. 25

Տվյալ մոմենտում չզբաղված բոլոր մարտիկների տեղը նպատակահարմար է ընտրել ճյուղավորման մոտ, իսկ այդ-

պիսին չլինելու դեպքում չոկի աշխատանքի տեղին մոտ։ Այդ դեպքում չոկի հրամանատարն իր մարտիկներին չի «վորոնի», նրանք միշտ իր տեսադաշտում կլինեն և ցանկացած մոմենտին կարող են ոգտագործվել այս կամ այն լրացուցիչ առաջադրության համար։

Ընդհանրապես ասած, մարտական աշխատանքի մանրամասնությունները վորքան ավելի լավ են կշռադատվում, ստորաբաժանումների մեջ վորքան ավելի մեծ կարգ ու կանոն կա, այնքան այդ ստորաբաժանումների գործողությունները արդյունավետ են։

Ամեն մի հրամանատար յուրաքանչյուր հրդեհից հետո պետք է կարողանա իր և իր ստորաբաժանման համար յեղրակացություններ հանել, պետք է կարողանա իրեն յենթակա մարդկանց սխալներն ու թերությունները նկատել և նրանց ուղղել։ Հրդեհների ժամանակ կազմակերպված աշխատանքի հարցերի նկատմամբ ունեցած այսպիսի ուշադիր, լուրջ վերաբերմունքն է միայն, վոր թույլ է տալիս խմբից ամուր, միաձույլ կոլեկտիվ ստեղծելու։

Շատ հրամանատարներ, հաճախ հրդեհի պարագայով հրապուրվելով, իրենց ստորաբաժանման դեկավարության թելը ձեռքներից բաց են թողնում և անտեղի խառնվում են իրենց յենթակա մարտիկների անմիջական գործողությունների մեջ։

Սակավաթիվ չեն այնպիսի դեպքեր, յերբ հրամանատարը փողը վերցնելով անձամբ նրանով աշխատում է կամ թե փորձելով սանդուխքի գնելն արագացնել՝ մարտիկին փոխարինում է։ Այսպիսի գործողություններն անշուշտ դատապարտելի յեն, վորպես սխալ և վնասակար գործեր։ Մեկ հրամանատարը, վորքան էլ նա ցանկանա, չի կարող մի քանի մարտիկի փոխարինել։ Լավագույն դեպքում նա կփոխարինի միայն մեկ մարտիկի։ Սրանից, ի հարկե, չի կարելի այն յեզրակացությունը հանել, թե հրամանատարը չպետք է այս կամ այն գործողությունը կատարելու որինակ ցույց տա։

Ինչպիսի հետևանքներ են ունենում այսպիսի գործողությունները։ Նախ և առաջ, հրամանատարն ամբողջ ստորաբաժանումը թողնում է առանց իր դեկավարության և, մեկ մարտիկի ֆունկցիա կատարելով, հարկադրում է մյուս մարտիկներին ժամանակ կորցնելու (սպասելու) կամ նրանց հնարավորություն է տալիս աշխատելու այնպես, ինչպես իրենք կկամենան, այսպիսով ստորաբաժանման աշխատանքում ինքնահոս առաջ բերելով։ Յերկրորդ, այդ անվստահություն և առաջ բերում դեպի մարտիկները, վորով նրանց մեջ աշխատելու ցանկությունը վերանում է, առաջ բերելով նրանց մեջ անվստահություն դեպի իրենց ուժերը։

Պետք է մարտիկներին մարտական պայմաններում սովորեցնել։ Այստեղ նրանք կարող են ձեռք բերել մի շարք այնպիսի հմտություններ, վորոնք սովորական պարապմունքների պայմաններում դժվար է սովորեցնել։ Սակայն միաժամանակ մարտիկների մեջ պետք է դաստիարակել վստահություն դեպի իրենց ուժերը և վստահություն դեպի իրենց գործողությունների անպայման հաջողությունը։ Յեթե աշխատանքն սկսվում է իր կատարման հնարավորության վրա կասկածելուց, այդպիսի աշխատանքն անխուսափելիորեն վիժման է դատապարտված։

Հրամանատարն իր ստորաբաժանումը դեկավարելիս պետք է բոլոր մարտիկներին պահի իր ուշադրության դաշտում, ժամանակին ցույց տա նրանց դիրքերը, անհրաժեշտ ուղղումներ մտցնի և միմիայն իր աշխատանքի կետով չհրապուրվի։

Ի՞նչ դեպքերում է թույլ տրվում հրամանատարին խառնվել մարտիկների գործին։ Վերցնենք մի այսպիսի դեպք։ Որինակ, հրամանատարը նկատում է, վոր փողակավորը չափազանց վախվխելով է փողակը բանեցնում։ Հրամանատարը պետք է այդ փողակավորի հետ միասին առաջ անցնի մինչև հարկ յեղած կետը, ցույց տա, թե ինչպես պետք է աշխատել, մի վորոշ ժամանակ մնա փողակավորի մոտ,

ապացուցելով նրան, որ հնարավոր և անհրաժեշտ է հենց այդ կետում աշխատել և այնուհետև նորից կատարի իր ֆունկցիաները։

Կամ, օրինակ, կետերից մեկում պայթյուն է տեղի ունեցել, որն առանձին մարտիկների մեջ շփոթություն է առաջ բերել։ Հրամանատարը պետք է անմիջապես նրանց հավասարակշռությունը վերականգնի, մարտիկներին անձնական օրինակով գործի մեջ քաշի և նորից անցնի ղեկավարության իր ֆունկցիաներին։ Այն ամբողջ աշխատանքը, որ մարտիկները մարտական հաշվի իրենց պարտականությունների համեմատ կատարելու չեն, պետք է հենց այդ մարտիկներն էլ կատարեն առանց հրամանատարի նրանց վոխարինման։

Մարտիկների լավագույն աշխատանքի և նրանց մեջ դեպի հրամանատարը վստահություն առաջ բերելու հիմնական պայմաններից մեկը ստարիկների վերաբերյալ հոգատարությունն է։

Յեթե հրամանատարը սովորական պայմաններում պարտավոր է պահանջել իր մարտիկների կարիքները, պարտավոր է մարտիկների կենցաղային հարցերի լուծմանն ոգնելու, ապա նա առավել ևս նրանց մասին պետք է հոգա մարտական պարագայում։ Պետք է կարողանալ մարտիկին վոխել ժամանակին, ժամանակին նրան խոսքով ու գործով ոգնել և բոլոր դեպքերում շարունակ հիշել, թե մարտիկներից ով վորտեղ է աշխատում։ Փլուզումի, պայթյունի և այլ վտանգների դեպքում մարտիկները պետք է իր ժամանակին տեղափոխվեն անվտանգ դիրքեր։ Մարտական աշխատանքի պայմաններում մարտիկի համար ռիսկն անխուսափելի չէ, սակայն իզուր զոհեր տալն անժուռթյուն է։

Այնտեղ, ուր հարկավոր է խնդիրն ամեն գնով կատարել, մանավորապես, յերբ խոսքը մարդկանց վրկելու մասին է, այդտեղ պետք է ռիսկի դիմել, այլապես հրդեհաշեջ խումբն իր դերը չի արդարացնի։ Սակայն վոչ վոքի

իրավունք չի տրված իզուր տեղը մարտիկներին զոհել։ Մանավանդ հրամանատարը չպետք է «մոռանա» դժվար դրության մեջ ընկած մարտիկին ոգնության հասնել։

Դեպի մարտիկներն ունեցած մշտական այս հոգատարությունը և մշտական ուշադրությունը մեծ գնահատության են արժանանում մարտիկների կողմից և նրանց մեջ աշխատելու ցանկություն են առաջ բերում։ Ընդհակառակը, դեպի մարտիկն ունեցած անզգա և կոպիտ վերաբերմունքն առաջ է բերում բազմաթիվ բացասական յերևույթներ և այդպիսի վերաբերմունքը հրդեհաշեջ պահպանության սիստեմում, ինչպես առհասարակ ԽՍՀՄ Միության մեջ, անհանդուրժելի յե։

Անընդհատ և պլանաչափ ղեկավարությունն ապահովվում է պատշաճ կապով, վորի դեպքում հակայական նշանակություն ունի ղեկավարի շփումն իրեն յենթակա պետերի հետ և վերջինների շփումը մարտիկների հետ։ Գործի դրված ուժերի մանևրելու ունակությունը, հրդեհի պարագայի նոր ծագած պայմանների մասին ժամանակին հաղորդումներ ստանալը և ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելը կախված են զոյություն ունեցող ճիշտ և արագ կապից

Կապը սովորաբար սահմանվում է՝

1) հրդեհի վայրի և հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետի միջև.

2) ճակատի և թիկունքի միջև.

3) հրդեհաշիջման ղեկավարի և հրդեհի վայրում գործող ստորաբաժանումների (մարտական տեղամասերի) միջև

4) մեկը մյուսի հետ աշխատող հարևան ստորաբաժանումների միջև.

5) թիկունքի պետի և թիկունքում գտնվող ռեզերվների ու այլ միավորումների կամ ավտոմոբիլենաների առանձին խմբերի միջև։

Հրդեհաշիջման ղեկավարը հրդեհի վայրը հասնելուց հետո կապավորի ոգնությամբ հրդեհի վայրի և հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետի միջև կապ է

հաստատում։ Դրանից հետո կապ է հաստատվում հրդեհաշիջման ղեկավարի և թիկունքի պետի միջև և ապա վերահիշյալ մյուս կետերի և մարտիկների միջև։

1. Հրդեհի վայրի յեվ հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետի միջեվ յեղած կապն անհրաժեշտ է, վորպեսզի կարելի լինի հրդեհաշիջման ամբողջ ընթացքի մասին ժամանակին հաղորդել կապի կենտրոնական կետին, վորի համար կարելի յե ձեռք առնել մի շարք միջոցներ և մանավորապես ղեկավար որգաններին ու անձնավորություններին իրազեկ դարձնել հրդեհի ընթացքի մասին։ Թիկունքի պետի բոլոր պահանջները նույնպես կարելի յե այդ կապի միջոցով հաղորդել կապի կենտրոնական կետին։

Մյուս կողմից, ծագող բոլոր նոր հրդեհների կամ հրդեհաշեջ խմբին վերաբերող այլ պատահարների մասին,—վոր յերբեմն կապված են առաջին հրդեհի վայրից ուժերը փոխադրելու հետ,—պետք է հաղորդվեն հրդեհաշիջման ղեկավարին։

Այս կապի համար ընտրում են սովորաբար հրդեհի վայրին անմիջապես մոտիկ գտնվող կետ։ Այդ կետում գտնվում է կապավորը։ Հեռախոսը կողմնակի բոլոր խոսակցություններից ազատում են և նրա համարը հաղորդում են հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետին։

2. Ձակատի յեվ թիկունքի միջեվ յեղած կապը, վորպես միմյանց հետ խիստ սերտորեն կապված մասերի մեկ ամբողջություն,—ինչ նըշանակության պարզ է։ Այս կապը հաստատվում է անմիջապես և ունի մանավոր փոխադարձ հաղորդումների կամ հրամանները ճակատից թիկունքին հաղորդելու բնույթ։ Այսպես, որինակ, ավտոնասոսները դնելիս հայտարերված և հիդրանտների սառած մաս, վորի հեռանքով շանգագծերը պարզելը դանդաղում է։ Այդ մասին հրդեհաշիջման ղեկավարին անմիջապես լուր են տալիս։ Կամ, որինակ, այն ջրափոսը, վորից վրա դրված են ավտոնասոսները, վերջինների ջրամատակարարումն ապահովում են միմիայն 20—30 րոպեյով։ Այս բանն էական նշանակություն ունի հրդեհաշիջման ղեկավարի համար, վորն անշուշտ հրդեհաշիջման նախնական պլանի մեջ անհրաժեշտ փոփոխություններ է մտցնելու՝ այդ մասին թիկունքի պետից հաղորդում ստանալուց հետո։

3. Թիկունքի պետի յեվ ռեզերվների միջեվ յեղած կապն անհրաժեշտ է, վորովհետև այդ ռեզերվները առաղավորվում են թիկունքի պետից յերբեմն զգալի հեռավորության վրա։ Այս տիպի կապի դերն ակնհայտ է և լրացուցիչ բացատրությունների կարիք չունի։

4. Քանի վոր հրդեհաշիջման ղեկավարը չի կարող միաժամանակ գտնվել բոլոր մարտական տեղամասերում, իսկ նրանցից ամեն մեկում կարող են պարագայի փոփոխություններ տեղի ունենալ, ապա ուրեմն հրդեհաշիջման ղեկավարի յեվ մարտական տեղամասերի միջեվ յեղած կապի անհրաժեշտություն հասկանալի յե։

5. Աշխատող միմյանց հարևան ստորաբաժանումների միջեվ յեղած կապն անհրաժեշտ է, վորովհետև նրանցից յուրաքանչյուրի աշխատանքն անկախ աշխատանք չե և սերտորեն կապված է այլ ստորաբաժանումների հետ։ Այսպես, որինակ, յեթե մեկ ջոկն աշխատում է յերկրորդ հարկում և այդ վերջինը վորևե պատճառով հարկադրված է ծածկը բացել, նա ամենից առաջ այդ մասին պետք է հայտնի յերրորդ հարկում աշխատողին։

Կապի այս վերջին յերկու տեսակներն ըստ էության հաստատվում են առանց հրդեհաշիջման ղեկավարի մասնակցության, յերբ վերջինս կապի հատուկ տեխնիկական միջոցներ չունի։

Այսպիսով, սխեմատիկ կերպով կապը հրդեհի դեպքում կարելի յե պատկերացնել այնպես, ինչպես սխեմայում ցույց է տրված (նկ. 26)։

Կան կապի զանազան միջոցներ և դրանք հետևյալներն են. կենդանի կապ, հեռախոսային կապ, ռադիոկապ։

Վերոհիշյալ կապը չպետք է խառնել ձայնական ազդա-

նշանների հետ, վորոնք գործ են ածվում միմիայն վորոշ դեպքերի համար և չեն կարող բոլոր կարգադրությունները և մանավանդ զեկույցները հաղորդել։ Այդ նպատակի համար դրոշակների կիրառման հնարավորությունը (ինչպես նավատորմում են կիրառում) կասկածելի չե, վորովհետև հրդեհի պարագայում հնարավոր չե ամեն րոպե ազդարարին տեսնել, մանավանդ վոր ստորաբաժանումներն աշխատում են զանազան դեպքերում։

Կենդանի կապը (լրատարների միջոցով) կազմակերպվում է յուրաքանչյուր չոկի կողմից տրամադրված մարտական հաշվի հատուկ համարներից։ Յեթե հրդեհի ժամանակ աշխատում են 9 չոկ, մենք կունենանք 9 կապավոր մարտիկ, վորոնք բաշխվում են մոտավորապես հետևյալ կերպ.

1 մարտիկը հրդեհի վայրի կապի կետին սպասարկում է հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետի հետ միասին.

3 մարտիկը՝ հրդեհաշիջման ղեկավարի տրամադրության տակ.

2 մարտիկը՝ թիկունքի պետի տրամադրության տակ.


3 մարտիկը սպասարկում են մարտական տեղամասերին։

Մարտական տեղամասերի և առանձին չոկերի միջև կապը պահպանում են անձամբ վերջիններիս հրամանատարները, վորոնք պարբերաբար շատ կարճ ժամանակով միմյանց հանդիպելով, աշխատանքի վիճակի մասին տեղեկանում են։ Շատ դեպքերում կարող է զեկուցագրով ուղարկվել վորևե մարտիկ։

Կապի անձնական կազմն ընտրվում է խելացի, ժիր, հասկացող մարտիկներից, վորոնք պետք է հատուկ պատրաստություն ստանան։ Այստեղ հրամաններն ու զեկույցները միշտ բանավոր կերպով, ճիշտ և արագորեն հաղորդելը հիմնական դեր է խաղում։ Սխալ, աղավաղված կերպով հաղորդված հրամանը կամ զեկույցն առաջ են

բերում ոպերատիվ սխալ գործողություններ և հաճախ անուղղելի սխալներ։

Հեռախոսային կապը հատատավում է դաշտային հեռախոսներով, վորոնք դրվում են մի քանի կետերում (մարտական տեղամասերում, այնտեղ, վորտեղ հրդեհաշիջման ղեկավարը հաճախ լինում է, թիկունքի պետը և այլն)։



Նկ. 26

Քանի վոր հեռախոսային կապը պահանջում է ապարատուրաներ, հաղորդիչներ, հաղորդիչները կախելու համար ձողեր և մի քանի մարտիկ (կապի հատուկ չոկ), ուստի կապի այդ տեսակը հնարավոր է միմիայն այն մասերում, վորոնք վերոհիշյալ մարտիկներին և տեխնիկական միջոցներ ունեն։

Ռադիոկապը հրդեհաշեջ խմբերում համեմատաբար դեռևս թույլ է զարգացած, սակայն նրա արժեքավոր հատկություններն ու պատրաստման հասարակ ձևը հրդեհաշիջման համար ոգտագործման լայն հնարավորություն են բացում։

Ռադիոկապն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում ՀՈՒՔՊ-ի պայմաններում աշխատելիս, երբ մարդկանց ինքնապաշտպանությունը, մեկ կողմից, և հետախուզային փչացումները, մյուս կողմից, հարկադրում են կապի հարցերի լուծմանը մոտենալ հատուկ խնամքով:

Այն դեպքերում, երբ հրդեհի վայրը հանում է տեխնիկական կապի հատուկ ծառայությունը, վորին դիմավորում է ոպերատիվ կապի պետը, վերջինիս են անցնում այն բոլոր ֆունկցիաները, վորոնք վերաբերում են կապի հատատուկությանը:

Իրըև յեզրակացություն պետք է նշել դեկավարման շտաբի կազմակերպման հարցը: Շտաբ կազմակերպվել կարող է միմիայն շատ խոշոր խմբերում կամ խոշոր հրդեհների մոտ: Շտաբի աշխատանքի եյությունը կայանում է թե՛ ճակատից և թե՛ թիկունքից ստացվող բոլոր տեղեկությունները կենտրոնացնելու, այդ տեղեկությունները մշակելու, նրանց իրենց դերին ծառայեցնելու, անհրաժեշտ միջոցառումներ մշակելու և գործնականորեն նրանց իրագործելու մեջ, առանց ճակատի և թիկունքի դեկավարությունը փոխելու:

Շտաբի կազմակերպմանն ու աշխատանքին մանրամասն ծանոթանալու համար քննության առնենք մի շարք հարցեր, վորոնք պարզաբանում են շտաբի կազմը, նրա աշխատանքի բովանդակությունը, պարտականությունները, առանձին կարգադրությունների կատարման ստուգումը և թիկունքի, մարտական տեղամասերի և նրանց դեկավարության հետ ունեցած կապի կազմակերպումը:

Նպատակահարմար է շտաբը կազմակերպել հրդեհի վայրը վոչ պակաս, քան յերեք հրդեհաշեջ խումբ գալուց հետո: Մեկ կամ յերկու հրդեհաշեջ խումբ աշխատելու դեպքում դժվար թե շտաբի կազմակերպման անհրաժեշտություն լինի:

Շտաբի պետ հանդիսանում է նախապես նշանակված հրամանատարը, սովորաբար ոպերատիվ բաժնի (մասի) հերթապահ տեսուչը: Շտաբի աշխատակիցներ կարող են լինել քաղտեսուչն ու ոպերատիվ բաժնի (մասի) հերթապահը:



Նկ. 27

Այն դեպքերում, յերբ հիշյալ պաշտոնական անձնավորությունները հատիկով նախատեսված չեն, շտաբի պետ հանդիսանում է հրդեհաշեջ պահպանության տեսուչներից մեկը, իսկ աշխատակիցներ՝ քաղդեկն ու շրջանային խմբի պետի ոգնականներից մեկը:

Իբրև կանոն, շտաբում հերթապահություն են անում բժշկական անձնակազմը, յեթե հրդեհաշեջ պահպանությանը տրված են սանիտարական մաս կամ սանիտարական տրանսպորտ և ոպերատիվ լուսանկարիչ, ինչպես նաև հրդեհի վայրը հասած յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից առաջադրված կապավորները:

Հրդեհի վայրում շտաբը տեղավորվում է կապի ավտոմեքենայի վրա, իսկ այդպիսի ավտոմեքենա չլինելու դեպքում՝ այն առվենահարմար տեղում, վորը ցույց է տալիս ձողին ամրացված կարմիր դրոշակը (հրդեհաշեջ պահպանության սկզբնատառերով), վորի վերևի մասում հարմարեցված է (դրված է) ճոճանակային տիպի (թարթիչ) ելեկտրական կարմիր լամպ կամ լապտեր և մեջտեղում, դրոշակի շորից ցած՝ լուսապատկեր, վորը ցույց է տալիս հրդեհի համարը (նկ. 27):

Շտաբի աշխատանքն ուղղված է հետևյալ նպատակներին. հրդեհաշիջման դեկավարին մարտական տեղամասերի և առանձին մարտական խմբերի գործողության ընթացքի պայմանների և նրանց փոփոխությունների մասին ժամա-

նակին տեղեկություններ հաղորդել, բարձր համարներով կամ հրդեհաշեջ պահպանության սորաբաժանումների կանչով տեղ հասած ուժերն ու միջոցներն արագ գործի դնել, հրդեհաշիջման ընթացքի մասին ամփոփումներ անել և ամփոփագրերը կազմել և հրդեհաշեջ պահպանության կենտրոնական կապի, մարտական տեղամասերի և թիկունքի հետ անընդհատ կապ կազմակերպել։

Շտաբի աշխատանքի կոնկրետ բովանդակությունը հետևյալն է.

1) տեղ հասած սորաբաժանումների պետերին (շտաբը ներկայանալու դեպքում) հանձնել դեկավարի հրամանները, վորոնցով վորոշվում են ոպերատիվ խնդիրները, կամ պետերի՝ դեպի հրդեհաշիջման դեկավարի տեղը տանող ամենակարճ ուղղությունը, յեթե ոպերատիվ խնդիրները նախապես վորոշված չեն.

2) հրդեհաշիջման դեկավարին անմիջապես տեղեկություններ հաղորդել այս կամ այն մարտական տեղամասում կամ թիկունքում տեղի ունեցած պայմանների այն փոփոխությունների մասին, վոր ստացվում են համապատասխան պետերի դեկուցագրերով.

3) հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետին տեղեկություններ հաղորդել ոպերացիայի ընթացքի մասին, հրդեհաշեջ պահպանության լրացուցիչ սորաբաժանումներ պահանջել, բարձր համարներին մերժում տալ և սորաբաժանումների տեղ հասնելու և մեկնելու ժամանակը գրանցել.

4) ջրմուղային մագիստրալի համապատասխան տեղամասերում ճնշումը բարձրացնելու կամ բարձր լարվածության հոսանքները անջատելու պահանջի հետ կապված տեղեկություններ հաղորդել.

5) հրդեհաշեջ պահպանության աշխատող սորաբաժանումների համար հերթափոխություններ պահանջել.

6) հրդեհի որյեկտի հետ կապված պաշտոնական մարդկանցից՝ պարադայի հայտնաբերման կամ հրդեհաշիջման

դործողությունների կատարման հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ (տեղեկագրեր, պլաններ և այլն) ստանալ.

7) հրդեհի ժամանակ աշխատած ուժերն ու միջոցները հաշվել, ակտեր կազմելու համար անհրաժեշտ նյութեր, հրդեհի պատճառի, հետևանքների ու նյութական վնասների վերաբերյալ տեղեկություններ հավաքել.

8) հրդեհաշիջման դործողությունների սխեմատիկ պլան կազմելնրա վրա դծելով հրդեհաշիջմանը մասնակցած ուժերի դործողությունների դիրքերն ու ուղղությունները։

Շտաբի պետի վրա դրվում է շտաբի վերաբերյալ կանոնադրությամբ նախատեսվող ոպերատիվ և կազմակերպչական աշխատանքի դեկավարությունն ու անմիջական կատարումը, ֆունկցիաների կազմակերպումն ու բաշխումն աշխատակիցների միջև, խմբերի ու միավորումների պետերին և այլ պաշտոնական անձնավորությունների դեկավարի կարդադրությունների հաղորդումը, պարագայի փոփոխությունների և տեղ հասած սորաբաժանումներ ի մասին դեկավարին անձամբ տեղեկություն հաղորդելը և հրդեհի սխեմատիկ պլանը կազմելը։

Շտաբի աշխատակիցների պարտականությունները կայանում են շտաբի պետի բոլոր կարդադրությունները կատարելու, կապավորներին խնդիրներ տալու և կապի որյեկտներում նրանց բաշխելու մեջ, ինչպես նաև շտաբի ու դեկավարի, մարտական տեղամասերի պետերի, թիկունքի պետի ու մոտակա հեռախոսային կետի (վորը կապված է հրդեհաշեջ պահպանության կենտրոնական կետի հետ) միջև կենդանի կապը կարգավորելու մեջ (յեթե շտաբի սրահադրության տակ ոպերատիվ ռադիոյի կամ հեռախոսային կապի հատուկ մեքենա չկա)։

Զեկուցագրերը կամ առանձին ցուցումները հուսալի կերպով և իր ժամանակին ստանալու նպատակով շտաբի և մարտական տեղամասերի դեկավարների միջև կապը պետք է լինի յերկուստեք, վորի համար, հեռախոսային կապի բացակայության դեպքում, սրահադրում են կապա-

վորներ, վորոնք տրվում են թե շտաբին և թե մարտական տեղամասերի պետերին։

Հրդեհաշիջման ղեկավարման ամենահիմնական և կարևոր մոմենտներից մեկը հանդիսանում է առանձին կարգադրությունների կատարման ստուգումը։ Ստուգման բացակայությունը կարող է առաջ բերել ղեկավարի ընդունած գործողությունների պլանի աղավաղում։ Մարտական խմբերի ցրման պայմաններում առանձին կարգադրությունների կատարման ստուգումը ղեկավարը կարող է կատարել շտաբի ապարատի միջոցով՝ յուրաքանչյուր առանձին դեպքում հատուկ առաջադրություններ տալով, մատնանշելով ստուգման տեղը, բնույթը և նպատակը։ Այնուամենայնիվ դրանով ղեկավարը չի ազատվում իր կարգադրությունների կենսագործումն անձամբ ստուգելու պարտականությունից։

Քանի վոր շտաբը հանդիսանում է ղեկավարի տեխնիկական ապարատը, վորը ստորաբաժանումների, մարտական տեղամասերի, մարտական խմբերի, ոժանդակ ծառայությունների պետերի և առանձին պաշտոնական անձնավորությունների հետ ունեցած համապատասխան փոխհարաբերության միջոցով կատարում է ղեկավարի կամքը, քննության առնելիք պետկազմի պարտականությունները և նրա փոխհարաբերությունները շտաբի հետ։

Մարտական տեղամասի պետը հանդիսանում է իր տեղամասում կուտակված բոլոր ուժերի և միջոցների ուղղակի և անմիջական ղեկավարը, վորն անձամբ պատասխանատու է նրանց հաջող գործողություններին։

Գործադրված բոլոր միջոցառումների ու նրանց հաջողության, ինչպես նաև իր տեղամասի պայմանների փոփոխությունների մասին մարտական տեղամասի պետը ղեկավարին զեկուցում է կամ անձամբ, յեթե դրա համար հնարավորություն կա, կամ շտաբի պետի միջոցով՝ ոգտագործելով դրա համար հեռախոսային կապը կամ կապավորներին։

Թիկունքի պետը հրդեհի վայրը հասնելով, ներկայանում է ղեկավարին և նրանից անհրաժեշտ ցուցումներ է ստանում։ Աշխատանքի պրոցեսում շտաբի հետ անընդհատ կապ է պահպանում և թիկունքի աշխատանքի մասին նրան պարբերաբար լուր է հաղորդում։

Կապի ծառայության պետը հրդեհի վայրը հասնելով անցնում է շտաբի պետի տրամադրության տակ և նրանից ցուցումներ ստանալով՝ շտաբն ապահովում է անհրաժեշտ կետերի և անձնավորությունների հետ հեռախոսով կամ ռադիոյով կապվելով։

Բժշկական անձնակազմը հրդեհի վայրը հասնելով, ներկայանում է շտաբի պետին և շտաբում հերթապահություն է անում։ Շտաբում բժիշկ կամ բուժակ լինելու դեպքում նրանցից մեկը շրջում է հրդեհի առանձին տեղամասերը։

Ոպերատիվ լուսանկարիչը հրդեհի վայրը հասնելով ներկայանում է շտաբի պետին և նրա ցուցումով աշխատում է։

Կապավորները կատարում են թե շտաբի պետի և թե նրա աշխատակիցների առանձին հանձնարարությունները։

III. ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԱՑԱՀԱՅՈՒՄ

Մարդկանց փրկելու և շենքերը գանազան գույքերի կրակի վտանգից ազատելու հարցերը հրդեհաշիջման ընդհանուր սխեմայում չափազանց կարևոր տեղ են գրավում։

Հրդեհների ժամանակ անհրաժեշտ է լինում մարդկանց փրկել բազմազան պայմաններում՝ բնակության տներում, հասարակական ոգտագործման շինություններում, արդյունաբերական օբյեկտներում, տրանսպորտում և այլն։

Մարդկանց փրկելու գործը բարդ և չափազանց պատասխանատու մանավանդ է, վորի կատարումը պահանջում է ամենից առաջ հրդեհաշեջ պահպանության գերազանց պատրաստություն ունեցող, մարզված, փրկության միջոցներին (տվյալ խմբի զինման համար) գերազանցորեն տիրապետող

և փրկության կազմակերպման բոլոր հնարավոր մանրամասնությունները պատկերացնող անձնական կազմ։

Հիմնականում փրկության բոլոր դեպքերը կարելի չէ բաժանել յերկու տեսակի. անհատական փրկության դեպքեր և մասսայական փրկության դեպքեր, յերբ անհրաժեշտություն է առաջ գալիս տանդյակ և նույնիսկ հարյուրավոր մարդկանց փրկել։ Սակայն թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել վորոշ ընդհանուր առանձնահատկություններ։ Ամենից առաջ չպետք է մոռանալ, վոր փրկվողը պետք է անպայման «սպասի», մինչև խմբի տեղ հասնելը, վորևե աչքի ընկնող տեղում մնալով։

Ամենից հաճախ ուղղակի այդպես է լինում։ Սակայն բազմաթիվ դեպքերում կարիք է լինում փրկվողին վորոնել։ Մանավանդ այս վերաբերում է յերեխաներին, վորոնք բնազդաբար մոնում են մահճակալների, սեղանների տակ և այլն, փորձելով վտանգից ազատվել, վորովհետև նրանք ստեղծված դրությունից դուրս գալու մի այլ միջոց չեն կարող գտնել։ Սակայն նույնը տեղի է ունենում նաև մեծահասակների հետ, վորովհետև վտանգի մեջ գտնվող մարդու գիտակցությունը պարագայով (մանավորապես թունավոր գազերով) զգալիորեն թուլանում է։ Այսպիսով, նույնիսկ այն դեպքերում, յերբ անհրաժեշտ փրկության բացարձակ նշաններ չկան, պետք է վտանգի յենթակա տեղամասերը ուշի ուշով զննելով համոզվել, վոր իրոք ոգնության կարիք ունեցող մարդիկ չկան։

Վտանգի յենթակա տեղամասերի այդ նպատակով կատարվող հետազոտության խնդիրը չափազանց պատասխանատու խնդիր է, վորը պետք է հանձնել միմիայն փորձված և տոկուն մարդու։ Ամենից հաճախ այդ պարտականությունը դրվում է հրամկազմից վորևե մեկի վրա։

Թե մարդկանց վորչափ ուշադրությամբ պետք է վորոնել, ցույց է տալիս հետևյալ դեպքը։ Բնակության բազմահարկ տան մի հրդեհի ժամանակ խմբի պետը ջոկի հրամանատարին հրաման է տվել ստուգելու, թե արդյոք այդ

տրկերից վորևե մեկում մարդիկ չեն մնացել։ Ջոկի հրամանատարը շուտով զեկուցել է, վոր մարդիկ չեն հայտաբերվել։ Լուրջ վախ ունենալով, խմբի պետն առաջարկել է ծխապատ շենքերը կրկին անգամ մանրազնին հետազոտման յենթարկել և դարձյալ զեկույց է ստացել, վոր մարդիկ չկան։ Այն ժամանակ խմբի պետը մեծ դժվարությամբ ներս մանելով այն բնակարանը, վոր արդեն սկսել եր վառվել, սենյակներից մեկում թանձր ծխի մեջ հայտաբերում է հատակի վրա սողացող յերկու կանանց, վորոնք գտնվում են կիսագիտակից վիճակում։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր կողմնակի մարդկանց հաղորդած վոչ մի տեղեկություն այն մասին, թե վտանգի յենթակա շենքում մարդիկ չկան, չպետք է ուշադրության առնել, վորովհետև ճնշող մեծամասնությամբ այդ հաղորդումները միանգամայն անհիմն են։

Այնուհետև, չպետք է հայտաբերված մարդկանց հեշտ կերպով փրկելու վարդապետն հեռանկարներ ունենալ։ Այդ մարդիկ մարտիկի ցուցումներին ամեն անգամ սիրով չեն յենթարկվում։ Պրակտիկան մի շարք դեպքեր է ցույց տվել, վոր փրկության յենթակա մարդիկ վախից կամ իրենց շրջապատող պայմանների խիստ սարսափից (և հաճախ անհիմն) առաջացող անմիտ գործողությունների ազդեցության տակ կրակի գոտուց դուրս գալուն ընդդիմացել են։

Առհասարակ փրկության ժամանակ հարկ է լինում գործ ունենալ իրենց գաղտնությունն այս կամ այն չափով չկորցրած մարդկանց հետ (և դա փրկության խնդիրը հեշտացնում է), կամ այնպիսի մարդկանց հետ, վորոնք ամեն ընդունակություն կորցրել են վորևե բան, գործողություն և տպավորություն ըմբռնելու, այսինքն այնպիսի մարդկանց հետ, վորոնց գիտակցությունը սարսափի ճնշման տակ է, վորից նրանք անմիտ վորոշումներ են կայացնում։ Պետք է հատուկ ուշադրության արժանացնել մարդկանց վերջին կատեգորիան։

Հանկարծակի վրա հասած վտանգը մարդուն շփոթված

վիճակի մեջ է գցում։ Մարդը նախապես մտածված վորոշում չի ունեցել, և յեթե նա ընդունակ չե ստեղծված դրությունից արագ կերպով դուրս գալու միջոց գտնելու, նա ինքն իրեն կորցնում է, անճնատուր է լինում ինքնապաշտպանության բնազդին և վոչինչ չգիտակցելով, գործում է զուտ մեխանիկորեն։ Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, վոր մարդը յերբեմն ընդունակ է լինում իր յերեխայի մասին մոռանալ և, ինքն իրեն փրկելով, նրան թողնում է բախտի քմահաճույքին, և դրանով պետք է բացատրել, վոր չափահաս տղամարդը յերեխաներին հետ շպրտելով՝ իրեն համար դուրս գալու ճանապարհ է բացում և այլն։ Այս դեպքերը չի կարելի ընդհանրացնել, սակայն դրանք հատկանշական են այն տեսակետից, վոր բնորոշում են հրդեհի պայմաններում իրենց գաղտղությունը կորցրած մարդկանց գործողությունները։

Հրդեհաշիջման պրակտիկան ցույց է տվել նույնիսկ այնպիսի դեպքեր, յերբ մարդիկ վերևի հարկերից իրենց փողոց են շպրտել, յերբ ըստ էության հրդեհ չի յեղել, այլ սանդուխքի տակ վառված լաթեղենից շենքի մեջ սաստիկ ծուխ է լցվել։

Միանգամայն պարզ է, վոր այդպիսի դրության մեջ գտնվող մարդկանց փրկելու գործը կապված է մեծ դժվարությունների հետ և համենայն դեպս փրկության խնդիրը կատարելիս այդ հանգամանքը պետք է հաշվի առնել։

Փրկության միջոցները, վորոնց հնարավոր է հրդեհի ժամանակ ոգտագործել, միայն հրդեհաշեջ խումբը պինելու մեջ չեն կայանում։ Բացահանման լավագույն և ամենահասալի ճանապարհներից մեկը շենքերում յեղած սանդխավանդակներն են։ Շինարարական կանոնների (հակահրդեհային) համաձայն՝ սանդխավանդակները պետք է լինեն հրակայուն, ունենան հրակայուն ծածկ և իրենց սահմաններում վոչ մի շենք, պահեստարան և այլն չպետք է ունենան։ Հետևապես, նրանք մարդկանց փրկելու համար հանդիսանում են ամենահարմար և ամենաապահով ճանապարհը։

Բացի դրանից, այդ ճանապարհը շենքի բոլոր բնակիչներին ծանոթ լինելը և այդտեղից հեշտ կերպով տեղաշարժվելը խիստ բարենպաստ պայմաններ են ստեղծում մարդկանց այդ սանդուխքներով դուրս բերելու նույնիսկ շենքը սաստիկ կերպով ծխով լցված լինելու դեպքում։

Միմիայն այն դեպքում, յերբ հնարավոր չե սանդխավանդակով ոգտվել, կարելի յե այլ միջոցներ գործադրել, որինակ, արտաքին ստացիոնար հրդեհաշեջ սանդուխքներ։ Այս սանդուխքներով տեղաշարժվելն արդեն իսկ նախադրյալների միջոցներ է պահանջում (թեկուզ պարանով կապել), վորովհետև վոչ բոլոր մարդիկ են դյուսպատույտից վեր և սովոր բարձրության վրա տեղաշարժվելու։

Այնուհետև գալիս են այն միջոցները, վոր հրդեհաշեջ խմբերն են տրամադրում։ Դրանցից առաջին տեղը գրավում են մեխանիկական, յերկրորդ տեղը դուրսքաշովի սանդուխքները, և, վերջապես յերրորդ տեղը գրոհասանդուխքները։

Փրկիչ մեզարները կամ Գենդի ապարատը գործ են ածում միմիայն մասնայական փրկության անհրաժեշտության դեպքում, վորովհետև նրանց փոեը (մանավանդ մեզարներինը) բավական դժվար է։ Փրկիչ մեզարը պետք է նկատի ունենալ իբրև ծայրահեղ միջոց և կիրառել միայն այն ժամանակ, յերբ վորևե այլ յելք չկա։ Այդ բացատրվում է նրանով, վոր թե՛ թուչդների և թե՛ մեզարը բռնողների համար դա վտանգավոր է։

Ինչ նկատառումներով պետք է առաջնորդվել փրկության միջոցներ ընտրելիս։ Այդ նկատառումները հիմնականում հանգում են չորս մոմենտների և կախված են՝ նախ, փրկվող մարդկանց քանակից, յերկրորդ, այն կետերի քանակից, ուր անհրաժեշտ է միաժամանակ ոգնություն հասցնել, յերրորդ, այն ուժերի քանակից, վորոնց կարելի յե ոգտագործել փրկության համար, չորրորդ, այն ժամանակի քանակից, վոր հրդեհաշեջ խումբն իր տրամադրության տակ ունի։ Վերջինս վորոշվում է պարագայով (կրակի ծավալ-

ման արագությամբ, վտանգավոր կետերում չեղած մարդկանց վիճակով և այլն)։

Ցեթե պարզված է, որ 1—2 մարդ պետք է փրկել, անմտություն կլինի, մյուս բոլոր միջոցներն անտես առնելով, սահուն մեզար գործածել։ Մյուս կողմից, նույնիսկ սահուն մեզար գործածելու բացարձակ անհրաժեշտության դեպքում, ուժերի սահմանափակ քանակի հետևանքով պետք է նրանից չերբեմն հրաժարվել (մեզարը պարզելու համար պահանջվում է մեկ ջոկից վոչ պակաս)։ Բացի այդ, եյական դեր է խաղում այն կետերի քանակը, ուր անհրաժեշտ է ոգնություն հասցնել, վորովհետև այդ հանգամանքի հետ կապված է գործիքի տեղաշարժումը (տեղափոխությունը)։

Գործիքը դնելու համար պահանջվող ժամանակը նույնպես տարբեր է. գրոհասանդուխքները 4-րդ հարկում դնելու համար պահանջվում է 30—35 վայրկ., իսկ սահող մեզարը միևնույն հարկում դնելու համար՝ 3—4 րոպե։

Անցնելով մարդկանց փրկող ջոկի գործողությունների քննությանը, անհրաժեշտ է նշել, որ մի շարք խմբում գոյություն ունեցող այն կարծիքը, թե նախ պետք է փրկել մարդկանց, և ապա հրդեհը հանգցնել, պետք է համարել սխալ։

Մարդկանց փրկելու ժամանակ գլխավոր դեր է խաղում կրակը, նրա տարածման արագությունը և նրա հետ կապված ավելի կամ պակաս չափով ծխով պատած լինելը։ Այս վտանգի վերացումով վերանում է նաև փրկելու անհրաժեշտությունը։ Ուստի փրկելու լավագույն միջոցը պետք է համարել հրդեհին վերջ տալը։ Սակայն այդ չի նշանակում, թե հրդեհի վայրը հասած հրդեհաշեջ ուժերը չպետք է մարդկանց փրկության համար միջոցներ ձեռք առնեն։ Իհարկե, չի կարելի մարդկանց թողնել իրենց խորտակման վտանգի տակ։ Այսպիսով այդ չերկու խնդիրները (մարդկանց փրկելու և հրդեհը հանգցնելու) սերտորեն այնպես են իրար հետ կապված, վոր ամենից ճիշտ կլինի

այդ խնդիրները լուծել միաժամանակ ամեն քանակի հավաքված մարդկանց ուժերով։

Պրակտիկայում 6 համարից և հրամանատարից բաղկացած մեկ ջոկը այդ պահանջները կարող է կատարել։ Գործնականում մեկ ջոկը վորոշ լարումով կարող է իր ուժերը բաշխել հետևյալ կերպ։

«Ա» մեկ փողակ տալու համար (տվյալ դեպքում մենք հարկադրված ենք ճյուղավորումից հրաժարվելու) անհրաժեշտ են չերեք մարդ. 2-ը գծերը պարզելու և փողակով աշխատելու, 1-ը՝ ստենդերավորը։ Մնացած 3 մարտիկը դուրսքաշովի սանդուխքն ու գրոհասանդուխքն են դնում, ըստ վորում գրոհասանդուխքով բարձրանալով, մարտիկը պետք է մարդկանց փրկի պարանով։ Ջոկի հրամանատարն անմիջապես մարտիկների աշխատանքին չի միանում և ղեկավարում է ընդհանուր գործողությունները։

Այսպիսով նույնիսկ մեկ ջոկը չի կարող միաժամանակ փողակը տալ և բացի դրանից, մարդկանց փրկելու համար միանգամից չերկու կետում ոգնություն հասցնել։ Ի հարկե, այստեղ լինում են նաև բացառական մոմենտներ, այսպես, որինակ, փողակի տալը ժամանակի տեսակետից ձգձգվում է, անհրաժեշտ «Բ» փողակի փոխարեն տալիս են «Ա» փողակը (այստեղից ջրի ավելորդ ծախսում), կարող է դուրսքաշովի սանդուխքը չբավականացնել և կարիք լինել լրացուցիչ կերպով չերկրորդ գրոհասանդուխքը դնել և այլն։ Սակայն մենք իրավացիորեն պետք է այդ թերությունները հաշվի չառնենք, քանի վոր խոսքը վերաբերում է այն մաքսիմալ աշխատանքին, վորը կատարվում է միմիայն մեկ ջոկի ուժերով։

Իսկ ցեթե հրդեհի վայրը հավաքվող ջոկերի թիվը չերկու և ավելի չե, նպատակահարմար է ուժերը բաշխել այնպես, վոր մեկ ջոկը (գրոհախումբը) ուղարկվի հրդեհը հանգցնելու, իսկ մյուսը՝ մարդկանց փրկելու և բացահանելու։

Նայած թե այդ խնդիրներից վորն ե լուրջ բնույթ կրում, այնտեղ ել ուղարկվելու չե ուժերի մեծ մասը։

Պետք ե նշել, վոր յերկու չոկի աշխատանքն ել պետք ե կարգավորի հրդեհաշիջման դեկավարը, վորովհետև նախատեսվում ե փողակներով ամենից առաջ պաշտպանել փրկության յենթակա մարդկանց։ Այլ խոսքով, չոկերի գործողություններով անպայման փոխադարձ պաշտպանություն ե նախատեսվում, և վոչ թե յերկու միանգամայն անկախ խնդիրներ։

Պարզության համար բերենք հետևյալ որինակը։ Հրդեհը տեղի չե ունենում բազմահարկ տան 3-րդ հարկում։ Շենքերի սխեման ցույց ե տրված նկ. 28-ում։ Թվերով նշանակված ե զանազան սենյակներում գտնվող, փրկության յենթակա մարդկանց քանակը։ Սանդխավանդակը կրակով կորված ե։ Ունենք 2 չոկի ուժ։ Ինչպիսի գործողություններ պետք ե կատարեն այդ չոկերը։

Վերոհիշյալ տվյալների վրա հիմնվելով, նպատակահարմար ե չոկերի աշխատանքը դասավորել հետևյալ կերպ։ Առաջին չոկին պետք ե խնդիր տալ անցնել մարդկանց փրկության գործին, ոգտագործելով յերկու չոկերի դուրսքաշովի սանդուխքները։ Յերկրորդ չոկին պետք ե առաջադրություն տալ ծավալելու «Բ» յերեք փողակ, վորոնցից մեկն ուղղելով սանդխավանդակին (նկատի ունենալով պաշտպանել վերևի հարկերը), իսկ յերկուսը՝ առաջին չոկի դրած շարժական սանդուխքներին։

Այս պլանի համաձայն՝ առաջին չոկը կարող ե միաժամանակ մարդկանց փրկության գործին անցնել յերկու կետում, սանդուխքները դնելով այնպես, ինչպես նկ. 28-ում ցույց ե տրված։ Յերկրորդ չոկը միաժամանակ տալիս ե «Բ» փողակները, խուսափելով ավելորդ չուր ծախսելուց և դրանով հարևան հարկերը պաշտպանում ե։

Մանեվրելիս յուրաքանչյուր չոկ պետք ե ցուցաբերի ֆունկցիաների ճշտություն և պարզություն, առաջադրությունների կատարման արագություն և միմյանց փոխադարձ ոգնություն, վորովհետև դուրսքաշովի սանդուխքներին տրված փողակները միաժամանակ նպատակ ունեն ոգնելու մարդկանց փրկությունը պաշտպանելու գործին։


Կարելի յեր նաև փոքր ինչ այլ կերպ դասավորել ուժերը, այն ե՝ յերկու չոկերին տալ միատեսակ խնդիր — մեկ փողակը գործի դրվի և, սանդուխքները դնելով ամեն մեկն իր տեղամասում, փրկության գործին անցնի, ըստ վորում առաջին չոկին, վորպես քիչ քանակությամբ մարդիկ փրկողին, նեթսի սանդուխքով փողակ տալու վերաբերյալ լրացուցիչ առաջադրություն տալ։ Սակայն այս վարիանտը պարզ չե։ Յուրաքանչյուր չոկ պետք ե կատարի յերկու տարբեր աշխատանք, վորը մարտիկների և հրամանատարների ուշադրությունը ցրում ե։ Այսպիսով առաջին վարիանտն ավելի պարզ և ավելի ընդունելի չե։

Ինչպես այս որինակից յերևում ե, չնայած վոր շենքի մի քանի կետերում մարդիկ կան, այնուամենայնիվ նրանց փրկությունը մասսայական բնույթ չի կրել։ Սա անհատական փրկության սովորական դեպք ե։

Տեղի ընտրությունն կատարելիս (թե վորտեղից պետք ե փրկության գործն սկսել), պետք ե առաջնորդվել վոչ թե նրանով, թե վորտեղ շատ մարդիկ կան, այլ վորոշել, թե վոր կետերին և ամենից շատ վտանգ սպառնում։

Սակայն և կարող են այնպիսի դեպքեր լինել, վոր հրդեհաշեջ խումբը հարկադրված լինի զբաղվել բացառապես մարդկանց փրկելու գործով, առանց հրդեհաշիջման վորևե միջոց ձեռք առնելու։ Այս հնարավոր ե մարդկանց (փրկության յենթակա) առանձին վտանգի դեպքում, զգալի քանակությամբ կետերում, ուր միաժամանակ ոգնությունն ե պահանջվում շենքի դյուրավառության դեպքում և այլն։ Այնտեղ, վորտեղ բացարձակորեն աննպատակ ե կրակը հանգցնելու փորձեր անել, վորից մարդիկ ջնասվում են, կարելի չե բոլոր ուժերը տրամադրել միմիայն մարդ-

կանց փրկելու գործին, հրդեհաշիջման հարցը քցելով յերկրորդ պլանը։



Նկ. 28

Փրկության բոլոր դեպքերում պետք է ամենից առաջ մարդկանց հանգստացնել և խրատել, վորը հնարավորություն է տալիս փրկության ոպերացիան կատարել կարճ ժամանակում։


Մասսայական փրկության դեպքում պարապան զգալիորեն բարդանում է՝ թե փրկության յենթակա մեծ քանակությամբ մարդկանց գոյությամբ, և թե մարդկանց բազմության հետ գործ ունենալու դժվարությամբ։

Մարդկանց փրկելու անհրաժեշտությանը կարելի չե հանդիպել ամենից առաջ նրանց կուտակման վայրերում՝ թատրոններում, ցուցահանդեսներում, գործարաններում, դպրոցներում և այլն։ Այդ ոբյեկտների մեջ անշուշտ տարբերություն գոյություն ունի։ Այսպես, մարդը ժամանակավորապես թատրոն մտնելով, ի հարկե, նույնիսկ նրա դռներին այնպես ծանոթ չե, չխոսելով արդեն շենքի այլ առանձնահատկությունների մասին, ինչպես բանվորը գործարանին և ծանոթ, վորը վոչ միայն գիտե շենքերի տեղը, այլև իր ցեխի հրդեհի տեսակետից վտանգավոր տեղերը, բացահանման տեղերը, հրավառնդ միջոցների տեղը, գործողությունը և այլն։ Սակայն այդ տարբերությունը, վորը, թեև հեշտացնում է փրկության պայմանները, այնուամենայնիվ չի վերացնում հիմնականը — մարդկանց փրկելու անհրաժեշտությունը։ Հետագայում մենք կանդրադառնանք թատրոններում (իբրև ամենավտանգավոր տեղեր) մարդկանց փրկելու հարցերին։

Դիտողությունները ցույց են տալիս, վոր այդպիսի դեպքերում ամենավտանգավոր հանգամանքը խուճապն է,

և վոչ թե ինքը՝ մարդկանց մասսան փրկելու պրոցեսը։ Խուճապն առաջ է գալիս հանկարծակի յերևացած վտանգից։ Մարդիկ անսպասելի կերպով տեղ տարերքի առաջ են կանգնած, հրդեհի արտաքին հսկայական ոտավորության տակ նրանց բանականությունը ճնշվում է, վորը հնարավորություն չի տանում ստեղծված դրությունից դուրս գալու։ Առաջ է գալիս փախչելու բնական ձգտում։ Այդպիսի դեպքերում մարդիկ սովորաբար փախչում են այն ուղղությամբ, ուր նրանցից վորևե մեկը շարժվում է։ Մարդիկ ուրանց իրենց հաշիվ տալու նետվում են դեպի դռները, բոլորը միանգամից կամենում են դուրս գալ, դրանով դռների մոտ կուտակում և առաջանում։ Դրա հետևանքով առաջանում են խուճապ և մի շարք անմիտ գործողություններ։ Մարդիկ այլևս վոչ թե գիտակից էակներ են, այլ մեխանիկական ուժ, վորը կարող է գործել ամեն ուղղությամբ։

Մասսան միատարը չե։ Անշուշտ թույլ մարդկանց մեջ կլինեն միշտ նաև ամուր և բանականությունը չկորցրած մարդիկ. նույնիսկ լավ ներվերով մարդիկ հաճախ չեն թափարկվում են ընդհանուրի արամադրությանը և միատեսակ սխալ



Նկ. 29


են կատարում։ Մյուս կողմից, մարդկային հորձանքն այնքան ուժեղ է և սրընթաց, վոր առանձին միավորները, հակառակ իրենց ցանկության և ջանքերի, հաճախ է վիճակի չեն վորևե բան անել և այդ հորձանքով տարվում են։

Խուճապը հենց դրանով էլ վտանգավոր է։ Նրան դադարեցնելը շատ դժվար է, վորի պատճառով էլ խուճապի առաջն առնելու միջոցներ պետք է ձեռք առնել կրիտիկական մոմենտն ակավելուց շատ առաջ։

Խուճապին վերջ տալու և մարդկանց փրկելու համար

կանչված հրդեհաշեջ խմբի գործողությունները մյուս բոլոր դեպքերում պետք է համարել ուշացած։

Այդ գործողությունները չեն կարող խուճապի փաստի



Նկ. 30

առաջն առնել և միմիայն կանդնելու են այդ փաստի հետևանքների հետ դեմ հանդիման։ Դրանից յելնելով կարելի յե հատուկտակես ասել, որ մարդկանց անվտանգությունն ու նրանց փրկելու հնարավորությունը կախված է պրոֆիլակտիկ միջոցառումներից, ծառայող անձնակազմի և հրդեհաշեջ պահակախմբի պատրաստությունից ու գործողությունների և տեղ հասած հրդեհաշեջ ուժերի գործողությունների ճիշտ համակցությունից (նախապես մտածված և կազմած ոպերատիվ պլանով։


Առանց թատերական և նման այլ շինությունների առաջադրվող հրդեհաշեջ պրոֆիլակտիկայի բոլոր պահանջների քննության մեջ մանելու, ուշադրության առնենք միմիայն յերկու մանրամասնություն, որոնք կապված են բացահանման հարցերի հետ—դռների կազմության ու տեղերի պլանիրովկան դիտատրահում։

Դռների վերաբերյալ հիմնական դեր է խաղում նրանց մեջ մարդու դռնվելու մոմենտի կրճատումը մինիմումի հասցնելը։ Այսպես, յեթե մենք համեմատենք Ա և Բ դռների յերկու տիպերը, մենք նրանց մեջ կտեսնենք եյական տարբերություն։ Նկ. 29-ում պատկերված է դուռը ծածկված վիճակում, իսկ նկ. 30-ում՝ բաց վիճակում։

Նկ. 29-ից և 30-ից յերևում է, որ Ա դռան մեջ կուտակում առաջանալու ավելի հավանականություն կա, որովհետև պատի հատման մակարդակը (նույնիսկ առանց դռան)

զգալիորեն ավելի մեծ է, քան Բ-ում, վորտեղ պատի հատումը մինչև իր վերջին սահմանը փոքրացված է։ Բ դռան կազմությունն այն նպատակն ունի, վոր հնարավոր լինի նրա լայն բացվածքից արագորեն անցնելու, մյուս կողմից, մարդկային հորձանքին հնարավորություն տրվի դռան բացվածքից դուրս գալուց անմիջապես հետո ծավալվելու։ Այս յերկու միջոցառումներով բավականին պակասում է կուտակում առաջանալու վտանգը, վորը դահլիճից դուրս գալու անհնարինության և մարդկանց խորտակման պատճառ է դառնում։

Տեղերի պլանիրովկայի տեսակետից անհետաքրքրական չի լինի Իվանովո քաղաքում կառուցվող նոր մեծ թատրոնում ընդունված մեթոդը։ Այս մեթոդը կայանում է նրանում, վոր աթոռները միմյանց հետևից դրված են զույգ-զույգ, ըստ վորում աթոռասյուների արանքներին դռներ են արված (նկ. 31)։



Նկ. 31

Ասպիսով, հասարակությունը դիտասրահից ամեն անգամ դուրս գալիս, դիտողների ամբողջ մասսան ավտոմատ կերպով բաժանվում է հավասար խմբերի, ըստ վորում յուրաքանչյուր խումբ գնում է դեպի դուռը։ Տվյալ դեպքում բոլորովին վերանում է մեկ տեղում դիտողների ամբողջ մասսայի կուտակման հնարավորությունը և կուտակում առաջանալու հնարավորությունը մինիմումի յե հասնում։

Թատրոնի ծառայող անձնակազմի և հրդեհաշեջ պահակախմբի գործողությունների վերաբերյալ պետք է ասել, վոր նրանց հիմնական խնդիրը հանդիսանում է շենքի մեջ գտնվող բոլոր մարդկանց դուրս գալն ապահովելը։

Այստեղ պետք է նկատի ունենալ յերկու վարիանտ.


յերբ հասարակությունը հրդեհի մասին չգիտե և յերբ հասարակությունը գիտե, վոր թատրոնում հրդեհ կա և իզուր է այդ բանը թագցնել։ Մեկ դեպքում անհրաժեշտ է վարչությունից կամ դերասաններից մեկին հայտնել, վոր ներկայացումը դադարեցվի և վորևե պատրվակով դիտողներին հարկադրել դիտասրահից հեռանալ։ Հրդեհաշեջ պահակախումբն այս բանն իր վրա չպետք է վերցնի, վորովհետև հրդեհաշեջի յերևալն ինքնին արդեն տագնապ կառաջացնի և դժվար թե նրա հնարամտությունները հավատան։ Մյուս դեպքում անհրաժեշտ է, վոր հենց հրդեհաշեջը դուրս գա բեմ և ասի, վոր չնչին հրդեհ է, նա վտանգ չի սպառնում և առաջարկի դահլիճից դուրս գալ, հանգստություն պահպանելով։ Պետք է գործել վատահ և կատարյալ հանգիստ կերպով։ Տվյալ դեպքում հրդեհաշեջին ավելի կհավատան, քան մեկ ուրիշին։

Այդ հայտարարություններից հետո ծառայող անձնակազմը (տոմսավաճառները և այլն) և դիտասրահում գտնվող հրդեհաշեջ պահակախումբը պետք է բոլոր դռները բացեն և բոլոր միջոցները ձեռք առնեն հասարակությանը հավասար կերպով բաշխելու յեղած բոլոր դռների վրա, հսկելով հասարակության անդորրությանը և ազդելով նրանց վրա, ովքեր հուզմունք են առաջ բերում։ Այլ խոսքով, այստեղ պետք է կատարել այն, ինչ ավտոմատ կերպով արվում է տեղերի վերահիշյալ պլանիրովկայի ժամանակ, այսինքն հասարակության ամբողջ մասսան բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի վրա առանձին ներգործելով նրանց ճիշտ ուղղություն ցույց տալ, առանց վորևե խուճապ առաջացնելու։

Խուճապ չառաջանալը և դահլիճի հաջող բացահանումը կախված է հրդեհաշեջ անձնակազմի ճիշտ և կանոնավոր գործողություններից և, ընդհակառակը, այդ անձնավորությունների շփոթվածությունն ու անպատրաստությունն առաջ է բերում մարդկանց խուճապ և խորտակում։

Պետք է հիշել, վոր այն մոմենտին, յերբ մարդիկ շփոթվում են, նրանք հեշտությամբ են ուժեղ կամքի յենթարկվում և հրամաններն ընդունում են առանց նրանց մասին մտածելու։ Այդ պատճառով կարելի յե հանգիստ, վստահ և բարձր ձայնով իր ազդեցությանը յենթարկել շփոթված մարդկանց և նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել։ Ըստ վորում, մեկ կողմից, անհրաժեշտ է ոգտագործել ինքն իրեն չկորցրած մարդկանց (ընդհանուր մասսայի մեջ միշտ մարդիկ են լինում, վորոնք ավելի սուբ մոմենտներ են ապրել), և նրանց քաշել բացահանման վերաբերյալ ընդհանուր խնդրի կատարման մեջ, մյուս կողմից, անհրաժեշտ է անմիջապես և կտրուկ կերպով ճնշել հուզմունք բարձրացնելու ամեն մի փորձ, մանավանդ, վոր այսպիսի փորձերը կարող են լինել դիտավորյալ և դասակարգային թշնամուց բղխած։

Հրդեհաշեջ պահակախմբի գործողությունները սխեմատիկ կերպով պատկերված են նկ. 32-ում։



Նկ. 32

Այստեղ ամենից առաջ պետք է նշել պահակի տեղի ընտրության կարևորությունը։ Վերջինս պետք է, մեկ կողմից, տեսնի իր պահպանության տակ գտնվող տեղամասը, իսկ մյուս կողմից, խուճապի և հրդեհի դեպքում հաշվի առնի իր գործողությունները։ Բերված օրինակում ամենից նպատակահարմար է գտնվել դռների մոտ։ Սրահը բացահանելու առաջին անհրաժեշտության դեպքում պահակախումբը պետք է գրավի նկարում շրջանակներով նշանակված տեղերը։ Յուրաքանչյուր մարտիկի գործողությունների նպատակն է իր ազդեցության տակ վերցնել իր սեկտորը և մարդկանց ուղարկել դեպի դռները, ինչպես սլաքներով ցույց է տրված։ Գոր-

ծողությունների սկզբունքը միասին է նույնը. ոգտագործել տեղած բոլոր դռները և դիտողներին հավասարապես բաշխել բոլոր դռների վրա։

Հրդեհաշեջ խումբը սովորաբար տեղ է հասնում դեպքը պատահելու սկզբից մի քանի րոպե անց։ Այդ պատճառով ամենից առաջ հարց է ծագում, թե ինչպես մուտք գործել շենքի մեջ, քանի որ դժվար թե հնարավոր լինի հիմնական դռներն ոգտագործել։ Այդ պատճառով պետք է ոպերատիվ պլանով նախատեսել, թե հատկապես ինչ դռներից խումբը կարող է ներս մտնել։ Այդպիսի դռներ հանդիսանում են բակի կողմից բուտաֆորական սենյակների, դեկորացիոն սարայների միջով բացվող դռները և այլն, մինչև անգամ ոգտագործելով դիտասրահին հարևան շենքերի պատուհանները։ Սակայն, չերբեք չի կարելի այդ նպատակի համար ոգտագործել դեկորացիաների առաջշարժման համար բեմի հետևի պատի մեջ պատրաստված դռները։ Այդ դռները բացելն անխուսափելիորեն ողի ուժգին հոսանք և առաջ բերում դեպի դիտասրահը և դրա հետ նաև՝ կրակի և ծխի շարժում դեպի դիտողները։

Ներս մտնելով, խումբն անմիջապես բաժանվում է խմբակների և յուրաքանչյուր խմբակ գործում է պահախմբի գործողությունների նման, գիտակցությունը կորցրածներին և կանաց ու չերեխաներին դուրս բերելով։

Դրսի կողմը միացած ուժերի մի մասն սկսում է պատշգամբներից, պատուհաններից և այլն մարդկանց փրկել, ոգտագործելով դրա համար չեղած բոլոր ուժերը։

Չափազանց կարևոր է այդպիսի դեպքերում հրամանատարի վարմունքը։ Հրամանատարը վոչ մի դեպքում չպետք է իր ստորաբաժանումներն առանց դեկավարման թողնի։ Յեթե նա տարածված է անմիջական աշխատանքով, մեկ կետում դա արժեքավոր է, սակայն մյուս բոլոր ստորաբաժանումները կաշխատեն ինքնահոսի կարգով։ Այդ պատճառով հրամանատարը պետք է իր ստորաբաժանումները դեկավարի, չերևալով և անձամբ որինակ ցույց տալով այն-

տեղ, ուր աշխատանքն ամենից դժվար է կատարվում, ուր ամենից շատ վտանգ է սպառնում։

Յուրահատուկ այլ տեսակի շենքերում մարդկանց փրկելն ունի իր առանձնահատկությունները։ Այսպես, հիվանդանոցներում մարդկանց փրկելիս պետք է հաշվի առնել, վոր դեպի հիվանդները պետք է հատուկ դդույշ վերաբերմունք ունենալ։ Այնուհետև փրկության յենթակա մարդկանց մեջ կարող են լինել ծանր հիվանդներ, վորոնց բացահանումը պետք է կատարել բժշկի հսկողությամբ։ Տվյալ դեպքում պետք է ոպերատիվ պլանով նախատեսել հերթապահ անձնակազմի գործողությունները, պատգարակների և շենքերի գոյությունը և թե հիվանդներին ուր կարելի յե տեղափոխել։ Ոպերատիվ պլանն անպայման պետք է մշակի վարչությունը, վորպեսզի կատարելապես ռեալ լինի։

Դպրոցների հանդիսատ բացահանումն ապահովող հիմնական պայմանը հանդիսանում է ուսուցիչների ու աշակերտների նախապատրաստությունը՝ բացահանման հնարավորության և կարգի համար։ Հանձնարարվում է կրասեր դասարանները տեղավորել ցածի հարկում։ Մնացածում կիրառվում են նույն կանոնները, ինչ միջոցները, վորոնք քննության առնվեցին թատերական շենքերում մարդկանց փրկելու ժամանակ։

Նկատի ունենալով հրդեհի պայմաններում փրկության գործի դժվարությունները ու բարդությունները և դրա հետ կապված մաքսիմալ քանակի ուժերի և միջոցների կենտրոնացման անհրաժեշտությունը, սովորաբար խմբերի մեկնելու ժամացուցակով նախատեսվում է ամեն մի հրդեհի դեպքում ավտոմատ բարձր համարները տալ այն տեղերը, վորտեղ մարդկանց մասսայական կուտակում է տեղի ունենում և վորտեղ փրկության անհրաժեշտություն կարող է սպառվել։

Կենդանիներին հեշտ կերպով բացահանելու պայմանն այն է, չերբ անհրաժեշտություն չի զգացվում փրկիչ գործիքներ կիրառել ու վերևում աշխատել և վերը նկարագրած բոլոր

միջոցների կիրառման հնարավորությունը նույնպես վերանում է։ Ըստ էության ճնում են միմիայն ֆիզիկական ներգործության միջոցները։ Սակայն այստեղ ևս վտանգավոր մոմենտները բացառված չեն։ Այդ աոհնից առաջ հնարավոր է փակ բակերում տեղի ունեցած հրդեհների ժամանակ։

Վախից խելքները կորցրած այս ու այն կողմը նետվող կենդանիները կարող են մարդկանց վնասել և հրդեհաշեջ խմբերի գործողությունների ծավալմանը, մասնավորապես շլանգագծերը պարզելուն, սանդուխքները դնելուն և այլն խանգարել։

Անհրաժեշտ է կենդանիների բացահանման անցնել նախքան կրակին անմիջապես նրանց մոտիկ լինելը։ Բոցի փայլը կենդանիների վրա շատ ուժեղ ազդեցություն է ունենում, որից կենդանիները այնպես են շփոթվում, որ հետ են դառնում շենքը և կրակի մեջ վոչնչանում են։ Այս մասնավորապես տեղի է ունենում խոզերի հետ, որի հետևանքով կորիք է լինում վառվող շենքից նրանց մի քանի անգամ հանել։

Կենդանիներին բացահանելիս պետք է օգտագործել այն մարդկանց, ովքեր նրանց մշտապես սպասարկում և խնամում են։ Այդ առանձնապես կարևոր է ձիերին բացահանելիս։ Ձիու սովորություններին ծանոթ մարդն ավելի հեշտությամբ է ձիուն դուրս հանում, քան կողմնակի մարդը։ Ձիերին դուրս հանելիս պետք է նրանց աչքերը ծածկել։ Յեթե ձին կրակը չի տեսնում, դուրս գալուն հեշտությամբ է հնազանդվում։ Պետք է ձիուն մոտենալ վճռական և համարձակ կերպով։

Մյուս կենդանիները դուրս են բերվում սովորական կարգով, սակայն այծերին ու վոչխարներին բացահանելիս պետք է նախ դուրս բերել մեկ այծ կամ վոչխար, այնուհետև ամբողջ հոտը կամովին նրան կհետևի։

Առանձին դեպքերում կարելի է փորձ կիրառել՝ ջրացայտն ուղղելով կենդանիների վերջին շարքերին։ Այդ դեպքում հետևիները սեղմում են առաջիններին, վերջինները շենքից դուրս են պրծնում, իսկ մյուսներն իրենք իրենց նրանց հետևից դուրս են գալիս։ Փրկած անասուններին պետք է տանել անվտանգ տեղ և պահպանության տակ առնել։

Այս թեմայի վերջին հարցը շենքը գույքից ազատելու հարցն է։ Ամենից առաջ պետք է կարողանալ ճիշտ կերպով և ժամանակին վորոշել գույքը փրկելու իրական անհրաժեշտությունը։ Այդ հարցի վերաբերյալ ամեն մի շտապողականություն առաջ կբերի գույքի զգալի վնասվածություն, հաճախ միանգամայն անտեղի։ Ուշ վճիռ կայացնելն առաջ է բերում գույքի փչացում։

Այսպիսով, գույքը հեռացնելու վերաբերյալ վճիռը պետք է կայացնել այն դեպքում, յերբ բացարձակ վտանգ գոյություն ունի և բոլորովին հնարավոր չե նրան պաշտպանելու վորևե միջոց ձեռք առնել։

Գույքի բացահանումը պետք է կատարել կազմակերպված ձևով։ Առաջին հերթին պետք է դուրս հանել ամենաարժեքավոր առարկաները, խուսափելով խոշոր իրերից (պահարաններ և այլն), վորոնք կարող են սանդուխքի ճապարհը փակել և դռների առաջը կորել։ Բացահանված ամբողջ գույքն անհրաժեշտ է դնել անվտանգ տեղ և պահպանության տակ առնել։

2. ՊԱՅՔԱՐ ԾԽԻ ՅԵՎ ԳԱԶԵՐԻ ԴԵՄ

Ծխի դեմ պայքարելը մարտական հրդեհաշեջ աշխատանքի ամենաակտուալ հարցերից մեկն է։ Միանգամայն իրավացի յե այն կարծիքը, թե հրդեհի պայմաններում ծուխը մարտիկների համար ավելի վտանգավոր թշնամի յե, քան կրակը։ Հրդեհաշիջման միջոցների գործության դեպքում կրակի դեմ պայքարելն ավելի հեշտ է։

Հրդեհի ժամանակ բացի ծխից մենք միշտ կարող ենք հանդիպել զանազան գազերի (թեև ծխի բաղա-

դրության մեջ նույնպես CO և CO_2 գազեր են մտնում) կամ քիմիական նյութերով արտադրվող գոլորշիների, մանավանդ արդյունաբերության մեջ կամ քիմիական, դեղատնային և այլ պահեստներում հրդեհները հանգցնելիս։ Մյուս կողմից, մենք պետք է միշտ պատրաստ լինենք աշխատելու հակաքիմիական աշխատանքի պայմաններում, վորտեղի մշտական տարրերից մեկը թունավոր նյութերի գոյությունն է։ Թե մեկ և թե մյուս պայմաններում անհրաժեշտ է մարտիկներին մշտապես մարզել՝ նրանց ամեն տեսակի աշխատանքի վարժեցնելով, վորը հրդեհի պայմաններում տեղի չի ունենում վոչ պակաս, քան 3 ժամ հակագազի մեջ միանգամայն ազատորեն մնալով։

Այդ պատճառով վերջին ժամանակներս մի շարք հրդեհաշեջ խմբերում ծխապաշտպանության և հակածխային գործիքներով տեխնիկապես զինելու հարցին առանձնաւորջ ուշադրություն է դարձվում։ Սակայն միաժամանակ պետք է նշել, վոր դրա հետ միասին, մի շարք հրդեհաշեջ խմբերում, դժբախտաբար, մարտական հրդեհաշեջ աշխատանքի այդ եյական տարրերը միանգամայն աչքաթող են արվում և լավագույն դեպքում անհրաժեշտ դնահատության չեն արժանանում։

Մարտական աշխատանքի մի շարք մոմենտներ, սկսած մարդկանց հետախուզությունից ու վրկությունից և վերջացրած փողակով աշխատելը, ծխից պաշտպանություն լինելու դեպքում կարող են ապահովվել մարտիկների անհրաժեշտ տեմպերով և թունավորված մթնոլորտում յերկար մնալով, մի հանգամանք, վորով մեծ մասամբ լուծվում է հրդեհաշիջման հաջողությունը։ Կարելի յե բերել մի շարք այնպիսի հրդեհների յերկար ցուցակ, վորտեղ ծուխն ունեցել է բացառիկ խտություն, բառիս բուն իմաստով պատի պես, վորը դուրս է գալիս թանձր քուլաներով, վորոնց տեսքը միայն կարող է մարտիկներին թուլացնել, չհոսելով այլևս խորը հետախուզության և մանավանդ այդ պայքագայում աշխատելու մասին։

Կարիք չկա ապացուցելու, թե ինչ են զգում այն մարդիկ, վորոնք անսպասելի կերպով ընկել են ծխով լցված շենքի մեջ, առաջին անգամն են այդպիսի յերևույթի հանդիպում և վերահաս վտանգի առաջ միանգամայն անոգնական են։ Սակայն պակաս դժվար չե այն մարտիկի դերը, վորն այդ մարդկանց արագորեն ոգնելու հնարավորությունից զուրկ է։ Անհրաժեշտ է մանանշել հրդեհաշեջ խմբի հատուկ պատասխանատվությունն այն դեպքերում, յերբ պահանջվում են նրա դերը լիուլի արդյարացնող գործողություններ, վորոնք կարող են համարվել պարաքի իսկական կատարում։ Վերջապես, պետք է մանանշել տանյակ փորձված հրդեհաշեջ մարտիկների՝ ծխի մեջ զոհվելու հանգամանքը՝ միմիայն այն պատճառով, վոր նրանք չեն ունեցել հակածխային գործիքներ, վորի պատճառով կողմնորոշումից զրկվել են և ուժասպառ լինելով, զոհվել։

Այս բոլոր տվյալները հարկադրում են տալ ծխի իսկական դնահատականը, առանց ավելորդ տեղը չափազանցելու ծխի վտանգը, սակայն և առանց նվազեցնելու նրա իսկական չափերը։ Այստեղից էլ պարզ է պրոֆեսիոնալ հրդեհաշեջ խմբերում ծխից պաշտպանելու ծառայության կազմակերպման և նրա չափազանց լուրջ հիմնավորման անհրաժեշտությունը։

Այս նկատի ունենալով, այն խոշոր խմբերում, ուր հրդեհաշեջ տեխնիկան դրված է զգալի բարձրության վրա, ծխից պաշտպանելու գործին վոչ միայն լուրջ նշանակություն են տալիս, այլև իրականությանը մոտիկ պայմաններում մշտական մարզանք կատարելով, մարտիկներին հարկադրում են հակածխային գործիքներով աշխատել։

Ծխից և գազից պաշտպանվելու միջոցները լինում են կոլեկտիվ և անհատական։ Ծխից պաշտպանվելու կոլեկտիվ սիջոցը հրդեհների մեծ մասում այս կամ այն ձևով արտահայտվում է։ Ընդհանրապես ասած, մարդկանց գազերի ազդեցությունից պաշտպանելը,— այն տեղերում (արտադրություններում), ուր այդ գազերն անխուսափելի

յեն,— ամենից առաջ տեղի յե ունենում հատուկ ոդափոխիչ պատրաստելով, գազերն ու փոշին ծծող եքսգաուստերներ և ստացիոնար կառուցվածքներ դնելով և այլն։ Հրդեհի այն տեղերում, վորտեղ հնարավոր է նախապես վորոշել ծխի և գազերի վոչնչացմանը յենթակա տեղերը, կատարվում է ծուխը բաց թողնելու աշխատանք։ Այս աշխատանքներին են վերաբերում տանիքները բացելը, իսկ վորոշ դեպքերում նույնիսկ ծածկերը ծակելը։

Հրդեհի ծուխը յերկու դեր է խաղում։ Ամենից առաջ ծուխը (հետևապես, CO և CO_2) վառվելու պրոցեսը ձըգձգում, դանդաղեցնում է, վորն անշուշտ համապատասխանում է հրդեհաշեջ խմբի շահերին։ Հենց այս դանդաղումով էլ բացատրվում է այն պահանջը, վոր համենայն դեպս չպետք է նախքան փողակ տալը դռները բացել և ապակիները կոտրել։ Մյուս կողմից, ծուխը հրդեհաշիջման աշխատանքը չափազանց բարդացնում է, սկսած հետախուզությունից և վերջացրած փողակների աշխատանքով և վառվող կառուցվածքները քանդելով, կողմնորոշումը դժվարացնելով։ Բացի դրանից, ընչին չափերի հրդեհի դեպքում ծուխը կարող է շենքի, մանավանդ բազմահարկ տների բնակիչների մեջ խուճապ առաջացնել. այդ տեսակետից ծուխը նույնպես պարագան բարդացնում է։

Ծխի վտանգի տեսակետից բոլոր շենքերը միատեսակ չեն։ Ամենից ավելի վտանգավոր է բացահանման ճանապարհների — սանդխավանդակների, միջանցքների և այլն ծուխը։

Գործնականում դեպքեր են յեղել, յերբ սանդխավանդակում ծխացող լաթեղենից կուտակված դգալի քանակությամբ ծուխն առաջ է բերել խուճապ և առանց վորևե լուրջ վտանգ լինելու մարդիկ 4 -րդ հարկի պատուհաններից իրենց ցած են շպրտել։ Այստեղից պարզ է, վոր հրդեհաշիջման միջոցներ ձեռք առնելու հետ միասին պարտադիր է բացահանման ճանապարհների ծուխը բաց թողնել։ Վորոշ օբյեկտներում դրա համար սանդխավանդակների վերևի կետերում իսկույն բացվող ծխի անցքեր են պատրաստում։

Ծխի բացթողման միջոցառումները, ինչ կերպ էլ նրանք կիրառվեն, հրդեհաշիջման աշխատանքի պայմանները վորոշ չափով դյուրացնելով հանդերձ, անխուսափելիորեն վառվելու պրոցեսն արագացնում և զարգացնում են։ Սակայն, այդ վտանգը չի կարելի չափազանց մեծ համարել. համենայն դեպս հրդեհաշիջման հիմնական աշխատանքների կատարման համար կարելի յե նրան ուշադրության չառնել, ի հարկե, յեթե հրդեհը հանգցնելու համար բավականաչափ միջոցներ կան։ Ծուխը բաց թողնելու աշխատանքների արագությունն ու վճռականությունը մի շարք դեպքերում լուծում են հրդեհաշիջման հաջողությունը, վորի համար հաճախ դրա հետ կապված և ծխով լցված շենքում մնացած մարդկանց փրկության հարցը։


Ծուխը բաց թողնելու տեսակետից հատկապես լուրջ դժվարություն են ներկայացնում նկուղային շենքերը (վորոնք մեծ մասամբ ունենում են կամարաձև կամ յերկթեռեհե ծածկ), ստորերկրյա կառուցվածքները, թունելները և այլն։ Այդ շենքերից ծուխը հեռացնելը յերբեմն այնպիսի լուրջ դժվարությունների յե հանդիպում, վոր այդ շենքերի մեջ մտնելը և հրդեհաշիջման միջոցներ ձեռք առնելը հնարավոր է միմիայն առանձին այնպիսի մարտիկների համար, վորոնք ոժտված են հակածխային հատուկ գործիքներով։ Այս հանգամանքը միտք է առաջացրել այնպիսի մեխանիկական հարմարանք պատրաստել, վորն ոժանդակի ծուխը շենքերից արագորեն բաց թողնելու (թեկուզ վոչ լիովին) խնդրի լուծմանը։

Այսպիսի հարմարանք հանդիսանում է ծխաուեճուլյորը, վորն իրենից ներկայացնում է մոտորավոր ուժեղ ոդափոխիչ ագրեգատ և վորը հնարավորություն ունի ոդափոխիչի մեկ րոպեում կատարած 2000 պտույտի դեպքում 30 $մ^3$ ոդ տալու։ Ծխաուեճուլյոր դնելու դեպքում անց և կացվում յերկու շլանգագիծ (մինչև 0,50 մ տրա-

մագծով). մեկը, որը ընդունող շանդն է, ծխով լցված շենքից պարզվում է մինչև ոդափոխիչը. մյուսը ներսի շրջանգը, որը ծխաոեֆուլյորից պարզվում է ծուխը հեռացնելու կողմը։ Ծխաոեֆուլյորը կարող է միայն ծուխը դուրս քաշել և կարող է նաև նույնպես թարմ ոդ մղել այն շենքերի մեջ, որոնք լցված են գազերով։

Բացի ծխաոեֆուլյորից, որը շարժման մեջ է դրվում ներքին այրման փոքրիկ շարժիչով, կարելի է պատրաստել նաև էլեկտրաէներգիայով և նույնիսկ ջրով աշխատող ոդափոխիչ ապրեգատներ։ Վերջին հանգամանքն առանձնապես ուշադրության արժանի է, որովհետև կարելի է ջրմուղն ոգտագործել հրդեհաշիջման ընդհանուր նպատակների համակցությամբ։ Միանգամայն հասկանալի է, որ թեև այդպիսի ծխաոեֆուլյորը կարող է ծուխը քաշելու մեջ որոշ ոժանդակություն ցույց տալ, սակայն հրդեհաշեջ խմբում միմիայն մեկ ապրեգատ ունենալը բավական չէ։ Հաջող կերպով գործելու համար, եթե ոչ յուրաքանչյուր հրդեհաշեջ մասին, գոնե մասերի մի զգալի քանակին անհրաժեշտ է ոժտել այդպիսի հարմարանքով։

Ծխաոեֆուլյորի և նման գործիքների կիրառումը հնարավոր և նպատակահարմար է ծխի վոչ բոլոր դեպքերում։ Եթե այդ ծուխը սահմանափակվում է վոչ մեծ կուբատուրա ունեցող շենքով, ծխաոեֆուլյորի գործողությունն անշուշտ դրական արդյունքներ կտա, իսկ եթե ծխով մի շարք շենքեր են պատած (արտադրական կորպուս, բազմահարկ տուն և այլն), այստեղ կարելի է խոսել միմիայն այդ շենքերի առանձին սեղամասերի մասին։



Նկ 33

Ծխաոեֆուլյորի հիմնական թերությունը նրա մեծությունն է, որի սեղափոխության համար հատուկ սայլակ և հատուկ սպասարկում է հարկավոր (3—4 մարդ)։

Ծուխը նկուղային շենքերից քաց թողնել կարելի է ծայրահեղ դեպքում միջհարկային ծածկերի միջով, ծածկի մեջից անցք բացելով և 1-ին հարկի պատուհաններն ոգտագործելով։ Միանգամայն հասկանալի է, որ քանի որ դրանով որոշ սպառնալիք է առաջանում կրակն 1-ին հարկն անցնելու համար, այդ պատճառով վերջինս պաշտպանելու համար անհրաժեշտ է տալ «բ» փողակ, և շենքում գտնվող դյուրավառ նյութերն ու առարկաները հեռացնել։

Զերդակածածկ շենքից ծուխը հեռացնելու համար տանիքը բացում են։ Ծածկը բացելու նպատակը վոչ միայն ծուխը դատարկելու և փողակավորին սանդուխքով չերդակը մտնելուն հնարավորություն տալու մեջ է, այլինքն կրակի շարժումը դանդաղեցնելու և չերդակում նրա տարածվելը դանդաղեցնելու մեջ, որովհետև տաք գազերը և կրակն ավելի շուտ տանիքի անցքից դուրս կգան, քան թե չերդակի միջով կշարժվեն։ Այս հասկանալի է նկ. 33-ում պատկերված սխեմայից։

Տանիքը պետք է բացել նրա գագաթից, խուսափելով վերջինից մինչև տանիքի քիվն ամբողջ շերտով քանդելուց (նկ. 34)։

Ծուխը հարկերից դատարկվում է դռներն ու պատուհանները բացելով և անհրաժեշտության դեպքում ոդահոսանք ստեղծելով, որ նպաստում է ծուխը շենքից հեռացնելուն։


Վերոհիշյալ աշխատանքները՝ հրդեհի (ծխի) վոլորտում աշխատող մարտիկներից յուրաքանչյուրին չեն զրկում պաշտպանելու անհրաժեշտությունից։

Այդ նպատակի համար չափազանց հարմար են մեր գործարաններում պատրաստվող անհատական հակածխային գործիքները։

Անհատական շնչող գործիքները, ինչպես ինքը՝ անունը ցույց է տալիս, կոլեկտիվ պաշտպանությունից տարբերվում են նրանով, որ նախատեսված են առանձին մարդու պաշտպանության համար։

Հրդեհաշեջ խմբի ամբողջ կազմը պետք է ուժված լինի անհատական պաշտպանության ընչող գործիքներով, անկախ այն ֆունկցիաներից, որ հրդեհի ժամանակ այս կամ այն մարտիկը կատարում է, ըստ որում յուրաքանչյուր գործիք խիստ անհատական՝ նե և սպասարկում է միայն մի որոշ մարտիկի։

Հակագազն անհատական ոգտագործման առարկա չէ, ուստի նրանց ստացման և ոգտագործման ժամանակ պետք



Նկ. 34

է պահպանվեն անվտանգության միջոցները (ճիշտ պատրաստություն, պահպանություն, խնամք և այլն)։ Սակայն այս պահանջներով ամբողջովին չեն սպառվում աշխատանքի համար մարտիկների պատրաստության հարցերը։ Բանն այն է, որ հակագազի մեջ մարդու հոգեբանությունը փոքր ինչ տարբերվում է նրա սովորական վիճակից։ Ամեն վոք, ով առաջին անգամ է հակագազ հագնում, և մանավանդ նրանով մտնում է ծխով լցված շենքի մեջ, իր գործողություններում զգում է վորոշ անվտանգություն, կողմնորոշման դժվարություն, անվտանգություն զեպի հակագազը (նրա հուսալի լինելը) և արտաքին աշխարհից կտրվածություն։ Այդ մոմենտները, վորոնք մարդու մեջ շփոթություն են առաջ բերում, նրան ընդունակ են դարձնում այնպիսի չմտածված վարմունք ցույց տալ, ինչպիսին և թունավոր և վտանգավոր միջավայրում դիմակը հանելը։ Այսպիսի յերևույթները առաջանալու պատճառն ամենից առաջ այն է վոր չեն կարողանում հակագազով ոգտվել, նրանով աշխատելու պատրաստությունից գուրկ են և հակագազի գործողության եությունը չգիտեն։ Այստեղից էլ անհրաժեշտություն և առաջ գալիս չափազանց լուրջ և տևական սիստեմատիկ պատրաստություն տալ յուրաքանչյուր մարտիկին, նախքան նրան հակագազով ինքնուրույն աշխատանքի դնելը։

Առանց պլանաչափ պատրաստություն և ունակություններ ձեռք բերելու հակագազով կատարվող աշխատանքը կարելի չէ հավասարեցնել սպորտի ժամանակ կատարվող ուժեղ գերլարվածության։ Այնպես, ինչպես չի կարելի վոչ մարզված մարդուն սպորտային աշխատանքի ծուլյ տալ, վորպեսզի նրա առողջությունը չվնասվի, ճիշտ այդպես էլ չի կարելի չմարզված մարտիկից պահանջել հակագազով թեկուզ մինիմալ աշխատանք կատարելու, վորը նրա համար ընտրակար հետևանքներ է ունենում։ Չմարզված մարտիկն անխուսափելիորեն կերպով կկատարի իր համար անսովոր լարված շնչառությունը և շատ շուտով կհոգնի հակագազում մնալու և նրանով աշխատելու իր համար հնարավոր սահմանին։ Ընդհակառակը, առողջ որգանիզմը մշտական մարզումով ընտելանում է այն բազմազան պահանջներին, վորոնք կապված են հակագազով շնչելու հետ, և այդպիսով ընտրակար հետևանքներից զերծ է։ Յեթե մարտիկը հակագազով սիստեմատիկ մարզանք է կատարում, նա վոչ միայն իրեն պաշտպանում է ընտրակար հետևանքներից, այլև, վոր կարևորն է, կատարում է շնչառության որգանների չափազանց արժեքավոր մարմնամարզություն։

Հանձնարարվում է հակագազերով աշխատելու գործի մեջ քաշել միմիայն կատարյալ առողջ մարտիկներին։ Ներվային բարձր զրգռվածության տեր, ինչպես նաև շնչառության թույլ զարգացած որգաններ ունեցող մարտիկներին պետք է հակագազերով ծառայելուց միանգամայն ազատել, վորովհետև նրանք մյուսների մեջ անհանգստություն և անվստահություն կառաջացնեն։

Վտանգավոր տեղերին մոտիկ աշխատելու ժամանակ ծագող դժվարությունները հաղթահարել և ծխով լցված

տեղում,—վորտեղ հնարավոր չէ շուրջը տեսանել,—հանգիստ կերպով աշխատել հնարավոր է միմիայն մարզվելով։

Այդ պատճառով թարմ ոդում կատարվող վարժությունների հետ միասին անհրաժեշտ է ուսուցումը շարունակել ծխով և գազերով լցված շենքում վարժություններ կատարելով։

Տևական և լարված աշխատանքի դեպքում, նկատի ունենալով, վոր աշխատողը կարող է ուժասպառ լինել, պետք է նախատեսել ժամանակին նրան հերթափոխելու։

Հակագազով կատարվող բոլոր շարժումները պետք է կատարել առանց շտապելու, և չպետք է անոդուտ խոսակցություններ թույլ տալ, վորովհետև այդ հոգնեցուցիչ է։

Հատուկ պատրաստություն ունեցող և մարզված մարտիկների գոյությամբ կարելի յե հաջողությամբ լուծել մի շարք չափազանց կարևոր հարցեր. ծխով սաստիկ լցված շենքում հետախուզություն կատարել, մարդկանց փրկել, վառնգի յենթակա տեղերից պայթուցիկ այլ նյութերը բացահայտել, առանձնահատուկ դժվարին պայմաններում փողակով աշխատել և այլն։

Հատուկ զազապաշտպան ծառայություններ կազմակերպվում են սովորաբար խոշոր հրդեհաշեջ խմբերում և արդյունաբերական կոմբինատներում։ Իսկ փոքրիկ խմբերի պայմաններում գազա-ծխային պաշտպանության ողակների գոյությունը միանգամայն բավարար միջոց առում է։

Գազա-ծխային պաշտպանության ծառայության կամ ողակների գոյությունը չպետք է հասկանալ այնպես, թե անհրաժեշտ է հրդեհաշեջ պահպանության մեջ ընդգրկված անձնակազմին ազատել հակագազին տիրապետելու մեջ կատարելագործվելուց։ Գազա-ծխային պաշտպանության ողակը հանդիսանում է իբրև հավաստային խումբ, վորն ի հարկե, չի կարող փոխարինել ամբողջ ստորաբաժանմանը։ Բացի դրանից, հրդեհի պարագան (որինակ՝ ագոտային թթվի պահեստների հրդեհը) միշտ կարող է պահանջել, վոր ամբողջ անձնական կազմը, մինչև իսկ շոֆերները լինեն հակագազերի մեջ։

3. ՀՐԴԵՀԻ ԳՐՈՀՈՒՄԸ

Հրդեհի գրոհ ասելով հասկացվում է մարտական ոպերացիայի վճռական ետապը, վորը կայանում է կրակի վրա գործող ուժերի սրընթաց հարձակման մեջ՝ նրան մեկուսացման և լիկվիդացիայի յենթարկելու համար։

Հրդեհի մեկուսացում նշանակում է հրդեհի սահմանափակում, այսինքն այն մոմենտը, յերբ այլևս կրակի գոտու ընդարձակում չի սպասվում, յերբ կրակի ուժը ջախջախված է։ Դրանից հետո սկսվում է հրդեհի լիկվիդացիայի շրջանը, վորը կայանում է վառելը լիովին դադարեցնելու մեջ։

Հրդեհաշիջման այս յերկու հասկացողություններն ունեն իրենց նշանակությունը և կապված են հրդեհաշեջ խմբերի վորոշ գործողությունների հետ։ Հրդեհի մեկուսացումը դա հրդեհի դեկավարի առաջ դրված խնդրի առաջին մասն է։ Յերբ խնդրի այս մասը լուծված է և հրդեհի զարգացման մեջ բեկում է առաջացել, անցնում են խնդրի յերկրորդ մասի իրագործմանը—հրդեհի լիակատար լիկվիդացիային։

Սովորաբար հրդեհի մեկուսացման շրջանում հիմնական և դլխավոր միջոցները, վորոնք լուծում են մեկուսացման հաջողությունը, հանդիսանում են այն գործող ուժերը, վորոնք իրենց աշխատանքի բոլոր դեպքերում, բացառությամբ վրվրապողակներից, պետք է ուղղված լինեն կրակի շարժմանը հակառակ և հանգցնեն վոչ միայն շենքի վառվող մասերը, այլև անմիջական սպառնալիքի տակ գտնվող օբյեկտները պաշտպանեն։ Առաջին հերթին հանգցնում և պաշտպանության տակ են առնում մեկուսացման նախատեսված ճանապարհները, ամբողջ կառուցման ամրություններ ապահովող կոնստրուկտիվ մասերը, և այն ելեմենտները, վորոնք հանդիսանում են կրակի տարածման անժխտելի հաղորդիչներ։

Մեկուսացման շրջանը կարող է պահանջել գործածության դնելու ժամանակ տեխնիկական միջոցներ, որինակ, մեխանիկական սանդուխքներ, ջրա-ծխա-գազապաշտպան


միջոցներ, կառուցումներ բացելու անհրաժեշտ միջոցներ և այլն։ Այդ դեպքում վերոհիշյալ ոժանդակ տեխնիկական միջոցները հարկ չեղած դեպքում մտցվում են գրոհող խմբի կազմի մեջ՝ այն մարտական տեղամասերում նրանց բաշխելու միջոցով, որոնց վրայի կրակի մեկուսացումը սերտորեն կապված է այդ աշխատանքները կատարելու անհրաժեշտության հետ։ Այսպես որինակ, այլ միջոցների բացակայության դեպքում փողակները հարկերը, չերդակները և տանիքը բարձրացնելու համար տալիս են ավտոմեխանիկական սանդուխքներ. ջրա-ծխա-գազապաշտպան միջոցներ մտցնում են այն դեպքում, երբ մեկուսացման գործողությունները սաստիկ ծխի պատճառով դժվար են, կամ երբ մեծ քանակությամբ ջրի ոգտագործումն սպառնում է գույքն ու շենքը փչացնել. կառուցումը բացելու համար նախատեսված միջոցներ մտցնում են այն դեպքում, երբ առանձին վառված կամ ձևափոխված կառուցումներն ընկնելու վտանգ են սպառնում կամ թե կատարվում է շենքի ամամեջ կառուցվածքների մեջ ծավալվող կրակի մեկուսացում։

Հաջող գրոհման համար սատրաբաժանումների գործողությունները պետք է տեղի ունենան միմյանց հետ խիստ համերաշխ կերպով, որի համար բոլոր գործող սատրաբաժանումների հիմնական խնդիրը հանդիսանում է վառման ոջախներն ըստ հնարավորին արագ կերպով շրջապատել և կրակի ծավալման բոլոր ճանապարհները կտրելու անհրաժեշտությունը։

Գործողությունների համերաշխությունն առանձնապես անհրաժեշտ է հրդեհի վճռական տեղամասերում, որովհետև դրանով շարունակ ապահովվում է աշխատանքի հաջողությունը և, ընդհակառակը, հրդեհի վճռական տեղամասերի գործողությունների անհամերաշխությամբ ոպերացիան անհաջողության է դատապարտվում։

Յենթադրենք թե Ա և Բ փողակավորների առաջ խընդիր է դրված կրակի գրոհում կատարել՝ նրա ծավալման

հիմնական ճանապարհների կողմից (նկ. 35)։ Անվիճելի է, որ այդ փողակների միաժամանակ գործադրությամբ և համերաշխ գործողությամբ հաջողությունը կապահովվի և կրակի ծավալման ճանապարհների առաջը կկտրվի։ Սակայն, որինակ, յերթե Ա փողակը ուշ գործի դրվի կամ թե վորևե պատճառով քիչ արդյունք տա, կրակը կարող է ծավալվել, վորի ժամանակ մեր որինակում, Ա փողակն ուշ գործի դնելու հետևանքով, կրակը վոչ միայն կարող է ծավալվել, այլև կարող է Բ փողակավորի առաջը կտրել (նկ. 36)։ Այս սխալն անխուսափելիորեն առաջ կբերի ուժերի վերախմբավորում, այսինքն Բ փողակի փոխադրություն այլ դիրքի վրա (նկ. 37), վորն առաջ կբերի ժամանակի կորուստ և հնարավորություն կտա կրակին զարգանալու։



Նկ. 35, 36, 37

Մեկուսացման հաջողության հասնելու անհրաժեշտ, եյական պայմանը կրակի ճանապարհներն ու ծավալման միջոցները գիտենալը և յուրաքանչյուր առանձին պարագայում նրանց վորոշելն է։ Կրակի տարածման վորոշված ճանապարհների (իրական և հավանական) գոյությունը հնարավորություն է տալիս համապատասխան դիրքերի ընտրություն կատարել և վորոշել մեկուսացման հաջողությունը վորոշող փողակների գործողությունների անհրաժեշտ քանակն ու ուղղությունը։

Պակաս կարևոր դեր չի խաղում նաև անընդհատ հետախուզությունը, վորը հնարավորություն է տալիս գործադրել պարագայի փոփոխության հետ կապված բոլոր միջոցա-

ռումները, կազմակերպել և կատարել գույքի բացահանում, խուսափել գրոհի համար նախատեսված և ընդունված պլանի թերակատարումից և պահպանել գործողությունների անհրաժեշտ հետևողականություն ու համերաշխություն։ Հետախուզությունը պետք է կատարեն ամեն աստիճանի պետերը և նա պետք է ապահովված լինի պատշաճ կապով։ Հետախուզության բոլոր տվյալները պետք է ժամանակին հաղորդել հրդեհաշիջման ղեկավարին և նրան ոգնել ստորաբաժանումների գործողությունները ճիշտ ղեկավարելու։

Պարագայի փոփոխությունը կարող է առաջ բերել այնպիսի դեպքեր, որ գրոհի ընդունված ձևը հաջողություն չունենա։ Այդպիսի դեպքում անհրաժեշտ է գրոհը կրկնել՝ նրա կազմակերպման մեջ մտցնելով լրացումներ կամ փոփոխություններ, որոնք գործողությունների այնպիսի ուղղություն ունենան, որ համապատասխանեն պարագայի փոփոխությանը։ Ծայրահեղ դեպքերում պետք է կատարել ուժերի և միջոցների վերախմբավորում, որը պետք է տեղի ունենա հետևողականորեն, պլանաչափ և լիովին կարգով։

Մեկուսացման մոմենտն անձամբ վորոշում է հրդեհաշիջման ղեկավարը, յեթե կան տվյալներ, վորոնք բացահայտորեն ցույց են տալիս, որ հրդեհը նվազում է։

Հրդեհի մեկուսացման մոմենտը վորոշելուց հետո հրդեհաշիջման ղեկավարը պետք է գործող ուժերի աստիճանական նվազեցման միջոցներ ձեռք առնի։ Ամենից առաջ նա պետք է հրդեհաշեջ պահպանության կապի կենտրոնական կետը մեկնած համարներից վերջինին «մերժում» տա, այսինքն, յեթե հրդեհաշիջման համար տրված է № 3 ազդանշան, տվյալ դեպքում պետք է տրվի «մերժում» № 3։ Այդ նշանակում է, որ չի պահանջվում տվյալ հրդեհի համար հետագայում ուժեր ավելացնել։ Միանգամայն հասկանալի յե, որ այդպիսի հաղորդման ստացումը, այդ հրդեհի ծագման ժամանակ ստեղծված պարագայում վորոշ դյուրություն է ստեղծելու։

Կապի կենտրոնական կետին լուր տալու հետ միաժամանակ անմիջական հրդեհաշիջումից ազատ բոլոր ուժերին հրդեհից ազատում են։ Այնուհետև գործող ստորաբաժանումները հրդեհի վայրը տեղ հասնելու իրենց կարգին հակառակ կարգով աստիճանաբար արձակվում են։ Մեր օրինակում նախ արձակվում են № 3-ով տեղ հասած խմբերը, այնուհետև արձակվում են № 2-ով տեղ հասածները և այլն։

Աշխատող խմբերի մեջ փոփոխությունները տեղի յեն ունենում վոչ թե մեկուսացման մոմենտը վորոշվելուց անմիջապես հետո, այլ ըստ անհրաժեշտության։ Ընդհանրապես ասած, սխալ կլիներ կարծել, վոր հրդեհի մեկուսացում նշանակում է խմբերի աշխատանքի արտադրողականության և համառության աստիճանի իջեցում։ Մեկուսացումը կրակի ուժի մեջ տեղի ունեցած հիմնական բեկումն է, սակայն պայքարը դեռ չի ավարտվել, նա կարող է դեռևս ժամերով շարունակվել և զգալի լարվածություն և համառություն պահանջել։ Բարեհարտությունը կարող է կործանիչ հետևանքների հասցնել։

Խմբերի աշխատանքում փոփոխություններ մացնել, նշանակում է գործող փողակների քանակն աստիճանաբար պակասեցնել։ Միմիայն մնում են իսկական անհրաժեշտ փողակները, ըստ վորում փողակները պետք է վերցնել այն հաշվով, վորպեսզի կարելի լինի ստորաբաժանումներն ամբողջովին ազատել, այսինքն, յեթե անհրաժեշտ է յերկու փողակ վերցնել, պետք է վերցնել վոչ թե յերկու ջոկերից մեկական փողակ, այլ մեկ ջոկից յերկու փողակ, վորպեսզի դրանով մեկ ջոկն ամբողջովին ազատվի։

Այնուհետև նպատակահարմար է «Ա» փողակը փոխարինել «Բ» փողակով, իսկ ներսի հրդեհների ժամանակ «Բ» փողակները՝ հիդրոպուլտերի փողակներով։ Սակայն, պետք է նշել, վոր ձմեռ ժամանակ դրսի հրդեհների դեպքում անպատակահարմար է «Ա» փողակները «Բ»-ով փոխարինել, վորովհետև հաճախ ձեռնտու յե, ավելորդ քանդում և ժամանակի վատնում կատարելուց խուսափելու համար, ավելի հիմնովին ջրել։ Վերջինս թույլատրելի յե միմիայն զգալիորեն

ջնասված շենքերում, որոնք ջրից չեն ջնասվում (օրինակ՝ յերբ փայտե շենքից միայն միմիայն պատերը)։

Հրդեհը մեկուսացնելիս ավտոնասոսների աշխատանքը հետզհետե նվազում է, և փողակների աշխատանքը փոխադրվում է ջրմուղի վրա։ Այս բոլոր միջոցները կիրառվում են հրդեհաշիջման ղեկավարի հրամանով։

Յերբ հրդեհը հիմնականում դադարեցված է և միմիայն կրակի լեզուներ են մնում, վառվելը վերջնականորեն դադարեցվում է (հրդեհը լիկվիդացիայի յե յենթարկվում), հետևյալ եռապներով կատարվում է քանդում, վերջնականորեն ջրում, հրդեհի վայրը գննում։

Քանդման են յենթարկվում կառուցվածքների՝ կրակից ջնասված մասերը և շենքի փլուզման վտանգ սպառնացող մասերը։ Վառվելուց ջնասված մասերի քանդելը պետք է շարունակել այնքան, մինչև որ հայտաբերվեն չվառված մաքուր մասեր։ Քանդելու նպատակն է յերևան հանել վառված և վառման ոջախին կպած մասերը, որպեսզի կարելի լինի մեծ խնամքով ջրել և դրանով հրդեհն ամբողջովին հանգցնել։ Քանդելու հարցի մանրամասնումը, որ մարտական կանոնադրքին է վերաբերում, այս թեմայի նպատակը չե, ուստի այդ հարցն այստեղ չի լուսաբանվում։

Քանդումից հետո, ավելի ճիշտը, նրա հետ միասին կատարվում է հրդեհի տեղի վերջնական ջրում, այն նպատակով, որպեսզի ամենափոքրիկ կայծերն ու վառվելու այլ նշանները լիովին վերացվեն։ Ջրելը պետք կատարել փոքրիկ փողակներով և խնամքով։

Ջրելը վերջացնելուց հետո ղեկավարն անձամբ պետք է շրջի և զննի հրդեհի ամբողջ տեղը, որպեսզի համոզվի, որ վառվելն իրոք դադարել է։ Պետք է նշել, որ հրդեհի տեղն անփույթ քանդելու, ջրելու և զննելու հետևանքով յերբեմն վառվելը նորոգվում է, որի պատճառով նոր մեկնումներ են տեղի ունենում դեպի միևնույն ոբյեկտը։

Այն դեպքում, յերբ կրակը ծավալվել է պատերի դատարկ տեղերում, ոդափոխիչ կանալներում կամ միջհարկային ծածկերում, որոնց լիովին քանդելն աննպատակահարմար է, կրկին անգամ վառվելու հնարավորությունը վերացնելու համար հրդեհաշիջման ղեկավարի կարգադրությամբ հրդեհի վայրում պոստ է թողնվում, որի վրա պարտականություն է դրվում հրդեհի տեղի վիճակին հսկելու և ձեռքի տակ յեղած միջոցներով կրկնվող հրդեհը հանգցնելու և անհրաժեշտության դեպքում հրդեհաշեջ խումբ կանչելու։

Ղումբը հեռանում է այդ մասին ավագ պետի արած կարգադրությունից հետո։

Իրենց մշտական տեղը վերադառնալուց հետո խմբերը նոր մեկնման գործողությունների պատրաստություն են տեսնում՝ գործողության մեջ յեղած տեխնիկական բոլոր միջոցները գննելով ու կարգի բերելով, հրդեհաշիջման միջոցների և գործիքների պաշարը մինչև սահմանված նորման փոխելով ու լրացնելով։

4. ՀՐԴԵՀՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՊԱՐԶԵԼԸ

Ղումբը չպետք է հրդեհից վերադառնա առանց նրա պատճառները պարզելու։ Այդ հարցի լրջությունը հասկանալի յե նրանից, որ հրդեհների պատճառները որոշելը և վառվելու համապատասխան վերլուծությունը կազմում են հրդեհների դեմ պայքարելու հիմքը և որոշում են հակահրդեհային աշխատանքի ուղղությունը։

Ամենից առաջ անհրաժեշտ է պարզել, թե հատկապես հրդեհաշիջման որ մոմենտին պետք է պարզել հրդեհի պատճառները։ Ընդհանրապես պետք է ասել, որ պարագայի լարվածությունը և հրդեհաշեջ խմբի աշխատանքի մաքսիմալ տեմպերի անհրաժեշտությունը հնարավորություն չեն տալիս միաժամանակ հետևելու հրդեհաշիջման ընթացքին, ուսումնասիրել ոպերատիվ պարագան և հայտաբերել հրդեհի պատճառները, որովհետև հրդեհաշիջման ղեկավարի հիմնական ուշադրությունը կենտրոնանում է հրդեհը հանգ-

ցընելու պրոցեսի վրա։ Սակայն այնուամենայնիվ հրդեհի վայրը հասնելու հենց առաջին մոմենտներից չի կարելի հրդեհի պատճառը պարզելու հարցն աչքաթող անել։

Այդ հետազոտությունը կազմված է հետևյալ տվյալների համակցությունից՝ 1) դեկավարի սկզբնական տպավորությունից, 2) հրդեհի զարգացման և հանգցնելու պրոցեսի ընթացքի դիտողություններից, 3) հրդեհի ծագման տեղը վորոշելուց և այդ տեղի ուսումնասիրությունից, 4) վկաների հարցուփորձից։

Քննության առնենք այդ տարրերից յուրաքանչյուրի նշանակությունը։

1. Հրդեհի ընդհանուր պատկերի սկզբնական տպավորությունը կազմված է գլխավորապես հետևյալ մոմենտներից՝ վորտեղ և կրակի ամենամեծ մասսան, վորտեղից և ուր է շարժվում կրակը, կրակի զարգացման արագության ինչպիսի անբնական առանձնահատկություններ են աչքի ընկնում, վորտեղից և ամենից հավանական կերպով հրդեհը ծագել, մեկ, թե մի քանի տեղում կրակի ոջախներ կան և այլն։ Այդ բոլոր մոմենտները պետք է հրդեհաշիջման դեկավարի հիշողության մեջ տպավորվեն, վորպեսզի կարելի լինի այդ սկզբնական տպավորությունը համեմատության դնել հետագայի բոլոր հետազոտությունների հետ։

Այդ առանձնապես անհրաժեշտ է հրկիզումը պարզելու դեպքում։ Դատակարգային թշնամին հրկիզումներով կամենում է վորքան կարելի չի մեծ վնաս հասցնել սոցիալիստական շինարարությանը և աշխատում է դրանում կատարած իր հանցագործությունների հետքերը թագցնել։ Հրդեհի ամեն տեսակի անբնական արագ զարգացումը, չափազանց ուժգին վառվելը (վորը դյուրավառ հեղուկների գոյությամբ սովորական երևույթ է), մի քանի տեղում միաժամանակ հրդեհի ծագելը, մուտքի մոտ ծագած հրդեհը,—բավականին հիմք են տալիս յենթադրելու, վոր հրկիզում կա։

Հաճախ հրկիզումն այնպես է քողարկված լինում, վոր միմիայն արտաքին տպավորությունը բավական չէ հրդեհի պատճառի հարցը վերջնականապես լուծելու։ Կարելի չէ դրան իբրև որինակ բերել մեր խորհրդային գործարաններից մեկի ցեխում տեղի ունեցած հրկիզումը։ Այդտեղ հրկիզումը պատրաստել են յերկար ժամանակ։ Ցեխին ունեցել և մեծ քանակությամբ շրջակարի վառունակ փայտանյութ, վորին ելեկտրահաղորդիչ են մոտեցրել։ Ցեխում դրված են յեղել թթվածնով լցված բալոններ և այլն։ Հրկիզումից առաջ փայտե շրջակարի մոտ ելեկտրահաղորդիչ աշխատանք են կատարել։ Այսպիսով, հրդեհի իսկական պատճառը վոչ թե ելեկտրահաղորդիչ աշխատանքներն են յեղել, այլ դիտավորյալ հրկիզումը, վոր կատարվել է դասակարգային թշնամու ձեռքով։

Մի այլ դեպքում հրկիզումը կազմակերպված է յեղել հետևյալ կերպ. նավթով լցված շշերի բերանին անց են կացրել վառվող մոմեր, վորպեսզի մոմը վառվելուց հետո նրա վառվող պատրույգն ընկնի նավթի մեջ, վերջինիս բռնկավառի, այդ իր հերթին շիշը պայթեցնի, վառվող նավթը թափվի հատակին և հրդեհ առաջացնի։

Սակայն պետք է նկատի ունենալ, վոր միմիայն նավթի հոտը (վորը նույնիսկ բաց հրդեհի դեպքում լավ զգացվում է) դեռևս տվյալ չի տալիս կարծելու, վոր հրկիզում կա։ Մի բնակության տան հրդեհը հանգցնելիս, վորտեղ նավթըն անկասկած դեր է խաղացել, պարզվել է, վոր վերջինս իբրև հրկիզման միջոց չի ծառայել, այլ տանտերը մատակնում նավթ է պահել և յերբ կրակը հասել է այդ մատակնին, նավթը բռնկավառվել է, վորից հրդեհն ընդարձակվել է։

Մեծ նշանակություն տալով հրդեհի սկզբնական տպավորությանը, պետք է ընդունել, վոր վերջինս հանդիսանում է միմիայն մի մասն այն ընդհանուր յեզրակացության, վորը կարելի չէ անել հրդեհի պատճառի բոլոր տվյալները լավ վորոշելուց հետո։

2. Հրդեհի պատճառը վորոշելու գործում պակաս նշանակություն չունեն նաև հրդեհի պրոցեսում կատարվող դիտողությունները։ Այսպես, որինակ, բազմահարկ

տան 3-րդ, 4-րդ, 5-րդ հարկերում և չերդակում հայտաբերվել և միջնորմների և միջհարկային ծածկերի հրդեհ։ Վառվող կառուցվածքների քանդումը պարզել է, որ հրդեհի այդպիսի զգալի ծավալումը կատարվել է վոչ հրակայուն ողափոխիչ կանալների միջով կրակը շարժվելու հետևանքով, ըստ վորում կրակը յեկել է ցածից։ Հետագա հետազոտությունն ու վկաների հարցուփորձը պարզել են, վոր ողափոխիչ կանալի մեջ դրված է յեղել ժամանակավոր վառարան, վորը և հրդեհի պատճառ է հանդիսացել։

Դեպք է յեղել, վոր հրդեհաշիջման ընթացքում արդեն նրա մեկուսացման մոմենտին վառվելը նորից սաստկացել է։ Այդ տեղի յե ունեցել նավթով լցված տակառի պայթելուց։ Ակամայից հարց է ծագում, թե ինչու յե նավթն այդտեղ պահվել։

Այսպիսով, հրդեհաշիջման պրոցեսում կարելի յե հայտաբերել մի շարք ավյալներ, վորոնք կարող են ոգնել հրդեհի պատճառի հարցի հաջող լուծմանը։

3. Հրդեհի ծագման տեղի հետազոտությունը հնարավոր է միմիայն այդ տեղը պարզելուց հետո։ Պարզելու համար, թե հրդեհը հատկապես վորտեղ է ծագել, պետք է ուշադրությամբ զննել և վորոշել պատերի, դռների, հատակի և այլնի վառվածության աստիճանը։ Զննության ժամանակ դժվար չե համոզվել, վոր շենքի մասերը հավասարապես չեն վառվել. այսպես, դուռն ավելի ուժգին է վառվում այն կողմից, վորտեղ ավելի շատ բոց կա, պատերն ամենից շատ ածխանում են այնտեղ, վորտեղ բոցի գործողությունն ամենից յերկար է տևել։

Այսպիսով, քիչ վառված մասերից ավելի շատ վառված մասերին անցնելով, մենք կհասնենք այնտեղ, վորտեղ կրակ է առաջացել և վորտեղ բոցն ամենից շատ է ներգործել։ Դրանից հետո պետք է վորոշել, թե հատկապես այդտեղ ինչից է կրակ առաջացել։

Անհրաժեշտ է նախապես հաշվի առնել, թե կրակը շենքի վերևի մասից է յեկել, թե ցածի մասից։ Վերևից յեկած կրակի ընթացքը մի շարք դեպքերում բացատրում է այն յենթադրությունը, թե հրդեհը ծագել է ծխախոտի նետված մնացորդներից, վառարանից թափված կրակից և այլն։

Վորոշ դեպքերում պատճառները վորոշելը զգալիորեն դժվար է լինում։ Այսպես, որինակ, հինգհարկանի տներից մեկում հրդեհը ծագել է սենյակի կենտրոնում յեղած սեղանի տակից։ Մանրազնին հետազոտությունը ցույց է տվել, վոր իրոք հրդեհի պատճառը յեղել է վոչ թե ցածում, այլ սեղանի վերևում։ Սենյակի այդ մասից խողովակը հանված է յեղել դուրս, և խցված է յեղել լաթեղենով։ Ըստ յերևույթին, պատահականորեն ընկած կայծից լաթեղենը բոցավառվել է, վորը վառվելով հետզհետե փոքրացել է, ընկել է սեղանի յեզրին, ապա սեղանի տակը, վորտեղ և չնչին այրում է առաջացրել։ Մի այլ դեպքում գործն ուրիշ կերպ է տեղի ունեցել։ Հրդեհի պատճառը պարզվել է հրդեհից մեկ որ հետո։ Հրդեհը ծագել է սենյակում և ըստ կրպընական յենթադրությամբ կրակը սենյակի մեջ մտել է դրսից չերդակի միջով, վորովհետև հրդեհը նկատվել է դրսից, իսկ այդ սենյակին հարևան մարդիկ, նախքան այդ հրդեհի մասին շենքի մոտից անցնող քաղաքացուց լուր ըստանալը, հրդեհի վոչ մի նշան (ծուխ, այրվելու հոտ և այլն) չեն զգացել։ Հրդեհը հայտաբերվել է ժամի 19-ին։ Մինչև ժամի 18-ը այդ սենյակում մարդ է յեղել, վորը գիրք է կարդացել։ Նրա հեռանալուց հետո սենյակը մարդիկ են մտել, և վոչ վոք հրդեհի վոչ մի նշան չի զգացել։ Վառարանը վառել են առավոտյան և ժամի 13-ին փակել են։

Հրդեհի տեղի հետազոտությունը և վկաների հարցուփորձը տվել են հետևյալ արդյունքները.

1) կրակը դրսից չերդակի միջով անցնելու պատմությունը հերքվել է, մեկ կողմից, հրկիզման ճանապարհի բարդության հետևանքով, քանի վոր ավելի հեշտ ճանապարհներ կան, մյուս կողմից, չերդակի այդ մասը կրակով քիչ վնասվելու հետևանքով, համեմատած հակառակ մասի հետ.

2) կրակն սկսվել և ծավալվել ե սենյակի վերևի մասում, որը հաստատվել ե գույքը փրկող վկաների ցուցմունքներով և սենյակի փայտե շրջակարի այրվածության աստիճանով (վերևի մասն ածխացել ե, իսկ ցածինը մաքուր ե մնացել). այս հանգամանքով բացատրվել են այն յենթադրությունները, թե հրդեհը ծագել ե ծխախոտի ցած քըցված մնացորդներից, լուցկուց և այլն.

3) սենյակի ամենից շատ վնասված տեղը յեղել ե վառարանի և դռան արանքը. վառարանը կողքերից և ծածկի մեջ ունեցել ե անջատիչներ, սակայն վառարանի վերևի մասը (ծածկը) հենվել ե անմիջապես պատին (ավելի ճիշտ պատի այդ մասը նստել ե վառարանի վրա).

4) ամենից շատ վնասված տեղից վառարանի մոտով անցել ե էլեկտրահաղորդիչը (հախճապակե վոռնների միջով)։

Այսպիսով պարզվել ե, որ հրդեհն սկսվել ե հենց այդ տեղից։ Հրդեհն ինչից կարող եր ծագել։ Կամ վառարանից կամ էլեկտրահաղորդիչներից։

Այն յենթադրությունը, թե հրդեհը ծագել ե էլեկտրահաղորդիչից, չի հաստատվել, ընդհակառակը պարզվել ե, որ թե հրդեհից վաղ և թե նրանից անմիջապես առաջ ոչ մի ռեզինի հոտ չի առել (որը սովորաբար հաղորդիչների մեկուսիչների այրման ժամանակ տեղի յե ունենում), ոչ ել լուսավորության փակվածություն կամ ընդհատում ե յեղել։ Լույսը շարունակ վառվել ե և հանգցվել ե հրդեհի ընթացքում։

Իսկ ինչ վերաբերում ե վառարանին, պարզվել ե, որ նա վառվել ե 4 ժամ, որի ընթացքում շարունակ փայտ են ավելացրել։

Այնուհետև պարզվել ե, որ վառարանը մեկ կողմից ունեցել ե ճաքեր։ Այդ առիթ ե տվել յենթադրելու, որ պատին կպած վառարանի կողմից նույնպես կարող եյին ճաքեր լինել, որը և այրում ե առաջ բերել (կարող եր այրում առաջանալ նաև վառարանի շատ տաքանալուց)։

Այսպիսով հրդեհի պատճառն աստիճանաբար պարզվել ե։

Հրդեհի տեղը զննելիս պետք ե ուշադրություն դարձնել հետևյալ տվյալների վրա, թե՝

1) հրդեհը ծագելու տեսակետից ազդեցություն չեն ունեցել արդյոք մոտակա ձեռնարկությունները, ծխնելույզները, լոկոմոբիլները, մոտորները և այլն.

2) հրդեհի տեղում ինքնավառվող նյութեր չեն յեղել.

3) մեկ կամ մի քանի տեղերում վառունակ նյութերի կուտակում չի յեղել (ինչ պատճառով).

4) արտադրությանը կամ տվյալ շենքին վերաբերող կողմնակի նյութերի կամ առարկաների (որինակ՝ յուղամանների, լամպերի, լուցկիների, մոմերի, շշերի, պատրույգների, թղթի, լաթերենի և այլն) գոյություն, թեև աննշան քանակությամբ.

5) հրդեհից առաջ տեղի չի ունեցել գազերի, գոլորշիների, ծխի, հոտերի արտադրություն.

6) փոփոխություն նյութերի, ապարատների և այլնի սովորական դասավորության մեջ.

7) միմյանց հետ չկապված կամ նույնիսկ պատերով բաժանված զանազան այրված տեղերի գոյությունը։

Հատակի վրա ավելի կամ պակաս սաստիկ այրված սակայն իրենց յեզրերով խստորեն սահմանազատվող առանձին տեղեր հայտաբերելու դեպքում պետք ե ուշադրություն դարձնել հետևյալի վրա.

ա) մաշված առանձին տախտակների մեջտեղն ավելի չի ածխացել, քան ծայրերը.

բ) չմաշված տախտակների մեջտեղն ավելի քիչ չի այրվել, քան յեզրերը, որոնք յերբեք միմյանց քիչ չեն մոտենում։

ա և բ կետերին դրական պատասխան տալու դեպքում կարելի յե յենթադրել, որ հատակի տախտակները վրա ինչ որ դյուրավառ հեղուկ ե վառվել, որը ներծծված ե յեղել մեջտեղը (ա) կամ տախտակների արանքներում (բ)։

Այդ փաստերը հաստատելու համար պետք է կրակից ջնասված մեկ կամ մի քանի տախտակ բարձրացնել, արտաքին տեսքով և հոտով հետազոտել նրանց ցածի մասերն ու հեծանաձածկը։

Յեթե պինդ կամ հեղուկ վառունակ նյութեր (նավթ, սպիրտ, ձյութ, բենզին և այլն) դանվեն, նրանց պետք է վերցնել հետազոտության։ Ըստ վորում պետք է պարզել, թե արդյոք այդ շենքն առաջներում այդպիսի հեղուկներ պահելու տեղ չի յեղել և արդյոք նրանցով լցված ռեզերվուարների պայթյուն տեղի չի՞ ունեցել։

Պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, թե արդյոք ածխացել են հատակի այն տեղերը, վորտեղ զանազան առարկաներ են դրվել և ինչպե՞ս կարող եր այդ առարկաների տակի հատակը վառվել։

Պատերի վրա հրդեհի ճնացած հետքերի վերաբերյալ պետք է պարզել՝

1) քի՞չ, թե շատ են ածխացել պատերի այն մասերը, վորոնք ծածկված են յեղել կահույքով կամ նյութերով.

2) պատերի վրա հրդեհի թողած հետքերը համապատասխանում են արդյոք հատակի վառված տեղերին, այսինքն կարելի՞ յե արդյոք յեզրակացնել, վոր կրակն այդտեղից է տարածվել. յեթե հետքերը դանվում են միմիայն պատերի վրա և ցածի կողմից սուր ձևեր են ընդունել, այդ ցույց է տալիս, վոր պատերի վրա վառունակ նյութ է լցվել կամ նրա ողնությամբ պատկերները, հայելիները, դրադարակները, ծածկոցները, կախովի պահարանները և այլն վառվել են.

3) յեթե պատը պատրաստված է տախտակներից, նրանցից մի քանիսը պետք է հանել, արտաքին տեսքով և հոտով նրանց հետևի մասն ու յեղրերը հետազոտել, պարզելու թե արդյոք վառունակ հեղուկ չի յեղել։

Առաստաղի վրա հրդեհի ճնացած հետքերի վերաբերյալ պետք է պարզել՝

1) յեթե առաստաղի վրա հրդեհի հետքեր են դանվում, արդյոք այդպիսի հետքեր կան նաև պատի կամ հատակի համապատասխան տեղերում.

2) առաստաղի վրա կան արդյոք վնասված եղեր կամ անցքեր, վորոնք կրակից չեն առաջացել կամ վորոնց կրակը չի դիպել.

3) առաստաղի վառված տեղում յեղել են արդյոք կախովի լամպ, լուսավորության մի այլ գործիք կամ ելեկտրական հաղորդիչ, ջերմության այդ աղբյուրների քանակն ու վորակը համապատասխանում են արդյոք առաստաղի վառված տեղերի ծավալին ու բնույթին.

4) առաստաղի վառված տեղերը հետևանք չեն արդյոք վերևից թափանցած կրակի (ծածկի միջանցիկ այրվածք)։

Յեթե հրդեհը ծագել է պահեստում, պետք է ուշադրություն դարձնել հետևյալի վրա.

1) դեռևս ինչպիսի նյութեր և ապարատներ են դանվում հատակի վրա, առհասարակ ինչպիսի նյութեր են այնտեղ պահվում.

2) ինչպիսի այլ նպատակների յե ծառայել պահեստը.

3) լուսավորության համար ողտվել են արդյոք վերևի լուսից լապտերի միջոցով.

4) յեղել են նյութերն այնպիսի բարձրության վրա, վոր դիպել են ծածկին (թերթաքարի, կղմինդրի և այլն). վորքա՞ն բարձր (հաշված մետրերով) են դրված յեղել նյութերը.

5) լուծին կարդին վիճակում է գանվում վառարանների մոտ ավազը և փակված են արդյոք ողամուտները.

6) վառարանի միջով (ծխնելույզով) գերաններ չեն անցկացված.

7) նյութերը (ինչպիսի) վառարանին կամ ծխնելույզին չեն դիպել։

Վառված նյութերը, կահկարասիները և այլն հետազոտելիս, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ ավյալների վրա.

1) արտադրության համար ինչպիսի՞ նյութեր են պահվել կամ գործածվել հրդեհի դիմաց.

2) ինչպիսի նյութեր են գտնվել հրդեհի վայրում.

3) այդ նյութերը հրդեհից առաջ էլ այդտեղ են եղել. վորքան ժամանակ են այդտեղ գտնվել. վորքան բարձր են դրված եղել և ինչ քանակությամբ.

4) արդյոք կամուղները, պահարանները, բազմոցները, զրադարակները, անդուկները, սեղանները, աթոռները և այլն ավելի ուժեղ կերպով ցածից են ածխացել, թե պատերի կողմից, այնինչ մյուս մասերը շատ քիչ են ածխացել կամ բոլորովին չեն ածխացել.

5) այդ կահկարասիները ներսից նույնպես վառվել են. այդ կահկարասիների դարակների և արկղների մեջ ինչ են լցված եղել. այդ արկղները հրդեհից առաջ բաց եղել են, չէր կարող դրանով հրդեհը սաստկանալ.

6) վառված կահկարասիների մեջ եղել է այնպիսին, վորին կրակը չի դիպել.

7) կրակից հատկապես շատ չեն ջնասվել վարագույրները, դորգերը և այլ հեշտ բոցավառվող իրերը.

8) հրդեհի տեղում մեծ քանակությամբ սպիտակ մոխիր կամ սաստիկ կրակի այլ նշաններ չեն գտնվում, թեև նյութերն ինքնըստինքյան դժվարավառ են եղել. եթե այո, այդ ցույց է տալիս, վոր նյութերի վրա վառունակ հեղուկ են լցրել, վորպեսզի վառվելը սաստկանա.

9) հրդեհից առաջ շենքում հատուկ հրավառնդ նյութեր չեն պահվել և ինչպիսի նյութեր. ինչպես են պահվել այդ նյութերը. առանձին, թե ընդհանուր կույտով, ազատ կերպով, թե փաթաթված. վորչափ էլն այդ նյութերը հրդեհից առաջ և հետո. գանազան հրավառնդ նյութերն իրար կողքի չեն պահվել, թե մեկը մյուսի տակ են տեղավորվել:

Այն հետազոտության ղեպքում, թե հրդեհը ծագել է կայծակից, պետք է պարզել հետևյալ հարցերը.

1) հրդեհից առաջ ամպրոպ չի եղել և հրդեհը ծագելուց առաջ նրա տեղին մոտիկ կայծակնահարություն չի եղել.

2) վառված շենքն ուժված եղել և շանթարգելներով

պրանից առաջ կայծակն այդ շանթարգելներին չի խփել. պրանից հետո շանթարգելը չի նորոգվել. շանթարգելը վերջին անգամ երբ և փորձի հետևությամբ փորձը մասնագետներն են կատարել, թե ոչ.

3) ինչից և կազմված շանթարգելի ամբողջ սարքավորումը. ինչ վիճակում է նա գտնվել հրդեհի որը. հողանցումը լավ վիճակում եղել է.

4) հրդեհից հետո շանթարգելի առանձին մասերի վրա ջնասված և հալված տեղեր չեն երևացել. տանիքի դուրս ցցված մասերը (զարդերը, խողովակները, վաքերը, կղմինդրերները և այլն) կայծակից չեն ջնասվել, կամ ծխնելույզները չեն ջնասվել:

Վառված շենքի կամ առհասարակ հրդեհի ծագած տեղերի վրա կայծակի թողած ազդեցությունը պարզվում է նույնպես հետևյալ նշաններով.

ա) ծառի վրա երբեմն առանց վառվածության հետքերի լինում են սաստիկ ճեղքվածքներ.

բ) մետաղների վրա նկատվում է հալված տեղ (ուժգին հարվածից), գունավոր, երբեմն էլ դեղնավուն փառ (թույլ հարվածներից). դեղին մասերը ցույց են տալիս մագնիսային հատկություններ.

գ) մալթուների վրա լինում են կրունծություն, հալված տեղեր, մետաղի փոշիացում՝ մանր կաթիլների.

դ) չկոտրված ապակիների վրա նկատվում են շատ մանր անցքեր կամ հալված ու ճաքած տեղեր.

է) քարերի երեսը հալվում է (հալված կտորներ, մանավանդ ավազաքարերի վրա).

զ) ծառերի վրայի (մոտիկ, այսինքն շենքից 1—3 մ հեռու) կեղևը կարող է պոկված լինել կամ ծառի բնի վրա կարող են լինել խորն ակոսներ, երբեմն էլ ճյուղերի բռընցկում:

Հրդեհի վայրի զննության կարևորությունը պահանջում է, վոր մինչև զննությունը ամեն ինչ մնա անփոփոխ, ըստ վորում ցանկալի է հրդեհի վայրը մի քանի կողմից լուսանկարել:

Կողմնակի մարդկանց մուտքը դեպի հրդեհի վայրը պետք է արգելել. հետազոտության բոլոր օբյեկտները չեն հեռացնում, այլ պահում են զննելու համար. կրակում յեղած ռեզերվուարները, ամանները, տակառները, արկղները և այլն բացել միմիայն ամբողջովին սառչելուց հետո. վերջապես, անհրաժեշտ է հրդեհի մնացորդներից և չվնասված նյութերից փորձանմուշներ վերցնել.

5) վկաների վերաբերյալ պետք է նկատի ունենալ, որ միևնույն փաստերի առթիվ զանազան մարդկանց մեջ հաճախ զանազան տպավորություններ են առաջանում, որի հետևանքով նրանք տարբեր ցուցմունքներ են տալիս և կարող են հարցը զանազան տեսակետից լուծել:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել դիտավորյալ կերպով սխալ արված ցուցմունքները, որոնց նպատակն է քննության սխալ ընթացք տալ և հանցագործության հետքերը թագցնել:

Այսպիսով, վկաներին հարցուփորձի յենթարկելիս պետք է կարողանալ ճիշտը կեղծիքից և սխալ տեղեկություններից տարբերել, յուրաքանչյուր փաստը հաստատել մի քանի ցուցմունքով և, վկաների հարցուփորձի տվյալները համեմատելով, հրդեհի վայրի զննությունից և հրդեհի սկզբին ու նրա լիկվիդացիայի ընթացքում ստացված անձնական դիտողությունների հետ, կարելի յե հրդեհի պատճառի մասին պարզ պատկերացում ունենալ:

Վկաների հարցուփորձի համար պետք է նկատի ունենալ հետևյալ հարցերը.

1. Հրդեհի սկիզբը.

ա) հրդեհն սկսվելու ժամանակը.

բ) հրդեհն սկսվելու տեղը (զանազան վկաներ զանազան ցուցմունքներ չեն տալիս).

գ) տեղերի քանակն ու անունը, որտեղ հրդեհն սկսվելիս միաժամանակ ծուխ և բոց է նկատվել.

դ) հրդեհը մեկ, թե մի քանի պայթյուններով է սկսվել.

ե) հրդեհի ժամանակ այլ պայթյուններ տեղի չեն ունեցել և վճռեց.

զ) նախքան բոց յերևալը, վորքա՞ն ժամանակ է շարունակել ծուխ բարձրանալ.

է) հրդեհը միանգամից ուժեղ բոցով և համարյա առանց ծխի՞ յե սկսվել.

ը) հրդեհն սկսվելուց առաջ և հետո ինչպիսի՞ հոտ է զգացվել և ինչպիսի՞ գոլորշիներ են արտադրվել.

2. Հրդեհի ընթացքը.

ա) ինչ ուժի և ինչ ուղղությամբ է քամի փչել.

բ) կրակն ինչ ուղղություն է ընդունել (ինչ շենքերից ու շինություններից ինչ շենքերի ուղղությամբ).

գ) կրակի ուղղությունը համապատասխանե՞լ է քամու ուղղությանը.

դ) կրակն սկզբում արագ է ծավալվել, թե դանդաղ.

ե) կրակի ծավալման արագությունը համապատասխանե՞լ է շինարարական նյութի կամ հրդեհի այլ օբյեկտների վառունակության (պետք է ուշադրության առնել նաև քամու ուժը).

զ) կրակն սկզբում ավելի ուժեղ, ավելի մեծ բոցո՞վ է յեղել, քան հետո, որինակ՝ մեկ քառորդ ժամից հետո.

է) կրակի ուժը յերբեմն սաստկացե՞լ, թե պակասել է.

ը) հրդեհը լիուլի զարգանալուց հետո վորևե տեղ վառում տեղի չի՞ ունեցել, ուր կրակը չեր կարող հեշտությամբ թափանցել. որինակ, յեթե կրակն սկսել է արևմտյան կողմի յերկրորդ հարկում և ապա կրակը յերևացել է արևելյան կողմի առաջին հարկում:

3. Հատուկ դիտողություններ հրդեհի սկզբին յեվ վերջին.

ա) ինչ օբյեկտներ են գտնվել անմիջապես կրակի յերևալու տեղում — կուտակված վառունակ նյութեր, վառելու միջոցներ, յուղալաթեր, մոխիր, վառունակ հեղուկներ և այլն.

բ) զազատար ծորակները բա՞ց են յեղել.

գ) գազի սառնիկ հոտ զգացվել է.

դ) ջրմուղը կամ հրդեհաշիջման այլ հարմարանքներն անջատված կամ փչացած չեն լինել.

ե) վառարանները ամբ են լինել, թե շիկացած.

զ) ինչպիսի հոտ է լինել.

է) ոգում մրի, փոշու, ալյուրի և այլ ամպեր չեն նկատվել.

ը) վառված շենքի դռներն ու պատուհանները բաց են լինել, ծածկվածծ, թե դրսից կամ ներսից բանալիով կամ փակով փակած.

թ) դռներն ու պատուհանները վնասվածծ են լինել. լեթե վնասված են, արդյոք դրսի կողմից.

ժ) շենքի վոր մասերն են այրվել (հատակը, առաստաղը, դռները, պատուհանները).

ի) շենքում ինչ առարկաներ են վառվել.

4. Հարցեր արտադրական շենքերի վերաբերյալ.

ա) արտադրության տեսակը.

բ) ինչ նյութեր են վերամշակվում, գործածվում, պատրաստվում.

գ) պայթուցիկ նյութեր ու հեղուկ գազեր չեն պահվում, պատրաստվում կամ վերամշակվում և ինչպիսի.

դ) այդ նյութերը միմյանցից առանձին են պահվել և ինչ հեռավորության վրա.

ե) վնրտեղ և պահվել փաթաթելանյութը.

զ) ինչպես են վերամշակվում կամ գործածվում այդ նյութերը.

է) ինչպիսի մեքենաներ և ապարատներ են գտնվում աշխատանքում.

ը) տաքացման ինչպիսի սիստեմ է կիրառվում, ինչ միջոցներ և ապարատներ են գործածվում այդ նպատակի համար.

թ) ինչպիսի ճնշումներ և ջերմաստիճան են գործադրվում արդունաբերության մեջ.

ժ) վորքան հաճախ և ինչ ժամկետների չեն հեռացվում թափթփուկներն աշխատանքի տեղից (նույնպես մոխիրը, շաքները, փոշին).

ի) բոլորը մուտք ունեն արտադրական շենքերը. թույլատրվում է նրանց մեջ ծխել.

լ) կան հեռացող գազեր (ոգտագործված գոլորշիներ). ձեր և ինչպես են նրանք հեռացվում.

խ) արտադրության մոտ զանազան տեսակի փոշի չի գոյանում և ինչպիսի.

ծ) արտադրական շենքերում բանամիջի յուղոտ կամ փոշոտ կոստյումներ չեն պահվում.

կ) մեքենաներն ու նրանց մասերը չեն տաքանում.

5. Հարցեր տաքացման վերաբերյալ.

ա) ինչպես են տաքացվում շենքերը (վառարաններ, շոգետաքացում, ոդատաքացում, գազատաքացում, ելեկտրատաքացում).

բ) շոգեհաղորդիչներն ոժտված են մեկուսիչ մասսայով.

գ) տաքացումն ու նրա վերահսկողությունը գտնվում է մի մարդու ձեռքում.

դ) կրակարանն ու տաքացվող գործիքները հրդեհից առաջ աշխատում էին և վորքան ժամանակ.

6. Հարցեր լուսավորության վերաբերյալ.

ա) ինչպես են լուսավորվում շենքերը.

բ) գործածության տեղում լուսաեներգիա արտադրվում է.

գ) լուսավորության վեկավարությունը մեկի ձեռքում է գտնվում.

դ) հրդեհից առաջ և հետո լուսավորությունը գործել է.

ե) հրդեհի սկզբում լույսը չի հանգել:

Փորձանուցների բնություն: Վառված և չվառված առարկաներից ու նյութերից փորձանյութեր պետք է վերցնել այն դեպքում, լեթե յենթադրվում է, վոր հրդեհում կամ ինքնավառում գոյություն ունի: Այդ պետք է արվի հրդեհի ժամանակ կամ թե նրանից անմիջապես հետո: Փորձանմուշները լավ փաթաթելով կամ խըցանելով, իսկույն լեթ հանձնում են եքսպերտներին հետա-

զոտելու, մատնանշելով, թե վորտեղ և ինչ վիճակում են նրանք վերցված յեղել (նրանք դեռևս ամբ են, շիկացած, բոցավառվելիս, խոնավ, թաց, չոր)։

Վերոհիշյալը ցույց և տալիս այն հոգացողությունը, վորով անհրաժեշտ և պարզել հրդեհի պատճառը։ Յեվ այդ հասկանալի յե։ Հրդեհի պատճառը վորոշելուն այդպիսի մեծ նշանակություն և տրվում յերկու նկատառումով. նախ անհրաժեշտ և պարզել հրդեհի կոնկրետ հանգամաններին, քանի վոր հրդեհների մեծ մասը տեղի յե ունենում անփութության կամ չարամտության պատճառով, յերկրորդ, պարզել հրդեհի պատճառած նյութական վնասը։ Հրդեհների պատճառները մանրազնին և հոգատար կերպով պարզելը հնարավորություն և տալիս ճիշտ կերպով վերլուծության յենթարկելու վառոնակությունը և դրա համեմատ կազմակերպելու հրդեհաշեջ պահպանություն ու հետագա անհրաժեշտ միջոցներ գործադրելու։

IV. ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՅՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ

Գիշերվա պայմաններում հրդեհաշեջ խմբերի գործողությունների վրա բացասաբար ազդող հիմնական գործոններն են՝ մարտական բացազատման բարդությունը, կողմորոշման խոչընդոտները, հետախուզության և աշխատանքի դժվարությունը, կապ հաստատելու ձգձգումը և այլն։ Այդ արտահայտվում և նրանով, վոր ձեռնարկությունների տերիտորիաների և շենքերի մուտքը սովորաբար փակ և լինում, հրդեհաշեջ խմբերին դիմավորող մարդիկ չեն լինում, շենքերը լուսավորված չեն լինում և այլն։ Բացի դրանից, գիշերվա պայմաններում հրդեհը շենքերում (հիվանդանոցներում, մանկատներում, մանկական ոջախներում, հանրակացարաններում, հյուրանոցներում, բնակարաններում) դրսևորվող մարդկանց անակնկալի բերելով մեծ վտանգ և սպառնում և կարող և նրանց մեջ խուճապ առաջացնել։ Հրդեհը ուշ հայտնաբերելու դեպքերում գիշեր ժամանակ նրա ծավալման հավանականությունն ակնհայտ և։

Գիշեր ժամանակ հրդեհաշիջման ամեն տեսակի ոպերացիան հաջողությամբ կատարելու համար, պետակազմը պետք և լինքը դրա համար լավ պատրաստվի և իր ստորաբաժանումների անձնական կազմին բարձր պատրաստություն տա։ Բացի դրանից, պետք և ունենալ պարագային համապատասխան լուսավորություն, վորը կարելի յե իրագործել՝ ակումուլյատորային լապտերներ, տեղափոխովի ելեկտրական լամպաներ գործածելով, վորոնք տեղական լուսավորության ցանցի մեջ են մտնում, և լուսավորության ծառայության լուսարձակներ ոգտագործելով։

2. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՍԱՌՆԱՄԱՆԻՔՆԵՐԻՆ

Հրդեհաշեջ խմբերի հրդեհաշեջ գործողությունները գազի սառնամանիքների ժամանակ բարդանում են, վորովհետև տեխնիկական պինման աշխատանքում խափանումներ կամ ընդհարումներ են առաջանում։ Շլանգագծերը, նասոսները, փրփրագեներատորները, ճյուղավորումները, անդունքները և այլն կարող են սառչել։ Բացի դրանից, սառնամանիքն ազդում և նաև անձնական կազմի աշխատանքի վրա։ Հատուկ հագուստը չրացայաերի ազդեցության տակ սառչում և և մարտիկի շարժունակությունը պակասեցնում և, վորն առանց այդ ել սառնամանիքին միշտ վորոշ չափով պակասում և։ Կարող են նաև մարտիկի դեմքը, և ձեռքերն ու վոտքերը ցրտահար լինել, վորից նա կարող և շարքից դուրս ընկնել։

Ոպերացիային նորմալ ընթացք տալու համար անհրաժեշտ և խիստ ուժիմ սահմանել՝ գործող շլանգագծերը ժամանակին նորոգելու վրա հսկելու, միավորիչ մանեկները ճյունով պաշտպանելու, շլանգագծերի մեջ ջրի բարձր ճնշում պահպանելու համար և այլն։ 20° և ավելի ցածր սառ-

նամանիքների ժամանակ պետք է ոգտվել ամենամեծ որաժագծի շանգներով։ Պետք է նույնպես ժամանակին պատրաստ պահել ռեզինապատ շանգագծերը, վորպեսզի անհրաժեշտ դեպքում կարելի լինի նրանցով սառածներին փոխարինել։

Նասոսները, վերբրագեներատորները, ճյուղավորումները և այլն պաշտպանելու կամ տաքացնելու համար հանձնարարվում է կիրառել յեռացրած ջուր և զոդիչ լամպեր։ Յեռացրած ջրի և զոդիչ լամպանների կիրառումն առանձնապես անհրաժեշտ է այն մոմենտին, յերբ հրդեհաշեջ խմբերը հրդեհից վերադառնալիս տեխնիկական միջոցները փաթաթում են։

Պետակոմի խնդրի մեջ է մտնում սառնամանիքում աշխատող անձնական կազմի ուժերը խնայել։ Մարդկանց պետք է հաճախակի փոխել (մանավանդ ծխի մեջ աշխատողներին)։ Տաքանալու և հանգստանալու համար պետք է աշխատողներին տաք թեյ տալ, իսկ հրդեհը յերկարելիս՝ նաև տաք կերակուր։ Անհրաժեշտ դեպքերում պետք է հատուկ հագուստը փոխել։ Բժշկական սպնուխությունն իր անձնական կազմի միջոցով պետք է աշխատողների յերեսը, ձեռքերը և վոտքերը սառնամանիքից պաշտպանելու պրոֆիլակտիկ միջոցներ ձեռք առնի։

Վերոհիշյալ միջոցառումների իրագործումը պահանջում է մարտիկների մասերին հրդեհաշիջման անմիջական ոպերատիվ աշխատանքից կորել, վորն իր հերթին անհրաժեշտություն է առաջ բերում մնացած կազմի աշխատանքը կամ պահեստի ոգտագործումն արագացնել։

3. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՔԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Քամու ուժը դրսի և բաց հրդեհների ժամանակ վառվելու պրոցեսն արագացնում է։ Ուժեղ քամին կրակի կայծերն ու ածխամասերը ցրիվ է տալիս մեծ հեռավորությունների (100—200 մ.) վրա և հրդեհների նոր ոջախներ է ստեղծում։ Այդպիսի դեպքերը հաճախակի յեն մանավանդ գյուղական վայրերի հրդեհներում։ Ուժեղ քամին իր ազդեցությունն ունի նաև ներսի հրդեհների դեպքում դժվարացնելով և դանդաղեցնելով ծուխը շենքից դուրս արկելուն։

Ուժեղ քամու դեպքում ոպերատիվ գործողությունների նորմալ ընթացքն ապահովելու համար անհաժեշտ է՝

1) սուորաբաժանումները կենտրոնացնել և արագորեն փոխադրել դեպի հրդեհի նոր ոջախները.

2) հաճախակի հետախուզություն կատարել վոչ միայն վառվող ոբյեկտում, այլև շրջակա շենքերում և հրդեհի վայրին կից ամբողջ տերիտորիայում.

3) հրդեհի վայրի շուրջը պոստեր կամ դեպքեր դնել, մանավանդ քամու յենթակա շրջաններում.

4) ավազ պետի և առանձին տեղամասերի պետերի ու թիկունքի միջև ճիշտ կապ հաստատել.

5) պահեստի ավտոնասոսները դնել խորը թիկունքի ջրաղբյուրների վրա՝ շանգագծերը փոխելով.

6) փողակավորներին ապահովել ճառագայթային եներգիայի ազդեցությունից պաշտպանվելու միջոցներով.

4. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՇՈԳ ՅԵՂԱՆԱԿԻՆ

Հրդեհաշեջ խմբերի հրդեհաշիջման աշխատանքը շոգ ժամանակ զգալիորեն բարդանում է, վորովհետև շրջապատի ոդի բարձր ջերմությունը նպաստում է անձնական կազմի շուտ հոգնելուն։ Դրսի բաց հրդեհների ժամանակ այդ առանձնապես զգալի յե առաջին հերթին այն փողակավորների համար, վորոնք աշխատում են կրակի գործողության վոլորտում։ Այդպիսի պայմաններում աշխատող մարտիկների հագուստը յերբեմն վառվում է։ Հնարավոր է նաև, վոր մարտիկներն արևահար լինեն։

Շոգ ժամանակ նորմալ աշխատանքն ապահովող միջոցառումներին են վերաբերում՝ առանձին մարտիկներին և ստո-

բաբաժանումներն ի հաշիվ ռեզերվի փոխել. փողակավորներին ցրիչ գործողության ժամանակ ջրացայտերով պաշտպանել. չեռացրած սառը ջրով ծարավը հագեցնել. իր ժամանակին բժշկական ոգնություն հասցնել։

5. ՏԱՐԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼԸ

Տարերային հրդեհներ ասելով հասկացվում են սովորաբար այն հրդեհները, որոնք իրենց չափազանց արագ ծավալվելու հետևանքով սպառնում են վոչնչացնել մի քանի առանձին շենքերն ու կվարտալները, այլև այդ ամբողջ բնակավայրը կամ օբյեկտը։

Այսպիսի հրդեհները հանգցնելու համար վայրի բոլոր հրդեհաշեջ խմբերն ու զորական մասերը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բնակչությունն ու ձեռնարկությունների բանվորները մոբիլիզացիայի են ենթարկվում։

Անհապաղ ոգնության կանչելու համար մոտակա շրջանային բնակավայրի կամ կենտրոնի հետ կապ է հաստատվում։

Ցերկաթուղային հրդեհաշեջ խմբերի և մոտակա վայրերի հրդեհաշեջ եշելոնների ոգնությունը կարող է ռեալ լինել այն դեպքում միայն, յեթե նրանք իր ժամանակին կանչվեն և արագորեն տեղ հասնեն։

Տարերային հրդեհների ժամանակ հատուկ նշանակություն է ստանում շտաբի կազմակերպումն ղեկավարին կից և թիկունքի պետի դերը։ Տարերային հրդեհը հանգցնող ղեկավարը պետք է հենվի շտաբի և հրդեհի զարգացման գլխավոր ուղղություններում վրա նշանակված մարտական տեղամասերի պետերի միջև յեղած կապի վրա։ Հրդեհաշիջման ղեկավարի հիմնական խնդիրը հանդիսանում է՝

1) հրդեհը մի քանի մարտական տեղամասերի բաժանել և նրանցից վոկել իրենց նշանակությամբ հիմնականները.

2) գործող ուժերը պլանաչափ և ռացիոնալ կերպով դասավորել.

3) պահեստի ուժերը կենտրոնացնել հրդեհի կարևոր կետերը.

4) հերթապահ ստորաբաժանումները վոկել՝ նրանց այլ շրջանների հրդեհի վայրերն ուղարկելու համար։

Տարերային հրդեհները հանգցնելու պայմաններում, գործողությունների թիկունքը բացառիկ կարևոր նշանակություն է ստանում և նա մարտական տեղամասերի թվի համեմատ պետք է մասերի բաժանվի։ Շենքերից իր ժամանակին տեղի ունեցող մարդկանց և գույքի բացահանումը,—վորոնք հրդեհի վտանգի տակ են,—կատարվում է զորական մասերի ուժերով, այդ գործի մեջ քաշելով բնակչությանը՝ դեկավարությամբ այդ նպատակի համար վոկված փրկության և բացահանման խմբերի։ Բացահանման համար բեռնատար հատուկ տրանսպորտ է տրամադրվում։ Հրդեհի շրջանի պահպանությունը պետք է կատարվի զորամասերի և միլիցիայի ուժերով։ Բժշկական ոգնություն հասցնելու համար անհրաժեշտ է հրդեհի մի քանի կետերում բուժոգնության կետեր բացել։

Այն բնակավայրերի և օբյեկտների համար, վորտեղ տեղական պայմանների համեմատ տարերային հրդեհի սպառնալիքը վերացած չէ, այդպիսի հրդեհներ ծագելու դեպքում պետք է ունենալ միջոցառումների ոպերատիվ պլան։

6. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ՝ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Արդյունաբերության բազմապան ճյուղերում, տրանսպորտում և մի շարք այլ ձեռնարկություններում հրդեհաշեջ խումբը կարող է հրդեհի գոտում հանդիպել պայթուցիկ նյութերի, վորոնց գոյությունը կարող է հրդեհաշիջման աշխատանքը բավականին բարդացնել, առաջ բերելով պայթելու, հետևապես նաև հրդեհի ուժի ավելացման ու նրա ուժգին ծավալման մշտական սպառնալիք։

Անհրաժեշտ է նշել, վոր ժամանակակից տեխնիկայում կիրառվող զանազան պայթուցիկ նյութերը ի վտանգի աստի-

ճանը խիստ տարբեր է և չափազանց տարբեր է նաև նրանց քնույթը հրդեհի դառնում։ Վորոշ պայթուցիկ նյութեր պայթում են բարձր ջերմաստիճանում (որինակ, սև վառոդը), վորոշ նյութեր էլ՝ թեթև ցնծումներից, մանավանդ ընկնելուց, շփվելուց կամ հարվածից (որինակ, պիկրատները, ազիտները, շառաչող սնդիկը և այլն)։ Մի շարք պայթուցիկ նյութեր էլ, վորոնք սկզբում վառվում են պակաս վտանգավոր համարել, վորովհետև նրանք մեծ քանակությամբ լինելու դեպքում թեև յեռանդագին վառվում են, բարձր ջերմաստիճանում չափազանց մեծ քանակությամբ գազեր արտադրելով, սակայն պայթյուն չեն տալիս, յեթե սկզբնական պայթյուն չի յեղել։ Պայթուցիկ նյութերի այս խմբին են պատկանում՝ պիրոքսիլինը, անծուխ վառոդները, տրինիտրոտոլուոլը կամ տրոտիլը և այլն։

Այն որյեկտներին, վորոնց մեջ հարկ է լինում գործ ունենալ պայթուցիկ նյութերի հետ, պատկանում են՝

1) պայթուցիկ նյութեր արտադրող գործարանները.

2) պայթուցիկ նյութերի տարբեր, հրթիռներ, ֆեյերվերկերներ արտադրող գործարանները, պատճառահետևանոցները և այլն.

3) պայթուցիկ նյութերի պահեստները.

4) պայթուցիկ նյութեր վաճառող առևտրական ձեռնարկությունները։

Այդ որյեկտների հրդեհի վայրը մեկնող հրդեհաշեջ խումբն իր գործողությունները ծավալելիս պետք է հաշվի առնի հանկարծակի պայթյուն յերևալու հնարավորությունը, վորով հրդեհի պարագան արմատապես փոխվում է։

Հրդեհաշիջման ղեկավարը կատարված հետախուզության հետևանքով պետք է իր տրամադրության տակ ունենա վառվող շենքում գտնվող պայթուցիկ նյութերի քնույթի և քանակի վերաբերյալ ճիշտ տվյալներ և այդ տեղեկությունների համեմատ հրդեհաշիջման ուժերի և միջոցների մարտական ծավալման մասին համապատասխան վորոշում կայացնի։

Տվյալ դեպքում անհրաժեշտ է նախապես պարզել այնպես, վոր նրանք պայթման ալիքի ուղղակի ներգործությունից պաշտպանված լինեն, իսկ ջրամատակարարման բաղան պետք է բավականին ուժեղ լինի՝ յերկար ժամանակ և հուսալի կերպով ջուր տալու համար։

Անհրաժեշտ է աչքաթող չանել և այն հանգամանքը, վոր համեմատաբար նույնիսկ քիչ վտանգավոր և փոքր քանակությամբ պայթուցիկ նյութերը կարող են, վերջին հաշվով, ուժեղ պայթյուն ունենալ։

Հրդեհաշիջման գործողությունները պետք է կատարել հատուկ յեռանդով, վորովհետև մի շարք դեպքերում ժամանակին և ռացիոնալ կերպով ոգտագործված թեկուզ մեկ փողակի յեռանդագին աշխատանքը կարող է հրդեհաշիջման աշխատանքի հաջողությունը լուծել։

Պայթուցիկ նյութեր արտադրող կամ պահող շենքերի հրդեհը հարկադրում է այնտեղից այդ նյութերն անմիջապես բացահանելու համար մեծ թվով անձնական կազմ տրամադրել։ Հրդեհի լիկվիդացիայի ժամանակ պետք է ուշադրությամբ հետևել, վոր շենքի քանդած մասերը յերբեք նրա ներսը չթափեն։ Հրդեհի ժամանակ պայթյունը հաճախ առաջանում է հենց այդ միջոցները չգործադրելու հետևանքով։

Հրդեհները, յեթե նրանց դռռում պայթուցիկ նյութեր կան, վտանգավոր են նաև այն պատճառով, վոր պայթման ժամանակ պայթուցիկ նյութի քայքայվող մասնիկները կարող են նետվել բավական հեռու տարածություններ և հարևան ու յերբեմն էլ բավական հեռու գտնվող շենքերի մեջ հրդեհ առաջացնել։

Փողակների դիրքերի բաշխումը պետք է կատարել այնպես, վոր հնարավոր լինի անձնական կազմը կենտրոնացնել ծածկոցների հետևը։ Այս միջոցն անհրաժեշտ է գործադրել, վորպեսզի կարելի լինի անձնական կազմին պայթման ալիքի ազդեցությունից պաշտպանել։

Պայթուցիկ նյութերի, մանավանդ հրթիռների ցրիվ յե-

կած մանրէների հեռանքով առաջացած փոքրիկ հրդեհներն արագորեն հանգցնելու համար հրդեհի վայրում պետք է ունենալ շարժական ռեզերվ, որն անմիջապես հրդեհաշիջման ղեկավարի տրամադրության տակ դանվելով, պետք է իր ժամանակին ուղարկվի նոր հրդեհի վայրը։

Կողմնակի մարդկանց համար անվտանգության պայմանները ստեղծելու նպատակով անհրաժեշտ է հրդեհի շուրջը խիստ ընդարձակ սահմաններով շրջապել, իսկ մեծ քանակությամբ պայթուցիկ նյութերի պաշարի դույության դեպքում՝ նույնիսկ տեղական ամբողջ բնակչությանը վտանգավոր գոտուց հեռացնել։

Պայթուցիկ նյութերի պահեստներում աշխատող հրդեհաշիջ խմբերի հիմնական խնդիրը վառվող շենքի հարևան շենքերի պաշտպանությունն է։ Այդ խնդիրը կատարելու համար պետք է գործածության դնել ուժեղ ջրացայտեր, որոնց հեռուն հնարավորին շատ հեռու հիմնական դիրքեր ունենալ։

Մեծ վտանգ են ներկայացնում այն պահեստների հրդեհները, որտեղ պայթուցիկ նյութերը պահվում են վոչ թե գուտ վիճակում, այլ տարբրված հրանյութերի ձևով։ Այդ դեպքում անհրաժեշտ է, ըստ հնարավորին, կատարել պահեստում հրանյութերի պահվող պաշարի մաքսիմալ բացահանում և գործի դրված ուժեղ ջրացայտերով նրանց սառեցնել։

Հրանյութերի ձևով պահվող պայթուցիկ նյութերը պայթելիս իրենց կատրաստքով վնասելու վտանգ են ստեղծում նաև անձնական կազմին։ Ուստի այդ դեպքում ել ավելի եյական և անձնական կազմին մաքսիմալ չափով պաշտպանելու պահանջը։

Այն շենքերի հրդեհի դեպքում, որտեղ փամփուշտներ են պահվում, անձնական կազմի վնասվելու վտանգը զգալիորեն պակաս է, որովհետև այդ դեպքում տեղի չեն ունենում փամփուշտների թաղանթների համեմատաբար թույլ եֆեկտով պայթյուններ։ Փամփուշտների պահեստներում

հրդեհները հանգցնելու հիմնական տակտիկական գործողությունները նման են արդեն վերը քննված գործողություններին, այն է՝ պետք է գործի դնել ուժգին կենտրոնացված ջրացայտեր և անձնական կազմին ու հիմնական հրդեհաշիջման միջոցները պայթյունից մաքսիմալ չափով պաշտպանել։

Պայթուցիկ նյութերով բեռնված վագոնների յերկաթուղային տրանսպորտի հրդեհների ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շրջակա շենքերի պաշտպանության և կրակով չշփոթված շարժական կազմին անմիջապես անվտանգ տեղ բացահանելու վրա։

Ջրային տրանսպորտում տեղի ունեցած հրդեհների վտանգը պայթուցիկ նյութերի գույությամբ զգալիորեն մեծանում է։ Քանի վոր մուտքը նավատրյումների մեջ սահմանում է դժվարանում է, ուստի պայթուցիկ նյութերի բարձած նավերի վրա հրդեհ ծագելիս անհրաժեշտ է բոլոր սուզատարքերն անմիջապես գործի դնել և ավարիայի յենթակա նավը առավելյա շենքերից հեռացնել անվտանգ տարածության վրա, իսկ վերջիններիս պահպանության համար անհրաժեշտ է արդեն բացատրված կրակմարիչ միջոցները պատրաստի ունենալ։

Հատուկ տեխնիկական միջոցներից պետք է մատնանշել փողակավորների տեղափոխովի պաշտպանական վահանները, որոնք հնարավորություն են տալիս մոտենալու ջրացայտերի գործողությունների համար անհրաժեշտ հեռակայություններին վրա։

Պայթուցիկ նյութերի պահեստներում ծագած հրդեհի մոմենտին պետք է նկատի ունենալ կյանքի համար վտանգավոր գազեր (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ և այլն) յերևալու հնարավորությունը։ Այդ դեպքում մեծապես ոգտակար կարող են լինել մեկուսիչ թթվածնային անոթները (կիպ, Ռկե և այլն)։

7. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ՝ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հրդեհա-տեխնիկական ոպերացիաների ծավալման պայմաններում կարող է հանդիպել հրդեհաշիջման դեկավարի վորոշումն զգալիորեն փոխող և նույնիսկ նրա վորոշումը վոտքի վրա արմատապես փոխել ավող դործոն։ Այդպիսի դործոն հանդիսանում է հրդեհի պարագայում այնպիսի նյութերի յերևան դալը, վորոնք մարդու որդանիզմի վրա թունավոր ազդեցություն են ունենում, մարտական առորդաժանումների աշխատանքի վորորոշ սահմանափակում են վորոնք պաշտպանական միջոց չունեն և հարկադրում են առանձին դեպքերում կիրառել վոչ միայն շնչառության որդանները պաշտպանելու սովորական միջոցներ, այլև յերբեմն՝ հատուկ պաշտպանական հագուստ կամ վոտնամաններ։

Հրդեհի պարագայում թունավոր նյութերը կարող են յերևալ հետևյալ պատճառներով. 1) վառվելու պրոցեսով բավականաչափ ոդանոս չլինելու դեպքում (ածխածնի ոքսիդի յերևալը), 2) թունավոր գոլորշիներ և գազեր արտադրող վորոշ նյութերի վառվելով, 3) արտադրական և պահեստի շենքերում թունավոր նյութեր արտադրվելու պրոցեսում վառնգավոր գազեր և գոլորշիներ արտադրվելով։ Ամենից հաճախ հանդիպում ևն հետևյալ վառնգավոր և թունավոր նյութերը.

1) թթուները (ծծմբաթթու, ազոտաթթու և ազոտական թթու), վորոնք սաստիկ խառնվելիս վնասակար և թունավոր գազեր են արտադրում.

2) քլորի, բրոմի և այլ հալոիդների գոլորշիները.

3) սպիրտների, եֆիրների, բենզինի և այլ հեղուկների գոլորշիները.

4) դանազան արդյունաբերական գազեր, այն է՝ լուսատու, կոքսային, կոլոշնիկային, դեներատորային, ջրային, բլաուգազ, ամմիակ, ացետիլենի.

5) ցելյուլոիդն ու նրանից պատրաստված շինվածքները, վորպես վնասակար ազդեցության ծուխ արտադրող, ազոտի աքսիդները, ածխածնի աքսիդը և սինիլաթթու պարունակող նյութերը.

6) ճարպերի, ձիթաներկերի, բուսական յուղերի քայքայման պրոդուկտները, վորպես ակրոլեին պարունակող նյութեր.

7) ձյութերի, լաքերի և ներկերի այրման պրոդուկտները։

Նախազգուշական հիմնական միջոցները, վորոնք թունավոր նյութերի հնարավոր արտադրության կապակցությամբ հրդեհաշիջման ժամանակ պետք է կիրառել, հետևյալներն են՝

Հրդեհի հետախուզությունը պետք է կատարել հատուկ, խնամքով և տեղական սպասարկող անձնակազմից նախնական անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո։

Հետախուզության ուղարկված անձնական կազմը պետք է ժամված լինի թե՛ անհատական պաշտպանության միջոցներով, և թե՛ լուսավորության ու կապի միջոցներով, վորի համար պետք է կիրառել կապի պահպանության հասարակ, իրեն արտադրած միջոցը՝ հետախուզության գնացող մարտիկից պարան կապելով. վոչ մի դեպքում լույսի բաց աղբյուրներից չոդտվել, այլ բացառապես ունենալ լուսավորության ելեկտրական անվտանգ դործիքներ։

Հաճախ և պատահում, վոր հրդեհի առաջին մոմենտներին միանդամայն անհնարին և լինում ֆիլտրող տիպի հակադազերով ոդտվել, վորովհետև որդանիզմի վրա վնասակար ազդեցություն ունեցող նյութերի խտացումը հրդեհի ոջախում կամ հետախուզության գործողության վորորտում կարող և այնքան ուժեղ լինել, վոր ֆիլտրող հակադազը դադարի աշխատելուց։ Ուստի այդպիսի դեպքերում պետք է կիրառել մեկուսիչ տիպի պաշտպանական միջոցներ, ինչպիսին են թթվածնային ապարատները (ԿԻՊ ՌԿՈ և այլն)։

Հետախուզությունն կատարելիս պետք է զգուշության պահպանել, վոր վառնգավոր նյութերով անոթներից վորևե մեկը չջարդվի և այլն։

Հրդեհաշիջման դեկավարը կատարված հետախուզության

արդյունքների համեմատ պետք է վորոշում կայացնի միևնույն քանակով ջրացայտեր գործ դնելու, իսկ անհրաժեշտ դեպքում կազմակերպի մաքսիմալ քանակի վառնդավորնյութերի բացահանում։

Փողակների գործողության ժամանակ, ըստ հնարավորին, խուսափել ցայտերով աշխատելուց և փոշիացող ցայտեր գործածել։ Հրդեհում աշխատող ամբողջ անձնական կազմը պետք է ուժված լինի պաշտպանության համապատասխան միջոցներով։ Փողակավորներին դիրքերում պետք է դասավորել այնպես, վորպեսզի զոլորշիների կամ գազերի հանկարծակի բռնկումների դեպքում նրանք պաշտպանված լինեն։

Հրդեհաշիջման դեկավարը պետք է ունենա անձնական կազմի ռեզերվ՝ հրդեհի գոտում աշխատողներին ժամանակին փոխելու համար, նպատակ ունենալով նրանց աշխատանքը հեշտացնել։ Նույնպես անհրաժեշտ է վնասվածներին ժամանակին ոգնություն հասցնելու նպատակով կազմակերպել բժշկական կետեր՝ բժշկի և ավտոմեքենայի հերթապահությամբ՝ վնասվածներին շտապ բացահանելու համար։

Հրդեհաշեջ խմբերի աշխատանքի ընթացքը պետք է լավ շղթայափակել, իսկ թունավոր նյութերի հնարավոր ներգործության վոլորտում գտնվող բնակչությանը վտանգավոր տեղամասից հեռացնել. վորևե նկատառումներով ճնշած անձնավորությունները պետք է ուժված լինեն պաշտպանության անհատական միջոցներով, վորոնք պետք է տրվեն պահեստից կամ պահանջել իշխանության տեղական մարմիններից։

Հրդեհաշեջ խմբերի նորմալ աշխատանքի կամ հրդեհների լիկվիդացիայի համար, վորտեղ թունավոր նյութերի արտադրությունը հնարավոր է, դեկավարի տրամադրության տակ պետք է լինեն պաշտպանական միջոցներ (ինչպիսին են՝ ռեզինե կոշիկները, ձեռնոցները և գոգնոցները), վորովհետև նյութերը քանդելու աշխատանքների ժամանակ կարելի չե հանդիպել թթուների, ալկալիների և այլ նյութերի,

վորոնք մարտիկների հագուստի և մարքի վրա ջնջասակար ազդեցություն են ունենում։

Հրդեհի վոլորտից դուրս գալուց հետո մարտիկի հագուստը պետք է փոխել և անվտանգ դարձնել, իսկ անձնական կազմին պետք է յենթարկել համապատասխան սանիտարական մաքրման։

Բացի քիմիական արդյունաբերության զոլորշիացման հետևանքով թունավոր նյութերի հնարավոր արտադրությունից, մեծ վտանգ են ներկայացնում իրենցից նաև բոցի ազդեցության վոլորտում գտնվող սեղմված գազերով լցված բալոնները։ Այդպիսի բալոններն ըստ հնարավորին պետք է կրակի վոլորտից հեռացնել, իսկ մինչև այդ մոմենտը սառեցնելու համար այնտեղ առատորեն ջրել։ Բալոնները հեռացնելիս անհրաժեշտ է ծայրահեղ զգուշություն պահպանել, այն է՝ հարվածներից և ցնցումներից խուսափել, բալոնները տեղափոխել ձեռքերով կամ պատգարակներով։

Աշխատանքները հեշտացնելու համար անհրաժեշտ է շենքն ոդահանելու ամեն տեսակի միջոցներ կիրառելով հրդեհի գոտու թունավոր նյութերի խտացումը պակասեցնել։ Նկատի ունենալով, վոր թունավոր զոլորշիներ և գազեր արտադրող վորոշ նյութեր ջրով չեն հանգչում, ուստի հրդեհաշիջման դեկավարը պետք է պատրաստի ունենա փրփուրի, չոր փոշանյութերի և քիմիական հրդեհաշիջման այլ միջոցների հատուկ պաշար։

Ծուխը մեկնելու համար հավաքվելիս, անհրաժեշտ է գործածության մեջ յեղած ամբողջ գործիքներն ու մարքն ըստ հնարավորին տաք ջրով լավ լվանալ, առանց նաև շտապելու բացառության, և միմիայն դրանից հետո ամբողջ ինվենտարը դնել մեքենայի վրա։

8. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ՝ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հրդեհների ժամանակ, անկախ վառվող ոբյեկտի դերից, հրդեհաշեջ խմբերը շատ հաճախ գործ են ունենում ելեկտ-

բացանցերի և ելեկտրաձարքերի հետ։ Այդպիսի դեպքերում մեխանիկական հարվածների, առանձին կառուցվածքների փլուզումների և ջրացայտերի գործողության հետևանքով կարող են դժբախտ պատահարներ լինել։

Հրդեհաշեջ խմբերի աշխատանքի անվտանգությունն ապահովող ամենաառաջնահաղ մեթոդներից մեկը հրդեհի շրջանում ելեկտրալարերի հոսանքի ընդհատումն է։ Ելեկտրական գծերը, որպես կանոն, պետք է անջատի միմիայն վառվող օբյեկտի տեխնիկական կազմը և միմիայն վերջինիս բացակայության դեպքում՝ հրդեհաշեջ խումբը։ Ելեկտրաձարքավորումն անջատելու անհրաժեշտության դեպքում անջատումը կատարում են հատիչով։ Անջատիչ հարմարանք չլինելու դեպքում անհրաժեշտ է հեռացնել ապահովիչները, հետևելով, որ անջատումը կատարվի բոլոր հաղորդիչներում (այսինքն յերեքֆազանի հոսանքի գոյության դեպքում՝ բոլոր յերեք ֆազերի վրա)։

Անջատիչ հարմարանքը գտնելը դժվար կամ անհնարին լինելու դեպքում հոսանքն անջատելու միջոցներից մեկը հողանցումն է։ Այդ դեպքում պետք է հոսանքատար հաղորդիչը միացնել հուսալի կերպով հողանցված վորևե առարկայի (որինակ, ջրատար խողովակի), նախազգուշացման միջոցներ ձեռք առնելով, վորովհետև հողանցման պրոցեսի ժամանակ կարող է ելեկտրական կայծ առաջանալ։ Այդ միջոցը հիմնված է այն բանի վրա, վոր հողանցման մոմենտին հողանցվող հաղորդիչը պաշտպանող ապահովիչները վառվում են և դրանով տեղամասի ելեկտրական հոսանքն ընդհատվում է։ Այդպես էլ կարելի յե կատարել արհեստական կարճ միացում։ Սակայն այս յերկու միջոցն էլ պետք է կիրառել միմիայն ամենածայրահեղ դեպքում։

Բայց հաղորդման գոյության դեպքում կարելի յե հոսանքն անջատել հաղորդիչները կարելով։ Այդ ոպերացիան պետք է կատարել այնպես, վոր կարելը տեղի ունենա մոտ ցող կետին անմիջապես մոտիկ, իսկ յուրաքանչյուր հաղորդիչ՝ կարվի առանձին, սկսած ցածից վերև։ Այս ձևով կարված և ընկած հաղորդիչները հոսանքազուրկ են լինում։

Ելեկտրական հոսանքն անջատելիս աշխատանքների անվտանգության համար անհրաժեշտ է լուսավորությունը թողնել, ուստի և հոսանքն անջատել այն տեղամասերում, վորտեղ ելեկտրական հոսանքից զրկվելու իսկական վտանգ կա։

Վորոշ դեպքերում կիրառում են խողովակների մեջ դրված ելեկտրահաղորդիչ (կաուչուկե, բերգմանի կամ պողպատե), սվաղի տակով անցկացրած։ Այսպիսի կառուցվածքի դեպքում ջուրը կարող է թափանցել խողովակների մեջ, կարող են հաղորդիչների մեկուսիչները խափանվել, կառուցվածքները քանդելիս գծերը պատահաբար զրկվել և խողովակների թափանցը հոսանքատար յերակների հետ միանալ։ Այդ պատճառով կառուցվածքները քանդելիս անհրաժեշտ է զգուշություն պահպանել։ Խողովակները չպետք է խիստ կոտրել, վորովհետև դրանով կարելի յե ելեկտրական հոսանքից վնասվել։

Հոսանքատար ցանցերն ու սարքերն անջատելու համար պետք է ունենալ տեխնիկական հատուկ պինում։ Վերջինիս են պատկանում ռեզինե մեկուսիչ գորգերը, ձեռնոցները, բոտինները կամ կրկնակոշիկները և կարող հատուկ գործիքները։ Հրդեհաշեջ պահպանության տարաբաժանման կազմում պետք է լինի ելեկտրացանցերն ու ելեկտրասարքերն ապահովող պատրաստված անձնավորություն։

Ջրացայտեր գործադրելու անհրաժեշտության դեպքում պետք է վոչ թե խիտ, այլ փոշիացած ջրացայտեր կիրառել, փոշիացած ջրացայտերի հաղորդունակությունն գգալիորեն ավելի թույլ է, քան խիտ ջրացայտերինը։

Հատուկ ելեկտրամեքենաների (գեներատորների, մոտորների և այլն) հրդեհների ժամանակ պետք է կիրառել վոչ ելեկտրահաղորդիչ կրակմարիչների բոլոր տեսակները (չոր, ածխաթթվային). փրփրացայտ կրակմարիչներով և ջրով ոգտվել կարելի յե այն դեպքում միայն, յեթե հոսանքն վատացած են, վոր տվյալ ելեկտրամեքենայի հոսանքն

անջատված է։ Նույնպես չի կարելի ելեկտրաժոտորները և գեներատորները հանգցնել ավազով, քանի դեռ մոտորի կամ գեներատորի շարժումն ամբողջովին չի դադարեցվել, վորովհետև մեքենայի շփվող մասերի արանքն ընկնող ավազը կարող է նրան լուրջ վնասել։

Տրանսֆորմատորների, յուղանոցների և այլ հարմարանքների հրդեհների ժամանակ պետք է նկատի ունենալ պայթյունի հնարավորությունը և միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ուղիղ պայթման ալիքը անձնական կազմին չընկնի։ Իբրև նախազգուշացման միջոց հանձնարարվում է անձնական կազմը տրանսֆորմատորների պայթման կամ բայի ուղղությամբ չկենտրոնացնել։ Պետք է նույնպես նկատի ունենալ փլչելու հնարավորությունը, յեթե կրակ չդիպած յուղատարքերի պայթյուն տեղի ունենա. դրանից կարող է սարքերից յուղը հոսել և բոցավառվել. յուղը հանգցնելու համար անհրաժեշտ է պատրաստի փրփրասարքեր։ Յուղի համար թողիչ անցք լինելու դեպքում պետք է միջոցներ ձեռք առնել ընդհատելու կրակի տարածվելը դեպի յուղի հավաքատեղը։

Չափազանց վտանգավոր են ակումուլյատորային սարքերի հրդեհները, վորովհետև ակումուլյատորները լցնելու ժամանակ դուրս յեկող ջրածինն ուժի թթվածնի հետ կարող է շառաչող խառնուրդ առաջացնել։

Ակումուլյատորային սարքերի վերնի շենքերի հրդեհի ժամանակ ջրացայտերով աշխատելիս պետք է մաքսիմալ զգուշություն յերևան բերել, պետք է ակումուլյատորային ոգափոխությունն ուժեղացնել, լիցքը դադարեցնել և անցնել մարտկոցների դատարկման պրոցեսին։

Արդյունաբերական շենքերում տեղի ունեցած հրդեհները հանգցնելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել փողոցի ծորակներին նման շարժական սարքերին հոսանք ավող հաղորդիչների վրա, վորովհետև նրանց ելեկտրահաղորդիչները կոնտակտային հաղորդիչների նման բաց են։

Այսպիսով ելեկտրացանցերի և ելեկտրասարքերի գոյության դեպքում հրդեհաշեջ խմբերի աշխատանքի հիմնական կանոնները հետևյալներն են.

1. Հրդեհի հետախուզությունը պետք է կատարել տեխնիկական անձնակազմի հետ մշտական կապ պահպանելով։

2. Հրդեհաշիջման աշխատանքը պետք է կատարել այն լիակատար վստահությամբ, վոր վառվող շենքում գտնվող ելեկտրասարքերի հոսանքն իրոք անջատված է։

3. Աշխատանքի համար միանակալ տեղերի վերաբերյալ բոլոր ցուցումները պետք է ուշադրության առնել՝ անդամ կատարված անջատումներից հետո։

4. Աշխատանքի համար վտանգավոր շենքերը մտնելիս անհրաժեշտ է ամբողջ հանդերձումը (սաղավարտը, փրկող գոտին և այլն) հանել. պետք է հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի գործիքների վրա, ինչպիսին են՝ լինգերը, ճանկաձողերը և այլն, վորոնք աշխատելիս կարող են դիպչել հոսանքի տակ յեղած սարքերին։

5. Չի կարելի տրանսֆորմատորների և նման սարքերի շենքերն ավելորդ թվով մարդիկ տանել։

6. Ելեկտրասարքերի հրդեհի լիկվիդացիայի ժամանակ անհրաժեշտ է մաքսիմալ չափով ոգտագործել հրդեհաշիջման սկզբնական միջոցները, ջրացայտեր գործադրելով միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այն էլ փոշիացրած և վոչ թե խտացրած ցայտերով։

7. Կատուցվածքները քանդելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ելեկտրացանցերն ու ելեկտրասարքերը մեխանիկական վնասվելուց պաշտպանելու վրա։

V. ՄԱՐՏԿԱՆ ԸՆԹԱՑՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ԶԵՆՔԻ ՀՐԴԵՀԻ ՏԵՂԻ ՀԵՏ

1. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՆԿՈՒՂՈՒՄ

Նկուղային շենքերի հիմնական դերն է զանազան տեսակի վառելիքներ (փայտ, ածուխ և տորֆ) պահել։ Սակայն շատ հաճախ նկուղային շենքերն ոգտագործում են իբրև բնա-

կատեղ, արհեստանոց, իսկ տաքացման կենտրոնական սիստեմներով տարբերված շենքերում կաթսայանոց։ Արտադրության մեջ նկուղային շենքերը շատ դեպքերում ոչ տագործում են հումքի, կիսաֆաբրիկատների և պատրաստի արտադրանքի պահպանության համար։

Սակայն դրա հետ միասին գործնականում կարելի է հանդիպել այնպիսի դեպքերի, որ նկուղներն ոչ տագործվում են անհամապատասխան նպատակների։ Այսպես օրինակ, հազվադեպ չեն այնպիսի դեպքեր, երբ նկուղներում տրանսֆորմատորներ են դնում և պահում են դյուրավառ հեղուկներ, թունավոր նյութեր, խտացված գազերով բալոններ և այլն, որոնք նկուղային շենքերում հրդեհը հանգցնելու վտանգն զգալիորեն մեծացնում են։

Նկուղներում հրդեհներ առաջանալիս սովորաբար գործ են ունենում անուշադրության մատնված հրդեհների հետ, որը բացատրվում է այնտեղ մշտապես մարդկանց բացակայությամբ։ Այդտեղի հրդեհը սովորաբար նկատվում է այն ժամանակ, երբ նկուղի պատուհանից սկսում է ծուխ դուրս գալ կամ երբ սանդխավանդակը ծխով լցվում է։ Ցերկու դեպքում էլ հարկ է լինում գործ ունենալ ուժգին զարգացող հրդեհի հետ։

Նկուղային շենքերում ծագած հրդեհի ամենախոցելի տեղն այն է, երբ նկուղները միացած են բնակության և արտադրության շենքերի սանդխավանդակներին։ Այդ դեպքում սանդխավանդակները կարծեք թե հանդիսանում են մի տեսակի ձգող շախտա։ Այդ պատճառով նկուղում ծագած հրդեհը հանգցնող ղեկավարը հրդեհի վայրը հասնելիս պետք է նկատի ունենա, որ վերևի հարկերի շենքերից տեղի ունեցող բացահանման հիմնական ճանապարհը կարող է ծխով լցված լինել։

Նկուղի հրդեհի ժամանակ առատորեն ծուխ դուրսանալուն նպաստում է դռների և պատուհանների փոքրությունը, որը թարմ ոդի ներս հոսելուն արգելք է հանդիսանում։ Դրա հետևանքով տեղի է ունենում մոչ լիակատար վառում, որի հետևանքով առաջանում է ածխածնի ոքսիդ, որն անձնական կազմի կյանքի համար վտանգավոր է։

Նկուղների հրդեհը հանգցնելը բարդանում է պատուհանների վանդակներով, որոնք հնարավորություն չեն տալիս պատուհաններից ոգտվելու, իբրև հետախուզության և հարձակման ճանապարհների։ Այդ պատճառով հարկադրված են լինում ոգտվելու մշտական դռներով նույնիսկ այն դեպքերում, երբ հրդեհի ծագման տեղը դռնից բավականին հեռու է, կամ թե զբաղվել վանդակները քանդելու բարդ աշխատանքով։ Վանդակները սովորաբար հանում են ընդային դործիքների ոգնությամբ, սակայն վանդակները հանելու ամենակատարելագործված միջոցը ավտոգեն-կարիչ ապարատներն են, որոնցով նպատակահարմար է հրդեհաշեջ խմբերը զինել։

Նկուղում ծագած հրդեհի առաջին մոմենտներին, շնորհիվ այնտեղ յեղած ոդի թերվածնի պաշարի, այդ հրդեհը խիստ ուժգին կերպով զարգանում է։ Այնուհետև հրդեհի զարգացումը դանդաղում է թափանցող թարմ ոդի հետ ուղղակի կախման մեջ։

Նկուղի վրայի ծածկը վառվելու դեպքում կրակը կարող է անցնել նաև շենքի առաջին հարկը։ Սակայն հրածածկի դեպքում հնարավոր է նույնպես, որ հրդեհն անցնի առաջին հարկը, յերթե նկուղի ծածկի միջով կոյուղու կամ ջրմուղի խողովակներ կամ ոդափոխության կանալներ են անցնում։

Հրդեհը հորիզոնական ուղղությամբ խիստ ուժգին կերպով է ծավալվում։ Դրան նպաստում է կրակը վառունակ նյութին անցնելու հնարավորությունը և բրանդմաուերների բացակայությունը։

Նկուղում հրդեհը հանգցնելու ամենաբնորոշ առանձնահատկությունը կողմնորոշման դժվարությունն է։ Այդտեղ հարկադրված են աշխատելու մութ և ծխով լցված դռների մեջ։ Այդ դժվարությունները պետք է հաղթահարեն թե հետախուզության կատարողները, և թե գրոհախմբում աշխատողները։

խաոդները։ Բացի դրանից, նկուղում անխուսափելիորեն մեծ քանակությամբ ծուխ է կուտակվում, որը հաճախ անհրաժեշտություն է առաջ բերում ջրապաշտպան ծառայության ողնությանը դիմելու։ Սակայն և այնպիսի դեպքեր են լինում, երբ պարագան անհրաժեշտ է համարում նկուղը ջրով լցնել, որպեսզի հրդեհը հանգչի։ Այս կարող է տեղի ունենալ, որինակ, այն ժամանակ, երբ նկուղում շատ վառելանյութ կա, և փողակավորների համար աշխատելու հարմար դիրքեր չկան։

Նկատի ունենալով, որ նկուղի հրդեհը հանգցնելու ոպերացիային խոչընդոտ հանդիսացող գլխավոր գործոնը սաստիկ ծուխն է, անհրաժեշտ է առաջին հերթին միջոցներ ձեռք առնել ծուխը դատարկել նկուղի և սանդխավանդակի պատուհանները բացելով կամ ծխաուեֆուլյորը դործածելով։ Սակայն չպետք է ամեն անգամ ծուխը դատարկել։ Յերբեմն կարելի չէ ծուխն ոգտագործել իբրև հրդեհաշիջման միջոց։ Յեթե հրդեհի վայրը հատած ստորաբաժանումն ունի ածխաթթվային սարք, պետք է նկուղի մեջ ածխաթթու լցնել, որը ծխի հետ միասին կարող է արագորեն կրակը հանգցնող գործողություն առաջ բերել։

Նկուղի հրդեհը հանգցնելու համար կարելի չէ ածխաթթու գործածել նաև սաստիկ ծուխ չլինելու դեպքում։ Ինչպես մոսկովյան կարմրագրող հրդեհաշեջ պահպանության փորձը ցույց է տվել, նկուղի հրդեհը հանգցնելու այդ միջոցն ամենաարդյունավետ միջոցներից մեկն է։

Նկուղի հրդեհը հանգցնելու մեջ անմիջապես աշխատողներն անպայման պետք է ունենան հակածխային գործիքներ։ Լավագույն պաշտպանող գործիքները պետք է համարել ԿԻՊ կամ ՌԿՈ տիպի գործիքները և «կենիգ» տիպի մեկուսիչ գործիքը։

Նկուղի հրդեհը հանգցնելու ոպերացիայի հաջողությունը կախված է հրդեհաշիջման ղեկավարի որամադրության տակ յեղած ուժերի ճիշտ բաշխումից։ Նկատի առնելով, որ ներկայումս մեկուսիչ գործիքների մատակարարումը դեռևս լայն չափեր չի ընդունել և նրանք կարող են բոլոր աշխատողներին չհավասարացնել, հրդեհաշիջման ղեկավարը պետք է դրոհախմբի մարտիկներին բաժանի ողակներին, որպեսզի կարելի լինի կրակի և ծխի վոլորտում անմիջապես աշխատողներին հաճախակի փոխել։

Այն դեպքում, յերբ հնարավոր չե նկուղի մեջ մբռնել, իսկ հրդեհը շարունակում է զարգանալ, պետք է առաջին հարկի հատակը բացել՝ այնտեղից, վորտեղ ամենից շատ է տաքացել։ Նպատակահարմար է հատակը բացել նաև այն դեպքերում, յերբ ծուխն աշխատելուն խանգարում է և նրան մի այլ միջոցով հեռացնել չի կարելի։ Հատակը բացելուց առաջ աշխատանքների տեղին պետք է փողակատալ, իսկ առաջին հարկի պատուհանները պետք է պատրաստել բացելու, որպեսզի հանկարծակի ծուխ լցվելու հետևանքով աշխատողները հարկադրված չլինեն նահանջելու։

Ծուխը նկուղից բաց թողնելու ժամանակ հատակի բացման մոմենտը պետք է անմիջապես հաշվի առնեն բոլոր փողակավորները, վորոնք պետք է իսկույն հարձակման անցնեն, վորովհետև ծուխն իր համար յելք գտնելով ներս է խուժում առաջին հարկը և դրանով նկուղի մեջի ծխի խտությունն զգալիորեն պակասում է։

Հրդեհաշիջման ղեկավարի համար պակաս կարևոր խնդիր չե նաև հրդեհաշիջման ժամանակ անձնական կազմի անվտանգությունն ապահովող այլ պայմաններ ստեղծելու խնդիրը։ Որինակ, կաթսաների շուրջն բաց թողնել, յեթե հրդեհը տեղի յե ունեցել կաթսայանոցում կամ նրան կից շենքում. հոսանքն անջատելու համար մոնտյորները կանչել, յեթե վառվող նկուղում տրանսֆորմատոր է դրված, նկուղային շենքից ժամանակին դուրս հանել դյուրավառ հեղուկները, խտացված գազերով բալոնները, զանազան քիմիական նյութերը և այլն, նկուղում և նրան կից տեղամասերում լավ լուսավորություն կազմակերպել, յեթե դրա անհրաժեշտությունն զգացվում է և այլն։

2. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՀԱՐԿԵՐՈՒՄ

Շենքերի հարկերը հիմնականում ոգտագործվում են իբրև բնակութեան շենքեր։ Սակայն առաջին և յերկրորդ հարկերը շատ հաճախ հատկացնում են խանութների, արհեստանոցների և հիմնարկութիւնների։ Շենքերի դերի համեմատ՝ նրանց հրդեհային վտանգը լինում է տարբեր։ Այսպես, որինակ, դյուրավառ հեղուկների և վորսորդական պատկանելիքների խանութները, դեղատները, պիրոտեխնիկական խանութները և այլն հրդեհային վտանգն զգալիորեն մեծացնում են՝ հրդեհի ժամանակ վտանգ սպառնալով թէ հարևան և թէ իրենցից վերև գտնվող շենքերին։

Շենքերի զանազան հարկերի հրդեհը հանգցնելն ունի իր սպեցիֆիկ առանձնահատկութիւնը։

Առաջին հարկերում տեղի ունեցած հրդեհները հանգցնելը տակտիկական տեսակետից մեծ դժվարութիւններ չի առաջացնում։ Այդ դեպքում հարձակման համար մեծ քանակութեամբ հարմար ճանապարհներ կան, վորովհետև յուրաքանչյուր պատուհան կարելի է այդ նպատակի համար ոգտագործել։ Այդ դեպքում լուրջ դժվարութիւններ չի ներկայացնում նաև մարդկանց փրկելու և գույքը բացահանելու գործը։

Սկսած յերկրորդ հարկից յեվ վերեվ, հրդեհաշիջման ոպերացիայի ժամանակ անհրաժեշտ է մի շարք դեպքերում հրդեհաշէջ սանդուխքները կիրառել։ Սակայն, յերկրորդ, յերրորդ հարկերում տեղի ունեցած հրդեհները ևս զգալի բարդութիւն չեն ներկայացնում, վորովհետև այդ հարկերը մարտնելու համար, բացի ներքին սանդուխքներից, կարելի է ոգտագործել դուրսքաշովի յերեքծնկանի սանդուխքներ։

Սկսած չորրորդ հարկից պետք է գործածել կամ մեխանիկական սանդուխքներ, վորոնք հրդեհաշէջների գործողութիւնները կաշկանդում են, վորովհետև այդպիսի սանդուխքների քանակը չափազանց սահմանափակ է, կամ թէ պետք է ոգտվել գրոհասանդուխքներով։

Անհրաժեշտ է նշել, վոր տների հրդեհի դեպքում,—մանավանդ այն տների, վորոնց բնակարանները մեկ յելք ունեն,—հաճախ մարդկանց փրկելու անհրաժեշտութիւն է առաջանում։ Այդ մեկ կողմից բացատրվում է նրանով, վոր ցածի հարկում հրդեհ լինելու դեպքում սանդխավանդակը ծխով լցված է լինում, վորի հետևանքով վերևի հարկի բնակվողների առջև յելքը փակվում է։ Մյուս կողմից մեկ յելք ունեցող բնակարանի նախասենյակում կամ խոհանոցում սկսված տվյալ բնակավայրի սպրդողների բացահայտման ճանապարհը փակում է, վորով նրանց կյանքի համար անմիջական սպառնալիք է ստեղծվում։

Հարկերում հրդեհը հանգցնելու ամենալուրջ խոչընդոտը շենքերի սաստիկ ծուխն է։ Այդ հանգամանքը հրդեհի հետախուզութիւնը դժվարացնում է, վորը պետք է կատարել վոչ միայն վառվող հարկում, այլև վառվող շենքի վերևի և ցածի հարկերում։ Այդ պատճառով սաստիկ ծխի դեպքում պետք է կիրառել հետևյալ վորոշումներից մեկն ու մեկը. հետախուզութիւն կատարել մեկուսիչ գործիքներով կամ նախ վառվող շենքից ծուխը բաց թողնել։

Մեկուսիչ գործիքներ լինելու դեպքում հետախուզութիւնն ու ծուխը բաց թողնելը դժվարութիւն չեն ներկայացնում։ Մեկուսիչ գործիքներ չլինելու դեպքում ծուխը բաց թողնելը խմբի անձնական կազմից տուկունութիւն և յեռանդ է պահանջում։ Այդ աշխատանքը դրսի կողմից կատարվում է հրդեհաշէջ սանդուխքների ոգնութեամբ, իսկ ներսի կողմից՝ ներսի սանդուխքներով բնակարանը մրաներսով։

Հրդեհաշէջ սանդուխքների վրայից պատուհանները բացելիս անհրաժեշտ է հաշվի առնել ծխի պայթյունաձև բռնացավառման հնարավորութիւնը, վորը միացած է բռնի դուրս շպրտելու հետ։ Պետք է նույնպես հաշվի առնել, վոր պատուհանները բացելիս ստեղծվում է ուղի թարմ հոսանք դեպի շենքը և դրանով վառումը սաստկանում է։ Այդ պատճառով ծուխը բաց թողնելու աշխատանքի համար

հատկացված մարտիկների խմբին անհրաժեշտ և նախապես փողակով ապահովել։

Ցեթե հրդեհաշեջ պահպանության զինման համար կա հատուկ զազա-ծխա-պաշտպան ծառայություն, սաստիկ ծխի դեպքում անպայման հարկավոր է առաջին հերթին նրան ոգտագործել։

Շենքի հարկերում սկսված յուրաքանչյուր հրդեհ թե ուղղաձիգ և թե հորիզոնական ուղղությամբ զարգանալու համար բոլոր բարենպաստ պայմաններն ունի։ Սնամեջ միջնորմները, ոդափոխիչ կանալները, ներքին հաղորդակցության սանդուխքները, կենտրոնական տաքացման խողովակների անցքերը, ջրմուղային և կոյուղու խողովակները նպաստում են կրակին ուղղաձիգ ուղղությամբ անցնելու։ Կրակը հորիզոնական ուղղությամբ ծավալվել կարող է դռների խոռոչների, վառված միջնորմների, միջհարկային ծածկերի միջով, ոդափոխության կանալներով և կենտրոնական տաքացման խողովակների անցքերով։

Դրա հետ միասին չպետք է մոռանալ բոցը պատուհաններից դուրս քցելիս կրակը վերևի հարկերն անցնելու, իսկ վերևի հարկերում տեղի ունեցած հրդեհների ժամանակ կրակը շենքերի քիվերին և այնուհետև չերդակի շենքերին անցնելու հնարավորության մասին։ Հրդեհաշիջման ղեկավարը պետք է այս հանգամանքը հաշվի առնի, ուստի վերևի հարկերում կամ չերդակում պետք է մարտիկների հերթապահություն սահմանել։

Հարկերում հրդեհը հանգցնելիս ամենամեծ վտանգը ներկայացնում է կրակն ուղղաձիգ ուղղությամբ — ոդափոխության կանալներով կամ սնամեջ միջնորմներով ծավալվելու հնարավորությունը։ Այդ պատճառով հրդեհաշիջման ղեկավարը, հետախուզության միջոցով ոդափոխության սարքի և սնամեջ միջնորմների դույնությունը պարզելուց հետո պետք է միջոցներ ձեռք առնի անհրաժեշտ տեղերում ոդափոխության կանալները կամ միջնորմներն արագորեն

քանդելու, վորպեսզի ընդհատում առաջացնի և թույլ չտա կրակը վերևի հարկերն անցնելու։

Հրդեհաշիջման ղեկավարը հրդեհի զարգացման ճանապարհները պարզելիս պարտավոր է փողակներով նրանց պաշտպանել և միաժամանակ քանդող գործիքներով աշխատողներին ցույց տալ ճիշտ առաջադրություններ և դիրքեր։ Հարկերում ծագած հրդեհների ժամանակ քանդող գործիքներով կատարվող աշխատանքը հիմնականում կայանում է ոդափոխության կանալներն ու միջնորմները քանդելու և հատակն ու առաստաղը բացելու մեջ։ Քանդող գործիքներով աշխատող մարտիկների յուրաքանչյուր առաջխաղացում, իբրև կանոն, պետք է պաշտպանվի փողակավորների կողմից և, ընդհակառակը, փողակավորների առաջխաղացումը՝ քանդող գործիքներով զինված մարտիկների կողմից։

Շենքում ծագած հրդեհը հանգցնելու հաջող ոպերացիայի համար պետք է հրդեհը բաժանել մարտական տեղամասերի, օրինակ՝ 1-ին տեղամասը այն հարկը, վորտեղ հրդեհը ծագել է, 2-րդ տեղամասը վառվող շենքի վերևի հարկը, 3-րդ տեղամասը վառվող շենքի տակի հարկը։

Հարկերի հրդեհները հանգցնելիս ղեկավարը պետք է բոլոր միջոցները ձեռք առնի, վորպեսզի ջրի գործողությունները և կառուցվածքների քանդումներն ավելորդ վնասներ չպատճառեն։ Պետք է ջրով ցածի հարկերը և նրանց միջի դույքը քայքայվելուց պաշտպանել, իսկ կառուցվածքները պետք է քանդել անհրաժեշտ չափով և բան հնարավորին առանց չարդվածքների։

Ցածի հարկերը ջրով լցնելու տեղը թրջվում են սովորաբար հրդեհաշեջ խմբերի սխալ աշխատանքի հետևանքով, վորոնք փողակներն ուղղում են վոչ թե կրակին, այլ ծխին. վոչնչով չհիմնավորված քանակով փողակներ են գործադրում. չեն կարողանում հաշվի առնել փողակները դուրս հանելու մոմենտը. ներսի հրդեհները հանգցնելիս գործ են ածում ամենամեծ տրամագծի շլանգներ. ժամանակին փոքր

տրամագծի շանդների կամ հիդրոսուլտի ոգտագործման չեն անցնում։

Հրդեհաշեջ խմբերի աշխատանքի այս հիմնական թերության վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել, որովհետև սակավ չեն այն դեպքերը, երբ ջրի պատճառած վնասները կրակի վնասից բազմիցս գերազանցում են։ Պետք է ավելի վճռական կերպով գործնականում փակվող ծորակներով փողակներ և ջրասրսկիչներ կիրառել։ Շենքի ներսում, մանավանդ բնակության շենքերում հրդեհը հանգցնելիս դրանց կիրառումը պետք է համարել պարտադիր։

Հարկերի հրդեհաշիջման, մանավանդ վառված կառուցվածքները քանդելու պրոցեսների ժամանակ պահանջվում է աշխատանքների տեղը լուսավորել։ Լույսի բացակայությունը ոչ միայն դժվարացնում է հրդեհաշիջման պրոցեսը, այլև կարող է մարտիկներին դժվարություններ պատճառել։ Այդ պատճառով հրդեհաշիջման ղեկավարի խնդրի մեջ է մտնում աշխատանքների տեղերն ապահովել լույսի ուժեղ աղբյուրներով ոչ միայն գիշերվա պայմաններում, այլև ցերեկը։

3. ՄԻՋՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԾԿԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Միջհարկային ծածկերի հրդեհների ծավալվելուն նպաստում են նրանց մեջ յեղած ոդային կանալները։ Գանվելով փակ սահմաններում, կրակը, բնականաբար, իր զարգացման համար հետագա ճանապարհներ է՝ վորոնում և այդ ճանապարհները գտնում է մնամեջ միջնորմների միացման տեղերում։ Այդ հանգամանքը հրդեհաշիջման պրոցեսում չպետք է աչքաթող անել, վորովհետև հրդեհի ծավալման ծածուկ ճանապարհներն ամենից վտանգավոր են։

Շատ հաճախ կրակի ծավալման համար ճանապարհներ են ծառայում միջհարկային ծածկերի մեջ պատրաստված դռնակները, վերևան մեքենաների շախտերը, ուղղաձիգ կոնվեյերների և տրանսպորտյորների անցքատեղերը և ելեկտրահաղորդիչների ու զանազան խողովակների անցկացման տեղերը։ Այս ամենը հրդեհաշիջման ղեկավարը պետք է հաշվի առնի, վորպեսզի հրդեհի մեկուսացման ժամանակ հնարավոր լինի համապատասխան միջոցներ ձեռք առնելու։

Հաճախ հարկերի հրդեհի ժամանակ կրակը միջհարկային ծածկերին անցնում է ավազը շիկանալու հետևանքով, վորից առաստաղի կավարն ու յենթակաերը վառվում են։

Միջհարկային ծածկերի հրդեհի զարգացման մեջ զգալի դեր կարող է խաղալ տորֆից, թեփից և այլ վառելանյութերից բաղկացած ծեփը։ Այդ նյութերը լավ չորացած լինելով կրակի համար բարենպաստ մնալով են հանդիսանում և նպաստում են նրա սաստիկ զարգանալուն։

Արդյունաբերական ձեռնարկություններում, մանավանդ արհեստանոցներում, վորտեղ հաստոցների մասերը լվանում են նավթով և առատորեն յուղում են, հրդեհը չափազանց արագ կերպով ծավալվում է, հատակի վրաքաշով, վորը դյուրավառ հեղուկներով ու վառելանյութերով ծծված է։

Միջհարկային ծածկերի հրդեհի ժամանակ հետախուզություն կատարելը զգալի դժվարությունների հետ է կապված. յեթե շատ սաստիկ ծուխ է, հետախուզությունը պետք է կատարել մեկուսիչ դործիքներով, վորը յերբեմն կողմնորոշումն իջեցնում է. շենքերը ծխով պատած լինելը և հատակի վերևը բոց չլինելը դժվարացնում են վորոշել հրդեհի տեղը. հրդեհի ծավալման ծածուկ ճանապարհները հնարավորություն չեն տալիս վորոշելու նրա զարգացման հիմնական ուղղությունը և այլն։ Այդ պատճառով հետախուզության ժամանակ հարկադրված են լինում պարագան պարզելու համար ոգտագործել բոլոր հնարավորությունները. հարցուփորձը, անմիջական զննումը, տաքացած մակերևույթները շոշափելը և այլն։

Միջհարկային ծածկերի հրդեհաշիջման բնորոշ առանձնահատկություններին են վերաբերում, նախ, պահպանող մետաղե սյուները ջրով սառեցնելու անհրաժեշտությունը,

վորովհետև հակառակ պարագային, նրանց ձևափոխման դեպքում կարող են ծածկերը նստել. յերկրորդ, չպաշտպանված յերկաթե հենձանները ջրով անընդհատ սառեցնելու անհրաժեշտությունը, վորովհետև բարձր ջերմության յերկար ազդեցության տակ նրանք չեն կարող ծանրության դիմանալ, վորի հետևանքով ծածկերը մասամբ կամ ամբողջովին կքանդվեն, յերրորդ, ոդափոխության կանալների, մնամեջ պատերի և միջնորմների վիճակը մանրամասն հետազոտելու անհրաժեշտությունը, նպատակ ունենալով հայտաբերելու նրանց մեջ թափանցած կրակը և նրան հանդցնելու համապատասխան միջոցները ձեռք առնելու. չերդակում ոդափոխության հավաքական կանալներ լինելու դեպքում անհրաժեշտ է, իրրև կանոն, նրանց մշտական հսկողության համար պոստ կարգել. չորրորդ, փողակներով գործելու դժվարությունները, վորովհետև մինչև հատակը բացելը և առաստաղի շրջակարը հեռացնելը, փողակի գործողությունը ապահովել չեն: Սատիկ ծխի դեպքում ծածկերը բացելու աշխատանքը մեծ դժվարություններ են ներկայացնում, վորի համար հրդեհաշիջման ղեկավարը պետք է միջոցներ ձեռք առնի ծուխը հեռացնելու:

Հրդեհաշիջման ղեկավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի յեղած ուժերը ճիշտ բաշխելու և ոգտագործելու վրա: Միջհարկային ծածկերը բացելու աշխատանքների համար պետք է ընտրել ամենափորձված և տոկուն մարտիկների, վորոնք շինարարական կառուցվածքներում կարողանում են լավ կողմնորոշվել. նրանք պետք է բաժանվեն խմբակների և աշխատեն հերթով, վորոշ ժամանակամիջոցից հետո հանգստանալով:

Շուտով դրական արդյունք ստանալու համար հրդեհաշիջման ոպերացիան պետք է կատարել կոմբինացիոն ձևով, այսինքն հարձակումը պետք է կատարել միաժամանակ թե ցածից և թե վերևից և հատակի ու առաստաղի բացման հետ զուգընթաց: Կառուցվածքները բացելու և քանդելու աշխատանքը պետք է ապահովված լինի փոդակներով:

Հատակն ու առաստաղը բացելու աշխատանքներից առաջ հրդեհաշիջման ղեկավարը պետք է շենքի հրդեհի ծագած տեղն ամբողջովին ազատի այն գույքից, վորն աշխատանքի կատարմանը խոչընդոտ է հանդիսանում, կամ կարող է վնասվել: Գույքի բացահանումն անհրաժեշտ է՝ նույնպես վառված կառուցվածքների վրայի ծանրությունը պակասեցնելու համար, վորը վորոշ չափով նրանց փլչելուց ապահովում է:

Անձնական կազմի աշխատանքի համար անվտանգ պայմաններ ստեղծելու համար, հրդեհաշիջման ղեկավարը պետք է կառուցվածքների ավազի և վառված մասերի վրա հսկի: Անհրաժեշտության դեպքերում, յերբ ավազն ընկնելու վրա է և սպառնում, պետք է նրան իր ժամանակին թափել, իսկ վառված կառուցվածքները պետք է քանդել:

Միջհարկային ծածկերը հանդցնելու համար մեծ քանակությամբ ջուր չի պահանջվում: Տվյալ դեպքում անհրաժեշտ է կարողանալ ջրից ոգտվել՝ խստորեն համաձայնեցնելով այդ աշխատանքը ծածկերը քանդելու աշխատանքին: Հրդեհաշիջման ղեկավարը պետք է այդ հանգամանքը հաշվի առնի և միջոցներ ձեռնարկի ժամանակին անցնելու վորը տրամագծի շանգներին: Իսկ յեթե պարագան թույլ է տալիս, առհասարակ հրդեհաշիջումը պետք է կատարել հիդրոպուլտի ոգնությամբ: Հրդեհաշիջման ոպերացիան արագացնելու և մանավանդ արագ կերպով հետախուզություն կատարելու և կառուցվածքները քանդելու համար անհրաժեշտ է ոգտվել մեկուսիչ գործիքներով: Ինչպես փորձը ցույց է տվել, հրդեհաշեջ խումբը զինված լինելով մեկուսիչ գործիքներով, այդ բոլոր խնդիրները լուծում է ամենակարճ ժամանակամիջոցում և առանց հատուկ չանքերի: Լավ լուսավորությունը նույնպես նպաստում է մարտիկների աշխատանքին և դժբախտ պատահարների առաջն առնում է:

Մեծ հրդեհների ժամանակ, յերբ կրակը միջհարկային

ծածկերի մեծ տարածություն և ընդդրկել, հրդեհաշիջման դեկավարը պետք է ժամանակին հրդեհաշեջ պահպանության ծխապաշտպան, լուսարձակ և ջրապաշտպան ծառայության կանչի։

4. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՁԵՐԴԱԿՈՒՄ ՅԵՎ ՏԱՆԻՔՈՒՄ

Ձերդակաշենքերի հրդեհաշիջումը մեծ մասամբ կապված է կարան աշխատանքի հետ։ Տանիքները յերբեմն լինում են շատ դիք. տանիքապանջերի նորմալ թեքությունը, վոր 30—35°-ից չի անցնում, մի շարք դեպքերում հասնում է 45°-ի և ավելի։ Շատ դեպքերում կարանը պաշտպանողական վանդակներ չեն լինում։ Շատ հաճախ շենքերը ճարտարապետական ձևավորման յենթարկելու նպատակով ձերդակային շենքերին աշտարակների կամ դմբեթների տեսք են տալիս։ Ձերդակաշենքերը յերբեմն հնչին բարձրություն են ունենում ու սահմանափակ քանակով դռներ և իրենց տարածությամբ լինում են յերբեմն շատ մեծ։ Այդ ամենը հրդեհաշիջման ոպերատիվ գործողությունները խիստ բարդացնում են։

Ձերդակաշենքերի հրդեհները մեծ մասամբ ուշ են նկատվում, այն ժամանակ, յերբ նրանք արդեն սաստիկ զարգացած են. այս բացատրվում է նրանով, վոր այնտեղ մշտապես մարդիկ չեն լինում։ Այդպիսի հրդեհները նկատվում են միայն այն ժամանակ, յերբ քիվերով և լողական պատուհաններով ծուխը կամ կրակը դուրս են քցում։ Այդ դեպի քանակությամբ ուժեր և միջոցներ են պահանջում վոչ միայն հրդեհն անմիջապես հանգցնելու, այլև կառուցվածքները բացելու և քանդելու համար։

Ձերդակաշենքերի հրդեհները զարգանում են չափազանց արբնթաց կերպով մեծ ջերմություն առաջ բերելով։ Դրան նպաստում են մեծ քանակությամբ յեղած չոր վառունակ նյութերը (ծղեղը, կավարամածը, միջնորմները)։

Հիմնականում հրդեհը ձերդակում տարածվում է վառունակ շինարարական կառուցվածքներով հորիզոնական ուղղությամբ, վորի դեպքում վառումն այնքան ավելի ուժգին և կատարվում, վորքան չերդակի վրայի ոդի շարժումն ավելի շատ է։ Պետք է հաշվի առնել, վոր չերդակում ոդաքարշը մշտական յերևույթ է։ Այդ բացատրվում է այնտեղի լուսպական պատուհանների, ծխնելույզների մոտի տանիքի անցքերի, քիվերի միջի անցքերի գոյությամբ. բացի դրանից, չերդակաշենքերի և սանդխավանդակների միջև գոյություն ունի կապ, վորը նույնպես անմիջական շարժում է առաջացնում, այնպես վոր սանդխավանդակն այդ դեպքում կարծեք թե մի տեսակ բնական ոդափոխության շախտ է հանդիսանում։

Հրդեհաշիջման դեկավարը հրդեհի զարգացման հիմնական ճանապարհները հետախուզությամբ պարզելուց հետո պետք է իր տրամադրության տակ յեղած ուժերն ու միջոցները դասավորի այնպես, վոր կրակի շարժման առաջը կտրի և հրդեհն ամբողջովին ընդդրկի։

Նկատի ունենալով հաճախակի հանդիպող այն դեպքը, վոր հրդեհը հորիզոնական գծով ծավալվում է յերկու ուղղությամբ, հրդեհաշիջման դեկավարը պարտավոր է գրոհախումբն ուղարկել տանիքները և մարտիկներին բաշխել յերկու ուղղությամբ։ Պետք է նույնպես հատուկ խմբակ տրամադրել ներսի տանդուխքներով հաղթակվելու։

Վառվող շենքի տանիքը դրսի կողմից մարտիկների բարձրանալը և դիք լանջերով առաջ շարժվելը կապված է վորոշ դժվարությունների հետ։ Սկսած յերեք հարկանի շենքերից՝ պետք է ոդտվել մեխանիկական տանդուխքներով։ Յեթե գրոհի համար յերկու հիմնական դիրք հատատելու անհրաժեշտություն կա, տեղական պայմանների համաձայն յերբեմն պահանջվում է միաժամանակ յերկու մեխանիկական տանդուխք դնել։ Այդ դեպքում պետք է լրացուցիչ կերպով մեխանիկական տանդուխք պահանջել կամ, նայած հրդեհի մեծությանը, լրացուցիչ կերպով լրիվ կազմով 1—2 խումբ կանչել։

Տանիքում գրոհախմբակը պետք է կատարի հետևյալ

գործողություններ. 1) պետք է չերպակաշվնքից ծուխը դատարկի (տանիքը բացի), որը ներսի տանդուխքով բարձրացող խմբակին հնարավորություն կտա ակտիվ հարձակման անցնելու և 2) պետք է քանդած տանիքի միջով անցնի չերպակը, որպեսզի վոչ միայն կրակի շարժման ճանապարհը կորի, այլև հարձակման անցնի։

Վերջին խնդիրը կատարելու համար, բացի տանիքի կատարը բացելուց, որը միանգամայն բավական է ծուխը դատարկելու և չերպակում չերմաստիճանն իջեցնելու համար, պահանջվում է քիվի մոտ տանիքի մի մասը լրացուցիչ կերպով բացել, որպեսզի ճարտիկներին հնարավորություն տրվի իջնելու չերպակի մեջ։

Տանիքը բացելու անհրաժեշտությունը, տեղն ու մոտավոր մեծությունը, իբրև կանոն, պետք է մատնանշի անմիջորեն հրդեհաշիջման ղեկավարը։

Առանց փողակը պատրաստելու չի կարելի տանիքը բացել, որովհետև այդ կարող է վոչ միայն հրդեհը մեկուսացման չենթարկել, այլև նրան զարգացնել։

Տանիքը բացելուց առաջ պետք է նախապատրաստական աշխատանք կատարել։ Պետք է ռադիոկայմերը պնդացնել կամ վերցնել, հաղորդիչներն ու կաբելը անվտանգ դարձնել, խողովակների ձգանները պնդացնել կամ հեռացնել, իսկ ձմեռ ժամանակ, բացի դրանից՝ ձյունը թափել։

Յեթե շատ սաստիկ ծուխ է լցված և նա արագորեն դուրս չի գալիս, նրան հեռացնելու համար պետք է ծխառեֆուլյոր գործածել, իսկ վերջինիս բացակայության դեպքում ծխի վերտռում գործող բոլոր աշխատողներին պետք է ուժեղ մեկուսիչ գործիքներով։

Յերկաթապատ տանիքով շարժվելիս հանձնարարվում է հաշվի առնել հետևյալը։ Յեթե տանիքի մի մասը շիկացած է, տեղաշարժումը պետք է կատարել շիկացած տանիքից հեռու տեղերով առնվազն շիկացման սահմանից 2 մ-ից վոչ մոտիկ։ Յեթե տանիքի յերկաթը սևացել է և կավարամածների արանքում իջել է, կարելի չէ յենթադրել, որ վառվել է միմիայն կավարամածի շուրջը, որ յերկաթաթիթեղների միացումը դեռ բավական ամուր է և որ ծածկը կարող է մարդու ծանրությանը դեռևս դիմանալ։ Այդ դեպքում հրդեհի սահմանները կարելի չէ վորոշել տանիքի վիճակով, քանի որ յերկաթի շիկացած տեղի ներկը բշբշում է և մուգ գույն է ստանում։

Յերկաթապատ տանիքի վրա բոլոր դեպքերում ավելի անվտանգ է շարժվել ծպեղավոտի վրայով, որի ուղղությունը հեշտությամբ կարելի չէ պարզել թխկթխկացնելով Յերկաթապատ դիք տանիքալանջերով պետք է շարժվել չոքած, յեղրակոնքերից բռնելով։ Տանիքալանջերը 45°-ից ավելի թեք լինելու դեպքում անհրաժեշտ է տանիքասանդուխք գործածել, իսկ դրանց բացակայության դեպքում՝ գրոհատանդուխքներ կամ ձողատանդուխքներ։ Տանիքը բարձրանալու համար կացիններով ոգտվել կարելի չէ միմիայն բացառիկ դեպքերում, որինակ, ձմեռ ժամանակ, յերբ տանիքը սառցազրկվել է։ Պահպանող վանդակների բացակայության դեպքում սառցազրկված տանիքով տեղաշարժվելը խիստ վտանգավոր է, վորովհետև այդ ժամանակ վառքը լցված է լինում սառուցով, որի հետևանքով սայթաքողը չի կարող տանիքի վրա պահվել։

Տանիքում կամ չերպակածածկում աշխատելու և տեղաշարժվելու բոլոր դեպքերում անհրաժեշտ է անպայման պահպանել հետևյալ կանոնը՝ կատուցվածքի քանդվելուց խուսափելու համար մարդկանց մեկ կետում չկուտակել։ Մանավանդ անթույլատրելի չէ մարդկանց կուտակել յենթակաբի կամ հենճանածածկի վրա։ Ամենահուսալի տեղը հենճաններն ու ծպեղներն են, որոնց վրա և մարդկանց պետք է տեղավորել։

Հրդեհաշիջման պրոցեսի ժամանակ հրդեհաշիջման ղեկավարը չպետք է մոռանա կրակը ծածկից վերևի հարկն անցնելու հնարավորության մասին։ Այդ դեպքում նա պետք է պատրաստի ունենա շանդպահ և մարտիկների խմբակ։ Պետք է չերպակածածկի վիճակին անընդհատ հսկել։

Ցայտերը պետք է գործադրել ռացիոնալ կերպով։ Ցեխե հրդեհի սկզբում անհրաժեշտ է մեծ որամագծի փողակներ գործածել, բոցը նատեցնելուց հետո վոչ միայն այդպիսի փողակները չպետք է գործածել, այլև նրանց գործածությունը վնասակար է, վորովհետև ավելորդ թափված ամբողջ ջուրը հարկերից ծծվում է ցած։ Այդպիսի վնասը պակասեցնելու նպատակով հրդեհաշիջման դեկավարը պետք է մեծ որամագծի շլանգներն ու փողակները փոխի փոքրերով և միջոցներ ձեռք առնի թափված ջուրը հավաքելու, այդ նպատակի համար ոգտագործելով ջրապաշտպան ծառայությունը կամ իր ատորաբաժանման զինման համար յեղած գործիքները։

Վառված կառուցվածքները պետք է քանդել՝ սկսած հրդեհից ամենից քիչ վնասված մասից։ Առաջին հերթին անհրաժեշտ է հեռացնել վնասված ծածկը։ Այնուհետև պետք է պարզել ծպեղավոտքերի վիճակը և յերթե նրանք ընկնելու վտանգ են սպառնում, սկսել պարանների ոգնությամբ նրանց փլցնել, վորպեսզի աշխատողները դժբախտ պատահարներից ապահով լինեն։

Անհրաժեշտ է խիստ յուրջ ուշադրություն դարձնել քանդելու հետևանքով ստացված նյութերը տանիքից հեռացնելու վրա։ Ինչպես փորձը ցույց է տալիս, այդ հարցին պետհազմը շատ ուշադրություն չի դարձնում և հաճախակի յեն այնպիսի դեպքեր, յերբ 5—6 հարկանի շենքի բարձրությունից պոկված յերկաթաթիթեղները, կավարամածը և նույնիսկ ծպեղավոտը ցած են նետում։ Հրդեհաշիջման դեկավարը պետք է միջոցներ ձեռք առնի, վոր թույլ չտա այդպես անկարգ ձևով նյութերը ցած նետելու, դրա համար կարանը տեղ հատկացնելով, վորտեղ մարտիկները կարող են քանդած նյութը հավաքել։

Ցեխե այնուամենայնիվ հրդեհի պայմանները թույլ են տալիս վառված նյութերը տանիքից կամ չերդակից ցած նետել, այդ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. արդյոք ցածում գտնվող մարդկանց համար այդ վտանգ չի սպառնում. ցածում շենքին զուգընթաց ելևկորատաղորդիչներ չկան. ցածից որամվայի հաղորդիչների ձգանները չեն անցնում. պարզված շլանգներին, ճուղավորումներին, անդուխքներին, ավտոնասոսներին և այլն վտանգ չի սպառնում. շենքի դուրս ցցված մասեր չկան։ Նախքան նյութերը ցած նետելն անհրաժեշտ է տանիքում աշխատողների և գետնին գտնվողների միջև կապ հաստատել, նետելու տեղ ընտրել և պատրաստել, մարդկանց հեռացնել և նախազգուշացման համապատասխան միջոցներ ձեռք առնել։

Վառված կառուցվածքները քանդելու պրոցեսի ժամանակ պետք է նկատի ունենալ ծխնելույզների վիճակը. յերթե դիտողությունները հաստատել են, վոր նրանք քանդվելու վտանգի տակ են (ամբողջովին կամ մասամբ), անհրաժեշտ է անմիջապես միջոցներ ձեռք առնել հրդեհաշիջման գործում աշխատողներին դժբախտ պատահարներից ապահովելու։ Ամենից հիշտ կլինի ծխնելույզն ատաքհանաբար քանդել, նրա քանդած աղյուսները գարսելով չերդակում կամ տանիքում հրդեհից հեռու մի առանձին տեղ։ Չի կարելի ծխնելույզները շուռ տալ, վորովհետև զրանից ծածկերը կարող են քանդվել և դժբախտ պատահարներ առաջանալ։ Բացառիկ դեպքերում, յերբ հնարավոր չէ ծխնելույզները քանդել, և նա ընկնելու վտանգ է սպառնում, պետք է նրանց շուռ տալ, սակայն ծածկերի վիճակը նախապես հետազոտելով և չերդակում ու ցածի հարկում աշխատող մարդկանց անվտանգության վերաբերյալ միջոցներ ձեռնարկելով։

Տանիքում աշխատելու ժամանակ մեծ ոգնություն է ցույց տալիս հրդեհի տեղի պատշաճ լուսավորությունը, վորովհետև տեղաշարժվելիս չնչին անզգուշության դեպքում կարելի յե տանիքից ընկնել։ Լուսավորության համար գործածվող չահերը կամ ձեռքի ելևկորական լապտերները բավական չեն, վորովհետև նրանք շատ քիչ լույս են տալիս և չեն կարող տանիքի բոլոր աշխատանքներին սպասարկել։ Ավելի նպատակահարմար է ելևկորական լուսաձակներ գործածել։

5. ՄԵԾ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՇԵՆՔԻ ՎԱՌՎՈՂ ԾԱԾԿԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Ժամանակակից արդյունաբերական շենքերը յերբեմն շատ մեծ տարածություն են գրավում, ըստ որում այդպես շենքերի ծածկերը սովորաբար լինում են վառունակ և ունենում են լուսալապտերներ։ Այս պայմաններն էլ գլխավորապես ստեղծում են այդպիսի շենքերում հրդեհը հանգցնելու առանձնահատկություններ։

Արտադրական պրոցեսի բնույթի, կոնվեյերների ու տրանսպորտյորների գոյության հետևանքով, շատ դեպքերում հնարավոր չի լինում բրանդմաուերներ կառուցել, ուստի բնագծեր ստեղծելու համար,—որոնք մեկ կողմից սահմանափակում են վառվող տարածությունները, մյուս կողմից հրդեհաշեջ խմբերին հնարավորություն են տալիս հարմար յելման դիրքեր ունենալու,—այդպիսի շենքերում պատրաստվում են հրդեհի գոտիներ։

Գոտիների միջի ծածկերի մակարդակների չափերը սահմանված են համապատասխան ՈՍՏ-երով։ Վորպեսզի հրակայուն գոտին իր դերը կատարի, նրա յեզրերում պատրաստում են հատուկ կախովի պատեր, վորոնք ծածկերից ցած իջնելով գոտու հետևը գտնվող կառուցվածքների համար ծառայում են իբրև պաշտպանող միջոց այն հրդեհի բոցի գործողությունից, վորը ծագել է պաշտպանող գոտու մյուս կողմում։

Հրդեհի հետևանքով զարգացած բարձր ջերմությունը կարող է հրակայուն գոտու կառուցվածքի ամրությունը բավականին թուլացնել, այդ պատճառով գոտու տակ սովորաբար վառոդիչ հարմարանքներ են պատրաստում, վորոնց դերը կայանում է նրանում, վոր նրանք մի կողմից սահմանափակում են գոտու տակից կրակի անցնելը, իսկ մյուս կողմից գոտու կառուցվածքի վառոդումով նրա տաքանալը պակասեցնում են։

Մեծ մակարդակ ունեցող շենքերի բարձրությունը մեծ

մասամբ սահմանափակվում է 10 մ-ի սահմաններում, վորը հրդեհաշիջման պայմաններում թույլ է տալիս սանդուխքներով հեշտ կերպով մանեվրելու, վորովհետև դուրսքաշովի սանդուխքների յերկարությունը հնարավորություն է տալիս հեշտ կերպով հասնելու կորան բարձրությանը։

Մեծ տարածությամբ և վառունակ ծածկերով շենքերի հրդեհի ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալը. 1) ծածկի հիմնական մասերի, այսինքն տանիքն իրենց վրա պահող ֆերմերի վառվելը, հրդեհը տանիքի կառուցվածքներով, մանավանդ տաքացնող նյութը գարսելու ժամանակ գոյացած դատարկությունների միջով ծավալվելը, 2) ողաքարշի հետևանքով հրդեհի չափազանց արագ ծավալվելը, վորը լուսալապտերներին, նրանց միջի դռների հետևանքով և այլն, միանգամայն անխուսափելի յե։

Այդ հանգամանքները հարկադրում են հրդեհաշիջման ժամանակ ուժերը բաժանել յերկու գրոհախմբակների, վորոնցից մեկը շենքի ներսից գրոհում է կառուցվածքների վրա՝ նպատակ ունենալով կրակին հարվածել և հարևան կառուցվածքները պաշտպանել, իսկ մյուսը գործում է վերևից, այսինքն տանիքում, վորի խնդիրն է տանիքը բացելով և նրա կառուցողական տարրերի մասերը քանդելով ծածկի վառվող մասի և ընդհանուր մասսիվի միջև ընդհատումներ առաջացնելու։ Վերևի խմբակի բնական յելման դիրքը հրակայուն գոտին է։

Վորպեսզի յերկու գրոհախմբակն էլ հաջող աշխատեն, անհրաժեշտ է հետևել, վոր նրանց միջև աշխատանքի լիակատար և պատշաճ կապ լինի, վորովհետև վերևի խմբակի հաջողությունն ամբողջովին կախված է ցածինի աշխատանքի արդյունքից։

Յեվի ներսի աշխատանքի պայմաններում հարկ է լինում հանդիպել կառուցվածքների վրչելու սպառնալիքի, քանի վորում միանգամայն պարզ է, վոր թեկուզ մեկ պահող կառուցվածքի վրլուզումն առաջ կբերի նաև նոր վրլուզումներ, վորովհետև դրանով մյուս պահող կառուցվածք-

նները ծանրաբեռնվում են։ Այսպիսով ներսի խմբակի համար յելման դիրք է հանդիսանում նաև հրակայուն դռանին վերջինիս պաշտպանության տակ գործողությունների ծավալումը հանդիսանում է հենց իրեն անվտանգ և ձեռնտու դիրք։

Ցեխի ներսում գործող խմբակի խնդիրն է, ինչպես վերը նշվեց, կառուցվածքներին ցածից ջրացայտերով հարվածել։ Ուստի այդ աշխատանքի ժամանակ պետք է գործադրել սաստիկ ճնշման տակ աշխատող հզոր ջրացայտեր և նրանցով աշխատել այնպես, որ ջրացայտերը նույնիսկ առանձին տարրերի վրա ընկնելով և փշրվելով, այնուամենայնիվ ստորջ արդյունք տան, ջրելով թեկուզ մոտերքում յեղած մասերը։

Շենքի ներսում շանդագծերը պարզելու համար նրանց պետք է տանել վոչ թե պատերի արանքի կարճ ուղղություններով, այլ հիմնական ճանապարհներով, յերկայնակի կամ լայնակի դռների տակից և այդ ճանապարհներից շեղվել միմիայն այդ նշված դիրքի մոտ։ Այդ կանոնը պահպանելով մեծ ազատություն է տրվում գործող փողակներով մանեվրելու աշխատանքին և անհրաժեշտության դեպքում մարտիկների արագ նահանջը հեշտացնում է։

Պատուհաններն իրրև նահանջի յելքի ճանապարհ ոչ տազործելու հնարավորության դեպքում մարտիկներին պետք է շարել պատուհանների մոտ, ըստ որում յեղած փողակների մի մասը պետք է պահել այնպիսի ուղղությամբ, որ պատուհաններից ցայտերով գործելով փերմանների տեղին ուշադրեն, կարելի լինի ստեղծել ջրածածկոց՝ հարևան տեղամասերը պաշտպանելու համար։

Հրդեհաշիջման ժամանակ մեծ դժվարություններ են ներկայացնում փերմաների դռությունը, որոնք վառվելուց պաշտպանված են՝ նյութերով նրանց շրջակարելով։ Այդ դեպքերում անհրաժեշտություն է առաջ գալիս պաշտպանական հագուստը բացել, որովհետև կարող է կրակը ծավալվել նրա տակ։ Այդ հագուստը պետք է բացել՝ պատրաստ ունենալով տակավորը շարժական փողակներ, խակ

աշխատանքը հեշտացնելու և արագացնելու համար միաժամանակ անհրաժեշտ է վառվող փերմայի վերևի տանիքի մի մասը քանդել։ Այդ ոպերացիան բավականին վտանգավոր է և յեթե կան ավյալներ, որոնք հիմք են տալիս յենթադրելու, թե կառուցվածքները շարունակում են վառվել, այդ աշխատանքը կատարելիս պետք է նախազգուշացման մաքսիմալ միջոցներ ձեռք առնել, այն է՝ մարտիկներին շենքից հեռացնել, տանիքից նրանց իջեցնել, վառվող փերմայի և կրակ չդիպած հարևան փերմաների միջի կապը վերացնել։

Մետաղե փերմաների դռության դեպքում ցածի գրոհախմբակի խնդիրն է փերմաները սառեցնել և յենթակարերը ջրել։

Ջրացայտերը պետք է գործի դնել և առհասարակ շենքի ներսում պետք է գործողությունները ծավալել որեկուր լավ հետախուզելուց հետո, որովհետև կարող է հրդեհն այնպիսի չափեր ընդունել, որի դեպքում միակ միջոցն այն է, որ միմիայն կրակը պետք է պահել գոտիներով անջատված սահմաններում։

Հրդեհաշիջման դեկավարը պետք է նկատի ունենա, որ կրակն արագորեն մեկուսացնել կարելի յե այն դեպքում միայն, յեթե գործի դրած ուժերը մի որևե ուղղությամբ չեն կենտրոնացված, այլ, ընդհակառակը, նայած պարագային, հավասարապես բաշխվում են այնպես, որ նրանք միմյանց փոխադարձորեն պաշտպանեն։

Հրդեհաշիջման առաջին շրջանում կարելի յե հանդիպել ամբողջ շենքի սաստիկ ծխին։ Այդ ծուխը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ հրդեհի հետախուզության վորակի վրա և հրդեհաշիջման գործում դեկավարի կողմնորոշմանն արգելք հանդիսանալ։ Բացի դրանից, ծխով լցված շենքում միայն մարտիկների աշխատունակությունը և շարժունակությունը պակասեցնում է։ Այդ դեպքերում անհրաժեշտ է խափանել և յեթե մտածել ծուխը բաց թողնելու մասին, որի համար պետք է պատուհանների վերևի մասերը, լուսամատակերները, դեֆլեկտորները և այլն

բացել, ըստ վորում այդ աշխատանքը պետք է սկսել տեղում գործող փողակները լինելու դեպքում։

Պետք է նշել, վոր առաջին մոմենտներին ծուխը լապտերների միջոցով դուսարկելու վերաբերյալ փոքր ինչ չափազանցված մտավախությունն այնքան հիմնավորված չէ։ Լապտերի միջոցով առաջացող քարշի հետևանքով կրակը կենտրոնանում է մեկ տեղ, արգելելով հրդեհը դեպի կողքերը ծավալվելու։ Այդպիսի դեպքում հրդեհը փոստորեն չերդակի հրդեհի բնույթ է ստանում և շենքի միջի ծխի նոսրացումով նրա ներսի կառուցվածքների հրդեհը գրոհող խմբակի աշխատանքի պայմաններն զգալիորեն հեշտանում են։

Ինչ վերաբերում է տանիքում աշխատող խմբակի գործողություններին, նրա աշխատանքի հիմքը պետք է համարել հետևյալը։ Մարտիկներին առավելապես պետք է կենտրոնացնել գոտում այն ժամանակ, յերբ հետախուզության հետևանքները պարզված են։ Փողակները պետք է բարձրացնել ավելի ռացիոնալ կերպով, այն հաշվով, վոր մոդիստրալային գծերը սրվեն տանիքը, վորովհետև նպատակահարմար է ճյուղավորումներ հատատել կորանը, վորով փողակների մեծ շարժունակություն է ստեղծում և ուժերի ճիշտ բաշխում է կատարվում։

Ինչպես արդեն նշվեց, վերևից գործող գրոհախմբակի ոպերատիվ խնդիրը հրդեհաշիջման առաջին փափուլում հանդիսանում է լապտերները բացելու կամ տանիքը քանդելու միջոցով ծուխը բաց թողնելը։ Այնուհետև պետք է ուշադրություն դարձնել հենց տանիքի կառուցողական առանձնահատկություններին, մանավանդ վերևի ու ցածի տախտակամածների ուղղության վրա և տաքացնող նյութի վրա։

Առանձին կառուցվածքներում ընդհատումներ ստեղծելու անհրաժեշտության դեպքում պետք է ամեն կերպ գործածել կարող և առավելապես մեքենացված գործիքներ։

Տանիքում գործող խմբակի համար պահանջվում է մաքսիմալ շարժունակություն, վորը ըղխում է մեծ մակերեսները թաղող կայծերից և ածխակտորներից պաշտպանելու անհրաժեշտությունից, ինչպես նաև լապտերները պաշտպանելու համար, վորոնք վորոշ դեպքերում, մանավանդ սաստիկ քամի լինելիս կարող են ընկնել բոցի գործողության վոլորտի մեջ և կրակը հաղորդել նույնիսկ պաշտպանված գոտու կողքից անցնելով։

Բացի անմիջապես գործող աստորաբաժանումներից, հրդեհաշիջման ղեկավարը պետք է անպայման ունենա չափազանց շարժունակ ոպերատիվ ռեզերվ, վորի հիմնական խնդիրն է արագորեն հանգցնել հարևան տեղամասերի կամ շենքերի վրա ծագած առանձին հրդեհները, վորովհետև սաստիկ արագությամբ թռչող կայծերից և նույնիսկ վառվող մասերից հրդեհը կարող է մեծ չափեր ընդունել։

Աշխատանքը հաջող կատարելու համար մեծ նշանակություն ունի հրդեհի տեղի ռացիոնալ լուսավորությունը, գլխավորապես լուսարձակներով, ինչպես նաև մարտական տեղամասերի և հրդեհաշիջման ղեկավարի միջև չեզած հուսալի հեռախոսային և ռադիոկապը։

Հրդեհաշիջման հաջողության վրա ազդող գործոնը՝ հրդեհի օջախի շուրջը փողակների համահավասար բաշխումն է և փոխադարձ ոժանդակության սկզբունքի պահպանումը, այսինքն յուրաքանչյուր փողակի դիրքը հարևան փողակով պաշտպանելու հնարավորությունը, վորովհետև ծածկի մի մասը վառվելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում փողակները վայրկենապես ուժեղացնելու։

Շատ մեծ դժվարություններ են առաջ բերում կամարածածկ տախտակների հրդեհները։ Այդ դեպքերում ծածկի կառուցվածքի բարդությունից զատ պետք է հաշվի առնել նաև լանջերի խիստ թեքության հետևանքով վառվող մասերին դժվարությամբ մոտենալը։ Այդ տիպի ծածկերը սովորաբար ներկայացնում են չափազանց ընդարձակ տաբածություններ, վորոնց կամարներն ունենում են մեծ բարձրություն։ Այդպիսի կամարների ներսը մեծ մասամբ հարթ է լինում, վորի պատճառով նրանց քանդելն ու բացելը մեծ դժվարություններ է ներկայացնում։

Այդպիսի ծածկերի հրդեհի ժամանակ հիմնական դերը պետք է կատարել դրսի կողմից, ըստ վորում մարտիկներին տանիքը բարձրացնելու համար պետք է ոգտագործել մեխանիկական սանդուխքներ՝ շենքի դերանձակատների կողմից, և տանիքասանդուխքներ:

Կամարներում տախտակամածների արանքների ուղեմասերը պատրաստում են շենքերի պատերին զլխավորապես զուգահեռ, իսկ դրսի տախտակամածը պատրաստվում է տախտակների յերկու շարքից, վորոնք միմյանց նկատմամբ դրված են վորոշ անկյան տակ: Այդպիսի կառուցվածքները քանդելու համար շատ ուժեր պետք է վատնել: Այդ դեպքերում առանձին մասերը հանելու համար պետք կացնով նրանց տաշել:

Կամարների վրա աշխատելիս անհրաժեշտ է ընկնելու դեմ նախազգուշական միջոցներ ձեռք առնել, մանավորապես հանձնարարվում է պարաններ գործածել, ըստ վորում վերջիններս չպետք է իրենն կապել, այլ պետք է ձեռքում բռնել, վորը կատարում են տանիքի հարթ մասում դրված մարտիկները:

Կամարի կառուցվածքը մերկացնելիս, առանց նրա առանձին տարրերը կորելու, անհրաժեշտ է բացված մասերի տեղի հրդեհն անմիջապես հանդցնել:

Ծածկերը քանդելու անհրաժեշտության դեպքում կարող են մեծապես ոգտակար լինել ասպանդակաձև կազմված դուբաքաշովի սանդուխքները, կամ վորոշ որյեկտներում յեղած հարթակավոր շարժական սանդուխքները: Մնացածում կամարածածկ կառուցվածքների համար պետք է կիրառել նաև տակտիկական միջոցառումներ, ինչ վոր հարթ կառուցվածքների համար:

6. ՍՆԱՄԵՋ ՊԱՏԵՐԻ ՅԵՎ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Մնամեջ պատերն ու միջնորմներն իրենց կառուցվածքով նպաստում են հրդեհի տարածմանը: Շենքի ներսում սկսված հրդեհը վորոշ ժամանակից հետո (սովորի կանալով) կարող է անցնել միջնորմի փայտե մասերին և ոդային կանալներով ծավալվել թե՛ վերև և թե՛ հորիզոնական ուղղություններով—միջհարկային ծածկերի ներսը:

Մնամեջ պատերի և միջնորմների բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր նրանք հրդեհի ծավալման ծածուկ ճանապարհներ են ստեղծում և յեթե նրանց վրա ժամանակին ուշադրություն չդարձնեն, հրդեհը մեծ չափեր կընդունի և նրա մեկուսացումը չափազանց մեծ ժամանակ կպահանջի:

Այդ ամենը հրդեհաշիջման դեկավարին պարտավորեցնում է բազմակողմանի և մանրազնին հետախուզություն կատարելու: Իրրև կանոն, այդպիսի հետախուզությունը կապված է պատերի և միջնորմների մանրակի քանդման հետ: Միջնորմները պետք է քանդել սկսած մարդու բարձրությունից քիչ ցածր:

Հրդեհը շատ շուտ հանդցնելու համար փողակները պետք է ուղղել մնամեջ պատերի և միջնորմների ոդային կանալներին, վորը հնարավորություն կտա նրանց զանազան ուղղությամբ գործելու և այդ պատերի և միջնորմների ներսի կրակն արագորեն հանդցնելու:

Մնամեջ պատերի և միջնորմների հրդեհաշիջումը չի պահանջում հզոր փողակներ կիրառել: Տվյալ դեպքում փողակավորները պետք է աշխատեն մինչև կրակը հանդցնելու մոմենտը: Դրանից հետո աշխատանքը պետք է կատարել հիդրոպուլսի ոգնությամբ կամ ամենափոքր սրսկագծի փողակների ճյուղավորումով:

Յեթե պատերը կամ միջնորմները լցված են տաքացնող նյութերով (մաժուռով, ռանդվածքով, տորֆով, թեփով և այլն), քանդելու հետ միասին պետք է այդ նյութերը մաքրել, վորպեսզի հնարավոր լինի նրանց միջոցով կրակի տարածման հնարավորության առաջն առնել:

Յեթե պատը կամ միջնորմը բացելուց հետո ոդային կանալներն ընդգրկված են բոցով, ջրացայտերը պետք է

խակուն ուղղել նրանց, զործելով նրանցով առաջին հերթին ողային կանալներից վերև։

Փոքրիկ անցքի միջից փողակով դանազան ուղղությամբ զործելու համար, փողակավորը պետք է ոտքի ուժին փողակով։

Ցածի հարկում աշխատելու հետ միաժամանակ մարտիկների մի մասը պետք է գնա վերևի հարկը՝ միջնորմի ցածի մասում ընդհատումներ առաջացնելու և միջոցներ ձեռք առնելու դադարեցնելու ուղղաձիգ ուղղությամբ զարգացող հրդեհը։ Մարտիկների այդ խմբակի աշխատանքը պետք է ապահովված լինի փողակով։ Փողակավորներն իրենց աշխատանքի պրոցեսում պարտավոր են միջնորմները պահող հիմնական կառուցվածքները (որինակ, կապերը, կանգնակները, հենքը և այլն) ջրով պաշտպանել։

Ներքին հրդեհների ժամանակ, յերբ պարզված է, վոր անամեջ պատերը և միջնորմները կրակով դեռևս ընդգրկված չեն, ղեկավարը պետք է նրանց վերաբերյալ ուշադիր հրամայողություն սահմանի և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի թույլ չտալու, վոր կրակը վառվող շենքերի վերևը և ներքևը գտնվող միջնորմների մեջ անցնի։

Հրդեհի լիկվիդացիայից հետո հրդեհաշիջման ղեկավարը անամեջ պատերն ու միջնորմները պետք է անձամբ լավ քննության յենթարկի։

7. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՍԱՆԴԽԱՎԱՆԴԱԿՈՒՄ

Սանդխավանդակի կապը, մեկ կողմից, չերդակաշենքի հետ, մյուս կողմից, փողոցի (բակի) հետ, ոդի չհրմատաճանի տարբերության հետևանքով միշտ առաջ է բերում ոդի քաշ։ Շնորհիվ դրա կրակը սանդուխքի ճանապարհով ուղղաձիգ ուղղությամբ ուժգին կերպով է ծավալվում։ Միանգամայն պարզ է, վոր չերդակի հետ յեղած կապով կրակը մուտք կգործի նաև չերդակաշենքը։ Միաժամանակ կրակը բնակարանների դռների միջով հորիզոնական ուղղությամբ մուտք կգործի շենքի բոլոր հարկերը։

Նկատի ունենալով, վոր հրդեհաշիջ խմբի տեղ հասնելու մոմենտին փայտե սանդուխքի սկսված հրդեհը կարող է մեծ չափեր ընդունել, հրդեհաշիջման ղեկավարի ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի վառնդի յենթակա մարզկանց փրկության ոպերացիայի վրա։ Իրրև կանոն, նա անձամբ պետք է հետազոտի բոլոր շենքերը, լիովին համոզվելու համար, վոր նրանց մեջ վոչ վոք չի մնացել։ Միաժամանակ նա պետք է պարզի հրդեհի զարգացման ընթացքը, փողակի աշխատանքի համար դիրքեր նշելով։

Հարձակումը կրակի վրա պետք է կատարել կոմբինացված ձևով՝ փողոցի (կամ բակի) դռնից, հարկերով, բնակարանների դռներից և հրդեհաշեջ սանդուխքներից։

Հրդեհաշեջ սանդուխքները սանդխավանդակների պատուհաններին դնելիս պետք է նկատի ունենալ բոցը պատուհաններից կրակը դուրս քցելու հնարավորությունը և փողակներով ու սանդուխքներով սանդխավանդակի գլխավոր մուտքից անցնելու և մանևրելու անհրաժեշտությունը։

Նկատի ունենալով, վոր հրդեհաշիջման պրոցեսի ամենամեծ դժվարությունները ներկայացնում են սանդուխքի վերևի ճանապարհները, առաջին փողակները պետք է ուղղել հենց այնտեղ։ Փողակների այսպիսի դասավորությունն ոգտակար է նաև սանդուխքի ցածի ճանապարհների համար, վորովհետև ջուրը ցած հոսելով կնպաստի հրդեհի լիկվիդացիային։

Կրակը հանգցնելուց հետո հրդեհաշիջման ղեկավարը պարտավոր է անցնել վառված կառուցվածքները քանդելու գործի կազմակերպմանը։ Նկատի ունենալով կառուցվածքների քանդելու և փլուզումներ առաջանալու հնարավորությունը, այդ աշխատանքն անձնական կազմից մեծ զգուշություն և պահանջում։ Հրամայողն ու հրդեհաշիջման ղեկավարը պետք է զգուշացման համապատասխան միջոցներ ձեռք առնեն, որինակ՝ հիմնական տեղերի քանդումները պետք է կատարել սանդխավանդակների պատուհաններից

և քնակարանների դռների մեջով։ Վառված կառուցվածքները քանդելու համար նրանց վրայով շարժվելիս անհրաժեշտ է ոդավել նախազգուշացման պարաններով. քանդումը պետք է սկսել տանդուխքի վերևի ճանապարհներից. պետք է ունենալ լավ լուսավորություն։

8. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄՆ ՈԴԱՓՈԽԻՉ ԿԱՆԱԼՆԵՐՈՒՄ ՑԵՎ ԿԱՄԵՐՆԵՐՈՒՄ

Հրդեհաշեջ պայմաններում ոդափոխիչ սարքերի գործությունը մի գործոն է, որով հրդեհաշիջման ոպերացիան զգալիորեն բարդանում է։ Սառուկ ծխի մեջ ոդափոխության գործությունը պարզելը և այն, թե ոդափոխիչ կանալների սիստեմի մեջ կրակ մուտք գործել է թե ոչ,— չափազանց դժվարին գործ է։ Այդ պատճառով հրդեհաշիջման ղեկավարը կասկածի բոլոր դեպքերում պարտավոր է յենթադրել, որ կարող է կրակն անցնել ոդափոխիչ կանալների մեջ և միջոցներ ձեռք առնել նրանցով կրակի ծավալման առաջն առնելու։ Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ հրդեհն ոդափոխիչ սիստեմներով կարող է ծավալվել ոչ միայն ցածից վերև, այլև ընդհակառակը։

Հրդեհը ոդափոխիչ սարքերի կանալներով չափազանց արընթաց կերպով զարգանում է նրանցում յեղած թե մըզատական քարշի և թե նրանց պատերի վրա յեղած դյուրավառ հեղուկների գոլորշիների հետևանքով։ Բնակության շենքերի ոդափոխիչ կանալների միջի ոդի շարժման արագությունը սովորաբար լինում է 1մ/վայրկ.-ից ոչ ավելի. իսկ ձեռնարկությունների ոդափոխիչ սարքերինը հասնում է 16—18 մ/վայրկ.-ի։

Նկատի ունենալով, որ ոդափոխիչ կանալները հաճախ պատրաստում են փայտից և որ նրանք շենքն ուղղաձիգ և հորիզոնական ուղղություններով կտրում են, այսինքն միանում են միջհարկային և չերդակային ծածկերի ու միջնորմների հետ, հրդեհի պայմաններում ոդափոխիչ սարքերի գոյությունը հրդեհաշիջման դեկավարից պահանջում է հատուկ զգուշություն, իսկ դյխավորը, պահանջում է կարճ ժամանակամիջոցում պարզելու հրդեհի պատճառն և նրա զարգացման բոլոր հնարավոր ճանապարհները։

Տվյալ դեպքում հրդեհի հետախուզությունը լուծում է հրդեհաշիջման ոպերացիայի հաջողությունը։ Հետախուզության դանդաղումը կամ նրա կատարումը՝ առանց հաշվի առնելու ոդափոխիչ կանալներով ոդի շարժման արագությունը, կարող են հրդեհի արագ ծավալում առաջ բերել։

Հետախուզությամբ անհրաժեշտ է պարզել ոդափոխության սիստեմը, այսինքն ոդափոխությունը տեղական է, թե կենտրոնական, որովհետև ոդափոխության սիստեմի համեմատ էլ պետք է համապատասխան միջոցներ ձեռք առնել։

Յեթե. ոդափոխիչն ամբողջ շենքի համար ընդհանուր է (կենտրոնական սիստեմ), անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում վորոշել ոդափոխիչ կանալները քանդելու տեղերը, նպատակադրվելով թույլ չտալ կրակին ուղղաձիգ ուղղությամբ ծավալվելու։ Տվյալ դեպքում, ինչպես նաև քանդելու ամեն տեսակի աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է փողակները կամ հիդրոպուլսի աշխատանքի համար պատրաստ պահել։ Զգող կանալները չպետք է յերկար ջրել, որովհետև ջուրն այդ դեպքում հատարյա ամբողջովին կծախսվի իր ուղղակի նպատակին։ Հրդեհաշիջման դեկավարը այդ պետք է հաշվի առնի և ժամանակին կարգադրություն անի փոքր տրամագծի շլանգների անցնելու։

Այն բոլոր դեպքերում, յերբ պարզվում է, որ վառվող շենքում ոդափոխիչ սարքեր կան, հրդեհաշիջման դեկավարը պետք է կարգադրություն անի էլեկտրական մոտորների աշխատանքը դադարեցնելու միջոցով ոդափոխիչի գործողությունն անհապաղ դադարեցնելու։ Այդ կարգադրության կատարումը պետք է ստուգի անձամբ ինքը։ Միաժամանակ պետք է միջոցներ ձեռք առնել ոդափոխիչ կա-

նալների միջև սողնակները ծածկելու, յեթե նրանք հրդեհաշեջ խմբի տեղ հասնելուց առաջ չեն ծածկվել և պարզելու ավտոմատ յեղանակով փակվող սողնակների տեղերը, վորպեսզի կանալները քանդելիս այդ հանգամանքը հաշվի առնվի։

Այն բոլոր դեպքերում, յերբ ոդափոխիչ սարքերն ամբողջ շենքի համար ընդհանուր են, բացի ձգող կանալների ընդհատումներ առաջացնելուց անհրաժեշտ և նրանց վիճակի վերաբերյալ հսկողություն սահմանել շենքի ամբողջ բարձրությամբ (հարկ առ հարկ) և մանավանդ ուշադրություն դարձնել չերդակաշենքերի հավաքական կանալների վրա։

Չերդակի վրայի ոդափոխիչ հավաքական կանալները վառվել սկսելիս հրդեհաշիջման ղեկավարը պարտավոր է ժամանակին միջոցներ ձեռք առնելու լողական պատուհանները բացելու միջոցով չերդակաշենքից ծուխը բաց թողնելու և արագորեն հավաքական կանալների քանդման դործի կազմակերպմանն անցնելու, թուլլ չտալով կրակին անցնելու ոդափոխիչ կամերները։ Փայտի հավաքական կանալների քանդելը դժվարություններ չի ներկայացնում, բավական է կանալի վերևի վրաքաշը բացել, վորով հնարավոր է լինում ջրել և նրանց միջի բոցը հանդցնել։

Կրակին ոդափոխիչ կամերն անցնելիս անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում վառվելը դադարեցնել, նկատի ունենալով, վոր կառուցվածքի խախտումն անհրաժեշտություն առաջ կբերի քաշող խողովակները քանդելու, վորը կապված է խմբի անձնական կազմին վտանգ սպառնալու հետ։

Յեթե անհրաժեշտություն առաջ գա ոդափոխիչ սարքի խողովակները քանդելու, հրդեհաշիջման ղեկավարը պետք է նախազգուշական միջոցներ ձեռք առնի։ Մասնավորապես անհրաժեշտ է խողովակը քանդելիս վորոշել ամենահարմար և անվտանգ ուղղությունը, աշխատողներին թե՛ տանիքից և թե՛ չերդակից հեռացնել, ցածում հսկողություն սահմանել և խողովակի հնարավոր անկման տեղից

հրդեհի բոլոր ներկա յեղողներին հեռացնել. միջոցներ ձեռք առնել պաշտպանելու պարզված բոլոր շանգագծերը, ղերված սանդուխքները, ավտոնասոսները և այլն։

Քանդելու ժամանակ անվտանգություն պահպանելու և վտահ լինելու համար, վոր խողովակն ընկնելու յե վորոշված ուղղությամբ, անհրաժեշտ է խողովակի վերևի մասից պարան կապել, յերկու-յերեք մարտիկներով խողովակը քաշել։

9. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ԾԽՆԵԼՈՒՅՋՈՒՄ

Ծխնելույզների միջի մուրը վառվելը դեռևս հրդեհ չե։ Սակայն ծխնելույզներում ճաքեր, կամ վառունակ նյութերին հասնող այլ տեսակի անցքեր լինելու դեպքում կարող է հրդեհ առաջանալ։ Այդ պատճառով ծխնելույզի միջի մուրը վառվելիս նրա ամբողջ յերկարությամբ անհրաժեշտ է մանրազնին հետախուզություն կատարել։ Պետք է հաշվի առնել, վոր հետախուզությունը կարող է չափազանց դժվարանալ, յեթե հարկ լինի դործ ունենալ ծածուկ տարածությունների—միջհարկային ծածկերի հետ, վորոնք կարող են կրակի ծավալման համար ճանապարհներ ծառայել։

Պարզելով ծխնելույզի տեղը, վորտեղ մուրը վառվում է, ղեկավարը պարտավոր է անձամբ զննության յենթարկել բոլոր հարկերն ու չերդակը, և պարզել, թե ծխնելույզից դուրս թռչող կայծերն ու բոցը հրդեհ չեն ստանում։

Հետախուզության պրոցեսում ղեկավարը պարտավոր է ծխնելույզի շինվացման ստուգմանը և միջհարկային ծածկերի միջի ճաքերի գոյությունն ստուգել, վորը կարելի յե վորոշել ծխնելույզներին կպած հատակն ու առաստաղները ձեռքով շոշափելով։ Ճաքերի գոյությունը յերևում է հատակի պլինտուսների տակից դուրս քցող ծխով և վառվող մրի հոտով։

Հարկերի, չերդակի և տանիքի վիճակին հսկելու համար ծխնելույզի մոտ, վորտեղ վառվում է, պետք է մարտիկներ

դրվեն, վորոնք հրդեհաշիջման համար պետք է ապահովված լինեն ընդային գործիքներով, փողակներով, հիդրոպուլտերով, կրակմարիչներով կամ ջրով լցված դույլերով։

Յեթե ծխնելույզներից դուրս թռչող կայծերը կարող են հարևան շենքերի հրդեհի պատճառ դառնալ, ղեկավարը պետք է ձեռք առնի նախազգուշացման համապատասխան միջոցներ. այդ շենքերի տանիքները պետք է ուղարկվեն մարդիկ, վորոնց պետք է ոժտել ջրով լցված դույլերով, կամ թե այդ շենքերի ծածկերը պետք է պատել թրջած բրեզենտներով, մեջոկներով և այլն։

Բացի դրանից, միջհարկային ծածկերի վրճակվելն լավ հսկելու համար պետք է ծխնելույզի մոտ հատակի պլինտուսները պոկել, վորը հնարավորություն կտա հատակի տակից ծուխն ազատորեն դուրս գալու, յեթե ծխնելույզի մեջ ճաքեր առաջանան, և հնարավորություն կտա մանրազնին կերպով շոշափելու ծածկի փայտե կառուցվածքները, վորոնք կպած են ծխնելույզին։

Ծխնելույզներում մուրը վառելու նորմալ ընթացքով շենքերը սաստիկ ծխով չեն լցվում։ Սակայն ծխնելույզը ծածկելիս գազերն ու ծուխը ծխնելույզի անցքերից (ներառյալ նաև ամենաամանը ճաքերը) ծծվելով կարող են սաստիկ արագությամբ լցվել շենքի մեջ։

Այդ պատճառով պետք է ժամանակին պատրաստություն տեսնել ծուխը շենքերից դատարկելու, այսինքն անհրաժեշտ է նախապես պատուհանները բացել։

Ծխնելույզների դիտողության համար մատչելի տեղերում նոր ճաքեր գոյանալու դեպքում դիտողության համար այդ հարկերում և չերդակաշենքում դրված մարտիկները ճաքերը սվաղելու համար պետք է ապահովված լինեն կավով։

Ծխնելույզի քարշը դադարելու դեպքում անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում պարզել խցանման տեղը և ծխնելույզը մաքրելու համար շտապ միջոցներ ձեռք առնել։ Խմբի գինման համար մաքրելու հատուկ միջոցներ (գընդեր, խոզանակներ) չունենալու դեպքում կարելի է ոգ-

տվել լինգով, նրան ծխնելույզի մեջ անցկացնելով ամուր մավթուլով կամ շղթայով ամրացրած։ Յեթե հնարավոր չե գոյացած խցանը մաքրել, անհրաժեշտ է ծխնելույզի խըցանման տեղի անցքը ծակել և մաքրել։ Ծխնելույզը ծածկելու համար պետք է պատրաստել աղյուսներ և կավ։

Ծխնելույզում մրի վառվելը դադարեցնելու համար կարելի է նրա մեջ ծծմբաներկ վառել, վորից հրդեհաշեջ խումբը պետք է մոտավորապես 2 կգ ունենա։ Ծծմբի ներկը կարելի է գործածել յերկու ձևով. կամ նրան անմիջապես լցնել վառվող վառարանի մեջ, վորի ծխնելույզի մուրը վառվում է կամ անմիջապես ծխնելույզի մեջ քցել, յեթե վառարանը չի վառվում։ Ծխնելույզում առատորեն ծծմբագազ գոյանալու դեպքում մրի վառվելը դադարում է։ Ինչպես գործը ցույց է տվել, այդ միջոցի կիրառումը միշտ դրական արդյունք չի տալիս, վորովհետև վառվելը դադարելու համար ծծմբական գազի խտությունն ուղի ծավալի համեմատությամբ $10^0/_0$-ից պակաս չպետք է լինի։

Ծխնելույզում վառվող մուրը հանգցնելու համար ծծմբային ներկով ոգտվելիս, ծծմբական գազով չթունավորվելու համար անհրաժեշտ է ձեռք առնել նախազգուշական միջոցներ։

Յերբեք չի կարելի վառվող մուրը ջրով հանգցնել, վորովհետև շիկացած աղյուսներն իսկույն սառչելով հեշտությամբ քայքայվելով ճեղքեր են առաջացնում, վորոնց միջից կրակը կարող է անցնել շենքի փայտե կառուցվածքներին։

Մրի վառվելը դադարեցնելու համար չի թույլատրվում նույնպես ծխնելույզի յելքի անցքը փակել (յերկաթաթիթեղներով, քարտաղերով, տախտակներով և այլն), վորովհետև դեպի մթնոլորտը գազերի ազատ յելք չլինելու հետևանքով ծխնելույզի մեջի ճնշումը կմեծանա, և գազերը բոլոր անցքերից ու ճաքերից կձգտեն շենքերի ներսը, իրենց ճանապարհի վրայի վառունակ առարկաները վառելով։

Մուրը վառվելու ժամանակ հրդեհաշեջ խմբի գործողությունները հիմնականում պետք է ուղղված լինեն նրան,

վոր թույլ չտան կրակին անցնելու, այլ խոսքով մրի վառվելը պետք է վերածել ծխնելույզը ներսից այրելուն և մրից մաքրելուն։

Փոքր ինչ այլ պատկեր է ներկայացնում մրի վառվելը, յերբ ծխնելույզներից կայծեր կամ բոց է դուրս թռչում և վառոնակ կարանը վտանգ են սպառնում։ Այդպիսի դեպքերում տեղ հասած հրդեհաշեջ խմբի հիմնական խնդիրն է ոչ միայն ծխնելույզի մեջի մրի վառվելուն վերջ տալ, այլև թույլ չտալ, վոր կայծերից տանիքում կամ չերդակում հրդեհ առաջանա։

10. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ԶԱՓԱԶԱՆՑ ԲԱՐՁՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ

Բարձր շենքերի և կառուցումների հրդեհները բարդանում են հետախուզության, պարագայի գնահատման և ոպերատիվ գործողությունների դժվարություններով։ Հետախուզության հիմնական խնդիրը հրդեհի սահմանները վորոշելը և վառվող կառուցվածքների շինարարական առանձնահատկությունները պարզելն է, վորպեսզի վորոշ բարձրության վրա ուժերի և միջոցների կենտրոնացումը կարելի լինի անմիջորեն ուղղել հնարավոր փլուզումների սպառնալիքի դեմ։

Այդպիսի հրդեհների ժամանակ հիմնական ոպերատիվ միջոցառումները հետևյալներն են.

1. Ներքին և արտաքին ստացիոնար ասղուխքների ոգտագործումը, վորպես հարձակման գործողությունների և նահանջի ճանապարհներ։

2. Տեղական հրդեհաշեջ նասոսների և ջրմուղների կանգնակների ոգտագործումը, վորոնք սովորաբար պատրաստվում են այդ շենքերը և կառուցումները սարքավորելու հետ միաժամանակ։

3. Վորոշ բարձրության վրա դրված մոտոպոմպերի կիրառումը, ձեռքով աշխատեցնելով։

4) Նասոսների աշխատանքի սխեմայի կիրառումը ձեռքով աշխատեցնելով։

5) Հատուկ ամուր շլանգների պաշարի գոյությունը։

6) Հզոր ցայտերի կիրառումը։

Հրդեհաշիջման դեկավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի մեծ բարձրության վրա գտնվող մարտիկների և հրամանատարների աշխատանքի համար անվտանգ պայմաններ ապահովելու վրա։ Իրրև կանոն, վտանգավոր տեղերով տեղաշարժվելիս մարտիկները պետք է պարանով հուսալի կերպով կապվեն շենքերի ամուր կառուցվածքներից։

VI. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ՝ ԿՍՊՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ԶԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ

1. ՎԱՌՈՒՆԱԿ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Վառոնակ շենքերին են պատկանում՝ գերանաշեն, տախտակաշեն, ներքատախտակաշեն, կարկասաշեն և վահանապատ շենքերը։

Մեծ քանակությամբ վառոնակ նյութերից կառուցված շենքերում հրդեհը զարգանում է չափազանց արագ կերպով, վորը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեծամեծ չափեր է ընդունում։

Այդ առանձնապես վտանգավոր են կարկասաշեն և վահանապատ շենքերը, վորոնք իրենց հատուկ բոցավառվելու հատկությամբ հեշտ են վառվում և ընդունակ են կրակին արագ կերպով անցկացնել թե՛ չորացող փայտի շենքի կառուցվածքային մասերի մեջ առաջացող ճեղքերի և յերկայնակի ճաքերի միջով, և թե՛ պատերի մեջ յեղած դատարկություններով կամ այդ դատարկությունները լցնող վառոնակ նյութով։

Յելնելով այդ հանգամանքներից, հրդեհաշիջման դեկավարը, խնդրի լուծմանն անցնելիս, ամենից առաջ պետք է կազմակերպի այն շենքերի պաշտպանությունը, վորոնց սպառնում է վառվող շենքերի ճառագայթային ջերմությունը կամ կրակը։ Այդ նպատակով պետք է գործածու-

թյան դնել անհրաժեշտ քանակությամբ փողակներ, իսկ նրանց չբավականացնելու դեպքում՝ կիրառել հիդրոպուլսեր կամ նույնիսկ ուղղակի ջրով լցված դույլեր։ Վերջին դեպքում դույլերով ջուր կրելու համար, յեթե սեփական ուժերը չեն բավականացնում, պետք է գործի մեջ քաշել պահանջվող քանակությամբ քաղաքացիների, վորոնք հրդեհին ներկա յեն։

Զարգացած հրդեհի դեպքում, յերբ կրակն ընդգրկել է մի քանի շենք, առանձին տեղամասերում (ընդարձակ տարածությամբ) կարող է այնպիսի դրություն ստեղծվել, վոր միմիայն առանձին փողակների գործադրությունը չբավականացնի։ Այդ դեպքում կրակի ծավալման առաջն առնելու համար պետք է ջրածածկոցներ պատրաստել։ Այդ նպատակի համար պահանջվող փողակների քանակը հրդեհաշիջման ղեկավարը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է՝ հրդեհի ընդհանուր պայմանների, իր տրամադրության տակ յեղած ուժերի ու միջոցների և այն տեղամասի մեծության համեմատ, վորի վրա պահանջվում է ջրախըչընդոտ ստեղծել։

Այնուհետև անհրաժեշտ է սկսել հրդեհաշիջումը՝ նոր գործածության դրած փողակները և, նայած պարագային, հարևան շենքերը պաշտպանող փողակներն ուղղելով վառվող շենքի պատուհաններին ու դռներին, նպատակ ունենալով կրակն ըստ հնարավորին բոլոր կողմերից զրոհելու։ Այդպիսի հրդեհները հանգցնելու ոպերացիայի նորմալ ընթացքը բղխում է այն պարագայից, վորը պահանջում է գործածության մեջ դնել բավական քանակությամբ հզոր փողակներ։

Վառունակ շենքերի հրդեհների ժամանակ ճառագայթային ջերմության ներգործությունն այնքան ուժեղ է լինում, վոր փողակավորները հնարավորություն չեն ունենում կրակին մոտենալու և փողակը դեմ առ դեմ ուղղելու։ Այդպիսի դեպքերում փողակավորներն անպայման պետք է ոգտվեն ճառագայթային ջերմության ներգործությունից

պաշտպանող վորևե գործիքով (վինկելերի քողով, թաղիքե կամ ազբեստե վահանով կամ գործածեն փողակի վրա հագցրած հավհարային սրսկիչ)։ Յեթե վառվող դերանե շենքի պատերն ունեն արտաքին և ներքին շրջակար՝ նույնը տախտակից, անհրաժեշտ է ըստ հնարավորին արագ կերպով պարզել, թե կրակը շրջակարի տակը չի՞ անցել, վորովհետև այդտեղ նա շատ արագ կերպով է ծավալվում և հրդեհաշիջման նորմալ ոպերացիան դժվարացնում է։ Վորպեսզի գործն այդ տեղը չհասնի, պետք է շրջակարն անմիջապես սրսկել և, ջրացայտով վերևից գործելով, վառվելը դադարեցնել։

Գերանաշեն շենքերի հրդեհի ժամանակ, գերանների արանքը լցված մամուռի կամ խծուծի հեռանքով, ինչպես նաև փայտը չորանալուց առաջացած ճաքերի հեռանքով, կրակը շատ հեշտությամբ կարող է մուտք գործել փոսերի և ճաքերի մեջ և նրանցով ծավալվել գերանների արանքը։ Այդ դեպքում անհրաժեշտ է պատերը քանդել և քանդած նյութն առատորեն ջրել։

Վառունակ շենքերի հրդեհաշիջմանն անցնելիս, պետք է հիշել, վոր կրակի ազդեցության տակ նյութի ամրությունը չափազանց արագ կերպով կորչելու հեռանքով վառվող շենքի առանձին կառուցվածքները կարող են անսպասելի կերպով փլչել։ Այդ պատճառով հրդեհաշիջման ոպերացիայի ժամանակ ղեկավարը պետք է շարունակ ուժեղ հսկողություն ունենա, վորպեսզի անձնական կազմին դժբախտ պատահարներից նախազգուշացնի։ Փողակավորները վառվող շենքը մտնելուց անմիջապես հետո, անհրաժեշտ է իսկույն և յեթե պարզվեն, թե արդյոք կրակը պատերի մեջ չի՞ անցել, յեթե վերջիններս իրենց մեջ պատարկություններ ունեն կամ պատած են վառունակ նյութերով։ Դրական պատասխանի դեպքում անհրաժեշտ է իսկույն և յեթ անցնել պատերը քանդելուն, նրանց ջրելով վերևից և նրանց մեջ լցված նյութերը հեռացնելով։

2. ԽԱՌԸ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Խառը շենքերը հրդեհաշիջման տակտիկական տեսակետից դնահատելիս անհրաժեշտ է նշել, որ նրանք կրակի ազդեցության տակ առանձնապես դիմացկուն չեն, որովհետև հրդեհի ժամանակ զարգացած բարձր ջերմության ազդեցությունը թե՛ խառը շենքերի վառոնակ և կիսավառոնակ, և թե՛ հրակայուն մասերի վրա արտահայտվում է բավական արագությամբ։

Ցերևելով այս պայմաններից, խառը շենքերի հրդեհաշիջման օպերացիայի առանձնահատկությունները հիմնականում նման են վառոնակ շենքերի հրդեհաշիջման օպերացիայի առանձնահատկություններին։ Այստեղ նույնպես պետք է գործածության դնել փոքր տրամագծի փողակներ, այն տարբերությամբ միայն, որ ավելի քիչ քանակությամբ փողակներ են պահանջվում, քան վառոնակ շենքերի հրդեհների ժամանակ, որովհետև մեծ մասամբ հրդեհի պարագան չի պահանջում հարևան շենքերը կրակի ճառագայթային ջերմության ազդեցությունից պաշտպանել։

Խառը շենքերի հրդեհների հետագա գործողությունները հրդեհաշիջման դեկավարից պահանջում են գործածության տրվող առաջին փողակներն այնպիսի դիրքերում դասավորել, վորտեղ կրակը ծավալվելու վտանգ է սպառնում և մանավանդ սանդխավանդակներում և չվացվող արտաքնոցների շահաերում, վորոնց միջով կրակը կարող է շատ արագ կերպով ծավալվել, վորովհետև այդտեղ միշտ էլ քամի և լինում։

Բացի դրանից, աշխատանքների նորմալ ընթացքն ապահովելու համար հրդեհաշիջման դեկավարը պետք է հետևի փողակավորների գործողություններին, նրանց աշխատանքին տալով այնպիսի ուղղություն, վորպեսզի նրանք ջրացայտերով գործելիս, առաջին հերթին ջրեն այն վառոնակ կառուցվածքները, վորոնց քայքայումը կրակի ազդեցության տակ կարող է առաջ բերել փլուզումներ (հենարաններ, այուններ, հեծան և այլն)։

Չպետք է մոռանալ, վոր խառը շենքերում կան կիսավառոնակ նյութերից պատրաստված կառուցողական շատ մասեր (սվաղի փայտե կառուցվածքներ), վորոնք հրդեհի բարձր ջերմության ազդեցության տակ ծայրեծայր վառվում են։ Հրդեհի լիկվիդացիայի ժամանակ պետք է այդ բոլոր կառուցվածքները ստուգել, իսկ անհրաժեշտ դեպքերում, նախապես սվաղը պոկելով, նրանց մերկացնել կամ քանդել և ապա ջրացայտով ջրել։

3. ՓԱԽՎԵՐԿԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Փախվերկային շենքերը պետք է դասել այն օբյեկտների շարքը, վորոնք հրդեհների ժամանակ հրդեհաշիջման նորմալ օպերացիայի տեսակետից կարող են չափազանց անբարենպաստ պայմաններ ստեղծել։

Բանն այն է, վոր այդ շենքերն իրենցից ներկայացնում են փայտե կարկաս (բաղկացած ցածի և վերևի կապերից, կանգնակներից, բռնիչներից ու շեղակներից), վորը լցված է հրակայուն նյութով (բնական քար, աղյուս և այլն)։ Հրդեհի ժամանակ, կրակի և բարձր ջերմության ազդեցության տակ փայտե կարկասի վերոհիշյալ առանձին մասերը կարող են իրենց ամրությունը կորցնել, և ծանրությանը չդիմանալով, առաջ բերել պատերի մասնակի, իսկ վորոշ դեպքերում ել լիակատար փլուզում։ Ցերևելով այդ պարագայից, հրդեհաշիջման դեկավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի շենքի փայտե կարկասի վրա և, փողակները գործածության դնելով, առաջին ջրացայտերն ուղղի կարկասի առանձին մասերի պաշտպանությանը։

Վառվող փախվերկային շենքը հանգցնելու աշխատանքի ամբողջ պրոցեսում պետք է մեծ ուշադրությամբ հետևել պարագային և պատերի քանդվելու նույնիսկ չնչին սպառնալիքի դեպքում մարտիկներին վտանգավոր տեղից անմիջապես հեռացնել։

Պատի կամ նրա մի մասի քանդվելու սպառնալիքը պարզելուց հետո անհրաժեշտ է շենքի քանդվելու վտանգ

2. ԽԱՌԸ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Խառը շենքերը հրդեհաշիջման տակտիկական տեսակետից դժնահատելիս անհրաժեշտ է նշել, որ նրանք կրակի ազդեցության տակ առանձնապես դիմացկուն չեն, որովհետև հրդեհի ժամանակ զարգացած բարձր ջերմության ազդեցությունը թե՛ խառը շենքերի վառունակ և կիսավառունակ, և թե՛ հրակայուն մասերի վրա արտահայտվում է բավական արագությամբ։

Ցելնելով այս պայմաններից, խառը շենքերի հրդեհաշիջման օպերացիայի առանձնահատկությունները հիմնականում նման են վառունակ շենքերի հրդեհաշիջման օպերացիայի առանձնահատկություններին։ Այստեղ նույնպես պետք է գործածության դնել փոքր տրամագծի փողակներ, այն տարբերությամբ միայն, որ ավելի քիչ քանակությամբ փողակներ են պահանջվում, քան վառունակ շենքերի հրդեհների ժամանակ, որովհետև մեծ մասամբ հրդեհի պարագան չի պահանջում հարևան շենքերը կրակի ճառագայթային ջերմության ազդեցությունից պաշտպանել։

Խառը շենքերի հրդեհների հետագա գործողությունները հրդեհաշիջման ղեկավարից պահանջում են գործածության տրվող առաջին փողակներն այնպիսի դիրքերում դասավորել, որտեղ կրակը ծավալվելու վտանգ է սպառնում և մանավանդ սանդխավանդակներում և չվացվող արտաքնոցների շախտերում, որոնց միջով կրակը կարող է շատ արագ կերպով ծավալվել, որովհետև այդտեղ մշտապես ոդի լավ քարշ է լինում։

Բացի դրանից, աշխատանքների նորմալ ընթացքն ապահովելու համար հրդեհաշիջման ղեկավարը պետք է հետևի փողակավորների գործողություններին, նրանց աշխատանքին տալով այնպիսի ուղղություն, որպեսզի նրանք ջրացայտերով գործելիս, առաջին հերթին ջրեն այն վառունակ կառուցվածքները, որոնց քայքայումը կրակի ազդեցության տակ կարող է առաջ բերել փլուզումներ (հենարաններ, այուններ, հեծան և այլն)։

Զգեստ է մոռանալ, որ խառը շենքերում կան կիսավառունակ նյութերից պատրաստված կառուցողական շատ մասեր (ավազի փայտե կառուցվածքներ), որոնք հրդեհի բարձր ջերմության ազդեցության տակ ծայրեծայր վառվում են։ Հրդեհի լիկվիդացիայի ժամանակ պետք է այդ բոլոր կառուցվածքներն ստուգել, իսկ անհրաժեշտ դեպքերում, նախապես ավազը պոկելով, նրանց մերկացնել կամ քանդել և ապա ջրացայտով ջրել։

3. ՖԱԽՎԵՐԿԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Ֆախվերկային շենքերը պետք է դարսել այն ոչյեկաների շարքը, որոնք հրդեհների ժամանակ հրդեհաշիջման նորմալ օպերացիայի տեսակետից կարող են չափազանց անբարենպաստ պայմաններ ստեղծել։

Բանն այն է, որ այդ շենքերն իրենցից ներկայացնում են փայտե կարկաս (բաղկացած ցածի և վերևի կապերից, կանգնակներից, բռնիչներից ու շեղակներից), որը լցված է հրակայուն նյութով (բնական քար, աղյուս և այլն)։ Հրդեհի ժամանակ, կրակի և բարձր ջերմության ազդեցության տակ փայտե կարկասի վերոհիշյալ առանձին մասերը կարող են իրենց ամրությունը կորցնել, և ծանրության չդիմանալով, առաջ բերել պատերի մասնակի, իսկ վորոշ դեպքերում էլ լիակատար փլուզում։ Ցելնելով այդ պարագայից, հրդեհաշիջման ղեկավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի շենքի փայտե կարկասի վրա և, փողակները գործածության դնելով, առաջին ջրացայտերն ուղղի կարկասի առանձին մասերի պաշտպանությանը։

Վառվող ֆախվերկային շենքը հանգցնելու աշխատանքի ամբողջ պրոցեսում պետք է մեծ ուշադրությամբ հետևել պարագային և պատերի քանդվելու նույնիսկ չնչին սպառնալիքի դեպքում մարտիկներին վտանգավոր տեղից անմիջապես հեռացնել։

Պատի կամ նրա մի մասի քանդվելու սպառնալիքը պարզելուց հետո անհրաժեշտ է շենքի քանդվելու վտանգ

ապահովող մասը շուռ տալ։ Այդ դեպքում պետք է պատը կամ նրա մի մասը, ըստ հնարավորին, շուռ տալ վերջ թե շենքի ներսը, այլ նրանից դուրս։ Այդ պետք է անել այն նկատառումով, որպեսզի կարկասը լցնող նյութը շենքի վառվող մասերի մեջ չթափվի, որովհետև հակառակ դեպքում հրդեհի լիկվիդացիայի ժամանակ շենքի ծխացող կամ վառվող մասերը հանգցնելու համար լրացուցիչ աշխատանքներ կպահանջվեն։

4. ՖԻԲՐԱՁՈՒՅԼ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Ֆիբրաձույլն իրենից ներկայացնում է փայտասալ, որն ստացվում է մագնեզիական ցեմենտով իրար կապված փայտե ռանդվածքներից՝ ժամելու միջոցով։

Այս շինարարական նյութը դործ է ածվում քարե պատերի կարկասը լցնելու համար և ամենից շատ փայտե կարկասով՝ դրսի պատերի համար, որոնք թե դրսի և թե ներսի կողմից անպայման ավազված են։ Առաջին դեպքում ֆիբրաձույլ սալերը դրվում են քարե պատի մեջ թողնված բացվածքի մեջ։ Պատերը շարում են յերկուսական ֆիբրաձույլ սալերով, որոնք իրար հետ միացած են մեխերով։ Յերկրորդ դեպքում ֆիբրաձույլ սալերը փայտե կարկասին միացվում են մեխերով, ըստ որում սալերի արանքները թողնվում են դատարկություններ, որոնք սովորաբար վոչնչով չեն լցվում։

Փայտե կարկասով ֆիբրաձույլ շենքը հրդեհի տեսակետից մեծ վտանգ չի ներկայացնում, որովհետև ավազված սալերը կրակի ներդործությանը լավ են դիմադրում և հրդեհաշիջման ոպերացիայի ժամանակ առանձին բարդություններ չեն առաջացնում։

Փայտե կարկասով ֆիբրաձույլ շենքի հրդեհը հանգցնելիս այն միակ առանձնահատկությունը, որ պետք է նկատի ունենալ,—դա ֆիբրաձույլ սալի ռանդվածքը բարձր ջերմաստիճանի յերկար ազդեցության տակ ածխանալու հնարավորությունն է։ Ֆիբրաձույլի ծխալը դադարեցնելու

համար պետք է ավազին ջուր տալ, իսկ վորոշ դեպքերում էլ պետք է նույնիսկ սալերը քանդել։

Միանգամայն այլ պարագայի կարելի յե հանդիպել փայտե կարկասով ֆիբրաձույլ շենքերի հրդեհների ժամանակ։ Ֆիբրաձույլ սալերի անպայման ճաքճքելու ու չորանալու հետևանքով (այն տեղերում, վորտեղ սալերն ամրացված են կարկասի կանդնակներին) առաջվում է ոդի լավ քարշ և կրակն անխոսափելիորեն անցնում է պատի դատարկությունների մեջ, վորտեղ կարող է վառվել նաև փայտե կանդնակները։ Այդ հանգամանքն անպայման կատարել և փայտե կանդնակները շուտով վոչնչացնել, հետևապես և պատը քանդել։

Այստեղից էլ պարզ է, վոր հրդեհաշիջման դեկավարը պետք է հսկողություն ունենա, վոր հրդեհաշեջ խմբի անձնական կազմի հետ դժբախտ դեպքեր տեղի չունենան։ Պատը քանդելու բացարձակ ապահանալիքի դեպքում պետք է նրան անպայման քանդել։

Այդ տեսակետից բացառություն է կազմում փայտե կարկասով, այսպես կոչված «բլիջային» կառուցվածքի, ֆիբրաձույլ շենքը, վորի պատերի մեջ անընդհատ դատարկություններ չկան, այլ կառուցված է բլիջների կամերնեբի ձևով։ Բլիջային պատի կառուցման ժամանակ ֆիբրաձույլ սալերն ամրացնում են փայտե կարկասին շարժական դրությամբ ուղղաձիգ և հորիզոնական ձևով մեկը մյուսի նկատմամբ 10 սմ-ով, իսկ պատի ներսը ֆիբրաձույլ սալի կտորներից պատրաստում են դիաֆրագմաներ։

Շնորհիվ այդպիսի կազմության մի ջանցիկ կարեր չեն լինում, վորոնց միջով կրակը հեշտությամբ և անցնում պատի ներսը, իսկ պատի մեջի դատարկությունները դիաֆրագմաներով բաժանված են մի շարք մանր կամերների, վորոնց մեջ թեև կարող է ֆիբրաձույլ սալի ռանդվածքների ածխացում տեղի ունենալ, սակայն կրակը շատ չի ծավալվի, վորով և փայտե շենքերի ամրությունը չի խախտվի և պատը չի քանդվի։

վառվող ֆիբրաձուլ շենքը հանգցնում են անհրաժեշտ քանակությամբ փողակներ գործադրելով, որոնց դիրքերը հրդեհաշիջման ղեկավարը որոշում է հրդեհի զարգացման ատիճանին, արագության և կրակի ծավալման կետերի թվի համեմատ։

Յերբ կրակը հանգցված է և հնարավորություն կա վառվող շենքը մանել հրդեհը վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելու, անհրաժեշտ է ֆիբրաձուլ պատերի վիճակն անմիջապես ստուգել և յեթե պարզվի, որ կրակն արդեն անցել է նրանց մեջ, պետք է անցնել ֆիբրաձուլ սալերը քանդելուն և վառվող ու ծխացող նյութը լավ թրջել։

Ֆիբրաձուլը ծխալիս մեծ քանակությամբ ծուխ է գոյանում, որը հրդեհի տեղում աշխատելու գործին մեծ խոչընդոտ է հանդիսանում։ Այդ պատճառով չի կարելի մարտիկների ամբողջ կազմին աշխատանքի մեջ քաշել, այլ միմիայն նրա մի մասին, որպեսզի հնարավոր լինի հոգնածներին փոփոխելու։ Անհրաժեշտ դեպքում պետք է կիրառել ֆիլտրող կամ մեկուսիչ գործիքներ։

5. ՏՂՈՏԱԽՍԻՐ ՅԵՎ ՅԵՂԵԳՆԱԽՍԻՐ ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ

Ծղոտախոփերն ու յեղեգնախոփերն իրենցից ներկայացնում են խոփեր, որոնց մեջի ծղոտը կամ յեղեգը կապված և կարված են մավրուլով։ Այդ խոփերը գործ են ածում ծղոտախոփ և յեղեգնախոփ շենքերի վայտե կարկանները կարելու համար, որոնց պատերն անպայման յերկու կողմից ավարվում էն։ Ծղոտախոփերները և յեղեգնախոփերները մավրուլներով միացվում են կարկատի վայտե կանոնակներին, այնպես որ պատերի մեջ առաջանում են միանգամայն զատարկ տարածություններ։

Վերոհիշյալ շենքերը հրդեհաշեջ-տակտիկական տեսակետից կատարելապես կարելի յե հավասարեցնել վայտե կարկասով ֆիբրաձուլ շենքերին՝ թե նյութի հրակայունության, և թե հրդեհների ժամանակ առաջացող պարագայով։

Ուստի ծղոտախոփը և յեղեգնախոփը շենքերի հրդեհաշիջումը պետք է կատարել՝ առաջնորդվելով վայտե կարկասով ֆիբրաձուլ շենքերի հրդեհաշիջման նկարագրության մեջ մեկնաբանված ցուցումներով։

Բացի այդ ցուցումներից, հրդեհաշիջման ղեկավարը նույնպես պետք է նկատի ունենա հետևյալը. նախ, հրդեհի բարձր ջերմաստիճանի պայմաններում կրակը մուտք է գործում ծղոտախոփը և յեղեգնախոփը պատերի մեջ և նրանց շատ ավելի արագորեն և քայքայում, քան ֆիբրաձուլ պատերը, որովհետև ծղոտախոփերը և յեղեգնախոփերը հրակայուն են. յերկրորդ, ծղոտախոփը և յեղեգնախոփը պատերը քանդելիս անհրաժեշտ է նախապես կտրել կամ պոկել այն մավրուլը, որով խոփերն ամրացված են կանգնակներին. յերրորդ, ծղոտախոփերը և յեղեգնախոփերը ոժտված են շուռ ծծելու ունակությամբ, որի շնորհիվ վորոշ դեպքերում կարելի յե նաև պատերը չքանդել, այլ միայն ահմանափակվել նրանց ներսն առատորեն ջրելով։

6. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՔԱՐԵ ՇԵՆՔԵՐՈՒՄ

Տվյալ դեպքում նկատի յեն առնվում այն շենքերի հրդեհների հատկությունները, որտեղ ղրսի և ներսի կապատալ պատերի համար գործ է ածվում սովորական կարկասային աղյուսակ։

Ամբողջովին քարե շենքերը հրդեհաշեջ-տակտիկական տեսակետից առանձնապես վտանգավոր օբյեկտներ չեն։ Սակայն այս դնահատականը, յուրաքանչյուր առանձին դեպքում ուղղակի կախման մեջ է՝ շենքի ատրածության մեծության, հարկերի, նյութերի (որոնցից պատրաստված են շենքի մյուս կառուցողական նյութերը) հրակայունության, շենքի դերի և շենքի հակահրդեհային արգելքների հետ։

Միանգամայն պարզ է, որ հրդեհները կարող են առանձնապես արագ կերպով զարգանալ այն քարե շենքերում, որոնց ներքին կառուցողական ատրները պատրաստված են պիտավորապես վառունակ և կիսավառունակ նյութերից և որտեղ հակահրդեհային արգելքներ չկան։ Այդ պատճառով

հետագոտության ժամանակ հրդեհաշիջման դեկավարի առաջնահերթ խնդիրն այն է, որ պարզի վառվող շենքերի ներքին կառուցվածքային նյութերի հրակայունության աստիճանը և այդ շենքերի միջի հակահրդեհային արդելքների գոյությունը, առանձնապես ուշադրություն դարձնելով պատերի միջի ոդափոխիչ կանալների և դառարկությունները ունեցող փայտե միջնապատերի վրա, որովհետև այդ կանալներով ու դառարկություններով հրաքը կարող է արագորեն ծավալվել։

Քարե շենքի որ մասում էլ որ հրդեհը ծագած լինի, խնդրի ամակիկական լուծումը պետք է կայանա նրանում, որ որքան կարելի չէ պետք է մեծ քանակությամբ ջրացայտերով արագորեն ընդգրկել վառվող շենքերը, նրանց մեծ մասը կենտրոնացնելով հրաքի ծավալման տեղերում։

Յեթե հրդեհը ծագել է մի քանի հարկանի քարե շենքում, այդ ոպերացիան կատարելիս առաջինը գործի դրված փողակները պետք է տալ ներքին անդունքներին, իսկ հաջորդները՝ հրդեհաշեջ անդունքներով շենքի միացումից, և նույն անդունքներով էլ անմիջապես վառվող շենքերի պատուհաններին։

Շատ հաճախ պատահում է, որ անդխավանդակները շնորհիվ դեպի իրենց կողմն ստեղծված ոդաքարշի՝ այնքան ամատիկ ծխում են, որ չափազանց դժվար է լինում և յերբեմն էլ միանգամայն անհնարին է լինում ներքին անդունքներն ոգտագործել՝ նրանց վրայով փողակները վառվող շենքերին տալու։ Այդպիսի դեպքերում մարտիկները պետք է կարողանան ոգտվել ֆիլտրող կամ մեկուսիչ գործիքներով։ Բացի դրանից, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել անդխավանդակի մեջ լցվող ծուխը դառարկելու, որի համար պետք է բացել վերևի հարկի պատուհանները. ծայրահեղ դեպքում կարելի չէ ուղղակի ապակինները կոտրել, սակայն անպայման վերնափեղկինը։ Յեթե հնարավոր չէ ծուխը ներսից բաց թողնել, այդ պետք է անել դրսից հրդեհաշեջ անդունքի ոգնությամբ։

Յերբեմն քարե շենքերի հրդեհների ժամանակ, կրակը չափազանց արագորեն ծավալվելու հետևանքով, այնպիսի պայմաններ են ստեղծվում, որի ժամանակ հրդեհաշեջ անդունքներով շենքի միացումից արված փողակների դորձողությունը կարող է հաջողություն չունենալ։ Այդ դեպքերում, յեթե վառվող շենքում կան ուղղաձիգ և հորիզոնական ուղղությամբ հակահրդեհային արդելքներ, հրդեհաշիջման դեկավարը պետք է այդ արդելքներն ոգտագործի իրրև պաշտպանության գիծ, և ապա առաջին իսկ հնարավորության դեպքում իր ուժերի և միջոցների գործողությունը ծավալի հրդեհը լիկվիդացիայի յենթարկելու համար։

Արդյունաբերական քարաշեն շենքերում իրրև ուղղաձիգ հակահրդեհային արդելքներ են ծառայում բրանդմաուերները և ներսի հիմնական պատերը, իսկ իրրև հորիզոնական հակահրդեհային արդելքներ՝ միջհարկային հրակայուն ծածկերը, ըստ վորում միջանցքային սիստեմով կառուցված շենքերում թուլ և տրվում բրանդմաուերների և ներսի հիմնական պատերում անցքեր բացել։ Հետևապես, բրանդմաուերները և հիմնական պատերն իրրև պաշտպանության գիծ ոգտագործելիս հրդեհաշիջման դեկավարը պետք է հաշվի առնի այդ հանգամանքը և կազմակերպի այդ անցքերի հուսալի պաշտպանություն։

Արդյունաբերական և պահեստային քարե շենքերում իրրև հակահրդեհային ուղղաձիգ արդելքներ են ծառայում յերկայնակի և լայնակի բրանդմաուերները և հակահրդեհային պատերը (կապված բրանդմաուերը), իսկ հորիզոնական՝ միջհարկային հրակայուն ծածկերն ու հակահրդեհային դռներները։ Յեթե արտադրական պայմանները պահանջում են, թուլտաորվում է բրանդմաուերների մեջ անցքեր պատրաստել, վորոնք յերբեմն հրակայուն դռնաբաթանքներով կամ վահաններով պաշտպանված չեն։

Բրանդմաուերները, իրրև պաշտպանության գիծ նշելուց հետո, հրդեհաշիջման դեկավարը պետք է նախապես պիտենա, թե նրանց մեջ անցքեր չկան, և յեթե չկան,

պետք է անձամբ համոզվել, թե նրանք փակվածք են և անհրաժեշտության դեպքում ջրացայտերով սառեցնելու համար տալ նրանց փոքր տրամագծի փողակներ։

Քարե շենքերի հրդեհաշիջմանն անցնելիս պետք է նկատի ունենալ, որ բնակարանային տիպի շատ շենքերի սանդխավանդակների հարթակներում լինում են հրդեհաշեջ ծորակներ, իսկ արդյունաբերական և պահեստային տիպի շենքերը, իբրև կանոն, միշտ ունենում են հրդեհաշիջման— հաճախ բավականին ուժեղ—իրենց գործիքներն ու միջոցները (ներքին հրդեհաշեջ ծորակներով և արտաքին հրդեհաշեջ հիդրանտներով ջրմուղ, մոտոպոմպեր, ավտոնասոսներ և այլն)։ Այդ պատճառով, տեղի համեմատ, հրդեհաշիջման դեկավարը պարտավոր է ոգտվել նաև այդ միջոցներով։

Յերկու հարկից ավելի բարձր բնակութ յան շենքերն ունենում են հատուկ հրդեհաշեջ սանդուխքներ, ըստ որում նրանցից մի քանիսը յուրաքանչյուր հարկի դիմաց ունենում են հարթակներ։ Այստեղից պարզ է, որ փողակները հարևան շենքերից կամ անմիջապես վառվող շենքերի պատուհաններից ոգտ. ժամանակ պետք է ամենից առաջ ոգտվել ստացիոնար սանդուխքներով, որովհետև այդ վերացնում է հրդեհաշեջ շարժական սանդուխքները դնելու անհրաժեշտությունը, և, հետևապես, հրդեհաշիջման պրոցեսն արագացնում է։

Յեթե քարե շինքի հրդեհի ժամանակ կրակով ընդգրկված են մի քանի հարկերի շենքերը, այդպիսի դեպքում միջհարկային ծածկերի փլուզումները միանգամայն հնարավոր են։ Այդ պատճառով անհրաժեշտ է շարունակ ուշադրությամբ հետևել պարագային և փլչելու ամենաչնչին սպառնալիքի դեպքում մարտիկներին վտանգավոր տեղից դուրս բերել։ Որովհետև այդպիսի դեպքում այնուամենայնիվ չի կարելի փողակների գործողությունները դադարեցնել, պետք է փողակավորներին տեղավորել պատուհանների և դռների բացերի մեջ, որոնք այդ դեպքում ամենաանվտանգ տեղերն են։

7. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՅԵՐԿԱԹԱԲԵՏՈՆ ՅԵՎ ՇԼԱԿԱԲԵՏՈՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ

Յերկաթաբետոն և շլակաբետոն շինությունները, որոնց յերկաթե արմատուրան (կարկասը) պատած է պատշաշ հաստության բետոնի շերտով, ինչպես շատ հրդեհների փորձը ցույց է տվել, կրակի ներգործությանը լավ են դիմանում։ Այդ բացատրվում է նրանով, որ բետոնը համեմատաբար սակավ ջերմահաղորդիչ է, որի հետևանքով հրդեհների ժամանակ առաջացած բարձր ջերմությունը համեմատաբար միայն փոքր խորության վրա է ներգործում, իսկ բետոնի ներսը մնում է սառը, որի պատճառով իր մեխանիկական ամրությունը չի փոխում։

Սակայն կասկածից վեր է, որ որոշ դեպքերում լավ հրակայուն հատկություններ ունեցող այդ նյութը ևս հրդեհաշիջման ոպերացիաների ժամանակ կարող է բարդություն առաջացնել։ Բարդությունը կայանում է նրանում, որ յերկաթաբետոն և շլակաբետոն շենքերի հրդեհների ժամանակ կարող են շենքի առանձին կառուցվածքները քանդվել։ Այդ կարող է տեղի ունենալ այն դեպքերում, յերբ բետոնի պաշտպանական շերտում վնասվածքներ կամ ճաքեր լինեն, որոնց հետևանքով յերկաթե արմատուրան մերկանում է, յենթարկվում է արագ տաքացման և իր ամրությունը կորցնում է։ Դրա հետևանքով յերկաթաբետոնի կամ շլակաբետոնի ամբողջ ամրությունը խախտվում է։

Որովհետև հրդեհի պայմաններում հնարավոր չէ բետոնի շերտում յեղած վնասվածքներն ու ճաքերը պարզել, անհրաժեշտ է յերկաթաբետոն կամ շլակաբետոն առանձին կառուցվածքներին ուշադրությամբ հետևել, որպեսզի կարելի լինի իր ժամանակին նրանց սպառնալիքը հայտաբերել և հրդեհաշեջ խմբի անձնական կազմի համար ժամանակին անվտանգության միջոցներ ձեռք առնել։ Պետք է մշտական և անընդհատ հսկողություն ունենալ այն բանին, որ փողակավորներն իրար տեղը ջրացայտերը չտղդեն յերկաթաբետոն կամ շլակաբետոն կառուցվածք-

ներին, նկատի ունենալով, որ յերկաթե արտաուրան պաշտպանող բետոնի շերտը կարող է արագ սառչելուց քայքայվել և յերկաթը մերկանալ։

Մնացածում յերկաթբետոն և շաղախբետոն շենքերի հրդեհաշիջման տակտիկական գործողությունները կատարելիս պետք է պահպանել նույն կանոնները, ինչ որ քարե շենքերի հրդեհների ժամանակ։

8. ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄՆ ԱՅՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ՈՐՈՆՑ ՊԱՏԵՐՆ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԿԱՄ ԺԱՊԱՎԵՆԱՁԵՎ ՊԱՏՄՄ ԵՆ ԱՊԱԿՈՎ

Սովորաբար ապակով ամբողջովին պատում են հասարակ և բարձրությամբ փոքրիկ արդյունաբերական շենքերը։ Յեթե պատուհանների շրջանակների բարձրությունը 4 մ-ից ավելի չե, կիրառվում է ժապավենաձև ապակեպատում։ Այդ դեպքում ապակեպատ մակերևույթի վորոշ մասը փոխարինվում է խուլ ժապավեններով, վորոնք առանձնում են միմյանցից փայտե գերաններով։ Այսպիսով ամբողջ ապակեպատ մակերևույթին իր բարձրությամբ բաղկացած է մեկընդմեջ ապակե և փայտե շերտերից, վորոնցով շենքը պատած է իր ամբողջ ֆասադի յերկարությամբ։

Արդյունաբերական ժամանակակից բազմահարկ շենքերի և հանգիստ բնակության ու հասարակական շենքերի պատերը դրսից ապակեպատում են զանազան սիստեմի հորիզոնական անընդհատ ժապավեններով. 1) պատուհանների փայտե շրջանակներն անմիջապես ամրացվում են յերկաթբետոն սյուների մեջ դրված հենակներին, իսկ շրջանակների արանքների ճեղքերը ծածկվում են փայտե յերեսակալներով. 2) հենակներին ամրացվում է փայտե բրուսոկը, վորը պատուհանների շրջանակների համար ծառայում է իբրև փեղկ, այդ շրջանակները նույնպես ամրացվում են նույն հենակներին. 3) դրսի պատուհանների շրջանակներն ամրացվում են վերևից և ներքևից, և պատուհանի ներքնատախտակի և բարավարի միջև դրված փայտե

ուղղաձիգ կանգնակներին այնպես, որ պատուհանի արտաքին շրջանակի և յերկաթբետոն սյունի արանքը միջնաշերտ է ծառայում։

Պատերի ամբողջական կամ ժապավենաձև ապակեպատման կազմակերպման համառոտ նկարագրությունից յերևում է,— անկախ փայտե շրջանակներն ամրացնելու ձևից,— որ հրդեհի ժամանակ այդ շրջանակները, վորոնք իրենցից անընդհատ վառոնակ ժապավեն են ներկայացնում, կարող են հորիզոնական ուղղությամբ կրակի հաղորդիչ լինել։

Կրակը վառվող շենքից առանձնապես խիտ արագությամբ կողքի շենքերը կարող է ծավալվել, յերբ հրդեհը ծագել է ժապավենաձև ապակեպատ շենքում, վորի պատուհանների փայտե շրջանակներն ամրացված են վերևից և ցածից ուղղաձիգ փայտե կանգնակներին։ Դրան, անշուշտ, նպաստում է պատուհանների արտաքին շրջանակների և յերկաթբետոն սյուների արանքի ոգաշերտը։

Այս պարագայից յելնելով, հրդեհաշիջման զեկավարը հրդեհաշիջման գործողություններն ամբողջովին ապակե կամ ժապավենաձև ծածկած պատերով շենքերի մեջ ծավալելիս, յեթե կրակն ընդդիմել և արդեն պատուհանների արտաքին շրջանակները, առաջին հերթին պետք է մինչև ձեռք առնի թուլ չտալու, վոր կրակը փայտե շրջանակներով անցնի վառվող շենքին հարևան շենքերը։ Դրա համար պետք է անմիջապես այդ շենքերն ուղարկել անհրաժեշտ թվով մարտիկներ և նրանց պատուհանների փայտե շրջանակները քանդել, նպատակ ունենալով այնպիսի լայնության ընդհատում առաջ բերել, վոր կրակն իր ճանապարհին վառվող նյութ չունենալով չծավալվի։

Յեթե հրդեհի պայմաններում այդ հնարավոր չե անել, անհրաժեշտ է առաջինը դործի դրած փողակների ջրացայտերով դադարեցնել պատուհանների փայտե շրջանակներով կրակի ծավալումը։ Բազմահարկ շենքերում այդ ոպերացիան պետք է կատարել աստիճանաբար կերպով մեխանիկական սանդուղքների վրա ամրացված լաֆետային փողակների ոգ-

նությամբ. այդպիսի փողակների բացակայության դեպքում շենքից վորոշ հեռավորության վրա անհրաժեշտ տեղերում դրվում են մեխանիկական սանդուխքներ և նրանց վրայով բարձրացող փողակավորները ջրացայտերով գործում հեռվից։

Հենց վոր պատուհանների փայտե շրջանակների վրայով կրակի ծավալումը դադարում է, այդ ոպերացիայի համար ոգտագործված փողակները պետք է անմիջապես ուղղել վառվող շենքերի պատուհանները հանգցնելուն։

Շենքերն ապակով ամբողջովին կամ ժապավենաձև պատում են յերկու հակառակ կողմերից։ Այդ պատճառով հենց վոր ապակինները կոտրվում են, շենքի ներսը սաստիկ ոդահոս է սեղծվում, վորի հետևանքով կրակն առանձին ուժով կարող է զարգանալ։ Այդ հանգամանքը պետք է հաշվի առնել, և այդպիսի դեպքերում անհրաժեշտ է գործի դնել ուժգին միջոցներ, վորպեսզի ամբողջ շենքը կրակից չվոչնչանա։

Մնացած դեպքերում ամբողջովին կամ ժապավենաձև ապակեպատ շենքերի հրդեհաշիջման ոպերացիան կատարվում է սովորական կարգով։

9. ՇԵՆՔԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Շենքերը շինարարության ժամանակաշրջանում հրդեհաշեջ-տակտիկական տեսակետից իրենցից չափազանց վտանգավոր օբյեկտներ են ներկայացնում։ Այդ բացատրվում է նրանով, վոր շինարարության ժամանակ գործ է ածվում մեծ քանակությամբ փայտ, վոր մեկ կողմից, ոգտագործվում է իբրև շինարական նյութ շենքի փայտե առանձին կառուցվածքները պատրաստելու համար, իսկ մյուս կողմից, իբրև անհրաժեշտ նյութ այնպիսի ոժանդակ հարմարանքներ պատրաստելու համար, ինչպիսին են վերելակները, տախտակամածը և այլն։

Յեթե շինարարությունը ձմեռ ժամանակ է տեղի ունենում, վտանգն զգալիորեն մեծանում է, վորովհետև յերբեմն աշխատանքները կատարվում են ջերմանոցներում, վորոնք իրենցից ներկայացնում են փայտե բարակ, վորով կառուցվող ամբողջ շենքը ծածկվում է և վորի պատրաստման համար սովորաբար մեծ քանակությամբ վառունակ նյութ է գործածվում։

Շինարարության ժամանակաշրջանում շենքերի հրդեհների բնորոշ առանձնահատկությունը կրակի չափազանց արագ ծավալվելն է։ Բացի դրանից, ոդի ուժգին քարշ է սեղծվում, վորը հրդեհի զարգացման համեմատ ավելի յե մեծանում։

Հրդեհի արագ զարգանալուն շատ հաճախ նպաստում է նաև այն հանգամանքը, վոր շինարարության ժամանակ թե շինարարության հրապարակի, և թե կառուցվող ոբյեկտի ճանապարհների վրա մեծ քանակությամբ ամեն տեսակի շինանյութեր են կուտակում։ Բացի դրանից, հրապարակում գետնի մեջ փորված են լինում փոսեր, խրամատներ և այլն։ Դրա հետևանքով, հրդեհաշիջման ոպերացիայի ժամանակ դանդաղում է մարտական ծավալումն այն հրդեհաշեջ խմբի, վորն այդպիսի դեպքերում պետք է հաղթահարի նախոնները շրջափոսերի վրա դնելուն արգելք հանդիսացող խոչընդոտները, կամ նախապես զբաղվի դեպի հրդեհի վայրը տանող ճանապարհները և մատույցները մաքրելով, վորպեսզի, որինակ, շլանգագծերը պարզի, հրդեհաշեջ սանդուխքները դնի և այլն։

Վերը նկարագրած պարագան առեղծում է այնպիսի պայմաններ, վորոնցում շենքերի հրդեհները շինարարության ժամանակաշրջանում սովորաբար մեծ չափեր են ընդունում, վորոնք իրենց լիկվիդացիայի համար մեծ քանակությամբ ջուր են պահանջում։ Ուստի հրդեհաշիջման ոպերացիայի ժամանակ անհրաժեշտ է ըստ հնարավորին մեծ քանակությամբ փողակները գործի դնել, վորոնց ջրացայտերով կրակն ըստ հնարավորին բոլոր կողմերից պետք է պրոհել։ Բացի այդ, չպետք է մոռանալ, վոր ճառագայթա-

յին ջերմութեան աստիճանը կարող է վտանգի սպառնալիք առաջացնել թէ շէնքերի և թէ այն վառելանիւթային շինանիւթերի համար, որոնք դրված են վառվող շէնքին մօտիկ և կարող է փոդակավորների աշխատանքը դժուարացնել։ Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է կազմակերպել շէնքերի և նյութերի պաշտպանութիւն, որոնց ճառագայթային ջերմութիւնը վտանգ է սպառնում, որպեսզի հրդեհն ավելի չծավալվի։ փոդակավորները պետք է ոգավեն հրդեհաշէջ խմբի գինամն համար յեղած ճառագայթային ջերմութեան ներգործութիւնից պաշտպանող գործիքներով։

Յերբ շինարարութեան ժամանակաշրջանում վառվում է կառուցվող փայտե շէնքը կամ հրդեհը ծագել է իր բարձրութեամբ ու ծավալով փոքր քարե կամ յերկաթաբետոն և այլ շէնքում, հրդեհաշէջման ոպերացիան առանձին դժվարութիւններ չի ներկայացնում և այդ դեպքերում ոպերատիվ-տակտիկական գործողութիւնները պետք է համապատասխանեն վերոհիշյալ ցուցումներին։ Այլ բան է, յերբ հրդեհը ծագել է իր ծավալով մեծ և բազմահարկ շէնքում, որի պատերն արդեն զգալի բարձրութեան են հասցվել։ Այստեղ հրդեհաշէջման ոպերացիան մեծ մասամբ բավականին բարդ և չափազանց դժվարին գործ է։

Յերբ վառվում է կառուցվող շէնքի ներսը, որի պատերը շարվում են շէնքի շուրջը դրված արմատական կամ անդիմափայտերի ոգնութեամբ, հրդեհաշէջման դեկավարի հիմնական խնդիրը պետք է լինի թույլ չտալ կրակը փայտերի վրա տարածվելուն։ Այդ նպատակով, շէնքի ներսի հրդեհը մեկուսացնելու համար գործի դրվող փոդակների հետ միաժամանակ անհրաժեշտ է փոդակներ տալ նաև փայտերի կոշիկից, ջրացայտերով գործելով պատուհանների անցքերից։

Կառուցվող շէնքի շրջապատի վառվող փայտերը հանգցնելիս անհրաժեշտ է առաջինը գործի դրված փոդակներն ուղղել շէնքի ներսը, որպեսզի թույլ չտրվի, որ կրակը պատուհաններից անցնի շէնքի դրսի փայտե կառուցվածքներին։ Փայտերի հրդեհը դադարեցնելու համար պետք է տալ ստացիոնար կերպով մեխանիկական անդունքների վրա ամրացված լաֆետների ջրացայտերը, կամ փոդակավորներին դուրս քաշված և ստատ կերպով կանգնած մեխանիկական անդունքներով բարձրացնելով, հեռվից ջրացայտերով գործել։ Լաֆետային փոդակներ և մեխանիկական անդունքներ չլինելու դեպքում պետք է անհրաժեշտ քանակութեամբ փոդակներ բարձրացնել վերելակների վրա և փոդակներով կրակի դեմ գործել յերկու հակառակ կողմերից։ Յերբ միաժամանակ վառվում են թէ շէնքի ներսը և թէ կառուցվող շէնքի շուրջը յեղած վերելակները, անհրաժեշտ է հրդեհաշէջումը կատարել այնպես, որ հնարավոր լինի վորքան կարելի յե շուտ բոլոր կողմերից ջրացայտերով ընդդրկել հրդեհը և թույլ չտալ, որ կրակը բոլոր տեղերը տարածվի։ Յեթե այս բանը ժամանակին չարվի, համարյա անհնարին է հույս ունենալ, թէ կարելի յե հրդեհը հաջող կերպով լիկվիդացիայի յենթարկել։

Յերբ հնարավոր չե անհրաժեշտ քանակութեամբ փոդակներ գործի դնել կամ նրանց տալը ձգձգվում է, պետք է սկսել վերելակները քանդել, անհրաժեշտ տեղերում բավական լայն ընդհատումներ ստեղծելով։ Պարզ է, որ միայն մարտիկների ուժերով այդ հնարավոր չե անել, այդ պատճառով հրդեհաշէջման դեկավարը պետք է շէնքի վրա աշխատող բանվորներին աշխատանքի մեջ քաշի, բան հնարավորին՝ ատաղձագործներին, որոնք այդ նպատակի համար ունեն անհրաժեշտ գործիքներ (կացիններ, սղոցներ և այլն)։

Այն կառուցվող շէնքում, որտեղ առավելապես բետոնի աշխատանքներ են կատարվում, սովորաբար վառելանիւթ նյութ է հանդիսանում փայտե սախատակամածը և նրան ամրացնող վերելակները (կանգնակները, շեղափայտերը, կոնարփորսերը և այլն)։ Այս օբյեկտների հրդեհների ժամանակ հրդեհաշէջման ոպերացիայի նորմալ ընթացքն ամբողջովին կախված է հրդեհը բոլոր կողմերից ջրացայտերով արագորեն ընդդրկելուց։ Հակառակ դեպքում կրակը

չափազանց արագ կերպով ծավալվում ամբողջ շենքի մեջ և այդ ժամանակ ճնում է միայն պաշտպանողական դիրք բռնել, թույլ չտալով, որ կրակն անցնի վառվող օբյեկտ մոտ չեղած շենքերին և վառոնակ նյութերին։

Յեթե շինարարական աշխատանքները կատարվում են ջերմանոցում, կառուցվող շենքի հրդեհի ժամանակ կրակը սովորաբար անցնում է նաև ջերմանոցին։ Դրան արգելք հանդիսանալու համար անհրաժեշտ է փողակները տալ ջերմանոցի ներսը և ջրացայտերն անմիջապես կրակին ուղղելով, միաժամանակ պաշտպանել վառվելուց նաև ջերմանոցը։ Բացի դրանից, անհրաժեշտ է մարտիկներին անմիջապես բարձրացնել ջերմանոցի տանիքը՝ նրան հրդեհի տեղի վերևից քանդելու, վորով հրդեհաշիջման ոպերացիան կհեշտանա և կպակասի ջերմանոցի մեջ կուտակվող ծուխը, վորը մարտիկների նորմալ աշխատանքին արգելք է հանդիսանում։ Սաստիկ ծխի ժամանակ ջերմանոցի մեջ աշխատող բանվորները պետք ոգավեն ֆիլտրող և մեկուսիչ գործիքներով։

Յերբ միայն ջերմանոցն է վառվում, փողակները պետք է միաժամանակ տալ նրան թե՛ ներսից և թե՛ դրսից և անմիջապես սկսել նրան քանդել։

Աշխատանքների պրոցեսում անհրաժեշտ է հեռանել, վոր դրսի վառվող փայտերը, փայտե կառուցվածքները և տախտակամածը պահող փայտերը վայր թափվելիս մարդկային զոհաբեր պատահարներ չառաջացնեն։ Նմանապես դրանց վրա պետք է հսկել նաև այն դեպքերում, յերբ հրդեհի պայմանների համեմատ անհրաժեշտ է ընդհատումներ առաջացնելու համար դրսի փայտեղենը քանդել։

Շատ հաճախ կառուցվող շենքերի աշխատանքները կատարվում են գիշեր ժամանակ։ Այդ դեպքում գործ է ածվում ելեկտրական լուսավորություն, վորը կարող է անցկացվել շենքերի ներսը, ջերմանոցների տանդուխքների և պատերի վրայով։ Հրդեհաշեջ խմբի անձնական կազմի անվտանգությունն ապահովելու համար, այդպիսի դեպքերում պետք է ելեկտրահաղորդիչները հոսանքից զրկել։

ԱՐԽԻՎ
ՓՐԱՊԱԼԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Նախաբան 3
Ներածություն 6
1. Հրդեհի զարգացումը 6
2. Մարտական ծառայության կազմակերպման հիմնական սարքերը 17
3. Հրդեհաշեջ խմբերի սարատեղման սկզբունքները 29
I. Պատրաստություն հրդեհաշիջման ոպերացիայի համար . . 44
1. Մարտական հրդեհաշեջ հաշիվ 44
2. Մեկնում տագնապով և նախնական հետախուզություն 51
3. Թիկունքի կազմակերպումն ու աշխատանքը . . . 63
4. Հրդեհի հետախուզությունը 82
II. Հրդեհաշիջման ոպերացիան ղեկավարելու հիմունքները . . 93
III. Հրդեհաշիջման ոպերացիայի կատարումը 121
1. Փրկություն և բացահանում 121
2. Պայքար ծխի և գազերի դեմ 139
3. Հրդեհի դրոհումը 149
4. Հրդեհների պատճառները պարզելը 155
IV. Մարտական գործողությունները հատուկ պայմաններում 170
1. Հրդեհաշիջումը գիշեր ժամանակ 170
2. Հրդեհաշիջումը առնամանիքներին 171
3. Հրդեհաշիջումը քամի ժամանակ 172
4. Հրդեհաշիջումը շոգ յեղանակին 173
5. Տարերային հրդեհները հանգցնելը 174
6. Հրդեհաշիջումը՝ պայթուցիկ նյութերի պոյության դեպքում 175
7. Հրդեհաշիջումը՝ թունավոր նյութերի պոյության դեպքում 180
8. Հրդեհաշիջումը՝ ելեկտրական հոսանքի պոյության դեպքում 183
V. Մարտական աշխատանքի առանձնահատկությունները՝ կապված շենքի հրդեհի տեղի հետ 187

1. Հրդեհաշիջումը նկուղում 187
2. Հրդեհաշիջումը հարկերում 192
3. Միջհարկային ծածկերի հրդեհաշիջումը 196
4. Հրդեհաշիջումը շերտակում և տանիքում . . . 200
5. Մեծ մակարդակով շենքի վառվող ծածկի հրդեհաշիջումը 206
6. Սնամեջ պատերի և միջնորմների հրդեհաշիջումը . . 212
7. Հրդեհաշիջումը սանդխավանդակում 214
8. Հրդեհաշիջումն ապափոխիչ կահավորանքում և կամրաններում 216
9. Հրդեհաշիջումը ձեղնահարկերում 219
10. Հրդեհաշիջումը չափազանց բարձր շենքերում . . . 222
VI. Հրդեհաշիջումը՝ կապված շենքերի շինանյութերի հետ . . 223
1. Վառոնակ շենքերի հրդեհաշիջումը 22
2. Խառը շենքերի հրդեհաշիջումը 22
3. Ծախվերկային շենքերի հրդեհաշիջումը 22
4. Քիրպատուվ շենքերի հրդեհաշիջումը 2
5. Ծղոտախառը և ցեղնախառը շենքերի հրդեհաշիջումը 23
6. Հրդեհաշիջումը քարե շենքերում 23
7. Հրդեհաշիջումը յերկաթբետոն և շլակաբետոն շենքերում 23
8. Հրդեհաշիջումն այն շենքերում, վորոնց պատերն ամբողջովին կամ ժապավենաձև պատած են ապակով . . 236
9. Շենքերի հրդեհաշիջումը շինարարության ժամանակաշրջանում 238

Պատ. խմբագիր՝ Ս. Զաքյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Հրավ. լիազոր՝ Վ—2013. Հրատ. 4763.
Պատվեր 811. Տիրաժ 2000.
Թուղթ 62×94. Տպագր. 15 1/4 մամ.
Մեկ մամ. 25704 նիշ.
Հանձնված է արտադրության 1 դեկտեմբերի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 10 հունվարի 1939 թ.

Գինը գրքույկի 1 տպարան, Ջերման, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0928226

14 ФЕВ 1939
80
11
28813

Тактика тушения пожаров

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.